281
AL-93

246,348

ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՓԱՍՏԱՍՈՒ ԲՈՒԶԱՆԴԱՑԻ

9(47.925) 3846-ա.2
534-ԱԿ

ՓԱՒՍՏՈՍԻ

ԲՈՒԶԱՆԴԱՑՒՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ՀՈՐՍ ԴՊՐՈՒԹԻՒՆՍ



2&2
2ա

Ի ՎԻՆՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄՍ 1832 ՌՄՁԱ

925
45

ԱՒ ՀԱՆԴԻՊԵԱԼՍ ՄԱՏԵՆԻՍ

Ո՛վ Փաւստեայ բուզանդացւոյ պատմագրի երբեակ ինդիրք են. նախ՝ Թէ յորմէ՛ ազգէ էր, երկրորդ՝ Թէ յո՛ր լեզու պատմագրեաց, և երրորդ՝ Թէ արդեօք Թերի՛ իցէ մատեան նորա առ մեզ հասեալ եթէ ամբողջ։

Ա՛յս ինքն՝ ի սկզբան վերադրոյդ գրոցն (էջ 260.) խոստանալով՝ ի ստորոտ պատմութեանցն տալ զինքեանէ տեղեկութիւն, պատմէ՝ ի հինգերորդ գլուխս նորին (էջ 264.) զՓաւստոսէ ուսմունէ եպիսկոպոսէ. և՝ ի յաջորդ գլուխն ասէ, Թէ "Ա՛յր եղեալը մի Փաւստեայ եպիսկոպոսի ... և էին լեալ սոքա ազգաւ Հոռոմ"։ Ո՛պա՛ս բան եթէ զինքեանէ առցէ ոք մատենագրին ա ստացեալ, ահա յայտնի իսկ երևի ազգ նորա։ Այլ ոմանք կարծեաք վարեցան. Թէ գուցէ՝ ի ստորևան խոստանալով պատմել զանձինս, չէցէ նա ինքն յիշատակեաւն յառաջագոյն։ Ապա՛կայն և այլ հաւաստիք

առ ձեռն կան մեզ։ Ո՛չ ի նոյն ինքն դարձեալ՝ ի վախ-
ճան երրորդի դպրութեան (էջ 58.) կոչի ժամանա-
կագիր Յունաց։ Նա մերոյս Պ՛ազարայ փարպեցւոյ
կոչելովն զնա բուզանդացի, (էջ 8 և 12.) քանիկ քա-
ղաքն իսկ նորա Խիւզանդիոն զկարծիս զայս հաստա-
տէ։ Նայց առ քննողս հաստատագոյն ևս վկայեն այսմ
կերպարանք բանից նորա, որով բազում ուրեք ջա-
նայ ընդ վայր հարկանել զազգս Հայոց։ զնախնիսն
մեր առ հասարակ եպերելով, որպէս ոչ՝ի սրտէ՝ այլ
կեղծաւորաբար անդատին՝ի սկզբանէ ընկալեալ նոցա
զՀաւատս (էջ 33.) և զիշխանսն կաթողիկոսաց ազ-
գիս սահմանելով յօրհնութեն Աբեթ Հացին սեղանոյ
արքային (էջ 226.) և դարձեալ յաձախագոյնս յօ-
գելով եպերանս զազգէս, որ մանաւանդ առելոյ են
բանք և ոչ համազգայ։ Ո՛ւստի որոյ փարպեցին կա-
րի ձարտարութե՛ք, իբր անքաւիր առնելով զնա, ըզ-
պատշաճ կարծիսն տայ զնմանէ։ "Ա՛րդ՝ի Խիւզան-
դիոն, ասէ, յայնպիսումն քաղաքի և՝ի մէջ այնչափ
բազմութեն ուսելոյ վարժեալ այրն Վաւստոս, այնպի-
սի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս կարգէր՝ի
պատմութե՛ իւրում. քա՛ և մի՛ լեցի։ Ուստի և անհա-
ւատալի իմում տկարամտութեն կարծեցեալ գործն,
ասեմ՝ թէ գուցէ այլ ոք յանդուգն և անհրահանգ
բանիւ լըքաբար ձեռն արկեալ լիւրն, գրեաց զինչ
պէտս ըստ կամի. և կամ զի ուրուք անկարեալ դի-
պողն՝ այլաբանեալ զնասեաց, և անուամբ Վաւստո-
սին զնւրոյ յանդգնութեանն սխալանս համարեցաւ
ծածկել»։

Նայց զի նոյն ինքն պատմագիրն յերրորդումն
դպրութեան՝ի գլուխն երկոտասաներորդ (էջ 29.)

'ի Թուեն ղիշխանս տոհմիյ Հայկազանց, ընդ նոսա համարի և զիւրն յասելն. "Ո՛մերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց". Հարկ է ապա ասել, զի յոյն գոլով յազգէ Թերևս յազգականութենէ տանն Սահառունեաց խառնեալ էր, կամ 'ի Սահառունս ումեքինք 'ի Բիւզանդիոն ծնեալ։

Ընդ զի յոյն էր սա ազգաւ, կարծեցեալն ոմանք զի և 'ի յոյն լեզու պատմագրեաց։ Այլ հմուտք հայեցի բարբառոյ և ոչ մի ինչ հետս Թարգմանուե 'ի դիւրս յայս նշմարեն. մանաւանդ զի և ոչ միշտ ազգ. շարագրողին զշարագրածոյն հաւաստեալ ցուցանէ զբարբառ։ Ո՛չ ահաւանիկ և Ագաթանգեղոս 'ի հայ լեզու պատմագրեաց, այլ ինքն հռոմայեցի էր ազգաւ. ընդ որ եթէ տարակուսեսցի ոք, զաներկբայելի լուծումն տարակուսանացն գտցէ 'ի սկիզբն Ագաթանգեղեայ մատենին՝ որ ընդ հուպ եղեկ 'ի լոյս։ Ալաքէն դժուարին Թուի յայր օտարազգի ներ. հուն հայկաբանութենին 'ի դիւրս յայս երևեալ. սակայն և ընդ Ագաթանգեղեայ հայկաբանութենին նոյն զարմանք էն, զի հռոմայեցին հաւասար մերազնեայ ընտիր մատենագրացս հայկաբանէ։ Ալա ասելի է. զի որպէս Տերենտիոս կարքեդոնացին առ հռոմայեցիս վարժեալ՝ հրաշազան օրինակ լատին բարբառոյ զքերթածս իւր եթող, ըստ նմին օրինակի և Փաւստոս այս յոյն և Ագաթանգեղոս հռոմայեցի վարժեալք 'ի մանկութենէ 'ի մերս բարբառ՝ կարօղք եղեն որպէս քնիկ իւրեանց բարբառոյն պատմագրել նոցա։ Իսկ զի Պրոկոպիոս յիշէ դիւրս իմն անուանեալ ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, յորմէ ինչ ինչ նման սմին առեալ պատմէ, և զի Փարպեցին նովին անուամբ

զգիրս զայս յորջորջէ, ապա ուրեմն եթէ չիցէ այլ մատեան համանուն՝ զընթերցեալն նորա յոյն օրինակ թարգմանութեէ հայ բնագրիս մարթ է համարել, և կամ զի սորին մատենագրի յերկաքանչիւր բարբառս իցէ պատմագրեալ։

Ինայ արդ երրորդ խնդիրն իրաւապէս երկբայելի. զի՝ ի սկիզբն գրոցս զպարսից երրորդ արձանագրելով, երկու այլ դպրութիւնս նախագրեալս հարկ է վարկանել։ Սակայն և՝ ի հակառակէն նոյն ինքն մատենագիրն յայտ առնէ՝ ի յառաջաբանին՝ քառեակ գիրս գրեալ. և ահա չորք գիրք յերրորդէն մինչև ցվեցերորդն պահին։ Ապա մարթ է կարծել, զի երկու այլ նախորդ դպրութիւնք ոչ սորին պատմագրի իցեն, այլ այլոյ՝ զորս նոյն ինքն՝ ի յառաջաբանին յիշատակէ, որք՝ ի քարոզութէն Յադէի մինչև ցկատարումն Պրիգորի մերոյ Լուսաւորչին պատմագրեցին. յորոց մի և զԱգաթանգեղեայ գիրսն անշուշտ հաւաքեալ է, որում զհետ յաջորդեն գիրքս այս։ Յայն սակս իսկ Թուի յաւելուլ առնային գրոց չափոյ առ հասարակ, և կամ Թերևս մատենագրին իսկ, զբառս ՍԿԻԶԲՆ զհետ մակագրին երրորդի դպրութէնն, որպէս զի մի ոք տարակուսեալ՝ Թերի զմատեանս զայս համարիցի։

Այսց Թէպէտ և սկիզբն այսր ինքնուրոյն մատենիս ամբողջ և անթերի Թուի մեզ, այլ գոյ կասկածել նախ, զի Թերևս և այլ մատեան ուրոյն զնախնեացն մերոց իցէ սորա յօրինեալ, և նովին անուամբ կոչեցեալ զայն ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ, ուստի նորին Պրոկոպեայ իցէ առեալ զիրսն Ագաթուղ Թագաւորին մերոյ. զոր և ըստ օրինակագրիս առասպելախառն

ոչնոյ պատմագրէ։ Որպէս զի և զանանուն պատմագիրն, զորմէ անուն իմն յաղագս Նայկայ կակազել ասէ Խորենացին, զսա կարծեցեալ ոմանք։ Այլ երկրորդ կասկածելի է, զի և քառեակ գիրքս այս մասամբ իմն՝ ի վերջ կուսէ Թերի գտանիցին։ Վասնզի՝ ի սկիզբն վեցերորդի գլխոյ թուրքերէն, որպէս ասացաք, խոստանայ պատմագիրն՝ ի ստորոտ ամ պատմուեցին տալ զինքեանէ տեղեկութիւն. և մինչ չև՝ ի ստորոտն հասեալ՝ ի գլուխն վեցերորդ զվաստեայ ուանեինէ եպիսկոպոսէ Հարևանցի իմն պատմէ, յետ կոյս մատենին ոչ ինչ զանձնէ տալով տեղեկութիւն։ Որոյ մարթ է կարծել՝ զի ստորոտ պատմուեցին՝ ուր ստորագասեալ առնէրն զինքեանէ նմին գժբախտութեան իցէ հանդիպեալ, որում հանդիպելոյն մերոյս քերթողահօր տաղքն յինքն և՝ ի Վահակ բազդատունէ, յաւելեալք՝ ի վերջ կոյս երրորդ գրոց պատմութենն, որ՝ ի ցանկս գլխոցն ևեթ նշանակեալ՝ ոչ ուրեք՝ ի գիրսն երևին։ Որդ եթէ արդարև կասկածանքս այս չիցեն տարապարտ, և ժամանակին օգնականութիւնք լրասցի Թերին, յայնժամ Թերևս լինի մեզ ստուգագոյնս ինչ հաւաստել զմատենագրէս. զի առ այժմ աւելի ինչ քան զայս ասել ոչ ունիմք։ Նակ յաղագս չհամաձայնելոյ ժամանակագրութենէ սորա ընդ հաւատարմագոյնս՝ ի մերոց պատմագրաց՝ ոչ է մեզ անկ վիճել։

Չնգեակ օրինակաց բազդատութիւնք առաջնակայ տպագիրսարարաւ. յորոց մին հնագոյն և անթուական՝ ի ներհուն գրչէ գրեալ, որում մանաւանդ ըզհետ ջոքաք, զկարևոր զանազանութիւնս այլոց օրինակացն առ՝ ի ստորև իջոյց նշանակեալ՝ ըստ մերում

առ ՚ի բազմաց վկայեալ հաւատարմութեան ։ Այլ խոստովանիմք զի առ ձեռին գտեալ օրինակքս չէ՞ղեն բաւական յանսխալ տպագրութիւն ։ քանզի բազում ուրեք և ՚ի յայտնի վրիպակն ամենեքին համաձայնիկեն , թերևս անդստին ՚ի միջէ օրինակէ գաղափարեալք ։

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԽՈՍՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳՏԵԼԻ

Ա. ՅՍ ինչ է՝ ի զարուցեալս երկրորդ՝ պատմուցէցս. ժամանակագիր կանունք մատենից, և առնմին զպարուցիւնք երեք, այս ինքն են սոքա չորք մատեանք. և չորեքին միով իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք պատմուցեաց ազգացն Հայոստան աշխարհին որդւոց Հայկայ: Ա. յս ինքն կարգ անցելոց իրաց, գործք և վարք մինչև յիւրաքանչիւր ելս յաշխարհս քահանայապետաց սրբոց արանց ՚այ, և թագաւորաց տէրանց աշխարհիս արշակունեաց, և զօրավարաց՝ առանց անուանեաց քաջ նախարարաց, և խաղաղուե և պատերազմին և շինուցէ և աւերածոյ և արգաւրուցէ և անօրէնուցէ և աստուածպաշտուցեան և ամբարշտուցէ. ժամանակագիր արարեալ՚ի Թագաւորուցեենէն Լտոսրովու որդւոյ Տրդատայ մինչև՚ի միւս վերջին ժամանակն վատթարելոյ Թագաւորացն Հայոց, և՚ի քահանայապետուցէն Ա ղթանայ որդւոյ Գրիգորի առաջնոյ քահանայապետի մինչև ցայսոսիկ՚ի վերջինսն՝ որք կային գլխաւորք եպիսկոպոսք Հայոց, մի ըստ միոջէ կարգաք թուաք և համարօք կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր գլխովք: Նւ չորս խոստմունս չորից չորեցունց զպարուցեանցս յիւրաքանչիւր իւր գլուխս պատուաստեցի մինչև՚ի կատարած սորին, առ՚ի զօգուտն ժառանգել՝ որք միանգամ կամին սրտի մտօք հասու լինել սմին զոր ասելոցս եմ:

ԽՈՍՏՈՒՄՆ ԵՐՐՈՐԴ

ԿԱՆՈՆՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ՄԱՏԵՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՅԱՐՍԱՆ ԵՒ ՄԻ

Ա. Յաղագս որ ինչ յետ քարոզութեն Թադէոսի Առաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին որդւոյ Թորգոմայ։

Բ. Յաղագս մեծի առաջնոյ քահանայապետին Գրիգորի, և նոցունց շնորհանցն։

Գ. Յաղագս Թագաւորութեն Խոսրովու որդւոյ Տրդատայ, և վրթանայ մեծի քահանայի որդւոյ Գրիգորի։

Դ. Յաղագս երկուց տոհմանցն՝ որք անզաւակեցան, մնանացեալեանքն և Ազդունիք, ի մէջ Հայաստան աշխարհին։

Ե. Յաղագս որդւոց քահանայապետին վրթանայ, որոց անունք էին երիցուն Գրիգորիս, և երկրորդին Յուսիկ։

Զ. Յաղագս Գրիգորիսի՝ որդւոյ վրթանայ, և նորուն վախճանին, և տեղին՝ ուր եղաւն։

Է. Յաղագս մարտի պատերազմին հինին եկելոց յարշաւանաց Թագաւորին Մազքթաց յաշխարհն իշխանուհի Հայոց Թագաւորին, և կամ որպէս սատակեցաւ նա զօրօքն իւրովք հանդերձ։

Ը. Յաղագս մայրենացն տնկելոց, և պատերազմացն ընդ Պարս, և աղգահատութեն տան նախարարացն տոհմին Բզնունեաց։

Թ. Յաղագս Բակուրայ դրեշխի, որ ապստամբեաց յարքայէն Հայոց. և թէ զկնի սատակեցաւ ի զօրացն Հայոց, և փոխանակ նորա լինէր դրեշխ վաղինա սիւնի։

Ժ. Յաղագս Յակոբայ եպիսկոպոսին Մծբնայ։

ԺԱ. Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս, և անկանելոց ի պատերազմին մեծի զօրավարին վաչէի, և մահուան Թագաւորին Խոսրովու, և փոխելոց յաշխարհէ հայրապետին վրթանայ։

ԺԲ. Յաղագս Թագաւորելոց Տիրանայ յետ հօր իւրոյ ի վերայ Հայոց աշխարհին։ Սոյնպէս և Յուսիկ յետ իւրոյ հօրն վրթանայ կալաւ զաթոռ հայրապետական. և կամ որպէս սպանաւ ի Տիրանայ արքայէ վասն յանդիմանելոյ զնագաւորն։

ԺԳ. Յաղագս Թէ զկնի յետ մահուն Յուսկան անառաջնորդ լինէր երկիրս Հայոց. և ոչ որդիքն Յուսկան լինէին արժանի հօրն աթոռոյն։

ԺԴ. Յաղագս վարուց մեծին Դանիէլի՝ առն ՚ի յ, և կամ որ-
պէս յանդիմանեաց զԹագաւորն Տիրան, և կամ ո՛ր-
պէս պատուհասեալ մեռաւ ՚ի նմանէ ։

ԺԵ. Յաղագս որդւոցն Յուսկան, եթէ ո՛րպէս ընթադրեալ
առ ոտն հարին զմեծ քահանայութեն զայ զպատիւն ։

ԺԶ. Յաղագս փառինայ, որ կալաւ զաթոռ Հայրապետացն ։

ԺԷ. Յաղագս Շահակայ, որ էր ՚ի զաւակէ Աղբիանոսի և
պիկոպոսի, որ յայնմ ժամանակի երկիրն Հայոց
Թողեալք զտէր և զպատուիրանս նորա ։

ԺԸ. Յաղագս հայր մարդպետի, որ վատ խրատ տալով Թա-
գաւորին՝ տայր կոտորել զազգս նախարարացն Հայոց ։

ԺԹ. Յաղագս որդւոցն Յուսկանն, Պապայն և Աթանագի-
նէին, եթէ ո՛րպէս կամ զնարդ սատակեցան յանօրէ-
նութեն իւրեանց ՚ի տեղիսն սուրբ ։

Ի. Յաղագս Տիրանայ Թագաւորին, եթէ ո՛րպէս մատնե-
ցաւ յիւրմէ սենեկապետէն Խիխակայ սիւնոյ, եթէ
ո՛րպէս կորեաւ, և ՚ի խաղաղուե ժամանակի յանկար-
ծակի գերեցաւ ՚ի վ արազէ իշխանէն պարսկէ. և կամ
ո՛րպէս ամ երկիրն Հայոց ընդ նմին կորեաւ և կործա-
նեցաւ ։

ԻԱ. Յաղագս Թէ ո՛րպէս ժողովեցան միաբանութեք ամ նա-
խարարքն Հայոց, և չոգան ածին զԹագաւորն Յունաց
իւրեանց ՚ի Թիկունս օգնականութեն յերկիրն Հայոց.
և կամ ո՛րպէս եկն Թագաւորն Պարսից բազում զօրօք,
և կոտորեալ լինէին զօրքն Պարսից ՚ի զօրացն Յունաց
և ՚ի մնացորդաց Հայոց. և Ներսեհ արքայն Պարսից
յերկրէն Հայոց միաձի ճողոպրեալ յերկիրն Պարսից
փախստական անկանէր ։

ԹՈՒՉԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԵՐԲՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԻՍԿԻԶԲՆ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թադէոսի Առաքելոյ յերկիրն Հայաստան աշխարհին. կանոնք ժամանակագիր մատենից։

Ի ԿԱՐՈԶՈՒԹԵՆԷՆ Թադէոսի Առաքելոյ և նորուն յետիւն և ի մարտիրոսութենէն մինչև ի կատարումն վարդապետութեն Գրիգորի և իւրոց հանգստեանն, և յառաքելասան Սանասարիոյ արքային մինչև յակամայ հնազանդելն Տրդատայ զանցեալ իրացն զառաջնոցն զվարսն լաւացն, և որ զնոցունն հակառակ ընդդիմակաց, այն ամենայն ի ձեռն այլոց գրեցան։ Բայց և մեք ի մերում աստ եդաք փոքր ի շատէ ի կարգի պատմութեէ, ոչ զանց արարեալ Թողաք վասն պատշաճ իրաց կարգին։ Ա՝ ասն զի է ինչ մեր պատմութի՝ որ առաջինն է, և է ինչ՝ որ վերջինն է. իսկ որ միջինն ինչ եղև, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ։ Բայց զի մի՛ ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երևեսցի հունն մի, նշանակեցաք. զոր օրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կատարումն բովանդակութե։ Ա՛յս ինչ, որ ինչ յետ այսորիկ կարգի, աստ պատմի աստէն առ ամին։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս որ ինչ վան մեծի քահանայապետին Գրիգորի և նոցունց չերմանցն։

Ա՛ՐԴ՝ ի թագաւորութեանն Տրդատայ՝ որդւոյն Խոսրովու, լուսաւորութիւք հաւատոյ և աստուածպաշտութիւնն հաւատոյ, ծանօթութիւք՝ ի ձեռն Գրիգորի՝ որդւոյն Անակայ, մեծի քահանայի. և ո՛րոյ ընդ նմին կրսեր որդին Աբիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսական յամ ընթացս վարդապետութեան զամ աւուրս կենաց իւրոց մինչև յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ։ Իսկ սոցա պատրաստեցան տեղիք ընակութիւն, և արժանի եղեալ չերիմք հանգստեան. և մեծին Գրիգորի՝ ի Գարանաղեաց գաւառէն, ՚ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Գորդան. և սրբոյն Աբիստակայ որդւոյ նորա՝ յետ խոստովանութեան մահուն իւրոյ, և տարան զնա ՚ի Գոփայ գաւառէ, և եդին զնա յԱկեղեաց գաւառի ՚ի Թիլն աւանի, ՚ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ։

ԳԼՈՒԽ Գ.

Որ ինչ վան Թագաւորութեն Խոսրովու՝ որդւոյ Տրդատայ. և վերջին Թանայ մեծի քահանայապետին՝ որդւոյ Գրիգորի։

Ա՛ՊԱ յետ այսորիկ Թագաւորեաց Խոսրով Կոտակ, Թոռն Խոսրովու, որդի քաջի և առաքինւոյն Տրդատայ արքայի։ Յաւուրս սորա եկաց և եղև քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ և եղբօրն իւրոյ, երից որդին Գրիգորի Վ՚ըթանէս։ Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատուն և առողջութիւն, պտղաբերութիւն և ստացուածաշատութիւն և շահեկանութիւն, և մեծն աստուածասէրն պաշտօն ՚ի

հաՀոյականաղն բարուքեՀ յամն յաւուրս սոցա ա-
ՀՀել բաղմացաւ : Ի ուսաւորիչ և առաքնորդեր նոցա
սուրբն Ագ ր քեԹանէս՝ իբրև զՀայր իբրև զեղբայր իւր .
իրաւունք և արդարուքեՀ ծաղկեաղ էին ՚ի դարուն
յայնմ :

Օ այնու ժամանակաւ երքեաղ հասաներ եպիս-
կոպոսապետն Ագ ր քեԹանէս ՚ի մեծն յաւաջին ՚ի մայրն
եկեղեցեացն Հայոց , որ էր յերկրին Ցարծնու , ուր
նշանաքն եղեբքը կործանեցան բադիկք մեՀենիցն յայն
ժամ, վաղ և առ մեծաւն քահանայապետաւն Գրիգ
դորիս : Այս երքեաղ կատարեր անդ , ըստ Հանապազ
սովորուքեՀն , զտեառնն զնաչական զպիրկուքեՀն զպա-
տարագն գոՀուքեՀ , զՀաղորդուքեՀ չարչարանաց յի-
շատակի , զկենդանարարն և զազատիչն զմարմին և
զարիւն աստուածորդոյն տեառն մերոյ Ցիսի Վրիսի :
Վրանգի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն
Հայոց, Հանդերձ Թագաւորաքն և մեծամեծաքն, նա-
խարարաքն և աշխարհախուժք բազմուքեՀք պատուել
զնոյն տեղիս , որ յառաջ էին տեղիք պատկերաց կը-
ռոցն , և ապա յանուն աստուածուքեՀն սրբեցան , և
եղեն տուն աղօԹից և տեղի ուխտից Համ ումեք :
Ա՛նաւանդ յայն ՚ի գլխաւոր տեղին եկեղեցին ժո-
ղովել ՚ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ , կատարել
անդ ամի ամի եւԹն անգամ. որք զնոյն ունէին սո-
վորուքեՀ առաւել ևս ՚ի մեծի մարգարէարան մատ-
բանն ՅովՀաննու : Այնպէս և յառաքելարանս տն
աշակերտացն , սոյնպէս և ՚ի վկայարանս մարտիրո-
սացն ամի ամի ժողովելք , զոր տօնին յիշատակի նո-
ցա վարուց գործոց կենցաղ քաջուքեՀ խմբեալ՝ ցեն-
ծային : Իսկ դէպ իմն լինէր ՚ի ժամանակին՝ յորում
մեծ քահանայապետն Ագ ր քեԹանէս երքեաղ շրջեր ա-
ռանձինն սակաւուք , կատարել զպատարագն օրհնու-
քեաւն : Ա՛րդ որք միանգամ զՀնուքեՀն կռապաշտուքեՀ
ՀեԹանոսուքեՀ զնոյն սովորուքեՀն մինչև ցայնժամ
և ունէին զաղտնի , ՚ի մի միաբանուքեՀն ժողովելք՝
հասանէին իբրև Հազարք երկու , խորՀուրդ եդեալ
ընդ միմեանս՝ սպանանել զքահանայապետն այ զԱգ ր
քեԹանէս : Այլ ոչնչէին և սակաւ մի խորՀուրդ Հա-
մարձակուքեՀ ՚ի Հնոյէ Թագաւորէն , զայն գործել·

վասն զի յանդիմաներ զնա սուրբն վասն դաղտնի հնու-
թեան կծծուքեն բարոյից պոռնկուքե ։ Եւ հասեալ
պատէին զմեծ քաղաքոյին եկեղեցւոյն Կ.Հռիշտոս ։
Ինչ դեռ նա ի ներքս մտեալ՝ զպատարագն կատա-
րեր , արտաքուստ բազմազօրուն փակեալ պաշարել
կամեցան ։ Որոց առ հասարակ ոդք ի գնդին էին բա-
զուկք իւրաքանչիւր՝ յետս դարձեալ ի վերայ իւ-
րաքանչիւր թիկանց , առանց իրիք կապելոյ՝ աքանչե-
լապէս կապեալ լինէին ։ Կ.յսպէս պաշարեալք ըն-
կապձեալք դերեալք վանեալք կծկեալք , ամենե-
քեան առ հասարակ յերկիր անպեալք անբարբառ
կային , անխաղացք ի տեղւոջէն . որք էին տոհմք և
ազգք աշխարհակերք աշխարհաւերք ժանդագործք
քրմացն ։ Կ.րդ այնպէս պաշարեալք , դիզեալ կային
ամբոխն ի գաւթի եկեղեցւոյն . զորս երեալ իւր իսկ
ինքնին Կ.րիստոս մատուցեալ հարցանէր զնոսա ,
եթէ դուք ոյք էք , կամ ուստի գայք , կամ զի խընդ-
դրէք , կամ ուստի եկիք ։ Իսկ նոցա զարդարն սկը-
սեալ խօսել , խոստովան լինէին՝ եթէ եկաք զի աւե-
րեսցուք զտեղիս , և զքեզ սպանցուք , հրամանաւ հա-
մարձակեալ ակնարկելով մեծին Հայոց տիկնոջն .
այլ տէր ՚ած զգօրութենն իւր յայտնեաց , և երոյց մեզ՝
թէ ինքն միայն է ՚ած . և այժմ ծանեաք և հաւա-
տացաք՝ եթէ նա միայն է ՚ած ։ Կ.րդ այսպէս կամք
աւասիկ կծկեալք , զի և շարժել անգամ ոչ կարեմք
ի տեղւոջէս ։ Իսկ երանելին Կ.րիստոս զբանն վար-
դապետութեն ի մէջ առնոյր , հաստատէր զնոսա ի
հաւատն ի մի տէր ՚Յս Կ.ՀՏ , շատ ինչ խօսեր ընդ
նոսա ։ Կ.պա աղօթս մատուցանէր , և խնդրէր յայ-
բժշկէր և արձակէր զնոսա յաներևոյթ կապանացն
և յանհնարին կծկութենէն տանջանացն ։ Եւ նոքա
իբրև փրկեցան յայնմանէ , ապա առ հասարակ անկա-
նէին առաջի նորա , և խնդրէին ապաշխարութեան
զդեղն . և նա տայր ժամանակ սահմանեալ ապաշ-
խարութենէ ։ Եւ ուսեալք զհաւատն միաբնական ըն-
երրորդութենէն , և ապա մկրտեր իբրև հազարս եր-
կուս . Թո՛ղ զկանայս իւրեանց և զմանկտի . և այս-
պէս ի հաւատ խառնէր , և արձակէր սրբեալս և
հաւատացեալս ։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս երկուց տոհմիցն՝ որք անզաւակեցան ի մէջ Հայաստան աշխարհին, վասն մանաւանդ ենից և Ոլոգունեաց։

Այ ի զայն ժամանակաւ յարեաւ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, ի մեծ նախարարսն և իշխանսն երկու, զաւառակալք աշխարհատեառքն անգանիկին ընդ[1] միմեանս, մեծաւ ոխութիւն յարուցին կռիւ, և տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց։ Այլ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն մանաւանդեան տոհմին, և միւս ևս նահապետն Ոլոդունեաց տոհմին։ Կռուէեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ և բազում մարդկան լինէր ծախուման կոտորածոյ։ Ապա առաքեցին Թագաւորն Խոսրով և մեծ եպիսկոպոսապետն Ա ղթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Ագղիանոս ի մէջ նոցա, խօսել ի հաշտութիւն խաղաղութեան։ Այրթեալ հասանէր ի մէջ նոցա երանելին Ագղիանոս, զնոսա ուղղել նուաստ ձեռ՝ ընդ միմեանս հաշտեցուցանել։ Ընդարգելին զնա, և ոչ լուան բարեխօսութեանն եկելոյն. անգոնեցին զյղելին, և մեծաւ թշնամանօք արձակեցին զեպիսկոպոսն, և առնուին աւերեցին զտունն արքունի։ Այլ զայրացեալք խստութեամբ, հապճեպ տային ընդ միմեանս մարտ պատերազմի։ Ապա մեծ ցասմամբք և բազում սրտմտութիւք արձակեաց Թագաւորն ի վերայ նոցա զԱ աչէ որդի Ագրտաւազդայ, զնահապետ մամիկոնեան տոհմին՝ յաղագ սպարապետութեան Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց, սատակել կորուսանել զազգն երկոսեան։ Ապա երթեալ հասանէր ի վերայ նոցա զօրավարն Ա աչէ. հարկանէր վանէր զազգսն երկոսեան, և ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զրձ կորիւն և ոչ զմի. և ինքն դառնայր առ արքայն Խոսրով Թագաւորն Հայոց, և առ եպիսկոպոսապետն Ա ղթանէս։ Այլ ետ զաւանն և զբուն

1 Յօրինակի միում ընդ ինքն։

զահոյից զեւղն նահապետին մանաւազնից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. զմանաւազակերտ ամ սահմանաքն և զաւառակաւն հանդերձ՝ որ շուրջ զնոքօք էր, որ կայ ՚ի կողմանս զետոյն Նփրատայ: Նա ետուն զքուն զեւղն Ուրդունւոց, որոյ անուն էր Ուրդորու. ուստի եպիսկոպոս Խասանու ամ սահմանաքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Խասանու:

ԳԼՈՒԽ Ե.

Վասն որդւոցն Աղթանայ, որոց անուանքն այս են. առաջնոյն Գրիգորիս, երկրորդին Յուսիկ:

Աթս Աղթանէս և Աբիստակէս որդիք էին մեծի քահանայապետին Գրիգորի, և էր Աբիստակէս կուսան՝ սուրբ ՚ի մանկութենէ. զի Թէպետ և կրսեր որդի էր, կանխաւ Եհաս յաթոռ հայրենի եպիսկոպոսութենէ: Իսկ Աղթանէս էր ամուսնացեալ և անորդի. և բազում ժամանակս խնդրեր նա յայ, զի մի զրկեսցի նա յօրհնութենէ զաւակի, այլ ՚ի պատուոյ նորա կացցէ առաջի նորա ՚ի պաշտօն տեառն: Նա ՚ի ծերութենէ նորա լուաւ տէր աղօթից նորա. յղացաւ ամուսին նորա, և ծնաւ երկուս որդիս երկուսեակս, և կոչեաց զանուն երիցուն յանուն հօր իւրոյ Գրիգորիս, և երկրորդին Յուսիկ: Ընդ անան զառաջեաւ թագաւորին Հայոց, և ուսման գրոց փոյթ ՚ի վերայ կալան ուսուցանել զնոսա: Այս երեք որդիքն Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութենէ կողմանց Աղուանից և Աղթաց, վասն հոգեկիրը առաքինի արուեստացն, բարեհասակ, և զգիտութիւն այ յանձին կրելով: Իսկ ամուսնացաւ նա, այլ ՚ի հնազետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութենէ աշխարհին Աղթաց և Աղուանից, այս ինքն սահմանացն Ատրպատականի: Իր թեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգօք, առաջնոյն Գրիգորի՝ հօրն գործոցն նմանեալ:

Իսկ զՅուսիկ մուրացաներ Տիրան որդի Թագաւո-
րին Խոսրովու. և ետ արքայորդին Տիրան զդուստր
իւր կնութիւն Յուսկանն որդւոյ Ս[ր]թանիսի։ Եւ
մինչ դեռ մանուկն էր, չետ միանգամ յառաջնում
գիշերին մտանելոյ՝ յղացաւ կինն։ Եւ իսկ և իսկ ե-
տես ՚ի տեսլեանն՝ զի երկու էին մանկունքն, և ոչ
հաձոյ ՚ի պաշտօն տեառն այ. և զղջացաւ զամուս-
նանալն։ Այր, և աղաչեր զնա, և ապաշխարեր մե-
ծաւ տառապանօք։ Եւ յամուսնանալն բռնադատե-
ցաւ ՚ի Թագաւորէն իբրև զմանուկ. սակայն և այն
ըստ այ չնորհացն գործեր, զի ոչք առ յապայն և առ-
նելոց էին ՚ի նմանէ հովիւքն գվիսաւորք, որք յօգուտ
աշխարհին և ՚ի շահ մշակութեանն եկեղեցեաց յաւե-
տարանական հրամանացն սպասաւորել։ Այլ սակայն
նա ըստ այն մի գիշերն այլ ոչ եմուտ առ կինն իւր.
և ծնաւ կինն երկաւորիս, որպէս և ետես ՚ի տես-
լեանն յառաջագոյն. և կոչեցին զանուն առաջնոյն
Պապ, և զերկրորդին Ներսէհ։

Եւ չետ միոյ գիշերոյ ՚ի կինն մերձենալոյ այլ ոչ
ևս մերձեցաւ ՚ի նա, վասն առաքինութեանն մանկուն.
իբրև ոչ եթէ զամուսնութիւնն լինչ աղետիւղ համա-
րեր, այլ կասկածեր նա ՚ի տեսլենէն՝ զոր ետես, և-
թէ ընդէր բնաւ ՚ի նմանէ այսպիսի զաւակ անպիտան
ծնանիցի։ Վասնզի ոչ երկրաւոր զաւակի ցանկա-
ցեալ էր, այլ այսպիսումն՝ որ ՚ի սպասաւորութիւն
սպասու պաշտամանն ծառայութեանն տեառն այ կացցէն։
Եւ զայմ խոկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ, ոչ
լաւ համարեցաւ զանցաւորս՝ այլ զվերինն. երկնա-
կեաց կենացն ցանկացեալ հայեր։ Եւ առ համարեր
զծառայեցն միայն Աստուծոյ, անձին փառս համարեր.
ոչ լինչ ածէր ընդ միտ զսէր թագաւորին կամ ՚ի նմա-
նէ կուսէ զպատուեալն, կամ զմեծութիւն, կամ զընչ
զանութիւն փեսայութեան թագաւորին. այլ յայնմ
ամէ ուրացեալ հրաժարեր, և օտարոտիս և գարշե-
լիս և պատրանս համարեր։ Եւ չետ առաջնոյն այլ
ոչ ևս խաբեցաւ երբէք ուրեք իբրև զմանուկ. այլ
հայրական միտս զծերական հանձարովն ստացեալ,
զնորատն իմաստութիւն անմահութիւն։ Եւ առ համարե-
ցաւ զնախատինսն Աստուծոյ, քան զմեծութիւն թագաւո-

ըսայն . զՀգուշս վարուց ընդրեալ անձին Իւրոյ , յեր-
կոտասանամենից և ՚ի վեր առաքինանայր : Որ Իւրոյ
հարցն նմանեալ , և զեղբօրն Իւրոյ Գրիգորի զօրի-
նակ բերեր անձին Իւրոյ . զքրիստոսեան լուծն առանց
ամ յապաղուլթե ձգեր մինչև ՚ի վաղձան :

Դայց վասն զի թշնամանացեալ էր տուն Թագա-
ւորին ընդ նմա , և մինչ դեռ վասն այնորիկ զզուէին
զնա աներք նորա , մեռաւ կին նորա . ազատեալ լի-
ներ Յուսիկ ՚ի [1] բանեըցն : Եւ մինչ նա հոգացեալ
վասն իւր ծննդոց մնացելոց զաւակին , և վասն այսո-
րիկ հոգալով կայր յաղօթս առ Ար , և երևեցաւ նմա
հրեշտակ տեառն ՚ի տեսլեանն , և ասէ ցնա . Յու-
սիկ , որդի Գրիգորի , մի երկնչիր . զի լուաւ տէր ա-
ղօթից քոց , և ահա ծնցի ՚ի քո զաւակացդ այլ զա-
ւակ : Օ՚ի լինցին նոքա ՚ի լուսաւորուլթե գիտուլթե ,
և աղբեւրք հոգևոր խմաստուլթե հայաստան աշխար-
հիս : Եւ ՚ի նոցանէ բղխեսցեն ջուրք պատուիրա-
նացն Այ . և խաղաղուլթե բազում և շինուե և հաս-
տատուլթիւն բազում եկեղեցեաց ՚ի տեառնէ նոցա
տացի , բազում յաղթուլթե և մեծաւ զօրուլթե . և
բազում մոլեալք դարձցին ՚ի ճանապարհս ճշմար-
տուե . որով և Աւ բազում լեզուօք փառաւորեսցի
նոքօք : Որք սիրնք եկեղեցեաց լինիցին , և մատակա-
րարք բանին կենաց , և հիմունք հաւատոց . պաշտօ-
նեայք Աւի և արբանեակք հոգւոյն սրբոյ . զի ուս-
տի հիմն լցեն շինուածոյն , և կատարն անտի լինիցի :
Եւ բազում տունկք պտղաբերք և շայեկանք և օգ-
տակարք ՚ի հոգևոր դրախտին ՚ի նոցա մշակուլթէն
աճցին տնկեսցին և ընկալցին զօրհնուլթե յԱյ : Ուսկ
որք ոչն կամիցին տնկել նոքօք , և ՚ի նոյն հոգևոր ցո-
ղոյն գիտուլթէ ըմպել , խոտան գտանիցին՝ մերձեալք
յանէծս . և վաղձան նոցա լինի այրուձին հրոյն : Դա-
զում անգամ վասն տեառն լինիցին նոքա ՚ի հեռ և
՚ի նախանձ յանարժանացն . այլ կացցեն ՚ի հաւատս
անշարժ իբրև զվէմ , և յաղթեսցեն նոցա համբե-
րուլթեամբ բազմաւ : Եւ յետ նոցա Թագաւորեսցէ
ատուլթիւն , յապարատան յանձնասէր յարծաթասէր

1 Յօրինակի միում ՚ի անէրոյն :

'ի մտախոհ յանապատասպարան յանսխտան 'ի սուտակ և 'ի բանսարկու մարդկանէ. և ասպա եթէ ոք գոցի որ և արասցէ ունել զուխտ հաստատուԹե՛ն հաւատոյ, հաղիւ հազիւ: Այլ զայս ամ լուեալ մանուկն Յուսիկ 'ի հրեշտակէն, միսիԹարուԹի՛ն մեծաւ գոհանայր ընտեառնէ այ, որ արժանի արար զնա այսպիսի չայտնուԹե՛ պատասխանւոյն. և զամ աւուրս կենայ իւրոյ գոհանայր ևեթ չամ ժամ անդադար:

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Գրիգորի վաղճանին:

Եյն վասն Գրիգորի եպիսկոպոսի, որդւոյ Պ ըրԹանայ, եղբօրն Յուսկան, որ կաԹողիկոս էր կողմանցն Պ րաց և Պղուանից. իբրև եկաց սա չիւրում պաշտամանն, մինչ դեռ մանուկն Ես էր, շինեաց նոր բոզեաց զամ եկեղեցիս կողմանցն այսոցիկ, և ձգեցաւ 'ի գաւառակողմանցն Պորպատականի: Վարող ՃշմարտուԹե՛ հաւատոյն Պ'ին լինէր նա, և առաջի իսկ ամենեցուն էր աքանչելի և զարմանալի. խստագոյն և դժուարադոյն անհամարք ծանրաբեռն վարուցն կրԹուԹե՛ք խստամբերուԹե՛ն, պահօք և սրբուԹե՛ք, տքնական հսկմամբ անձանձրոյԹ աղօԹիցն չերմուԹե՛ առ ՝ած կանխելոյ վասն ամ մարդոյ: Օ աւետարանական լինԹացն և զվերակացուԹի՛ն եկեղեցւոյ սրբոյ չնորհօքն այ առանց պակասուԹեան տանէր. առաւել ևս փուԹայր, գուն [1] եդեալ յորդորելով զամենեսեան առ 'ի բարեացն քաջալերուԹի՛ն, զցայգ և զցերեկ պահօք և աղօԹիւք և ուժգին [2] խնդրուածովք և բարձրակալ կատարման հաւատովքն՝ մերձաւորաց և հեռաւորաց զչոգևւոր ընտանէն ածէր. իբրև զպատերազմասէր նահատակ

1 'ի կրկին օրինակս գոյն էջեալ: 2 Յօրինակի միւսմ ուշագին:

միշտ զանձն ի կրթուԹե և ի պատրաստուԹե ունելոց համ փորձուԹեց և վշտաց, առ ի տալ պատասխանի համ համարձակուԹե, վասն ձշմարտուե հաւատոյն մարմնչել որ վասն Քրե։

Այլ երբև ուղղեաց և նորոգեաց զամ եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եհաս նա մինչև ի Ձամբար բա- նակին արշակունւոց արքային Պաղքթաց, որոյ ա- նուն իւր Սանեսան կոչէր։ Քանզի և նոցա և Հայոց Թագաւորացն մի ազգաւորուԹե էր տոհմին քնուե։ Այլ երԹեալ յանդիման լինելոց Թագաւորին Պաղքը- Թաց, իշխանին բազմուԹե զօրացն Հոնաց. և եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել և աւետարանել նոցա զՔե։ Այս ցնոսա՝ Թէ ծաներ՛ուք զձե. լուան և ըն- կալան զառաջինն և հնազանդեցան։ Այլ սկսան քննել զօրինսն Քենի, և ուսան ի նմանէ Թէ ատե- լի է ձեզ աւարուԹե և յափշտակուԹե, սպանուԹե, ագահուԹե, այլազգկուԹե, զայլոցկերուԹե, ցան- կուԹե այլոց ստացուածոց։ Այլ այսպիսի լուն երօք երբև լուան, զայրացան ընդ բանս նորա և ասեն. Օ՜ի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ առցուք զայլոյ, ի՞ կեցցուք այսչափ անչափ զօրաց բազմուԹեք։ Այլ Թէպետ բիւրաւոր բանիւք բարեաց կամէր հաձել զսիրտս նոցա, ոչ ինչ կամէին ունկրն- դիր լինել, այլ ասէին ցմիմեանս. Այկեալ այսպիսի բանիւք կամի ի քաջուԹէ որոյն կենաց մերոց խա- փանել զմեզ. իսկ եԹէ սմա լսեցուք, և դարձցուք յօրէնս քրիստոնէուԹե, ի՞ կեցցուք, զի ոչ յերի- վար հեծցուք բստ ընուԹե օրինաց սովորուԹեց մե- րոց։ Այլ ասէին, այս խորհուրդ Հայոց Թագաւո- րին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափա- նեսցէ զմեր արշաւանս ասպատակուԹե հինի յաշ- խարհին իւրմէ. այլ եկայք զսա պակասեցուսցուք ի միջոյ, և մեք ի Հայս արշաւեսցուք, աւարաւ զմեր աշխարհս լցցուք։

Այսպա չքնեցաւ Թագաւորն, և լուաւ բանից զօրացն իւրոց. և կալան ձի մի ամենի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագուց ձիոյն, և արձակեցին ընդ ծովեզերք դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Աղձնեայ։

և այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստի զմահ նուիրն Գրիգորիս։ Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Աբաւանդայ, և բերին ի գաւառն Իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարաս։ Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին։ Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ և աշխարհացն գաւառացն այնոցիկ, զսորա զօր տօնին զյիշատակ քաջուքեն ցնծան։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս մեծի պատերազմին հինին եկելոց յարշաւանաց արքային Պարսից յաշխարհ իշխանութեանն Հայոց Թագաւորին. և թէ որպէս սատակեցաւ նա և զօրքն իւր։

ՅԱՅՆՄ ժամանակի Թագաւորն Պարսից Սապուհ անհնարին նիւթեաց զօրամատուցեալ ոխութեանն ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամ զօրս Հոնաց և Վռաց, Ասաւասպարաց, Հեպթաթակաց, Ժամախաց, Կաղաց, և Աղուանից, Գուգարաց, Շ չջաց և Ալղասց և Բաղասճաց և Լգեերսուանացն, և այլոց խառնաղանճ բազմութիւն անթիւ անբնակին վայելատուն զօրութեանց, որոյ միանգամ լինքն իշխեր զօրացն բազմաց։ Նկին անց ըստ իւր սահմանն ընդ գետան մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին։ Եւ չգոյր թիւ բազմութեանն հեծելազօր գնդացն, և ոչ համար շերտաւոր հետևակ զօրուն. զի և ինքեանք զինքեանս զիւրեանց զօրսն թուել ոչ կարէին։ Բայց ուր լինէր հանդէս, ի նշանաւոր տեղիս գնդէ գնդէ, դրօշս դրօշս, վաշտուց վաշտուց,

յերևելի երևելի տեղեաց՝ մին ի բռնաքար առ այր հրամայէին, զի բերցեն ընկեացեն՝ շեղջ կուտել. զի որչափ լցեալ, այնու երևեսցի նշանակ բազմութեանն, առ իմանալ առ վաղիւ անցելոց իրացն ահաւորութեանն նշանակ։ Եւ ընդ որ միանգամ անցանէին, այսպէս Թողուին յամ Ճանապարհակից, ի վերայ անցից պղտոյից։ Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանօքն, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքիկն Ասատաղու, և մինչև ի Վանձակ սահմանս ատրպատականի. խաղացուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յայրարատեան գաւառին բանակ մեծ լինելոյ։

Եւ խոյս եառ Թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն, նոյն ի Մանէասեայ յարքայէն Աղբեթաց. և անկան յամուր բերդն Վարեւնից[1] յերկիրն Ասղգայ[2], և ընդ նմա ծերունին Ա ղթանէս եպիսկոպոսապետն Հայոց։ Այլա առնուին պահս պահել, և խնդրել յայ՝ զի փրկեսցէ զնոսա յայմմ՝ ի դառն դահճէն, և սկսան խնդրել՝ ի տեառնէ այ։ Եւ նա ծածկեալ բռնացեալ ուներ զերկիրն առ հասարակ իբրև տարի մի։ Այլա եկին եհաս Ա ձէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնէն տոհմէն, զօրավար յամ Հայոց մեծաց։ Ո՛ր երթեալ էր նա ի ժամանակին յայմմիկ վերկայն Ճանապարհս ի կողմանս Յունաց։ Այլա ժողովեաց նա զյամ քաջս քաջս նախարարացն, և գունդ կազմեր բազում յոյժ. և հասանէր անկանէր ի վերայ բանակին, յառաւօտուն ժամուն այգենալոյն պաշտամանն. զի բանակեալ էին նոքա ի լերինն՝ որ կոչի Ցլոյս գլուխ. և առ հասարակ ընդ սուր հանէին զամենեսեան, և ոչ մի ոչ ապրեցուցանէր, և դարձուցանէր զբազմութեն զերեացն։ Եւ յետ այսորիկ առնոյր զաւարն, խաղայր գնայր երթայր ի ջանէր ի դաշտն այրարատեան գաւառին. երթայր գտանէր զԱնէասն Թագաւորն Աղբեթաց բուն գնդաւն, անթիւ անհամար զօրօքն հանդերձ ի Ա ղարշապատ քաղաքի։ Այլ եւս զգուշանն Ա ձէ, և յան-

1 Ցօրինակի միւսմ Տարօնէ։ 2 Յամ օրինակս Կուղայ։

կարծակի յարձակեցաւ ի վերայ քաղաքին, և մատնեաց զնոսա ՚ի ձեռս նորա։

Եւ երբեմն տեսին զնա յարձակեալ ՚ի վերայ իւրեանց, փախեան ելին ՚ի քաղաքէ անտի յառաւպարն ՚ի կողմն յ( )շական բերդին. և զանապատան, և զքաւրուստ տեղիսն ապաւէն իւրեանց համարեցան. և լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ։ Եւ նիզակակիւք զօրավարին Հայոց, որ էին Խազբատ բագրատունի, Աեհունդակ և Վարդգէն ըռըշտունիք, և Վահան՝ նահապետն ամատունեաց տոհմին, և Վարազ կամսական, հասանէին հարկանէին սատակէին զօրսն Ալանացն, և Վազքերթացն, և Հոնացն և զայլոց ազգացն, և ընուին զգաշտն առաւպարացն առ հասարակ դիակամբք մեռելոց. մինչ զի երբեմն զգետ յարուցեալ երթայր արիւնն անհնարին, և ոչ լինէր թիւ զօրացն մեռելոց։ Եւ զինացեալսն սակաւս առաջի իւրեանց հալածականս տանէին մինչև յաշխարհն Խաղատձայ, և զգլուխն Վանէսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Հայոց։ Վակայն երբեմն ետես, լալ սկսաւ. ասէ, Ընդայր իմ էր ազգաւ արշակունի։ Ապա եկեալ էր արքային ՚ի տեղի Ճակատուն, և ընդ նմա մեծ եպիսկոպոսապետն Հայոց. և տեսին զկոտորածն զօրացն հարեալոց, զի նեխէր երկիրն ՚ի հոտոյ մեռելոցն։ Ապա ետուն հրաման՝ դուրգազ հանել յաշխարհէ, և անդէն ծածկել քարակարկաւ վիմօք, զի մի ՚ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոսկերացն երկիրն պղծեացի։ Եւ դադարեաց երկիրն ՚ի խաղալ զօրթեան ամն հարուստ մի. և այսպէս վրէժ սրբոյն Գրիգորի խնդրեցաւ ՚ի Թագաւորէն Վանէսանայ, և ՚ի բանակէ նորա. զի ոչ մնաց ՚ի նոցանէ և ոչ մի։

1 Յերկուս օրինակս Վահան, և ՚ի միւս այլ Վահրևան։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս մայրեացն անկելոց, և վասն պատերազմացն ընդ Պարս. և վասն ազգահատութեանն տոհմին Բզնունեաց նախարարութեանն:

Այն իբրև առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց, ապա ետ հրաման Թագաւորն Հայոց Խոսրով, տալ պարգևս արանցն քաջացն՝ որ վաստակեցին նմա, և փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց մեծաց չհամ՝ի մարտ ձակատուցն պատերազմաց: Այս ետ Ա աչեի զօրավարի զակաս ՂՕ անջանակին, և զՂՕ բաբաշխիս, և զՅլոս գլուխ, ամ գաւառակօքն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգևս: Այս ետ հրաման Թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհին բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տալ կել զայն յայրայրատեան գաւառին. և առեալ յամուր բերդին արքունի, որում կոչին Դաւնի, մինչև՝ի գաշտն Աեծամօրի՝ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ՝ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնուհւոյ՝ տնկեցին զկաղինն: Այս կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: Այս միւս՝ի մայրեացն յերկիցնաս բերանին՝ի նմանէ՝ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատունն՝ տնկով. և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ: Այս անդ շինեցին զապարանսն արքունական, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. և ոչ կացեցին՝ի միմեանս վասն պողոտայի ձանապարհին: Այս աձեաց բարձրացաւ. և ապա զնաց երէս, և ըզգաղանս հրամայեաց ժողովել Թագաւորն, և ընդ զքաղաքօրմանն, զի լցցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեանն Թագաւորութեանն նորա: Այս զօրավարն Ա աչէ կատարեր վաղվաղակի զասացեալսն արքային:

Այս մինչդեռ նա յայնմ գործ զմայրեացքն տնկէր, յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով՝ի Հեր և՝ի Օ արաւանդ գաւառ, թէ պատրաստեալ են զօրքն Պարսից գալ հասանել՝ի գործ

պատերազմի ՚ի վերայ քո։ Այսպա հրամանն եւ արքայ
Խոսրով Վաստաբայնահապետի Վահունեաց, դուքազ
հանել յաշխարհէ աւերլի քան զչարին. և զհամար
զօրուն մատենի[1] զնդաւն ընդ առաջ նոցա խաղալ
հասանել ՚ի դիմի հարկանել, արգելուլ զթշնամին։
Այսպա Վաստաբէն երթայր ընդ առաջ զօրացն Պար-
սից բազմութիւք զօրօք Հայոց։ Իբրև հասանէր Վա-
ստաբէն, խորհուրդ միաբանութիւն դնէր ընդ իշխանսն
զօրացն Պարսից. կամեցաւ մատնել ՚ի ձեռս նոցա
զարքայն Հայոց զտէրն իւր, դարան հրամայեաց գործ-
ել թշնամեացն ՚ի վերայ իւրոց զօրացն, և անդրէն
սուր ետ դնել ՚ի վերայ իւրոց զօրացն։ Յանկարծ
յեղակարծութեան տարակարծի քաւասուն հազար զօրն
Հայոց միանգամայն կոտորէին, և այլ զօրքն փախուս
տական լինէին. և Վաստաբէն չարագործ առնոյր
զօրն Պարսից, և կամէր անկանել ՚ի վերայ Թագա-
ւորին Հայոց։ Այսպա փախստականք զօրացն վաղ հա-
սանէին ՚ի բանակ արքային Հայոց, գոյժ առնել
զանհնարին կործանութեան իրացն եղելոց, զչարագործ-
ութենէ մատնութենէն անօրէն Վաստաբենայ։

Այսպա անգամներ Թաւալէր խնդրէր յոյն բազում պա-
տառանօք և ուժգին արտասուօք Թագաւորն Հայոց
Խոսրով, հանդերձ ՚ի քթանաւ քահանայապետին։
Նոյնժամայն ամենայն կուտէր զօրն առ ինքն
իբրև երեսուն հազար, հանդերձ զօրավարսն ՚ի ա-
զինս. գայր հասանէր ընդ առաջ նոցա, ամ աւա-
զախութիւն մեծամեծ նախարարօք իւրովք։ Նոյն դի-
պեցան միմեանց առ ափն ծովուն Վահունեաց, յի-
ռեսան աւանի, ՚ի ձկնատեսանան արքունի ՚ի վերայ
գետակին։ Նոյն առաւսն զօրն Պարսից, զի ոչ գոյր
թիւ բազմութեան. զի էին իբրև զաստեղս երկնից, և
իբրև զաւազ առ ափն ծովու. զի եկեալ էին անթիւ
փղօք և անչափ զօրօք։ Նոյն առաւ հասին անկան ՚ի
վերայ բանակին, յուսացեալք առ ամօ. հարին, սա-
տակեցին, կոտորեցին, և ոչ Թողին ՚ի նոցանէ և ոչ
մի։ Նոյն Թափեցին աւար բազում, և զփիղսն և զձի
այժ զօրութեան նոցա։ Զերբակալ արարեալ զՎաստա-

1 Յերիս օրինակս մատենի։

բէնն Ա աչէ սպարապետն և քաջ Ա ահան ամատու-
նի , ածէին զնա առաջի մեծի թագաւորին Խոսրո-
վու , և քարկոծ առնէին զնա քարամբ իբրև զայր , որ
աշխարհի և գնդի և զօրաց տեառն իւրոյ դաւաճան
լեալ իցէ : Այլ զազգ նորա և զկին և զորդիս գտա-
նէը յամրոցի անդ իշխանին ըռշտունեաց յանուա-
նեալն Ա ղթամար կղզւոջ՝ ի նաւ ելեալ Ա աչէ սպա
րապետն , անցեալ՝ի կղզին՝ առ հասարակ ոչ զէգ թո-
ղոյր և ոչ զարու : Այս այսպէս բարձաւ ազգատոհմ
նախարարուԹենն այնորիկ . և զտուն նոցա յարքունիս
կալան :

Այլ յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք՝ի տալ
պատերազմ ընդ Խոսրովու արքային . և նա զնէը
օրէնս , զի մեծամեծ աւագանին , նախարարքն աշ-
խարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն
և հազարաւորքն , կայցեն առ արքային , և ընդ նմա
ըղձասցին , և մի՛ ոք երԹիցէ՛ի նոցանէ ընդ զօրս ար-
քունի : Օ՛ի երկնչէր նա յերկմտուԹենէ նոցա , զի
գուցէ զնոյն գործ Վահաբենային գործիցեն , և ապըս-
տամբ լինիցին՝ի նմանէ : Այլ վասն՝ի լինէր՝ի ծե-
րունին Ա աչէ , ՛ի բուն սպարապետն՝ի զօրավարն
Հայոց մեծաց , և ՛ի քաջ Ա ահան յամատունի :
Վտմարէր զօրսն ՝ամ տանջն աւագանւոյն ընդ զօրսն
արքունի , և տայր զգումարատակն ՝ամ՝ի ձեռս նոցա .
և հանապազ կային՝ի քաջուԹե՛ն՝ի մարտ պատերազ-
մի՝ի սահմանս Պարսից . և ոչ տային անխտիր ար-
շաւել աւերել զերկիրն Հայոց , և ոչ նայել : Այլ
կայր արքայ՝ի հանգստի , և աշխարհ՝ի շինուԹե՛ն և
՛ի խաղաղուԹե՛ն ՛ամ աւուրս կենաց նոցա :

ԳԼՈՒԽ Թ.

*Ցաղագս Բակուր բդեշխին՝ որ ապստամբեաց յարքայէն Հայոց, և փո-
խանակ նորա լինելը բդեշխ վաղինակ։*

ՕՐԱՑՆՈՒ ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի՛ ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեաշխն. որ էր մի՛ ի չորից, գահերեց բարձերեց տաճարին արքունի։ Այս ձեռս յարքայն Պարսից. և մատնեաց զարքունի տունն, որ յեց յինքն էր։ Այլ հասեալ զօրս արքային Պարսից՝ ի Թիկունս իւր, և հատաւ յերկրէն յիշխանութենէն Հայոց, և տայր պատերազմ ընդ արքային Հայոց՝ ուժով Պարսից Թագաւորութեն. և սաստկանայր մարտ պատերազմին։ Այսպա առաքէր Թագաւորն Հայոց զբարեկիրս զծառայս իւր, զիշխանն Կորդուաց զՅովնան, և զիշխանն մեծի Նոփոից ըզՎար, և զիշխանն Նոփոից Շահէի Ներսեհ, և զիշխանն Ալիւնեաց զՎաղինակ՝ և զիշխանն Հաշտենից զԱրատ, և զիշխանն Խասենոյ զՎանակ, հանդերձ բազում զօրօք։ Այսպա չոգան յաղթեցին զօրացն Պարսից, և առ հասարակ ընդ սուր հանին զամ. և սպանին զբդեաշխն, եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ։ Այլոց զաղջիկ մի զդուստր նորածին, և զգլուխն Բակուր բդեշխին բերին առ արքայ։ Նա իբրև այլ ոք ոչ էր մնացեալ յազգէն, ետ արքայ զաղջիկն կնուի սերելոյն արքային Վաղինեակայ սիւնւոյ, և զտունն Աղձնեաց. և արար զնա բդեաշխ և պայազատ տան նորուն։ Այսուանգն բազմացաւ, և հանդերձ աշխարհաւն և ամ ուժովն կայր բդեաշխն Վաղինակ՝ ի ծառայութենէ արքային հանապազ։ Այլոյ յորդւոցն Բակուր բդեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զօրավարն Հայոց Վաչէ, և անդ ապրեցաւ Թագուցեալ՝ ի տան նորա։ Որ առ յապա ժամանակի զարձաւ տան նորա լինելոյ։ Որ յայլում ժամանակի զարձաւ կալաւ զտունն իւր. որոյ անուն Խեշա կոչէր։

ԳԼՈՒԽ Ժ.

Ցաղագս Յակոբայ Եպիսկոպոսի Մծբնայ։

Ոչ ածն ու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիս-
կոպոսն Մծբնացւոց, այր սքանչելի ծերուն[ի], վաստա-
կասէր ի գործս Աշմարտութե[ա]ն, որում անուն Յա-
կոբ, փոխանակ ազգասէն պարսիկ կոչէր, այր ընտրեալ
յոյժ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել ի լերինս
Հայոց, ի լեառնն Մարարադայ ի սահմանս այրեա-
րատեան տերութե[ա]ն ի գաւառն Կորդուաց. այր լի
շնորհօքն Աստ[ու]ծոյ, որպէս զօրութե[ա]ն նշանաց և արուես-
տից լինէին ի ձեռաց նորա։ Ա՛ա եկեալ ցանկացեալ
փափաքեալ մեծաւ տենչանօք աղաչէր զնա՝ տեսա-
նել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն, զի յայս
լերինս հանգեաւ նա ի ջրհեղեղէն. քանզի զամ[ի] լինչ
որ հայցէր, առնոյր ի նմանէ։ Ա՛պա մինչդեռ ելանէր
ընդ դժուարին ընդ անջրդի ընդ ափափայն անապա-
տին սարարատեան լերինն, աշխատեցան և ծարաւե-
ցան նա և որք ընդ նմայն էին։ Ա՛պա դնէր ծունր
մեծն Յակոբ ի վերայ երկրին, և կայր յաղօթս առ
Աստ[ուա]ծ. և ի տեղւոջն՝ ուր եդեալ էր զգլուխ իւր՝ բղխ-
էաց աղբիւր, և արբէին նա և որ ընդ նմայն էին. որ
մինչև ցայսօր ասեն այնմիկ աղբեւր Յակոբայ։ Ա՛յն
ինքն ի նմին աշխատեալ դեգերէր՝ զինդրելին տես-
անել առանց յապաղութե[ա]ն, առնէր աղօթս առ Աստ[ուա]ծ։

Ա՛յդ իբրև էր նա խոնջեալ ի վեր ի դժուարին
տեղւոջն մծա ի կատարն, և կարի վաստակեալ էր,
ննջեաց նա. և եկն հրեշտակ Տ[եառ]ն, և ասէ ցնա. Յա-
կոբ Յակոբ։ Ա՛յն նա ասէ. Ա՛սասիկ Աստ[ուա]ծ։ Ա՛յն ասէ
հրեշտակն. Ա՛հա ընկալաւ Աստ[ուա]ծ զաղաչանս քո, և կա-
տարեաց զինդրուածս քո. այդ, որ կայ ընդ մնարս
քո, է ի փայտից տապանակին. ահա քեզի քեզ, ան-
տի է այդ. զի այլ մի՛ ևս յաւելցես տեսանել զայն,
զի Աստ[ուա]ծ այդպէս կամեցաւ։ Ա՛յն մեծաւ խնդութե[ա]ն յոտն
կացեալ, բազում գոհութե[ա]ն երկիր պագանէր Աստ[ուա]ծ, և
տեսանէր զտախտակն՝ իբրև զի կայնեաւ հատեալ

հանեալ Ձեղքեալ ՚ի մեծ լինչ վայտից : Այս առեալ դառնայր անտի, հանդերձ չնորհատուր պարգևեբովն, և որք ընդ նմայն երթեալք՝ իւրովքն Ճանապարհորդ լինէր : Այս ոչ այնպէս մեծն Մովսէս զուարթագոյն ցնծայր յԷյեան սինեական լեռնէն , չասէաք եթէ ա- ռաւելովքն պակասագոյն : Վասնզի յայ առեալ և ՚ճաչագիր հրամանօք ՚ի բազուկս , այր ՚ճաշատեսիլ ՚ի լեռնէն իջանէր : Այլ վասն վըրիժագործ ժողովըր- դեանն , որոց զթիկունան ՚ի տէրունեան ՚ և կործան յերեսս՝ տիրադրուժք իւրեանցակուռ ձուլեցոյն եր- կիր պագանէին , և նովին զհրամանաբերն սրտառուչ սրտաբեկ կացուցանէին : Վասնզի ՚ի տախտակացն խորտակելոյն յայտնի երևէր բերելեացն Թաղծու- Թիւն : Ասկ այս երանելոյս , վասն որոյ և Ճառեալքս յարդարին , ոչ ըստ այմ՝ օրինակի՝ որ անդ գործե- ցաւ . այլ լինքն իւրովքն լցեալ հոգևոր մխիթարու- Թեամբ , կարծեալ զընդունելեացն զյօժարուԹիւն յուսով դիտաւորուԹիւն զՃանապարհայ աւետաբե- րաց : Վասնզի յայտնեաց և ծածկելովք , քանզի միոյն միայն յամենազօրէն առ ամենայն ազգս երկրածնաց չնորհքն մատակարարէին :

Այսպա երբև գայր բերէր այրն ՚այ զ՚ճաչագործ մե- ծուԹեցն պատուհասին զնորատուս՝ որ առ ՚ամ ազգս բանաւորաց և չնչաւորաց՝ յաւիտենից զնշանակն զգ- փայեան ասպրեցուցիչ , զնշանակն հայրենի գործոյն չնոյեան տապանին , ՚ամ քաղաքն և գաւառքն՝ որ չուրջ էին զնովաւ՝ անպայման և անչափ խնդուԹիք և ցնծուԹիք ընդ առաջ ելանէին : Երբև զառաքեալ Վեի երբև զհրեշտակ երկնաւոր տեսեալ զսուրբն , զնովաւ պատէին . զքաջ հովիւն իւրեանց երբև զաս- տուածախօս տեսանէին . և զնովիմբ փարեալք , և զվաստակասեր զօգտաբեր զգարշապարայն զշաւիղն համբուրէին : Այս զբերեալ պարգևացն զչնորհս իւ- րեանց յօժարուԹիք ընդունէին . որ մինչև ցայսօր նշա- նակ սքանչելուԹեն կայ պահեալ առ նոսա երևոյԹ փայեան հայրապետական նոյեան տապանին :

Այսպա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն հայաս-

1 ՚ՅամՈրինակ գրիգորեան փերոանիան :

տանէ աքանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Հայոց առ Արտաշիրհ ուրշտունի, և եկն թափեցաւ յաշխարհն նորա: Ապա զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար և անզգամ է, և զուր տարապարտ՝ի ցասմանէ գառնութենէ սրտին իւրոյ կոտորէ անթիւ մարդիկ: Եկն ուսուցանել և խրատել զնա, զի յաղէ՛ն երկուցեալ դարձցի յընդանութենէն բարս, և մեկուսի՝ի վայր դիցէ զանամնաբար գաղանամտութենի մեղկութենէն իւրոյ: Իսկ իբրև ետես զնա, արհամարհեաց, ծաղր և այպն առնէր անօրէնն Արտաշիրհ զայրն Աստուծոյ զՅակոբ եպիսկոպոսն: Եւ առ վայրկեան բարւոյն իւրոյ՝ զոր ունէր յանձին իւրում, իբրև նմա հեձուկս առնելոյ, ուղէ հարիւր այր՝ որ կային՝ի կապանս առանց յանցման՝ ետ ածել առաջի նորա. և հրամայեաց՝ի դահձէ միոջէ՝ի ծովանդր հոսել. և զայնչափ հոգի առանց յանցման կորուսանել, և կատակութիւն ծաղոյ հրամայէր հալածել զնա յաշխարհէն իւրմէ: Եւ ասէ. Ո՞ւր քումբարեխաւթիւնդ տեսնէր զնմանէդ մեծարեցի զքեզ. դիւր արարի նոցա՝ի կապանացն, և՝ի ծովուն դեռ զուղէին: Իսկ նա գնացեալ անտի մեծաւ տրտմութիւն ըստ հրամանի պատուիրանին տեառն իւրոյ, թօթափեր զփոշի ոտից իւրոց՝ի վերայ նոցա: Գայր հասանէր՝ի լեառն երկաթահատացն և կապարահատացն, և որ ընդ նմայն էին, ընդ Ուրշտունիս: Եւ բաժանէր լեառն բարձր, ուստի երևէին գաւառքն բովանդակ, որում անուն Ընձաքիարս կոչէին: Իբրև հուպ եղև յայն լեառն՝ի ստորոտ լերինն. քանզի բազում աւուրք էին զի չէր ինչ քնաւ ամենևին ձաշակեալ, և ծարաւեաց խիստ ծարաւով: Եկաց յաղօթս առ Աստուած, զնէր ծունր, և եդ զգլուխ իւր՝ի վերայ երկրի, և բխեաց աղբիւր. ուստի արբ ինքն և որք ընդ նմայն էին: Եւ եղև այս ըստ առաջնոյն օրինակին. որպէս արար՝ի Մարարադ լերինն, սոյնպէս և առ ոտին Ընձաքիարս լերինն՝ի ծովեզերն ըուշտունեաց ծովուն. որ ըստ առաջնոյն օրինակի կոչի և այս աղբեւր Յակոբայ մինչև ցայսօր ժամանակի:

Եւ ելանէր քահանայապետն այ Յակոբ՝ի գլուխ

լերինն Կնճաքիարս. և նղովէր զաշխարհն, զի մի պա-
կասեսցէ անտի խոտովութիւն մինչև ՚ի սպառ, փոխա-
նակ տերունի խաղաղութեան՝ որ ոչ լուան: Եւ սուրբ
աւետարանիչ եպիսկոպոսն գնաց ՚ի տեղի իւր: Իսկ
յայնմ գաւառի, յետ գնալոյ նորա անտի, յետ երկ-
ուց աւուրց սատակեցաւ կինն Անանաձերհայ եւթն
որդւովք իւրովք. յետոյ և ինքն չարամահ ծակոտեալ
ելանէր մեծաւ առնջանօք յաշխարհէ: Եւ ըստ բա-
նին՝ որ ասացաւ, ոչ եղև խաղաղութիւն յաշխարհին
յայնմիկ յօրէն յայնմանէ և յապա:

Ասեմ այս Յակոբ գործէր սքանչելիս մեծամեծս.
և սա դիպեցաւ ՚ի մեծ սիւնհոդոսին ՚ի Նիկիա, որ
եղև յամն Կոստանդիանոսի կայսեր Հռոմոց, որ
ժողովեցան երեք հարիւր և ութևտասն եպիսկոպոսք.
վասն անիծեալ աղանդոյն Արիանոսի աղէքսանդրա-
ցւոյ, որ էր ՚ի նահանգէ անտի Եգիպտոսի: Ար-
ամ եպիսկոպոսքն նատեին առաջի Կոստանդիանոսի.
և ՚ի Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի
սքանչելոյ՝ առաջի կաթողիկոսին Հայոց մեծաց: Սկը-
սաւ երևեալ սքանչելեօք նշանաց Հոգւոյն սրբոյ այնմ
Յակոբայ ծածկեալ գործք զարմանալի թագաւո-
րին: Եւ տես զի արքայն Կոստանդիանոս քուրձ զգե-
ցեալ էր ՚ի ներքոյ իւրոց ծիրանեացն և պատմուճա-
նին, և հրեշտակն կայր պահապան սպասաւորել նմա:
Օ արմացեալ եպիսկոպոսն Յակոբ, ասաց այլոց բազ-
մութեամ ժողովոյն եպիսկոպոսացն զնրա հրեշտակին, որ
ոչ հաւատային իրացն: Իսկ նա պնդեալ վիճէր և
ասէր. Զտեսիլեան դուք գիտէք զնրա ծածկեալս,
նախ զայդ յայտ արարէք, զինչ է այն որ զգեցեալն
է թագաւորն ՚ի ներքոյ պատմուճանին: Որ ինքն ՚ի
մէջ կացեալ, ՚ի ձեռն Հոգւոյն սրբոյ յայտնէր զնոս
նարհուածս կրօնազգեաց աստուածասիրութեանն նշանակ
թագաւորին Կոստանդիանոսի. և զինեալ առաջի ա-
մենեցուն ցուցանէր, զի ՚ի ներքոյ ընդ ծիրանեօքն
քուրձ զգեցեալ էր առ սէր Քերմեռանդ հաւատոյն՝
որ առ Աստուած: Ապա ետես և թագաւորն Կոս-
տանդիանոս զհրեշտակն սպասաւոր երեսացն Յակո-
բայ, և անդաւ առաջի ոտից նորա, և մեծապատիւ
մեծապարգև մեծարեաց զինս: Եւ արկ զաթոռ նո-

բա՛ի վերոյ քան զբազումս ի նոցանէ , որք ի սիմհոդոսին յայն էին : Այլ ոսկերք նորա չնորհեցան քաղքին ամփացուց , ընդ այլ մծբնացիան ի փոխել նոր բա անտի անդր ի մարտս պատերազմացն Յունաց թագաւորացն ընդ թագաւորին Պարսից :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս . և անկանելոյ ի պատերազմին՝ զօրավարին Վաչէի : Եւ մահուն խոսրովու արքայի , և փոխելոյ յաշխարհէ հայրապետին Վրթանայ :

Այն յետ այսորիկ յաւել ևս լինել մարտ խստաթեամբ պատերազմի՛ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս . զի ժողովեցան հասին կուտեցան առնուլ զաշխարհն հայաստան երկրին : Այսպա ժողովեր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց Վաչէ զազատախուռմբ բանակ նախարարակոյտ զօրացն : Այն ելանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ , և լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմանցն , և բազում ծախ մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն : Այնկանէր ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ . և լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին , զի բազում անգամ էր ետն փրկութիւն տուեալ Հայոց ի ձեռն նորա : Այսպա ժողովեր եպիսկոպոսապետն Վրթանէս , միթարէր զամենեսեան , և զինքնին թագաւորն զՅոսրով , և զօրսն ամ , որք բազում անձկայրեաց տրտմութիւք և արտասուականթ ողբով և ծանրաթախիծ հոգով , մեծաւ կոծով և անհնար լին աշխարանօք պաշարեալք , զգնացելոցն կարիս ինա ցելոյն համարեալ՝ սգային : Օ որս մատուցեալ սիր փէր զնոսա մեծն Վրթանէս , և ասէր .

Այսիթարեցարո՛ւք ի Քրիստոս . վասն զի մանաւանդ ողբ մեռանին , նոքա յաղագս աշխարհի և եկեղեցեաց և ածագործ օրինացն տուչութե , զի մի գերեալ քան-

դեսցի աշխարհս, և սուրբ եկեղեցիքն անօրինեսցին, և կամ մարտիրոսք անարգեսցին, և կամ ՚ի սպասքն ՚ի ձեռս պղծոցն և անօրինացն անկցին, և ՚ի ուխտս պյալչեսցի, և որդիք մկրտութեանն դերութիւնք անկցին ՚ի պէսպէս պղծութիւս անօրինութեանն կարգաց պաշտամանց։ Այլ եթէ զաշխարհս ունկնդին արդեւք թշնամիքն, և զնուրեանց զանօրէնն զանկրօն զանաստուածկրօնիցն զօրէնս, ասա արդեւք հաստատեին. որ, զոր խնդրեմք, քա՛ և մի՛ լինի։ Իսկ մեր բարեպաշտութեանն նահատակք ՚ի վերայ այսորիկ ձգնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ՝ մեռան, զի մի՛ յայսպիսի աստուածապաշտ և աստուածասէր աշխարհ անօրինութեանն մտեալ, չարի կամացն ՚ի ծառայութիւն արկցէ, և զաղաւոր ոգիս ՚ի վերուանդէն սիրով քնութենէն ՚ի միմեանց քակտեալ քայքայեսցէ։ Իսկ սոքա մինչդեռ կենդանի էին, արդար վաստակօք ՚ի վերայ այսորիկ վաստակեցան. և ՚ի մահուն իւրեանց զվիամոութենէն հաստատութենէն զանձինս փոխանակ տալով ընդ ձշմարտութենէն՝ ետն, մատուցին ՚ի վերայ եկեղեցեաց, և ՚ի վերայ մարտիրոսաց, և ՚ի վերայ ուխտին սրբութեանն օրինացն, և ՚ի վերայ կարգաց հաւատոցն, և ՚ի վերայ ուխտին քահանայութեանն, և ՚ի վերայ անթիւ նոր ՚ի Քրիստոսէ լոյն, ՚ի վերայ բանակի տեառն աշխարհիս։ Ոչք այնմ ամի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին, ընդ վկայս Քրիստի և նոցա համար պատուոյ։ Այլ մի՛ լայդ ցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ձշմարտութենէն, առ նահատակսն դիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտենից, զի ամ ոք զնոցա յիշատակ քաջութեանն իւրեանց նահատակաց անխափան կատարեսցէ։ Այս մեք տօնս արասցուք, և ուրախ լինցուք. զի ՚ած այսոքիւք հաճեսցի ընդ մեզ, յայսմ հետէ խաղաղութեն հնարհեսցէ։

Այս եղ օրէնս ընդ աշխարհ մեծ քահանայապետն Ոլոմանէս, զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. և ոչք փոխանակ աշխարհին վրկութեանէ մեռանիցին ՚ի նմանութեն նոցա, եղ կանոն՝ յիշել զնոսա առ սուրբ սեղանն այ՚ի ժամ պատարագին. յորժամ զմնուանս սրբոցն կարդիցեն, և ապա զվնի նոցա զնոցայն. և

ՀՆացեալցն յանցեալցն գումք և ինամ կալցին : Օ՛ի սոքա , ասէ . ՚ի նմանութիւն Յուդայ և Ա՛ատալիայ Ա՛ակաբեի անկան ՚ի Ճակատ պատերազմի , և նմանութիւն եղբարց նոցա : Ա՛ակայն զԱ՛ստի զօրավարին փոքրիկ մանգիկ մի գնորուն զօրդի ՚ի հայրենի բարձ գահոյն մատուցանէին , որում անուն էր յանուն հօր իւրոյ Ա՛րտաւազդ : Ա՛ռաջի Թագաւորին զՀօրն պատիւն ՚ի գլուխն գնէին , և զապարապետութիւնն նորուն տեղւոյ . զի կարի որդի վաստակաւորի էր , և ՚ի վաստակաւոր ազգէ . զի այլ յազգին ոչ գտաւ հօժարու , զի ՚ի մեծ պատերազմին մեռան : Այս զզօրավարութիւնէ զգործ յանձն առնէին Ա՛շուրայ կամնարականի՝ իշխանին Ճ իրակայ և արշարունեաց գաւառին , և Ա՛նդովկայ իշխանին Աիւնեաց . զի նոքա փեսայք էին տանն մամիկոնեան տոհմին : Այս հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Ա՛ղթամեայ՝ հանդերձ Թագաւորաւն՝ Ա՛շուրայ և Ա՛նդովկայ մնուցանել զապատանեակն զԱ՛րտաւազդ , զի կացցէ ՚ի տեղի նախնեացն իւրոց և հօր իւրոյ , և գործ քաջութիւն գործեսցէ ամենատեառնն Ա՛ստի , և առաջի իւրոյ մարմնաւոր քնատերանց [1] արշակունեաց քաջ արանց , և տան և կենաց . և ինամակալ լինի այրեաց և որբոց , և զնորուն գործ քաջութիւն սպարապետութիւնն անուանի զօրավարութիւնն յաջորդեսցէն զնմ աւուրս կենաց իւրոց :

Ա՛պա յետ այսորիկ փոխեալ լինելոր քաջ արանցն աշխարհաշէնն Խոսրով , Թագաւորն Հայոց մեծաց : Ա՛ողջուեալ , աշխար եղեալ լցին զամ սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց մեծաց . և տարան առիւր նախնիսն Ա՛նին յեկեղեցագաւառն [2] Ա՛արանաղեաց : Այս յետ սորա փոխեցաւ և յաշխարհն մեծ քահանայապետն Ա՛ղթամեայ . և ժողովեցան առնային աշխարհն Հայոց , և մեծաւ պաշտամամբ , սաղմոսիւք և երգովք հոգևորօք , կանթեղօք և մոմեղինօք և խնկածու հոտովք , արքունական կառօք զնոքն Ա՛ղթամեայ , անհնարին բեկմամբ՝ վասն իւրեանց

1 Ցօրինակի միւսմ բնաւ պե- րանց :

2 Ցերիս օրինակս Եկեղեաց գա- առան :

յայնմ ընակ տեառնէն կամ ՚ի հոգևոր վարդապետութենէն որք ՚ին ալեղ, մեծաւ լալեաց տրտմութիք մինչև ՚ի գեւղն Ծորդան ՚ի Դարանաղեաց գաւառն յուղարկելն։ Եւ անդ առ մեծի հայրապետին Գրիգ զորի զսրբ սուրբք զոսկերսն հանդուցանելին. և ըզմիշտակատար զսրբ կենդանի յիշատակն ՚ի վերայ կատարեալ, դառնային։

Գ Լ Ո Ւ Խ ԺԲ.

Յաղագս Թագաւորելոյ Տիրանայ յետ հօր իւրոյ. և թէ որպէս Յուսիկ յետ հօր իւրոյ Վրթանայ կալաւ զաթոռ Հայրապետացն, և թէ որպէս սպանաւ ՚ի Տիրանայ արքայէ յաղագս յանդիմանութեան։

Եւ յանցանելն յաշխարհէ Թագաւորին Խոսրովու, Տիրան որդի Խոսրովու առ զԹագաւորութին իշխանութիք աշխարհացն Հայոց մեծաց։ Եւ ընդ նմին սուրբն Երանելի մանուկն Յուսիկ յաջորդեաց գտեղի Հայրապետացն Հայոց։ Նայց գումարեաց ընդ նմա Թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութիք օրինակին, զմեծ հազարապետսն ՚ի հազարապետութենէն։ Նոքա ՚ի տոհմիէ ամ Հայոց մեծաց, զի աղարշ, որ էր իշխան Կնձաց. և ընդ նմա Օ արեհ իշխանն, նահապետն մեծի Ծորփաց, և զի ա րսաւ Շ ահունի իշխանն Ծորփաց աշխարհին, և զԻնձ նիթ իշխան Հաշտենից գաւառին ՚ի կամխական տոհմէն. զի որոթ իշխանն Ա անանդայ գաւառին, և զՇ ահէն իշխանն անձևացեաց տոհմին, և զՇտամ իշխանն Գողթան, և զԱնաւազ իշխանն կողբացոց. զԳորութ իշխանն Ձորոց աշխարհին, և զԱնասեզ զևորխոռունեաց զևշխանն մաղխազունեան տանն։ Եւ զմերոյ տոհմի ազգի իշխանն սահառունեաց, և զԱբա իշխանն գնունեաց։

Օնոսա զամենեսեան հրամայեաց երթալ ընդ մեծի հազարապետին Ա աղարշու, զի նստուսցեն զերա

նելին Յուսիկ յաղթունական կառան, և խաղացեն գնացեն ՚ի սահմանակից իւրեանց ՚ի մայր քաղաքացն Վամրաց ՚ի Կեսարիա, հատուցանել զմնուխն Յուսիկ յառաքելական աթոռն հայրապետացն։ Վնաս նացին եկին հասին ՚ի քաղաքն կեսարացւոց. եւտուն ՚ի կաթողիկոսութէն զՅուսիկն ձեռնադրել, զորդին Վ ըթանայ։ Եւ նստուցին զնա յաթոռն Ղաքեղայն Մոգեոսի, և յաթոռ իւրոյ հաւուն մեծին Վրիգորի. և զարձան անդրէն մեծաւ խնդութէ, եկեալք առողջութէ, յաջողեալք հասանէին յայրատեան աշխարհն։ Եւ զիշխանն երկոսին, և նոցուն Նուիաց, յառաջ արձակէին աւետաւորս առ արքայն։

Պպա երբև լուաւ ինքն արքայն, ընդ առաջ ելանէր նմա ՚ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամրջի, ամ բանակօքն բազմութեամբք։ Պպա ողջոյն տուեալք զցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ՚ի քաղաքն մեծ Ար-տաշատ, յեկեղեցին դառնային. և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական։ Ա ի զհետ հօրն իւրոյ Վ ըթանայ զառաքելական յաջորդեր, հայրական չափոյն նմանեալ ծնունդ, ամենևին զամ յամի հրեշտակակրօն զանձն ցուցանէր, զամ ըստ պարգեւացն ՚այ զշնորհացն կատարեր։ Վհրիստոսական բանաւոր խաչանցն հովուեալով, աւետարանական պատգամաւորօքն խրատելով ընձեռեռեցաւ։ Օ ի աւուրըք մանուկ, տիօք առոյգ, և քարձր հասակաւ. գեղով երեսաց սքանչելի և չքնաղ, զի այլ ոչ գտանէր ուրեք նման նմա ՚ի վերայ երկրի։ Սուրբ և պայծառ հոգւով, ամենևին ոչ ինչ զբաղեալ ընդ աստիս. իբրև զքաջ սպառազէնն Վհան, իբրև զախոյեան նահատակ ՚ի տղայութէ տիոց նշկահէր, աներեւոյթ թշնամոյն յաղթութէ սպառնացեալ։ Վյն առնուլ կամ աչառել մարդկան քնաւ ամենևին ոչ գիտէր. այլ զբան Հոգւոյն սրբոյ սուսեր աճեալ ընդ մէջ իւր կրէր։ Ուսկ ընտրհատուր Հոգւոյն լցեալ զնա, գիտութէն էր աղբիւրացեալ զամ լսելեացն ցուցս ականջացն և սրտիցն երկրին։

Ուսկ Թագաւորն Տիրան, և այլ մեծամեծ աւա-

գանկին նախաբարացն, կամ աշխարհն ամ, ոչ ինչ ըստ այ կամացն վարս յանձն առեալ՝ խմաստուն ինչ գնացեալ լինիցին։ Վասն զայմ մանաւանդ թագաւորն կամ իշխանքն սպանումբեաս՝ անխիղճ՝ ի հեղուլ զարիւն արդար՝ ի տարապարտուց՝ գործելին, և այլ մեղս բազումս. և ոչ հայիցին՝ ի հրամանս վերնոյն, ի հանապազորդ լսելոյն ոչ խրատեալք՝ ի յուշն նոցա առնելոյ զայ յոյն։ Վասն որոյ հանապազ ընդդիմացեալ լինիցեր երանելի Հայրապետն Յուսիկն, վարժ բանիւքն հաւատոյ քրիստոսական խրատուն՝ հանապազ յերեսս յանդիմանութիւն հարկանել խրատելով կշտամբելով արկանիցէր, զսպանումն տանջանաց յաւիտենական բարկութիւնն անդէն հրոյն դատաստանին պատմելով, բողոքեր։ Օ՛ի թէպէտ աւուրքք մանուկ էր, այլ զաւագութիւն ճերութեան խրատուն լինքեան ցուցանէր, զՀայրենի գործ խրատուականն զառաւելութիւն քաջութեան կատարէր։ Հարցն նմանեալ՝ ի մանկութիւնէ խմաստութիւնէ, զճեռնութիւնէ պատիւն պատուական պատուականութեանն զհանճարոյն զուարթութիւնէն ուշութիւնն, իբրև զճաղիկ՝ ի դիտաւորութիւնն հասեալ, վասն Հնմարտութեն մինչ՝ ի մահ մարանչէր. նախ զանձն ապրեցուցանել, և վասն այլոց հոգւոց զնոյն առնել կամէր։ Անյաւէտ էր երկիւղած՝ ի տեառնէ, զի ոչ զսէր և ոչ զահ թագաւորին առ ոչինչ համարէր։ Ուսկ գիտութիւնն այ, դպրութիւնէ գրոց սրբոց արուեստացն լի էր. և առնոյր՝ ի պատուհասել և յանդիմանել. արդելոյր զգ թագաւորն և զմեծամեծսն չտալ թոյլ մտանել յեկեղեցին։

Արդ եղեալ կապեր մեծապէս պատուհասիւք, քահանայական իշխանական բանիւ յանդիմանութենն, վասն անօրէնութենէ պոռնկութենն և արուապիտութենէ և արենհեղութենն, զրկութենէ, յափշտակութենէ, աղքատատեցութենէ և այլոց բազում մեղաց՝ որ այսմիկ նման իցէ։ Այս ինքն վասն ահի սաստից օրինացն ետն՝ թէնաժի համարեալ թուէր որոց հանապազ անցանէին զկարգսքն Աստի, և հանապազ՝ ի սմանէ սուրբ բանիւն այ խոցոտեալ լինէին։ Այս այս մարտ պատերազմի էր սորա առ հասարակ ընդ ամենեսեան յան-

դիմանուԼԵ զամ աւուրս կենաց իւրոց : Որ իբրև օր մի յաւուրց տարեկան, դիմեաց գալ Թագաւորն Տի բան հանդերձ այլովք աւագանւովն մտանել յեկե ղեցին . իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր . Ձես արժանի , հիմ գաս , մի գար ՚ի նեըքս : Ա՝ ամն որոյ անդէն ՚ի նեըքս քարշէին զնա յեկեղեցւոջն . բրա ծեծ եղեալ ջաղջախեալ քահանայապետին այ սուրբ , երանելի մանուկն Յուսիկ , կիսամահ կոշկոձեալ ընկեցեալ լինէր : Որ բարձեալ պաշտօնէիցն դրան եկեղեցւոյն ՚ի Ընաբեղ բերդին արքունի՝ մեծ Օտ վաց գաւառին , եկին բերին ՚ի գաւառն Դարանա ղեաց ՚ի գեղն Կորդան . և անդ ոչ ինչ յետ բա զում աւուրց հանգեաւ , և եղաւ մնօտ առ Դրիգորի և ընդ հարս իւր :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ցաղագս Թէ զնարդ յետ մահուանն Յուսկանն անառաջնորդ լինէր երկիրս Հայոց , և ոչ որդիքն Յուսկանն արժանի եղեն հօրն աթոռոյն :

Այ յետ այսր անցեալ ժամանակաց , զկնի Թոպա մահն լինելոյ երանելոյն Յուսկան , անառաջնորդք եղեալ իբրև զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին Թոր գոմական աշխարհին : Դանդի տուաւ նոցա ոգի մո լորուԼԵ , աչս՝ զի մի տեսցեն , և ականջս՝ զի մի լուիցեն , և սիրտ՝ զի մի խմացին դառնալ յապաշխա րուԼԵ : Այս զնաւարային խորխորատ կորստեան գտեալ հարեալ իւրեանց անձանց Ձանապարհ , կործանե ցան անկեալք . զի ոչ այն ոք գոյր՝ որ նոցա մոլեգ նուԼԵն պատկառուխս արկանէր ըստ մեղս գործելոյ , այլ անհովիւք էին : Օ կորստեան Ձանապարհն՝ հա մարձակէին ՚ի չարիս՝ կամք գնացեալք , և կամք լեալք որդիք բարկուԼԵ . և առանց այ չըլէին յաշ խարհի կամակոր ազգ տանն Հայոց երկրին : Այս նեալք լինէին այնմ հօտի խաշանց , որ զպահպանուի

շանցն պահողաց պահապանացն ՚ի քաց մերժեցեալն, և կամօք իւրեանց կերակուր դնէր թշնամութեանց գայլոցն մատնեցան, ըստ նմանութեան մեծին աթենացւոց քաղաքին։

Յայնմ ժամանակի զթագաւորն իւրեանց օրինակ չարի առնէին, և նովին օրինակաւ ձևել սկսան, և նոյնպէս գործել։ Օ՜ի ՚ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեն, լոկ միայն իբրև զկրօնս իմն մարդկութեանէ յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրև զըմբռնութեի իմն մարդկութեանէ ՚ի հարկէ։ Եթէ որպէս պարտն էր գիտութեամբ կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեց, որք էին հասու ինչ այնմ փոքր ՚ի շատէ։ Իսկ որք արտաքոյ քան զգիտութեի արուեստին էին այլ խառնաղանձ բազմութեի մարդկան ժողովրդոց նախարարացն և կամ շինականութեն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութե ամպոցն իբրև զյորդահեղեղ ինչ անձրևաց սաստկութեի զվարդապետութեին ՚ի վեր քայ հոսէին, ոչ ոք ՚ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէին, և ոչ կարէին ինչ ուսնել ՚ի մտի։ Այսպէս զի միոք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտս ևեթ զբօսեալ էին. զոր օրինակ մանկունք տղայք ընդ մանգութեին և ընդ տղայութեանն խաղալիկ խանկարեալք, և զպիտոյին և զկարևորացն ոչ ինչ փոյթ արարեալ, սոյնպէս և դեդերեալ մաշէին յանուղղայ կրթութեի ընդ չքնաղի մտացն ՚ի հնութե հեթանոսութեց սովորութեց, բարբարոս խուժադուժ միտս ունելով։ Այս զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ՚ի փոյթ կրթութեցն, և նմին հաւատացեալք, և ՚ի նոյն հանապազորդեալք, ՚ի հեռ և ՚ի նախանձ ընդ միմեանս չարակնութեք, թշնամութեի ոխութեանց, զմիմեանս խածատել, և նենգել այր զընկեր և զեղբայր։ Սիրելիք սիրելեաց, և մերձաւորք մերձաւորաց, և ընտանիք ընտանեաց, ազգականք ազգականաց, խնամիք խնամեաց դնէին գայթակղութե։

Ընդ եր տեսանել այր ընկերի արեամբք ծարաւեալք ըմպելով, ոգովք չափ գային ճնաստուն՝ անխրատ վարս և անհանձար միտս ունելով։ Նա զդիմի հնուքեն պաշտամունս ի նմանուքեն պոռնկութեան գործոյն ընդ խաւար կատարէին. և ոմանք զնոյն իսկ ցանգուքեն գիջուքեն պոռնկութեն կատարէին յանձինս իւրեանց։ Ոմն այսորիկ ոչ զկրատ իմաստուէ լսէին, և ոչ առաջնորդացն ասելոյ զայ պատգամն անսացեալք հնազանդէին. այլ վասն ի նոցանէն յանդիմանութեանն, ատէին և հալածէին զնոսա և սպանանէին։ Նա ըստ մարգարէական բանին առ նոսա ասելոյ, թէ "Տեէր ի գրուանս զյանդիմանիչս", և զբանս սուրբս արհամարհէին։ Վանզի ոչ էին թէ որպէս այլոց ազգականացն և հաւատացելոցն կամ իմաստնոցն ետ նոցա զգիտութեն ճշմարտութեն հաւատոյն ածաբանիւ քարոզութենն, որպէս որք ընկալանն՝ առին գոհութեք և հաւատացին և վայելեցին ի շնորհս մարդասիրութենէն արդեւք, այլ ըստ հրեայական մտացն կուրացելոց և խաւարելոց և կաղացելոցն ի ճշմարտութենէն։ Վերևս և առ այս ազգ մի տեր բանն մարգարէական յառաջգիտական, եթէ "Որդիք անմիտք, և ոչ որդիք իմաստունք. իմաստունք են զբար գործել, և զբարի գործել նոքա երբէք ինչ ոչ գիտացին"։ Նա դարձեալ ասէ. "Որդիք եղջերիկք, խաստասիրք, խաստաշունչք, ոյք դառնացուցին զիս նոքա և հարք իւրեանց"։ Նայսպէս լքեալք և սոքա, զի ոչ իմացան և ոչ հաւատացին յանեղևոյթեան այ երևելեօքս. յարատածոց աստի չիմացան՝ զարարիչն և զկարգիչ և զինամիչն առնուլ ի միտ։ Յաճախեաց զերևոյթ նշանս իւր և զքաջանչելիս, մինչև զմարդկայինս բնութեիս շարժեաց ի կերպարանս անասնոյ. ուստի փրկութեն նոցա լինելին պատճառք։

Նա մինչև յայս յանպիտան և յանմիտ թագաւորութեն իսկ, առ այն թագաւորաւ Տիրանաւ, ընդ նոյն իսկ ընդ այս նայեցեալք, անցուցին չարութեք քան յայմ դարս։ Վանաւանդ քան զնմա, զի զգլխաւորն առաջնորդն թագաւորն սպանին, և այնուհետև ըստ կամաց գնային։ Վանզի ոչ ոք այն որ գոյր, յորմէ խրթայինն յանդիմանութեն՝ որ նոցա արգել ար-

կանէր գնալ յանօրէն Ճանապարհն ելանել։ Այլ բարձեալ Թողեալ եղէն նոքա ի ձեռանէ տեառն, երթեալք ըստ հետ կամաց սրտից իւրեանց. ապա չկայր ոք առաջնորդ և ոչ գլուխ քահանայութեանն։ Վասն փոյթք եղէն նոքա ոչ վասն Ճշմարտութեան ինչ խնդրել իւրեանց հովիւ կամ առաջնորդ՝ որ կայր ի գլուխ ժողովրդեանն հօտապետութենէն, այլ բանից ընկեր իւրեանց խնդրէին զայն ոք՝ որ ըստ նոցա կամացն վարիցէ։

Յայնժամ խորհուրդ արարեալ Թագաւորին և իշխանացն, և համօրէն իսկ աշխարհին, թէ զի արք ժանի այնմ իմիք գտանիցեն. քանզի երկու միացեալք[1] երկուորիք երկու մանգունք, միումն Պասպ անուն, և միսումն Ղթանադինես, Ճանաչէին ստահակք և անխրատք, որք ոչ ինչ ըստ իմաստութեանէ աստուածեղէն գրոց, և ոչ վարժ հրահանգաւք առաքինութեանցն, և ոչ հօրն իւրեանց չափոյ ինչ նմանեցեալին միտ եդեալ, և ոչ ընդ իւրեանց ծնիչսն հայրն Յուսիկ նայեցան, և ոչ մեծին Կրիգորի յառաքինութենան ուշ եդին, և ոչ զիւրեանց հոգևորն պատուականութեի՝ յաւիտենական կենացն զպատիւ ինչ եդին ի մտի։ Այլ իւրեանց ժամանակի դարուն նմանեալք, և պանձացեալք յիւրեանց յանցաւոր մտոի՝ի մոլութեան տոհմականութենին ազգականութեե, զինուորական զվարսն ընտրեցին։ Ոմանք այնորիկ անընտիրք եղեալք, ի հպարտութեանն խոտեցան ըստ յառաջագոյն տեսլեանն հօրն իւրեանց. ոչ մտին ի լուծ աստուածպաշտութենէն։ Կայ ոչ այլ ոք ի նմին տանէ զաւակին Կրիգորի գոյր ոք. զի այնչափ խակ կային մոլութեան զաւակին, և սոքա ինչ ոչ թէ արժանի հարցն գնացեալ նմանեցեին վարուց։ Կայ այլ ոչ ոք էր, որ զառաջնորդութե գլխաւորութե քահանայապետութենէն վերակացութենէն ոք տէրունական տանն հրամանատարութենէն կատարեալ, պաշտաման յաջորդէր։

1 ի չորս օրինակս գնացեալ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս վարուց և գործոց մեծին Դանիէլի առն Աստուծոյ, և թէ որպէս յանգիմանեաց զթագաւորն Տիրան, և կամ որպէս պատուհասեալ մեռաւ ի նմանէ։

Բնակեալ յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ, այր աքանչելի։ Հաշակերտ եղեալ էր սա մեծին Դրիգորի, վիճակաւոր և գլխաւոր Եկեղեցւոյ Տարօնոյ, Դրիգորի ձեռակալ՝ իշխանութեանն կողման մասին գործակալութեն մեծի դատաւորութեանն, ունէր զիշխանութիւն զայն առանձինն. այլ վերակացու և հրամատար տեսուչ և հոգաբարձու ամ եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամ տեղիս. այլ և ի կողմանս Պարսից յօտար տեղիս քարոզեաց սա, և անթիւս ի մնղորութենէ դարձոյց։

Այս էր սա ազգաւ ասորի. և ունէր սա զաստիճան աթոռոյն գլխաւորութեանն Տարօնոյ, ի մեծն և նախ զառաջին եկեղեցին ի մայր եկեղեցեացն ամ Հայաստանեաց։ Այս ինքն նախ և զառաջին և գլխաւոր տեղին պատուական. զի յառաջ նախ անդ շինեալ էր զսուրբ եկեղեցին, և ուղղեալ սեղան յանուն նոր։ Նոյնպէս և ի ներքոյ քան զնա մարգարէանոցն Յովհաննու, նոյնպէս մօտ ի տուն տեառն Հանդիստ առաքելոցն։ Եղեւ այս տեղիք վանս յառաջակարգութեն, կանոնաւ ի հայրապետացն և ի թագաւորացն պատուեալք լինելին. որպէս ի Պարանաղեաց գաւառին յեկեղեցին Ամորգանու պատուին վանն գերեզմանացն հայրապետին Դրիգորի։ Նոյնպէս և զյիշատակս թագաւորին Տրդատայ թէ կամք թէ ակամայ, որ արժանին լեալ էր նախաճանօթ ի Քրն հաւատոյ։ Ո՛ ամն այսորիկ կամ եղև աշխարհին զնախնեաց ժամանակին հարանց եկեղեցասացս զայս տեղիս պատուել, ուր սոքա եգեալն էին. զի սիրելի էր աշխարհին, պատուել զյառաջընծայն Քրի զթագաւորն իւրեանց Տրդատ։ Նոյնպէս և զյառաջ-

եպիսկոպոսն զնախաւաստակն Կրիգորիս. սոյնպէս և ի գաւառն այրարատեան զնախավկայն Վհան, ուր Կայիանէն և Հռիփսիմէն կային, իւրեանց հանդերձ գործակցօքն. սոյնպէս առաւել և զնախեկեղեցին։

Կայ տեղիքս սմա էին յանձն հանդերձ գաւառօքն յորս էին. հաւատարիմ էր սա այնմ գլխաւոր սեղանոյն, իշխանութեան աթոռոյն հայրապետացն, հաստատութեանն ուխտին կաթողիկէ եկեղեցւոյն։ Նա էր սորա ընկալեալ զքորեպիսկոպոսութեանն ձեռնադրուն աստիճանին ի ձեռաց մեծին Կրիգորի, յաւուրս յորում կործանեաց զբագինս մեհենիցն Հռոմայկեայ՝ այս ինքն Աստղկի, որում տեղոյ Կշտիշատն կարդացեալ. որ նախ եղ զհիմունս եկեղեցւոյ սրբոյ։

Նա էր սա այր զարմանալի, առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Այս և կօշկօք քայլելոյն գնայր ի վերայ ջուրց գետոց, և ոչ թանայրին. և ոչ հանէր սա։ Նա յաւուրս ձմերանոյն՝ յորժամ կուտեալ դիզեալ զմեծութիւնն բազմութիւնն թանձրութեանն ձեանցն կուտակեալ հիւսեալ ձեանցն ի վերայ ձմերայնոյն լերանցն՝ յայնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ ի պետս Ճանապարհի, յանկարծօրէն ձիւնն ցամաք արկն լինէր առաջի նորա։ Նա զի կամէր ի հեռաստան ուրեք երթալ, իբրև զփայլակն սլացեալ լինէր անաշխատ. իբրև թռուցեալ յոր կամէրն երթալ ի տեղին, յանկարծօրէն անդ գտանէր։ Յարուցանէր զմեռեալս, առնէր և բժշկութիւնս հիւանդաց, և այլ ևս մեծ նշանս և զօրութիւնս քան զնոսին գործէր, զորս ոչ քաւեսցէ ընդ գրով նշանարանաց փակել։ Նա քնակութեն իւրոց կայենիցն յանմարդի լերինս, այլ զտեսչութիւնն մարդկան պիտոյից ոչ երբեք անփոյթ առնէր։ Ի հանդերձ մաշկանափոխն սանդաղաւոր, և կերակուր իւր արմատք բանջարոց, և գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր։ Նա առ բանն այ այնչափ էր հզօր, զի զինչ հայցէին յայ՝ առնոյր, և զոր ինչ ասէր՝ այն լինէր։ Նա կայեանք տեսչութեան իւրոյ, յորժամ

յանապատաց ՚ի չէնս իջանէր վասն գործոյ ՚այ, ՚ի գլխաւոր տեղիսն յհեղեղեցեացն լինէր։ Եւ յաձախ յաին աղբերն ՚ի ներքոյ սարաբարձր մեհենատեղւոյն Հերակլայ, որ կայ դէմ յանդիման լերինն մեծի՝ ո֊ րում Յուլն անուանեալ կարդան, ՚ի բագնին տե֊ ղւոջէ ՚ի բացագոյն էրզև քարընդէց մի ՚ի ներքոյ կու֊ սէ, ՚ի դոյզն ծործորակին ՚ի սակաւ անտառակին ՚ի հացուտ պուրակին՝ որում անուն տեղոյն իսկ Հա֊ ցեացն դրախտ կոչէն։ Այս այն աղբեւրն է, յորում առնէր յայնժամ ևս վաղ մեծն Գրիգոր զմկրտու֊ թիւնն զօրացն բազմաց։ Յայնմ տեղոջ էր սորա կայեանք խցկան սրբոյն Գանիէլի. էր դարափոր ա֊ րարեալ քնակութեւն. և յայնմ տեղոջ զգիտաւորուն այցելութենն կատարէր։

Ընդ միաժողով եղեալ մեծամեծք նախարարացն, և ՚ի մի վայր եկեալք, խորհուրդք խորհեցան. հա֊ ւանեցուցին զթագաւորն, ածել զծերունին զԳա֊ նիել յիւրեանց քանակն, զի ածցեն կացուսցեն զնա իւրեանց գլուխ առաջնորդ, զի նստցի նա յաթոռն հայրապետական։ Եւ յղեցին առ նա ՚Օ֊ոմն իշխանն Սահառունեաց տոհմին, և զԸրտաւան զիշխանն Ա֊ նանդայ, և զԱրշն իշխանն Ընտաւնեաց տոհ֊ մին, և զԱ֊արագ իշխանն Գիմաքսենից տոհմին։ Եւ եկին նախարարքն հասին գտին զնա Հեհեղեաց գա֊ ւառին, ՚ի գեւղն եկեղեցւոյն ՚ի Ծովին. զի գեռ էին զգործ մշակութեւն ՚այ գործէր։ Եւ առին զնա և ա֊ ծին առ թագաւորն Տրդատ, ՚ի գաւառն Ընձնեաց ՚ի Բառաւէջ յաւան։ Եւ իբրև մտանէր առաջի թա֊ գաւորին Տրդատայ քորեպիսկոպոսն մեծն Գանիէլ, անդէն ՚ի ձեռն առնոյր զիշտամբութիւն յանդիման֊ նութեանն։

Ակսեալ խօսել, յառաջ մատուցեալ, ասէր՝ եթէ ընդէր մոռացարուք դուք զնա զարարիչն ձեր, և զգու֊ թի նշանացն և խրատուց, և զսքանչելեացն՝ զոր ա֊ րար առ Հարսն ձեր և առ ձեզ. և դուք դարձայք ՚ի մոլորութեւն կռապաշտութեւն նախնեացն ձերոց, և յա֊ տելութեւս և յագահութեւս և ՚ի զրկութեւս և յաղ֊ քատակերութեւս, ՚ի պոռնկութեւս, ՚ի նենգութեւս և ՚ի միմեանսզրկութեւս և ՚ի սպանութեւս։ Կործանե֊

ցայք լքեայք կասեցէք կաղացայք յարդարութեան
Ճանապարհաց, և թողէք զուք զբարերարն ձեր զԾ՝
որ զձեզ յոչընչէ արար և հաստատեաց, և՝ի մոլորու-
թիւնս ձեր անծանօթք եղերուք զուք՝ ի նմանէ։
Ի՞նչ զուք զձեր անձինսդ անդիւտս արարեալ էիք
՝ի կորստեանն, նա եկն՝ ի լինդրել զձեզ. զի Թէպէտ
և լինքն իսկ միածին որդին ՚այ, եկն էջ ուսուցանել
զՀայրէ իւրոց արարածոց. զի Թէպէտ և ոչ լուան նմա,
և չարչարեցին և սպան մինչև՝ ի մահ, և համբեր, սակայն
և ոչ նա զիւր զօրութիւնն ոչ Թագոյց յումեքէ, զի
պատճառք կենաց լնցի ամենեցուն։ Այլ զօրս եգիտ
արժանիս և պատրաստականս իւրում յարութեանն,
ընտրեաց, ուսոյց, և արձակեաց քարոզս և կոչա-
կանս և հրաւիրակս՝ ՚ի փրկութիւն լայն հրաւիրել
զձեզ։

Սակայն և դուք յայնմ՝ փոխանակ երախտեացն
ապաքինս հատուցէք. զորմէ դուք իսկ նախ զձեր
զքարոզն և զհրաւիրակն զառաքեալ առ ձեզ եկեալն
սպանէք. զայն՝ որ եկեալ զձեզ կոչեր ՚ի փրկական
ընտրհս արքայութիւնէ տեառն մերոյ Յի՛ս Քրի՛ստ։ Օ՜ի
Թէպէտ և դուք առ ձերում անմտութիւնէ՝ տիրասպան
ազգին խորհրդոյն հաղորդեցայք՝ ՚ի բեկեցն. զի նոքա
զտէրն կարծեցին սպանանել, հարքն ձեր զնորին ա-
ռաքեալն սպանին. և զՀետ նորա նորին նմանին չար
չարեցին վասն նոյն նորին իրաց։ Իսկ զինի սորին ի
բաց այսոցիկ եկին բազմութիւք սրբոց վկայիցն ՚այ,
նոցին Առաքելոցն Ձգնակիցք. որք մինչ ՚ի վտանգ
չարչարանացն Ձգնեալք, մինչ յիւրեանց մահն, պըն-
դեալք ցուցանեն ձեզ զՀաստատութիւնն, զի Թերևս
նոքօք դառնայցէք յիմաստութիւն գիտութիւնէ որդւոյն
՚այ։ Սակայն և առ նոսա լցէք կատարեցէք բովան-
դակեցէք զսովորութիւն սպանութեց ամբարշտութեցն
կամացն ձերոց։ Սակայն նորին արեամբն՝ զոր ասացի՝
բազում և պէսպէս նշանօք խրատեաց զձեզ, և՝ի մահ
ոչ մնանեաց վասն բազում ողորմութեն. և իւր մեր
ձառօրս արար զձեզ, և խառնեաց զձեզ՝ ի քնակութիւն
կենդանութիւնէ ընտանութիւն վարդապետութեն իւրոյ,
ուղղութիւնէ օրինացն, յառաւելութիւն որդւոյն սիրե-
լոյ իւրոյ։

Եւ յետ այսորիկ եթող ձեզ զնա՛ ընտաս ձեր, և ետ ձեզ վարդապետս զսիրելիս իւր։ Բայց դուք և ոչ զմի զայն ոչ յիշեցէք, ոչ եդիք ՚ի մտի, ոչ կալայք ՚ի սրտի, այլ յետս դարձայք հրէական ազգին նմանեալք. առէք զնոյն յանձինս ձեր զնոցուն օրինաին գործոց։ Օ՜ի պարտ էր ձեզ յիշել զերախտիսն նոր ձերոյ Քրիստի, որ ոչ յիշեաց զմեղս հարցն ձերոց, և ոչ զանօրէնութիս ձեր։ Եւ ձեզ անպարտ մոռանալ զձգնութիւն հարցն սրբոցն խրատչացն և վարդապետացն ձերոց, որք ուսուցիչքն էին ձեր, որք հանապազ տքնէին վասն փրկութե՛ ոգւոց ձերոց. և արժան էր ձեզ ունել գութ ընդ նոսա՝ որք հոգեպէս բանին վարդապետութե՛ն երկնեցին և ծնան զձեզ վերստին, և ըստ ձերում եղծման անդրէն դառնալոյ՝ դարձեալ միւսանգամ վերստին ընդերոյ չարեացն ապաշխարելոյ ինքեանք իւրեանց խնդրուածովքն երկնեցին զձեզ դարձեալ, մինչև կերպարանեսցեն զՔրի՛ստ ՚ի ձեզ, զի արժանի լինիջիք մտանել յերկինս յարքայութի՛ն անդր։ Պատշաճ էր և ձեզ խնամել զնոցին որդիսն և զաշակերտսն, որ ըստ հոգևոր բանին ըստ ճշմարիտ ծննդեանն էին որդիք, առաջնորդք և վերակացուք ձեր ՚ի տէր. Թող Թէ որ մարմնապէս իսկ էին նոցա ձեռք, և հոգևոր նոցին գործոց ոչ ինչ պակաս քան զՀարսն իւրեանց։

Եւ դու ձեր Թողեալ զնա՛ծ, և յիշեցուցէք զչարիսն ձեր զառաջինս, և լցէք զչափ մեղացն հարցն ձերոց։ Որ զի նոքա սպանին զՀարսն սուրբս չարչարանաւք՝ վասն բարւոյն չկամելոյ լսել զօդատակարն խրատ ՚ի նոցանէն, և դուք զորդիս և զժառանգս և զգործակիցս և զնմանողս նոցին սպանէք, որք ոչ հաւանեալ գործոց մեղացն ձերոց, սուրբ մանուկն Յուսիկն ըզհայրապետան զաթոռակալն զվիճակակալն զվիճակին Թադէոսի առաքելոյն և զնորին նմանոյն Պրիգորի։ Եւ դուք զՀրէական բարուցն բերէք զօրինակն յանձինս ձեր, սպանութե՛ցն սովորութե՛ց զրկութիս. որպէս և նոքա անխրատք զիւրեանց զառաքեալսն կամ զմարգարէսն կոտորեցին, սոյնպէս և դուք ըստ նոցին օրինակի կատարեցէք։

Եւ զդ վասն այսչափ ստութե՛ց ձերոց և պղծուե՛ց,

բարձցէ՝ որ զԹագաւորութիւդ ձեր՝ ի ձէնջ. բարձցէ և զքահանայութիւդ՝ ի ձէնջ: Զբուեսջիք և բաժանեսջիք, և զբուեսցին սահմանք ձեր որպէս և Իսրայէլ, և անտէրունչք և անխնայ և անխնամք լինիք. և լինիք դուք իբրև զհաշինք, զի ոչ գուցէ նոցա հովիւք: Ամանեսջիք իբրև զՀօտ՝ ի ձեռս գազանաց, և անկջիք՝ ի փառաց ձերոց. և՝ ի ձեռս օտար Թշնամեաց մատնեսջիք դուք՝ ի դերուԹիւն և՝ ի լուծ ծառայուԹեան, և ոչ բարձցի երբէք կամ պակասեսցէ լուծ ծառայուԹիւդ՝ ի ձէնջ. և ոչ երբէք պակասեսցէ լուծ չար սարկուԹիւդ ծառայուԹիւնն՝ ի պարանոցաց ձերոց. հաշեսջիք և մաշեսջիք՝ ի ցանկուԹիս ձեր: Որպէս պատառեցաւ Իսրայէլ, և ոչ կարկատեցաւ, սոյնպէս և դուք ցրուեսջիք և կործանեսջիք. և այլք վայելեսցեն՝ ի վաստակս ձեր, և այլք կերիցեն զոյուԹիս ձեր. և ոչ ոք դատնիցի, որ փրկեսցէ զձեզ. և ոչ հաձեսցի ընդ ձեզ տէր, և ոչ նայեսցի և ոչ փրկեսցէ այլ զձեզ:

Այլ զի կոչեցէք զնս ելանել դալ առ ձեզ, զմյս ամ կամիք լսել դուք չինէն: ԱյԹէ իմ էր զայս ամ պատմել ձեզ, սակայն այս ամ լինելոց էր ձեզ վասն սպանման արդարոյն մեծին մանգանն Յուսկան առաքինւոյն առաջնորդին ձերոյ. որ էր՝ ի տանէն զաւակին Երիգորոյ. զի այս ամ լինելոց է ձեզ, զի այսպէս եցոյց ինձ տէր: Այլ զի յղեցէքդ առ իս, ԷԹէ եկ ացց մեզ գլուխ և առաջնորդ, զիարդ լինիցիմ առաջնորդ այնոցիկ՝ որք ոչ դառնայցեն զինի տեառն. կամ զիարդ կայցեմ գլուխ ազգի, զորս եԹող տէրն՝ ի ձեռանէ: Կամ զիարդ բառնայցեմ զձեռս իմ առ զօԹիւք առ՝ ած վասն այնոցիկ, որոց ձեռք իւրեանց շաղախեալ են արեամբ սրբոց տեառն. կամ զիարդ մատուցանեմք աղօԹս պաղատանս այնոցիկ՝ որք դարձուցին զԹիկունս առ տէր, և ոչ զերեսս իւրեանց: Կամ զիարդ եղէց բարեխօս վասն այնոցիկ, որք նըւաձեցինն. կամ զիարդ խօսիցիմ՝ ի հաշտուԹիւն վասն այնոցիկ, որք փախուցեալն են և ոչ կամին դառնալ. որոց ինքնին տէր նիւԹեաց պատրաստեաց զնմ չարիս՝ ի վերայ նոցա վասն այսորիկ, զի ասացէք ԷԹէ ոչ տեսանէ տէր զայս ամ, և որ ինչ նման է սոցին բանիցս:

Ո՛չ այս բանս խօսեցաւ սուրբ Ծերունին Գանիէլ քորեպիսկոպոսն առաջի Թագաւորին Տիրանայ, և առաջի իշխանացն, պետացն և ամ զօրացն։ Այլ մինչ դեռ խօսէր նա զայս ամ, հիացեալ զարմացեալ Թագաւորն միտ դնէլով լուռ ևէթ կայր։ Այլ եղև իբրև զայս ամ լուաւ, բորբոքեալ ի բռնաւորութիւն դառնութէ ամբարշտութէ ցասման իւրոյ. զոր տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա։ Ո՛ր իբրև լուեալ անդէն սպասաւորացն, կատարէցին զգործ հրամանին վաղվաղակի։ Այլ մեծամեծք նախարարացն աւագանին շատ եղին ի մէի արքային, զի մի կատարեսցէ զչարութիւն կամացն իւրոյ. առ դառնութէ սրտին ցասման, առ զայրուցս բարկութէն, ոչ ինչ անսայ նոցա. այլ ձոպան ի փողս եդեալ, խեղդամահ արարին զնա։ Այսպէս կատարեցաւ սուրբն Գանիէլ։

Այլ բարձին զմարմին նորա բազմութէ մարդկան, որք տեղեակ էին նմա, և գիտէին զնա. և կամեցան մեծարել զնա ընդ ոսկերս սուրբ վկայիցն Քրի։ Ո՛չ պա ինքն յայտնեալ երևեցաւ առն սրբոյ աշակերտին իւրում, որոյ անուն կոչէր Եպիփան, զի մի ի պահիս առցեն զոսկերս նորա իբրև զայլոցն. այլ տարցին ի տեղին՝ ուր ինքն հրամայեաց, և ծածկեսցեն ընդ հողով։ Ո՛չ այսպէս յայտնեալ բարբառեցաւ նոցա. զի եթէ տերունական մարմինն, ասէ, ի գերեզմանի ծածկեցաւ աւուրս երիւս մինչև զօրն երրորդ՝ յորում յարեաւ առ հայր իւր, որչափ և աւելի պարտ է մերում հողեղէն մարմինս ընդ հողով ծածկել։ Եպա բարձին զմարմին նորա յոբ սիրելի իւր աշակերտէ, որոյ գլխաւորին անուն էր Շաղիտա, որ ի նմանէ իսկ աշխարհին Կորդուաց վերադպետ տուեալ էր. և երկրորդին անուն Եպիփան, որ գաւառին Ղճնեաց և մեծաց Ծոփաց ի նմանէ իսկ վարդապետեալ էր, և ընդ նոսա պաշտօնեայք բանակին։ Այլ գնացին տարան. եդին զմարմինն ի տեղւոջն՝ ուր յառաջագոյն էր կայեանք խցկանն իւրոյ յերկրին Տարօնոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մօտ յակն աղբերն՝ ուր առնէր Աղիպոր զմկրտութէնն աշխարհազոր բազմութէն, ի տեղւոջն՝ որ

անուանեալ կոչի Հայեաց դրախտ։ Յայնմ տեղւոջ ծածկեցեալն զմնալմին սրբոյն Դանիէլի ընդ հողով, ըստ յառաջագոյն տեսլեանն ըստ հրամանի նոցա տուեալ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս որդւոյն Յուսկանն, թէ սրպէս ընծադրեալ ընդ ոսն հարին զքահանայութեանն ոյ զպատիւ։

Զոն խորհուրդ արարին մատուցանել զորդի սրբոյն Յուսկան ՚ի քահանայութեանն հարցն վարդապետութեանն։ Զպա առանց իւրեանց կամացն ըմբռնեցան, և բռնաբարեցան ՚ի միաբանութեանն եպիսկոպոսացն. զի կալեալք, ակամայ առեալք զձեռնադրութեան սարկաւագութեանն՝ հարկեցան Պատն և Զթանագենն։ Որոց հարեալք զաւանդն հոգևորն պատուի, անձամբ զանձինս իւրեանց խստրատուբ [1] յարուեսան զինուորութեանն զինեցան, և յերկիր կործանեցան։ Զոր ընտրեցին զերկրաւոր կեանս, և առին ևս իւրեանց կանայս զքոյս Թագաւորին, և մերժեցին զանձինս իւրեանց ՚ի ժառանգութենէ այ։ Զայց անուանք կանանց նոցա, անուն կնոջն Պապայ՝ Վարազդուխտ, նոքա անորդիք անզաւակ եղին յաշխարհէ. անուն կնոջն Զթանագենի՝ Խամբիչն, ՚ի սոցանէ ծնաւ այր սքանչելի և զարմանալի ՚Ներսէս, որ առ յապային եկաց քահանայապետ։

Զայց յայնմ ժամանակի ոչ ոք գոյր, որ առաջնորդ դէր նոցա զքահանայապետութենէն։ Զպա խորհուրդ արարին՝ թէ զի գացեն իւրեանց առաջնորդ. ապա կամ եղև ամենեցուն առ հասարակ, զի ՚ի նմին տանէ իշխանութենէն Յրիգորի գացեն, որ կալցի նա զաթոռ հարցն։

1 Յերկուս օրինակս խոստոտոր։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Փառնայ, որ կալաւ զաթոռ Հայրապետացն։

ՅԱյնմ ժամանակի համարեցան արժանի զՓառնէն ոմն երիցս, ՚ի գաւառէն Տարօնոյ, ՚ի մեծէ մարզպետանոցէն Յովհաննու, որ էր նախ շինեալ տուն աղօթից և խնդրուածոց ՚ի հանգիստ սրբոցն, զի տեղին այն նման էր հաւատացեալ։ Այսպէս կոչեցին զնա առ աղքայն. և առաքեաց զնա պատարագք Թագաւորն, և հրովարտակօք և Ձոխ իշխանօքն՝ որ ընդ նմա առաքեցանն։ Մեծ զօրավարն Հայոց՝ որում անուն էր Վասակ, ՚ի մամիկոնեան տոհմէն. և Մեհենդակ ըռըշտունի, և Գնդովկ սիւնի. և Աբշաւիր կամսարական, մեծք և գլխաւորք նահապետք. և տանն այլ այլ, ազք պատուականք, առին գնացին զՓառէնն ազ ՚ի մայրաքաղաքն Կամրջաց ՚ի Կեսարիա, և անդ ձեռնադրեցին զնա ՚ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց։ Եւ գան դարձեալ յիւրեանց աշխարհն խաղաղութիւն։

Եւ նստաւ Փառէն յաթոռ Հայրապետական սակաւ ժամանակս. և այլ ինչ չհամարձակեր նա կամ խրատել ինչ, կամ յանդիմանել զմնըղրութիւն ինչ զուրուք կամ զամբարշտութիւնս։ Այլ միայն զիւր անձն սուրբ պահէր, և ՚ի հարկէ ընգերեր անօրէնն Թագաւորին, և ըստ նորին կամացն երթեալ հնազանդեալ։ Եւ յետ այսորիկ հանգեաւ, և յաւելաւ առ հարս իւր. և առեալ պաշտօնէիցն եկեղեցւոյ բանակին զմարմինն, գնացեալք ՚ի գաւառն Տարօնոյ՝ տարան ՚ի յագարակն մեծի մարզպետանոցին Յովհաննու, որ էր ինքն ՚ի կենդանութեն իւրում յառաջագոյն քնակեալ. և անդ գեղեցիկ շիրիմ դրծեալ, և զսորա ոսկերս ծածկեցին։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Ցաղագս Շահակայ՝ որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, որ յաջորդեաց զտեղի Հայրապետացն աթոռոյն. և կամ արդեօք երկիրն Հայոց ամ Թողեալք զնր և զպատուիրանս։

Այս յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ուր պարտ իցէ զՀայրապետութեանն զկաթողիկոսութիւնն ունել։ Այսպա իբրեւ ոչ ոք գոյր ի տանէն Գրիգորի այնմ արժանի, ապա նմանեցուցին զՇ ահակ ոմն անուն ի տոհմէ զաւակին Աղբիանոս եպիսկոպոսին։ Նա տան գնա ի ձեռս իշխանին մարզպետութեանն, որում անուն իւր Հայր կոչէր. և յաւագաց գումարեին ընդ նմա զնշխարն Գարգմանաց ձորոյն. և առնեն ընդ նոսա այլ տան նախարարս. և յօղարկեցին գնա մեծաշուք պատուով յերկիրն Գամրաց ի մեծ քաղաքն Կեսարիա։ Ընդ ձեռնադրեն զՇ ահակն ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց, և պատուով դառնան առ թագաւորն։

Նա յաջորդեաց զտեղի Հայրապետացն Շ ահակն. և սա նմանեաց վարուցն Փառեհայ։ Գաւանութիւնդ սա աշխարհի ըստ նմին օրինակի։ Հայց որոց հովուէրն՝ չեդեալք ունին ինչ խրատու ձշմարտութենէն, այլ յանդիմանեալք՝ հոլանեալ գործէին զկերդս համարձակուբ՝ առանց խիթի յամ չարիս դարձեալք, Թողեալք զտէր և զպատուիրանս նորա առ հասարակ թագաւորն և նախարարքն և իշխանքն։ Նուս չար քան զնոսա առ մարդիկ մարդկանն ամբարշտեալք, ի հնութենէ առաջինն գործոցն հարցն իւրեանց դարձեալք, ի փոքրկանց մինչև ցմեծամեծս ի յայս հինն հարեալք և ի սոյն կանխեալք։ Ա ման այսորիկ ամի բարկացեալ տէր ամ ի վերայ նոցա՝ եթող ի ձեռանէ, արար զնոսա կոխան ի յարուցելոցն ի վերայ նոցա թշնամեաց նոցա։ Կանգն ի ժամանակաց ի թագաւորութենէնն Տրդատայ, յորմէ հետէ զնոքն ձանաչելոյ՝ արար խաղաղութիւն, և լուեցոյց չուրջ

զԹշնամիս նոցա , զի ցածոյց տէր զմարտ պատերազմացն ՚ի սահմանաց նոցա , և մինչև յայն ժամանակ ոչ ընդ ումեք քանք գոյին ամբոխի կամ խռովութիւն , և ՚ի մեծի խաղաղութիւն էին բնակեալք : Այս ՚ի ժամանակին յայնմիկ յարոյց զօրացոյց զգլդուութիւնս սահմանակցաց չուրջ յիւմ կողմանս զԹշնամիս նոցա . և ոչ ոք ՚ի Թագաւորացն Հայոց ոչ ոք գտանէր նոցա բարեկամ , այլ ամենեքեան Թշնամիք :

ԳԼՈՒԽ ԺԸ .

Յաղագս Հայր մարդպետի , որ տայր կոտորել զազգս նախարարացն :

Բնաց յայնմ յանմիտ Թագաւորութիւնն ժամանակի ոչ միայն Թշնամիք Թշնամեաց , և բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ՚ի մէջ հայաստան երկրին , և բեւր ազգի ազգի Թշնամութիւնս գործէին : Ոմանն զի անկաւ ՚ի նոսա խռովութիւն ՚ի տեառնէ , այն պղծութիւնք և ոգի մոլորութիւնք . զի նախ միմեամբք քանդեալք աւերեցան վասն անօրէնութիւնք իւրեանց : Հայոց քան զամենեսեան աւելի այր մի անօրէն և այսամուտ , որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգռէր զԹագաւորն Տիրան : Ա յս ինքն որ ունէր զպատիւն մեծի մարդպետութեն , այր նենգքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ , որում Հայր կոչէին : Ո՛ք զամն ՚ի նախարարացն ետ քսութիւք առանց ինաստս կոտորել , և խանդարեաց զմեծ տերութիւն Թագաւորութեանն : Ոմանաւանդ աւելի զերկու տոհմն զազգս տայր իւրով չարախօսութիւնն հանել ընդ սուր , և անունդ առնել միահաղոյն զտոհմն Ուշտունեաց և զտոհմն Ա՛րծրունեաց . քառնայրն ՚ի միջոյ առանց ՚ամ ինաստս և յանցանս , մինչ անգամ և զէգն կոտորեցին ազգայն : Յայնմ ժամանակի ՚ի գայթակղի գտանէին ՚ի դայեակս մանկունս փախստեայս , զՅա-

ձատ որդի Աբէղնագայ ըսըշտունեայ. և միւս ևս Հաւասպ որդի Ազէի արծրունեայ. տղայք ստղնդիայք, զոր ածին առաջի Թագաւորին։ Իբրև տեսանէր, տայր հրաման հանել փողոտել զմանկունսն. զի նոքա ևեթ ձեռք մնացեալ էին յազգացն։ Եւ անդ դիպեալ Աբասազդ և Ազատակ, արք ի մանկունեան տոհմէն, որք էին զօրավարք ամ զօրացն Հայոց, որք յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հարեալք՝ ի դուրս գնացին. զկնի ի վեր առեալք, կռուոյ պատրաստէին՝ ի վերայ այնց մանկանց մեռանել։ Օ ի թէպէտ և մնացանէին նոքա զորդին զարքային զԱրշակ, սակայն զչարեալք ընդ գործ ժամնանակին՝ Թողին զսանն իւրեանց զԱրշակ, և գնացին ի բաց ի բանակէն արքունի։ Եւ զօգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. և անդ նստան ամն բազումս ընտանեօք իւրեանց, և Թողին զայլ զտուն իւրեանց։ Եւ մնացեալ նէին զայն մանկունսն, զԱ աւասպն և զՅաձատ. և ետուն նոցա զդստերս իւրեանց ի կնութեան, ուստի դարձեալ միաբանգամ ազգն այն սերեցան. և ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև ի զամ ամն։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս որդւոցն Ցուսկանն, Պապայն և Ամանագենին, Թէ զնդրպ կամ ուրպէս սատակեցան յանօրէնութէ իւրեանց։

Որդիքն Ցուսկանն, Պապն և Ամանագենն, յաճախեցուցեալ զկեանս իւրեանց վարեցին. յանօրէնութէ և յամբարշտութէ շրջէին։ Եւ զամ աւուրս կենաց իւրեանց ի մեծի յանդգնութէ էին, և ոչ երկեաղ այ առաջի աչաց նոցա. և ի բազում անառակութէ և ի գինեմոլութէ գնային, և զկարգն այ արհամարհեալ այսպանէին։ Եւ էին նոքա չերկրին

Տարօնոյ Աղկեղեցւոջ յաւանին Ա՛ղտիշատ. ուր զառաջինն էր շինեալ զեկեղեցին ՚ի Հաւոյն նոցա Գրիգորէ: Յայն գետղ երկոքեան եղբարքն երթեալք հասանէին Պասն և Ա՛թանագինէս: Եւ բազում հատեալ յարբշռութէն, զայ զտաճարատն այսն առնէին. և երթեալք երկոքին եղբարքն մտանէին յեպիսկոպոսանոցն՝ որ էրն անդ, և ըմպէին անդ զինի բոզոք և վարձակօք և գուսանօք և կատակօք. զսուրբ և զնուիրեալ տեղոքն քամահեալ, կոխան առնէին:

Եւ մինչ էին յուրախութէ մեծի, բազմեալք էին ՚ի ներքս եպիսկոպոսանոցին ուտէին և ըմպէին, յան կարճակի հրեշտակ տէն երևեցաւ ՚ի նմանութէն փայլատակման, և հարեալ սատակէր զերկոսեան զեղբարսն միանգամայն ՚ի բազմականին անդ: Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին ուրախակիցք և բազմականակիցք էին, որք միանգամ անդ դիպէցան, առ հասարակ թողին և փախեան, և ելին արտաքս ՚ի տաճարէ անտի: Եւ յահէն մեծէ այլ ոչ ևս ոք ՚ի նոցանէ դարձաւ անդրէն. և ոչ ոք իշխեաց քնաւ այլ մարդ ՚ի մարդկանէ մտաբերել մտանել ՚ի ներքս, և ոչ ՚ի դուրսն հուպ երթալ և դնել, քանզի ՚ի բաց մնաց ՚ի փախչէն նոցա. և ոչ յայլ աւուրս ոք առ դրօքն իշխեր անցանել:

Եւ Պասն և Ա՛թանագինէս երկոքեան եղբարքն այսպէս սատակեցան. անկեալ դնէին ՚ի ներքոյ եպիսկոպոսանոցին ՚ի տեղւոջն բազմականացն: Եւ դրունք տաճարին ՚ի բաց կային, և ոք հուպ չիշխեր երթալ. մինչև նեխեցան մարմինք նոցա և կողոպտեցան, և յաղկեցան. քակեցան լուծան ՚ի միմեանց, ցրուեցան ոսկերք նոցա: Եւ բազում ամիսք անցանէին ՚ի վերայ երացն, ապա իշխեցին մտանել ժողովել բառնալ հանել անտի զոսկերս նոցա. և գտանէին զնոսա լոկ ցամաքեալ զհնձղացեալ զոսկերս նոցա. և հանէին յայգւոջն եկեղեցոյն, որում Ա՛գարակն կոչեն: Բայց մնաց Ա՛թանագինի որդի՚ի Բամբրշնի ՚ի քեռէ թագաւորին, և անուն նորա Ա՛երսէս. որ եկաց յաթոռ Հայրապետացն առ յապայ ամ երկրին Հայոց: Բայց Պապայ ՚ի բուն ՚ի կնոջէն ոչ մնաց, այլ էր նորա հարճ մի ՚ի գաւառէն Տարօնոյ, ՚ի Հացեաց գեղջէ

կարձաղատացն . և ինաց որ ՚ի հարձէ անտի ՚ի Հայ-
ցեկացոյն , որուն անուն իւր [1] որդւոյ հարձին Ա ըիկ
կոչէր :

ԳԼՈՒԽ Ի.

*Ցաղագս Տիրանայ Թագաւորի , Թէ որպէս մատնեցաւ յիւրմէ սենե-
կապետէն Փխսակայ սիւնւոյ . և որպէս կորեաւ և գերեցաւ ՚ի Վարա-
զայ , և կամ որպէս ամ երկիր ընդ նմին գերեցաւ :*

Յաւուս դեռ բարեկամութիւն էր ՚ի մէջ Թագաւո-
րացն երկոցունց , ՚ի մէջ Թագաւորին Հայոց և Պար-
սից : Ոստեր յաշխարհին ատրպատականն որուն ա-
նուն կոչէր բարձագհին իւրում՝ Շ ապուհ Ա արազ :
Ա՚յդ միևչ դեռ ևս յոյժ խաղաղութիւն էր ՚ի մէջ Թա-
գաւորացն երկոցունց , մանաւ ՚ի ոչնիւ խռովութիւն
ոչինչ բանիւք՝ արամբ միով անարգաւ , որ ոչ ինչ պա-
կաս քան զդև էր մոլորութիւք , որոյ անուն Փխսակ կո-
չիւր . որ սենեկապետն էր արքային Տիրանայ , ազ-
գաւ սիւնի : Ա՚յս դեսպանագնացեալ էր առ Ա՚ արազ
Շ ապուհ , զոր Թողեալն էր սահմանապահ արքային
Պարսից յատրպատական աշխարհին :

Օ՚յնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային
Տիրանայ , զորմէ կարի զարմանային : Ա՚յս էր ձին գու-
նով ձարտուկ ձանձկին . սա լի էր քաջութիւք , անուա-
նի և հոյակապ , մեծ և բարձր երկայն քան զամ ձիս ,
և տեսանելով քան զայլս գեղեցիկ , զանազան՝ որ հա-
մեմատ նմա այլ ոչ գտանէր : Օ՚րմէ յերթալն իւ-
րոյ դեսպանութենն՝ սենեկապետն արքային Փխսակ
մատնեաց զձին Ա՚ արազայ , վասն զի բարեկամացեալ
էր ընդ նմա . և ՚ի նմանէն ինքն Թուղթ առեալ , քե-
րեալ մատուցանէր արքային Հայոց : Օ՚րմէ չհա-
ւանեալ , տալ ոչ առնոյր յանձն : Ա՚յլ վասն զի կաս-
կածէր յառնէն զի գոյժ խռովութիւն լինի ՚ի մէջ Թա-

1 Ցամ օրինակս սրսամ անուան էր որդւոյ :

գաւառացն երկոցունցն արասցէ, ի խնդիր անկանիցէ զնոցա գոյն ձի, զնոցա նշան, զնոցա պատկեր, քաց ի մեծութենէ զի այնչափ ուրեք ոչ գտանիցէ, զնոյն նմանն զնոյն կերպարանս ձարտուկ ձանձկիկն գտեալ, և հանդերձ հրովարտակօք և պատարագօք ի ձեռն մեղեկան փիսակայն առ իշխանն Այրպատականաց առ Վարազն արձակէր։ Նա միտս դնելով խորհուրդ առնէր. զի ասասցես, ասէ, եթէ այս ինքն է զոր խնդրեցեր, զի առ սէր ոչ խնայեաց ի քէն։ Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս խնայութեանն, ի գրգռութեն ջանացեալ՝ ոչ կամէր բժշկել զնենգախօսութիւնն իւր. այլ ևս քան զևս սրեալ զչարախօսութիւն իւր, ասելով եթէ այնչափ ի հեռ և ի նախանձ, ի չարակնութե և ի թշնամութե, ի յատելութե և ի չկամութե, յերկմտութե և յաներկիւղութե առ Թագաւորն Պարսից և առ ամ զօրսն Պարսից արքայն Հայոց Տիրան, մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ Թագոյց, և զքեզ ծաղր արարեալ, և այլ ընդ այլոց զմիտս գողանալ քո. զոր յիմ ձեռն ետ ածել, առ քեզ առաքեաց։ Նա ոչ այդ միայն է, ասէ. այլ ի կայսր և ի զօրս նորա յուսացեալ, խորհի հանել զթագաւորութե Պարսից յազգէն Վասանայ. զի ասէ, թէ մեր լեալ է և հարցն մերոց այն տէրութիւն։ Ընդ ասէ, թէ չեմ ծուղալոց՝ մինչև զարձցի պատիւ հարցն նախնեաց. զնախնի զթագաւորութիւնն այսրէն առ որդի և առ զաւակ նոցա յազգս իմ և ի տունս իմ և յանձն իմ զարձուցանեմ։ Նա այսչափ և այսպիսի բանիւք գրգռեր զնա փիսակն անօրէն ի վերայ Հայոց իւրոյ քնակէ, և նիւթեր զմիտ ի վերայ իւրոյ թագաւորին։

Այսպա իբրև զայս ամ լուաւ Վարազ Շապուհ ազատ տրդպատական մարզպան ի կատաղախօս ի ընաբերման փիսակայ, վաղվաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ յարքայէն Հայոց մատուցանէր Ներսեհի արքայիս Պարսից։ Նա այնչափ զայրացոյց գրգռեաց յուզեաց գրգեաց սրտմտեցոյց բարկացոյց զթագաւորն Պարսից ի վերայ արքային Հայոց, որ ապա առ հրաման ի նմանէ, զի չև է հնար գտանել

մարթել Ճանապարհս, մեքենայիւք գայթակղութիւն դնել՝ որսալ ըմբռնել զարքայն Հայոց։ Եւ մինչ դեռ խաղաղութիւն էր ի մէջ Թագաւորացն երկուցունց, բարկութիւն ահն զրդռեաց յուզեաց զվրէժս, զի խնդրեսցին սուրբ արիւնք մահուամբ երկուց մեծացն քահանայիցն առաջնորդացն յանօրէնն Տիրանայ։

Ապա յայնմ ժամանակի Ա արաքն արձակէր դեսպան առ արքայն Հայոց, ի հաշտութիւն խաղաղութիւն դաւով խօսել ընդ նմա. զանձուկ սիրոյ պատճառեալ, համարձակութիւն խնդրէր՝ գալ նմա առ նա։ Իսկ իբրև լուաւ զայն Տիրան արքայն Հայոց, փութաթափս վաղվաղակի մեծաւ ուրախութիւ առ ինքն կոչել հրամայեր։ Եւ մինչ չև նա եկեալ էր, խորհէր արքայն ընդ իւր ծառայսն նեղբևխիոն սպասաւորսն իւրում սենեկի. ասէ. Ընդ ժան է մեզ, այր որ գայ առ մեզ՝ զբօսուցանել և ուրախ առնել որսովք և բազմականօք, և ամ պէսպէս վայելչութիւք։ Այլ ոչ եթէ այնչափ ինչ արժան է զմեծ ինչ որսոյ տեղիս ի մերում երկրի աստ նմա տեսանել՝ վասն չաքարհնութեան յաչաղանաց չարաբարութեան նենգութեանն ազգին պարսկաց. այլ նմանեցուցէք տեղիս դոյզնա-գիւտ որսոց ինչ՝ որով լոկ զբօսուսցուք մեզ, և մի՛ որ սասցուք զառատ ինչ որսոց զտեղիս, և զի մի՛ մեծ ինչ նախաձիրս որսոց կոտորեալ առ ի ցոյցս առնելոյ։ Այլ վարկպարագի արասցուք, ասէ, վասն դառնացող ազգին։ Այլ յերկրին Պահունեաց, յոտինն մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որսասցուք. տեղւոյն՝ որում անուն կոչի քաղաք Աղիորք։

Ապա եկն եհաս Շապուհ Ա արքայն երիւք հազարօքն, և յանդիման եղև Թագաւորին յերկրին Պահունեաց. և մեծապէս մեծարեցաւ ի նմանէ։ Եւ այն բանքն, որ վասն որսոյն ի Թագաւորէն ասացաւ, վաղվաղակի յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն շուքմանն տիրանենկին և տիրադրուժն տիրասպանուն տիրամատնիչն Փխակայ, յայն յաշխարհակորոյս յառնէ անտի. և աւուրս սակաւս ուրախ լինէին ի միասին։ Այլ իշխանն Պարսից զթշնամութիւնն, զոր ունէր ի նեղբոյ, խորհանն

գեալ ծածկեալ մեքենայեալ առաքաստեալ բերդը, և առնէր սպաս զգաւն կատարել։

Նա ի ժամանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ, յայնմ ժամանակի զօրավարքն չէին անդ, այլ սարտուցեալ էին. և այլ մեծամեծք նախարարացն, և աւագ տանուտէրք ազատանէին. սոյնպէս և զօրքն արքունի յիւրաքանչիւր տունս յիւրաքանչիւր կայեանս յիւրաքանչիւր դաղարս դադարեալ էին։ Նա ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ Թադաւորին, և ոչ գունդ և այրևէի. բայց միայն սակաւ սպասաւորօք Հանդերձ, և որսոյն պառականօք, և ահվիրայ մարդկանն, և խառնաղանջ խորանապահ զօրուն, և ռամիկապաս զօրօքն, և տիկնանն Հանդերձ և արքայորդին մանուհին Ա.րշակ։ Ա.յսպէս սակաւուք դիպեալ՝ի ժամանակին յայնմիկ, զի Թէպետ և տեսեալ Հարուստ գնդաւ եկեալ զօրավարն Պարսից, զի էին ընդ նմա սպառազինք վառեալք արք իբրև երեք Հազարք, ոչ ինչ խիթացեալ զգուշաւ անկասկած լինէր։ Վ.ասնզի տեսանէր զնա իբրև՝ի պատճառս խաղաղութեան եկեալ, մեծաւ պատարագօք և պատուական ընծայիւք և մեծաշուք մեծարանօք։

Նա իբրև ոչ ինչ բաղում աւուրք ընդ միջ եղեն, յընթերիս կոչեն՝ի Հայ Հրաւիրեալ զարքայն. ՝ի պատիւ մեծարանաց կոչէր։ Ա.պա իբրև ընդ գինիս մտին, քաջ արբեալ լինէին Թադաւորն և որ ընդ նմայն էին, զօրն դարանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բաղմականի՝ի վերայ Հասեալք ըմբռնէին, և վահանափակ շերտաւորացն պատէին զԹադաւորն Տիրան։ Նա կալեալ կապեալ զոտս և զձեռս նորա՝ի կապս երկաթիս, և զբանակն՝ զոր գտանէր՝ աւար Հարկանէր. և զգանձս և զստացուածս զկին և զորդիս Թադաւորին, զոր գտին՝ի բանակին, խաղացուցին յերկրէն Ա.պահունեաց։

Իբրև եկին Հասին՝ի գետս մի, որում անուն Դալարիս կոչէին, յորժամ եկն եմուտ զօրավարն Պարսից՝ի նեբքս՝ի գետն Դալարիս, ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ իւր։ Նա ասէ Վ.արազ. Ա.զէ տեսիք ածուղ, որով երկաթ շողացուսցուք, զի զաչս

խաբեացուք զաղբայիս Հայոց ։ Եւ անդէն բերին ա-
ծուղ, որով խարէին զաչսն Տիրանայ ։ Ապա ինքն խո-
սել սկսաւ Տիրան, և ասէ. Փոխանակ զի իմ երկու
աչքս լուսաւորքս խաւարեցան յայս տեղւոջս, արդ
փոխանակ Խաղաղեացս անուան, Ածուղ անուն լի-
ցի սմա մինչև ցյաւիտեանս ժամանակաց. և այս է
բևեռքն նշանակս ինասցէ յիմ յիշատակի ։ Այլ ինձ
յուշ եղև և գիտեմ՝ թէ այն զի խնդրեցաւ յինէն
վրէժ չարեաց մեղացն իմոց, փոխանակ զի խաւարե-
ցուցի ես զաչխարհս՝ որում Թագաւորեալ էի՝ յեր-
կուց լուսաւոր վարդապետացն, և կարծեցի շինօւցա-
նել զլոյսն Աշմարտութեն քարոզութեն երկուց հա-
ւատարմացն, վասն այսորիկ խաւարեցաւ լոյս տեսա-
նելոց աչացս իմոց ։

Եւ յայնմ ժամանակի վաղվաղակի փութանակի
չոբ առնէր Ածուղ գեղջէն, խաղայր գնայր Ճեպով
իշխանն արքային Պարսից Հանդերձ Տիրանաւ ար-
քայիւ և ամ գերութեն յերկիրն Պարսից. և եր-
թայր յաստրեստան առ տէրն իւր յարքայն Պարսից ։
Ոչ եղև այս ամ կործանումն գուժի չարեացն յան-
կարծօրէն Թշուառութեն հասելոց ։ Ապա ժողով լի-
նէր նախարարացն և իշխանացն, գործակալք և զօ-
րագլուխք, պետք և ամ աշխարհաժողովք բազմու-
թեանն եկելոց կուտելոցն ։ Ակնկալեցան ժողովեցան
կազմեցան գունդ եղէն, պատրաստութեբ պիտի կրը-
թէին Վարազայ, ոչ ինչ կարացին հասանել ։ Ա-
կայն հասանէին առնուին զկողմ'ն Պարսից աշխար-
հին. առ հասարակ մարդակոտոր առնէին, և զաշ-
խարհն յայրեաց և յաւար դարձուցանէին ։ Եւ ինչ
քեանք գառնային, և 'ի մի վայր ժողովէին, կոծ և
դեալ աշխարանօք լային զիւրեանց քնական տէրն
զաղբայն Հայոց. սոյնպէս և զկորուստ աշխարհին,
և զանձանց անտէրչութիւն կործանմանն վարանացն
աղիողորմ գործէին ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս թէ սրպէս ժողովեցան միաբանութիւն նախարարքն Հայոց, և չոգան առին զԹագաւորն Յունաց՝ իբրեանց ի Թիկունս օգնականութեան ի յերկիրն Հայոց. և թէ սրպէս եկն Թագաւորն Պարսից բազում զօրօք, և միաձի ճողոպրեաւ փախչէր յերկիրն Պարսից։

Այն առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեամբ մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, աղատք, զօրապետիք, դատաւորք, պետք, իշխանք. բայց ի զօրավարացն, այլ և ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն։ Այսպա խօսել սկսան այր ընդ ընդերի, և ասեն. Ո՞վ է այս, որ ի սուգ մտեալ եմք. Թշնամիք այսու գամագիւտ լինին. այլ քան սակաւ ժամանակք են, այսրէն արշաւեսցեն թշնամիքն։ Այլ եկայք, ասեն, զանձինս անձամբք միսիթարեսցուք. անձանց և աշխարհի պահ կալցուք, և զտեառն քնակի վրէժ խնդրեսցուք։ Այսպա առ հասարակ ամ մարդիկ աշխարհին ի մի միաբանութիւն և ի մի խորհուրդս ժողովեցան վասն օգնականութեանն և ի Թիկունս իբրեանց գտանելոյ։

Յայնմ ժամանակի առաքեցին ի մեծ նախարարաց անտի աւագանին Հայոց հանդերձ պատարագօք առ Թագաւորն Յունաց, զի՝ի նա ձեռս տուեալ՝ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ, և լինիցի նա նոցա Թիկունք օգնականութեամբ խնդրել վրէժս ի Թըշնամեաց նոցա։ Այսպա առաքեցին զՅնդուվկ նահապետն Վիւնեաց, և զԱրշաւիրն կամսարական, նահապետն Աղձնեաց։ Որք երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց ի կայսերական պաղատն Թագաւորացն. և տային զհրովարտակն, և ունէին զպատարագն քերեալ առաջի, և մատուցանէին զաշխարհապազատ պատգամն առաջի Թագաւորին։ Ո՞ր իբրև լուաւ կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ ի խնդիր ելանէր իրին հասեալոյ. և օգնական և Թիկունք լինէր աշխարհին

Հայոց ։ Ա՛նսաւանդ զի զուխտն յիշեալ զդաշանցն կռելոց զերդմանցն հաստատուԹե՛, միաբորդուԹե՛ի մէջ կայսերն Յոստանդիանոսի և ի մէջ Թագաւորին Տրդատայ եղեալ էր ։

Ա՛րդ մինչ դեռ դեսպանքն երԹեալք յերկրէն Հայոց՝ի կայսերական պաղատն չև էին անդրէն յիւրեանց աշխարհն դարձեալ, ի կողմանց արևելից խաղաց գնաց ինքն Ներսեհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել և աւերել, կորուսանել և միահաղոյն խակ յիւր վտարել զսահմանս Հայաստան երկրին ։ Նա առեալ զա՛մ զօրս իւր բնիւ աղխիւ և ա՛մ մեծաւ կարաւանաւ, փղակոյտն բազմուԹե՛ հանդերձ, անԹիւ վաճառօք և բնիւն մաշկապաՀենօքն, և ա՛մ կանանօքն, և հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եՀաս ՚ի սահմանս Հայոց ։ խՃողեաց եղեց զերկիրն առ Հասարակ ։ Յայնմ ժամանակի աղատազօրքն նախարարացն Հայոց առեալք զիւրաքանչիւր ընդանիս, լինէին փախստականք, ՚ի կողմանս Յունաց անգանէին, գոյժ տային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն ։ Ա՛յս իբրև զայս ա՛մ լսեր Թագաւորն Յունաց, նոյնօրինակ և նա զիւր զօրսն գումարեր ։ և չու արարեալ գայր Հասաներ յերկիրն Հայոց ընդդէմ Թագաւորին Պարսից ։ Նա եԹող զիւր զբանակն զԱատաղ քաղաքաւն ։ և ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս ի մատուռնս Հայաստան բանակէն, այս ինքն զԱ՛ղբաւիրն և զԱ՛նդովին ։ զի այս արք էին, որ չոգան առ նա դեսպանուԹե՛ յառաջնում նուագին ։ Նա այսպէս Հանդերձ նոքօք ինքն խակ կայսրն ՚ի շինականուԹե՛ կերպարանս, ՚ի կաղամբաւաՀաւի օրինի, մնանէր ՚ի բանակին Պարսից ։

Իբրև էր նա բանակեալ ՚ի գաւառին Բասենոյ, ՚ի դէմն՝ որ անուանեալ կոչի Ոսխայ, եկին մնին ՚ի բանակին արքային Պարսից, դիտեցին քննեցին զչափ առին զնոցա զօրուԹիւն զօրացն ։ Նա անտի դարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան ։ գային Հասանէին գտանէին զբանակին արքային Պարսից ՚ի նմին տեղւոջ բանակեալ ՚ի պղերգուԹե՛ յանհնգուԹե՛ յանկասկած խաղաղուԹե՛ ։ Ա՛յս Հասեալ ՚ի տուընջեան ժամուն, անկանէին ՚ի վերայ Թագաւորին

Պարսից, ընդ սուր զնամ բանակն հանեին, և ոչ զմի ոչ ապրեցուցանէին։ Նա առին զկապուտ զաւար բանակին, և զկանայս Թագաւորին և զեամբիչն, և ըզբանսկան ընդ նոսին, և զինչս և զստացուածս նոցին ընդ նմին՝ ի գերուԹիւն վարեին, զկանայս նոցա և ըզդանձս և զկեանս և զազմած նոցա։ Նայց միայն Թագաւորն պրծեալ մազապուր, պեշասպիկ[1] մի սուր հանդակ առաջի, պրծեալ ելանէր փախստական. հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ իւր։ Նակ կայսրն մեծաւ շքեղուԹիւն անուանի պերճացեալ՝ ի մէջ բանակին երևեալ. զայր՝ ի ջուր հասեալ առ հասարակ կոտորէին, և զայլ՝ ամ՝ ի գերուԹիւն վարէին յերկիրն Յունաց։ Նա՝ ի վերայ երկրին Թողայր զիշխանսն վերակացուս զՆդովկ և զՆ.ր շաւիր, մեծապարգև մեծապատիւ մեծարեր. և յանձն արարեալ զնոսա ամ՝ իշխանացն և զաշխարհն նոցա, և ինքն կայսրն չուս արարեալ գնաց յերկիրն իւր յերկիրն Յունաց։

Նա առքայն Պարսից գնացեալ փախստական յերկիր իւր. և իբրև եհաս անդր՝ ժողովեր առ ինքն զամ՝ մնացեալս իշխանուԹէ իւրոյ, և՝ ի խոյզ և՝ ի խնդիր անկանէր։ Նորհուրդ՝ ի մէջ առնոյր, հարցանէքինն առնել. հրամայէր վերստին, զի տեսցեն և յայտ արասցեն՝ Թէ ուստի եղև սկիզբն պատերազմացն և մարտին։ Նպա՝ ի վեր եկին և յայտնեցան իրքն առաջի նորա. զի յոչինչ իրաց և վատԹար բանից համարեցան զերման եղեալս, վասն ձիոյ միոյ կարծիս առնել զայն ամբոխ խռովուԹէ՝ ի մէկեան առնէին Շ ապուհ Ա արաբացին։ Նպա հրաման ետ հանել զպատիժն՝ ի բաց, և մերկանալ՝ ի նմանէ զպատուականն պատմուճանն, և մեծաց հարուածոց արժանի առնէր զԱ արաբն։ Նստ պարսկի օրինակին հրամայեր զմորԹն՝ ի բաց հանել, և խոտով լնուլ, և՝ ի հրապարակի իւրում՝ ի տեսիլ ծանականաց կանխհնել հրամայէր։ Նա ինքն՝ ի զղջումն եկեալ վասն իրացն եղելոց, ապա արձակէր զիշխանսն պատուականս՝ ի հնազանդուԹէ խաղաղուԹէ վասն գերեզարձ առ-

1 Ցօրինակի միում պէլասպիկ։

նել ՚ի կայսերէն միւսանգամ, և այնուհետև աղօ-
թակերս արձակել ՚ի հաշտութեի խաղաղութե. խո-
սել ընդ կայսերն, զի գոնեայ զկնայս իւր արձակես-
ցէ ՚ի գերութենէն, և բարձցէ ՚ի նմանէ զծանակու-
թեանցն զգսրովութեցն նախատինս։

Ապա գտանէր հրովարտակ թագաւորն Յունաց
Կաղէս առ արքայն Պարսից. Նախ դու, ասէ,
դարձուսցես զգերութե առեալ յերկրէն Հայոց, և
զթագաւորն Տիրան ինքնին գլխովին, և զամ ինչ
զոր առեալ էիցէ անտի. ապա յորժամ զայդ արաս-
ցես, և ես զնմա դարձուցից զոր առեալ եմ. զի եթէ
ոչ՝ նախ դու զնացա զաւարն դարձուսցես, և ես ապա
զքոյդ դարձուցից։ Եւ իբրև լուաւ զայն հրամանն
արքայն Պարսից, վաղվաղակի զնրան կատարէր. հա-
նէր զկապեանն Տիրան ՚ի տանէն բանդի կապանաց,
խօսէր ընդ նմա ողջոյն, զի թագաւորեցուսցէ զնա
անդրէն յիւր աշխարհն արձակելով, զի երթիցէ նա
պատուով։ Ապա տուեալ պատասխանի Տիրանայ, և
թէ անօգուտ է ինձ և անպատշաճ է, կուրութե, ան-
մորթե իսկ է կարի, ունել զթագաւորութիւն. բայց
փոխանակ իմ թագաւորեցո զՎրշակ զորդի իմ։

Յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր զՎրշակ
որդի նորա ՚ի վերայ աշխարհին Հայոց. և զկնայս
թագաւորին և զայլ գերին ամ, դանձիւք ընձայիւք
և ստացուածովք հանդերձ, և միանգամայն դարձ
առնէր ամ գերութե։ Եւ զինքնին Տիրան թագա-
ւորն Պարսից հանդերձեաց կազմեաց մեծաւ կազ-
մութեամբ, և արձակեաց յիւր աշխարհին յերկիրն
Հայոց. և կատարեալ հաւատարմացոյց զսացեալսն
հրամանաց թագաւորին Յունաց։ Եւ իբրև զնաց
՚ի Հայս յուղարկէր, ապա և զ՚ի թագաւորէն Յու-
նաց զառ ինքն եկեալն դեսպանն արձակէր յիւր-
մէ, զի երթիցէն պատմեսցեն թագաւորին Յունաց՝
թէ ուրախ և կամ զնարդ նա զհրամանն կատարեաց
զթագաւորին Յունաց, զի և թագաւորն Յունաց
դարձուսցէ զգերութիւնն՝ զոր առեալ զթագաւորին
Պարսից։ Եւ եղև իբրև լուաւ զայս ամ թագաւորն
Յունաց՝ եթէ կատարեաց ՚ի գլուխ եհան զայս ամ
՚ի նմանէ զտուեալ հրամանն թագաւորն Պարսից,

և դարձ արար գերութեանն Հայոց և Տիրանայ արքային, հաձեցաւ։ Յայնմ ժամանակի և Թագաւորն Յունաց առնէր գերեդարձ գերութենէ արքային Պարսից։ Նա հանդերձեաց կազմեաց Թագաւորն Յունաց զկանայս Թագաւորին Պարսից մեծաւ պատուով, և զամ գերութիս նոցա ընդ նոսին յերկիրն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր, և բարեաւաւ Թագաւորն յուղարկէր։

Պատրիարքս Երզնկայ դարձ, ասեն և ի պատմութիւն դպրութիւն, ժամանակագիր կանոնագիտայ Ներսիսեանցոյ ժամանակագիրն մեծի պատմագրէ, որ էր ժամանակագիրն Յունաց։

ՁՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ՐԻՒՋԱՆԴԵՑ

ՁՈՐՐՈՐԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԶՈՐ ԱՍԵԼՈՑ ԵՄ ԿԱՐԳԵԼ ԶԴՊՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆՔ ԴԱՐՔ ԵՒ ԴԱՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԶՐՈՒՑԱՑ

ԽՈՍՏՈՒՄՆ ԽՈՍՏԱՑԵԼՈՑՍ

Ա. Յաղագս թէ ուրպէս յետ բաղում շփոթի պատերազմաց ընդ Ներսէհի արքային Պարսից, թէ ուրպէս Թադեւորեցոյց զԱբրշակ որդի Տիրանայ, և արձակեաց յաշխարհն Հայոց հանդերձ Տիրանաւ հարբն իւրով, և ամ դերութիւն հանդերձ:

Բ. Յաղագս շինուածոց և յօրինուածոց աշխարհին Հայոց, վարուց և կարգաց նուաճութեանն, և յօրինելոյ և նորոգելոյ Թադեւորութենն:

Գ. Յաղագս սրբոյն Ներսէսի, թէ ուստի կամ ուրպէս ընտրեցաւ լինել կաթուղիկոս Հայոց մեծաց:

Դ. Յաղագս թէ ուրպէս առին զնացին տարան զՆերսէս 'ի Կեսարիա. և կամ ուրպէս սքանչելիքն այ եղեն:

Ե. Յաղագս Ներսէսի կաթողիկոսի Հայոց, թէ զկնարդ ԱԲրշակայ արքայի Հայոց առաքեցաւ առ Վաղէս թագաւորն Յունաց հանդերձ նախարարօքն, և թէ զկնարդ աքսորեցաւն, և կամ զկնարդ զայլ նախարարսն հանդերձ այլովքն պատարագովք արձակէր յերկիրն Հայոց:

Զ. Յաղագս և թէ զկնարդ իբրև աքսորեցաւ ընդ Ներսէս, և ընկեցաւ 'ի կղզին յանապատ, և թէ ուրպէս և կամ զկնարդ կերակրեցաւ, և յայ եղեն սքանչելիքն զոմն ինն:

Է. Յաղագս այ սքանչելիքն, որ երևեցաւն 'ի Ներսէս կամ 'ի Բասիլիոս. և վասն նախանձու Եւսեբի եպիսկոպոսին Բասիլոսի:

Ը. Յաղագս և թէ ուրպէս Թադեւորն Յունաց, հալածեաց զամ ուղղափառս զհաւատացեալսն, և կամ ուրպէս կամեցաւ փայքար առնել 'ի մէջ Ճշմարիտ հաւատացելոցն և 'ի մէջ ձախող աղանդին արիանոսաց: Եւ կամ ուրպէս այ սքանչելեացն տեսլեամբն Բասիլոս կոչեալ լինէր 'ի կայսերէն 'ի փայքարէ, և ամ զօրութեանն յաղթեալ ախոյանին առ եպիսկոպոսաւն Եւսեբէ: Եւ կամ ուրպէս եպիսկոպոսապետն կեսարու Եւսեբիոս վճա-

բեալ լինէր ՚ի բանդին, և կամ որպէս Բարսիղոս արձակեալ։

Թ. Յաղագս և կամ որպէս արարին զԲարսիղոս եպիսկոպոսապետ Կեսարու, և կամ զինչ նշանք եղեն յայնպանչելիքն. և կամ որպէս Թագաւորն հրամայեաց յափըշտակել զամ լինչն որ ՚ի քէն հաւատացելոցն. և կամ Թէ որպէս խնդրեաց որք բերէին տային ՚ի դուրս վասն իւրեանց հաւատոցն, և կամ որպէս և որպիսի խընդրուածովք խնդրէին յայ ՚ի վերայ իւրաքանչիւր եպիսկոպոսացն։

Ժ. Յաղագս Թէ զինքրդ կոչէր կայսրն Վաղէս զսուիետոէան յանդիմանութիւն ընդդէմ Ճշմարտութեն հաւատոցն. և կամ զինքրդ ետես սուիետոէան զպանչելեացն տեսիլն, և Թագաւորն Վաղէս սատակեցաւ նշանօքն եղելովք, և բազում խաղաղութիւն եկեղեցեացն լինէր։

ԺԱ. Յաղագս դարձի իշխանացն յերկրէն Յունաց յերկիրն Հայոց անդրէն, որք ևս երթեալք ընդ հայրապետին Հայոց Ներսէսի առ Թագաւորն Վաղէս, և եկին դարձան անդրէն առ արքայն Արշակ Թագաւոր։ Եւ Թէ որպէս ըմբռստացեալ Արշակ արքայն Հայոց, ասպատակաւ մեղանչել տան Թագաւորին Յունաց։

ԺԲ. Յաղագս Խադայ եպիսկոպոսի բարբառանդացոյ, զոր էր Թողեալ յիւր տեղւոջն հայրապետին Հայոց Ներսէսի. Թէ սա որպիսի այր էր կամ որպիսի նշան և զքանչելիս առնէր, և կամ որպէս կայր ՚ի Ճշմարտութեանն, և ոչ առնոյր ակն Թագաւորին մեծի Արշակայ արքային Հայոց, և կամ որպէս դիմանայր ընդդէմ նորա վասն անօրէնութեն ինչ գործոց. և որչափ սիրէր զաղքատս իբրև զհայրապետն Հայոց զՆերսէս։

ԺԳ. Յաղագս Թէ որպէս դարձաւ ետ կաթուղիկոսն Հայոց Ներսէս յերկրէն Յունաց. և կամ որպէս յանդիմանէր զմեծ Թագաւորն Հայոց զԱրշակ. և Թէ որպէս յայ հասանէին հարուածք ՚ի վերայ աւանին Արշակաւանին, և սատակէր առ հասարակ յանկարծօրէն ամբաղմութիւն մարդկան՝ որք միանգամ ժողովեալք էին յայնմ տեղւոջ։

ԺԴ. Յաղագս Հայր մարդպետի, որ եկն էջ ՚ի գաւառն Տարօնոյ. և Թէ զինքրդ եկեալ էր ՚ի տեղին աղօթիցն յԱշտիշատ, և կամ զինքրդ դատապարտեալ գնաց անտի յիւր բերանոյն խօսիցն. և կամ զինքրդ մահու պարտ եղեալ՝ սատակեցաւ ՚ի Շաւասպայ արձրունոյ։

ԺԵ. Յաղագս Թագաւորին Արշակայ, Թէ զինքրդ կամ որպէս սպան զեղբօրորդին զԳնէլ ՚ի չարախօսութէն Տիրիթայ, կամ որպէս կշտամբեալ և յանդիմանեալ ևզև ՚ի յառնէն այ ՚ի Ներսէսէ. և կամ որպէս սպան զնոյն Տիրիթն. և կամ որպէս զկին սպանելոյն Գնելոյ

առնոյր իւր կին Արշակ Թագաւորն. և կամ որպէս
ի վերայ այնր կանանց միւս ևս այլ կին առնոյր Արշակ
Թագաւորն, զոր ած ի Յունաց աշխարհէն, որում ա-
նուն Ողեմբին կոչէր: Եւ կամ որպէս երիցն դրան
արքային, Մրջինդիկն, զմահուն դեղն տալով ընդ օ-
րինն՝ սպանանէր զՈղեմբին խորհրդով նենգութեն
փառանձեւոյ:

ԺԶ. Յաղագս Թէ որպէս կամ ղնարդ կոչեաց Շապուհ Թա-
գաւորն Պարսից զԱրշակ Թագաւորն Հայոց. և կամ
ղնարդ մծարեցաւ ի նմանէ: Եւ կամ Թէ ղնարդ
վասակ մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանէր
զորակալն ասպաստանին Թագաւորին Պարսից: Եւ
կամ ղնարդ Արշակ Թագաւորն Հայոց, աւետարա-
նաւն երդուաւ Թագաւորին Պարսից, ուխտէր նմա.
և կամ Թէ ղնարդ յետոյ ստեաց, և փախեաւ ի նմա-
նէն. և կամ Թէ ղնարդ յաղագս այնորիկ արս եւԹա-
նասուն զնչ պաշտօնեայսն կոտորէր Շապուհ:

ԺԷ. Յաղագս Թէ ղնարդ յուղարկեաց զհալածեալսն Շա-
պուհ Թագաւորն Պարսից ի վերայ քրիստոնէուԹեանն
հաւատոյ:

ԺԸ. Յաղագս մահուանն Վարդանայ ի Թագաւորէն Ար-
շակայ նենգութեբ իւրոյ եղբօրն Վասակայ:

ԺԹ. Յաղագս Թէ ղնարդ անմոռուԹեբ յանդգնուԹեբ գնայր
ի սպանուիլն նախարարացն անխոհեր Արշակ Հայոց
արքայ:

Ի. Յաղագս Թէ ղնարդ պատերազմն սաստկացեալ էր ի
մէջ Յունացն և Պարսից. և Թէ ղնարդ արքայն Հայոց
Արշակն զօրաւիղն լինէր Թագաւորին Պարսից, և հա-
նէր ընդ սուր զզօրսն Յունաց. և կամ ղնարդ դաւա-
ճանուբ սիւնոյն Անդովկայ լինէր փախստական Ար-
շակ ի Շապհոյ Թագաւորէն Պարսից:

ԻԱ. Յաղագս Թէ ղնարդ եղև պատերազմ ընդ Շապուհ
Թագաւորն Պարսից և ընդ Արշակ Թագաւորն Հայոց.
և կամ Թէ ղնարդ յաղԹեաց Արշակ արքայն Հայոց:

ԻԲ. Յաղագս որ յետ այսորիկ որ ընդ երիս տեղիս եղեալ
ճակատ յերկրին Հայոց ի միում ամենեանն, ի միում
աւուր, ի միում ժամանակի ընդ զօրավարսն Պար-
սից, երեցունց նշանն յաղԹուԹեն Հայոց կանգնէր:

ԻԳ. Յաղագս Մերուժանայ արծրունւոյ, որ ապստամբեաց
յարքայէն Հայոց Արշակայ, և անկաւ առ Թագաւորն
Պարսից, և ևս առաւել զրգռէր զպատերազմունսն. և
Թէ ղնարդ ուրացաւ յայ, և Թէ ղնարդ եղև խոչընդո-
տին և խոչընդոտն երկրին Հայոց մինչև յապայ:

ԻԴ. Յաղագս Մերուժանայ, Թէ ղնարդ ապստամբեաց. զըր-
գռէր զԹագաւորն Պարսից զՇապուհ, և առնէր ստէպ
ստէպ պատերազմունս: Եւ կամ ղնարդ լեալ էր ա-

առաջնորդ Թադաւորին Պարսից Շապհոյ. ածէր զՀինն ՚ի հայաստան աշխարհն, և դերէր զոսկերս Թադաւորացն Արշակունեաց. և կամ թէ զիարդ զօրավարն Վասակ Հայոց Թափեաց զղերուԹիւնն, և յաղԹեաց Թշնամեացն:

ԻԵ. Յաղագս Թէ զիարդ արշաւեաց Արշակ Հայոց արքայն յերկիրն Պարսից, և աւերէր զատրպատական երկիրն. և քանդէր հարկանէր աւերէր, առնոյր զբանակն Շապհոյ արքային ՚ի Թաւրէժն:

ԻԶ. Յաղագս Վնայ պարսկի, և չորեքհարիւր հազարին՝ որ եկեալն էին ՚ի պատերազմի, և նկուն լինէր ՚ի զօրացն Հայոց:

ԻԷ. Յաղագս մեղավարին Պարսից Անդիկանայ, որ քառասուն բիւրու հասանէր աւար առնուլ զերկիրն Հայաստանեաց. և Թէ զիարդ Վասակ սպարապետն ելանէր ընդ առաջ նոցա երկոտասան բիւրու հանդերձ Հայոց զօրօքն, և կոտորէր զզօրս Պարսից հանդերձ զօրապետն խաւն իւրեանց:

ԻԸ. Յաղագս Հազարուխտոյ, որ է մի ՚ի նախարարացն Պարսից. զոր առաքեաց Շապուհ արքայ ուԹսուն բիւրովն հարկանել զերկիրն Հայոց. եԹէ զիարդ եղ ընդ առաջ նոցա Վասակ մետասան հազարաւ, և հարկանէր սատակէր զնա և զզօրս նորա ՚ի սահմանս Աղձնեաց:

ԻԹ. Յաղագս Դմայունդ Վսեմականայ, որ ինն սուն բիւրուն տապրիկ զօրօքն՝ զոր առաքեաց ՚ի վերայ Արշակայ արքային Հայոց արքայն Պարսից, ապա ելանէր Վասակ սպարապետն Հայոց, հասանէր սատակէր զնա և զզօրս նորա:

Լ. Յաղագս Վահրիճի կահրիճայ, որ յարքայէն Պարսից չորեքհարեւրն բիւրու դայր հասանէր, տայր պատերազմ ընդ Թադաւորին Հայոց. և կամ զիարդ մատնեցաւ ՚ի ձեռս Վասակայ սպարապետին, և նա և զօրքն իւր անկանէին ՚ի ձեռս զօրացն Հայոց:

ԼԱ. Յաղագս Գումանդ Շապհոյ, որ մեծաւ պարծանօք պարծեցաւ առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ, և հարեւր հազար զօրօքն դայր հասանէր մինչև ՚ի Հայս, և նկուն եղեալք մերժէին յերկիրն Հայոց:

ԼԲ. Յաղագս Գնհկայ նահապետի, որ առաքեցաւ ՚ի Շապհոյ արքայէն Պարսից ՚ի վերայ Արշակայ արքային Հայոց զօրօք բազմօք. ապա հարկանէր սատակէր զնա, և զզօրս նորա զօրավարն Հայոց Վասակ:

ԼԳ. Յաղագս Սուրէնայ պահլաւի, որ եկն ՚ի վերայ Հայոց. ապա և սա ևս նկուն լինէր իբրև զառաջինան:

ԼԴ. Յաղագս Ապաման Վսեմականայ, որ եկն եհաս անթիւ և անհամար զօրօք հանդերձ յերկիրն Հայոց ՚ի պատերազմ. ապա և նմա ևս ձախողեցաւ որպէս և առաջնոցն:

ԼԵ. Յաղագս Զրկայ նուիրակապետի Պարսից, որ առաքեցաւ ՚ի Թագաւորէն Պարսից ՚ի Շապհոյ ՚ի վերայ Հայոց ՚ի պատերազմ, հանդերձ բազում զօրօք. և նա ևս խորտակեցաւ իբրև զառաջինան:

ԼԶ. Յաղագս Սուրենայ պարսկի, որ յետ Զրկայն և սա եկն ՚ի պատերազմ. և նա ՚ի բուռն անկեալ վասաց սպարապետին Հայոց, հանդերձ զօրօքն՝ որ ընդ իւրն էին՝ սատակեցան:

ԼԷ. Յաղագս Հրեշշողմայ, որ առաքեցաւ ՚ի Թագաւորէն Պարսից ՚ի վերայ Հայոց լինասուն բիւրու. և այն անդամ ևս լինէր յաղթութիւն, և նշան յաղթութեան Հայոց կանկնէր:

ԼԸ. Յաղագս Ալանոզայն, որ չորեքհարիւր բիւրուն զայր հասանէր ՚ի Թագաւորէն Պարսից՝ տալ պատերազմ ընդ Թագաւորին Հայոց. և թէ զնաւրդ և սա նկուն եղեալ պարտեցաւ ՚ի ձեռս վասակայ:

ԼԹ. Յաղագս Խոյականայ և քառասուն բիւրուն, զոր հարկանէր ընչէր սպարապետն Հայոց վասակ:

Խ. Յաղագս Վաչեան պարսկի, որ եկն ՚ի Հայս ութսուն բիւրուն, և կամէր ասպատակել աւար առնել զերկիրն. ապա և զնա վանեաց վասակ սպարապետն Հայոց, և զամ զօրս նորա ճարակ սրոյ տայր զամ:

ԽԱ. Յաղագս Մշկանայ և երեսուն և հինգ բիւրուն, որք արշաւեցին յերկիրն Հայոց. և կամ զնաւրդ կոտորեցան ՚ի վասակայ և ՚ի զօրացն:

ԽԲ. Յաղագս Մարուճանայ և վաթսուն բիւրուն, եթէ զնաւրդ եկեալք ՚ի վերայ Թագաւորին Արշակայ յերկրէն Պարսից, և եթէ զնաւրդ հարկանէր սատակէր զնոսա վասակ զօրավարն:

ԽԳ. Յաղագս զնդապետին, որ իննսուն բիւրուն եկն յերկիրն Հայոց. ապա հարկանէր սատակէր զնոսա վասակ հանդերձ զօրօքն:

ԽԴ. Յաղագս որդւոյն Արշակայ արքայի, որոյ անուն էր Պապ, եթէ զնաւրդ էր լեր դիւոք ՚ի ծննդենէն իւրմէ. կամ զնաւրդ յայտնեալ լինէին դևքն ՚ի նմա, և հանդերձ նոքօք գործէր պղծութիւն:

ԽԵ. Յաղագս Սակստան հանդերձապետին, որ առաքեցաւ ՚ի Շահպոյ արքայէն Պարսից, հանդերձ չորեքհարիւր բիւրուն. և փախոյց ևս զնա վասակ զօրավարն, հանդերձ զօրօքն Հայոց:

ԽԶ. Յաղագս Շապստան տակառապետին Պարսից, որ եկն հինգ հարիւր բիւրուն ՚ի վերայ աշխարհին Հայոց. ապա զնոսա հարկանէին սատակէին զօրքն Հայոց:

ԽԷ. Յաղագս մոգուցն հանդերձապետին, որ ութ և տասն բիւրուն եկն եհաս՝ տալ ճակատ ընդ Թագաւորին Հայոց. և սա կործանէր իբրև զառաջինան:

ԽԸ. Յաղագս Համբարակապետին Պարսից, որ Լենսուն բիւրուն եկն մարտնչէր ընդ զօրս Թագաւորութեն Հայոց. և սատակեցաւ ՚ի Սաղամաս ՚ի զօրացն Հայոց ՚ի գընդէն վ. ասակայ ։

ԽԹ. Յաղագս Մռկանայ, որ քառասուն բիւրու եկն ՚ի Պարսից՝ կռուել ընդ Թագաւորին Հայոց, և սատակեցաւ զօրօք իւրովք հանդերձ ՚ի գնդացն Հայոց, և ՚ի զօրավարէն վ. ասակայ ՚ի Մահազան ։

Ծ. Յաղագս քակտելոյ և քայքայելոյ Թագաւորութեն Հայոց, Թէ որպէս բազում նահաբարքն Հայոց ապստամբեցին յարքայէն Հայոց, և ձեռս ետուն ՚ի Շապուհ արքայն Պարսից. և կամ զնարդ հապ այսր անդր ցրուեցան, և մեծապէս Թագաւորութիւնն Հայոց նուաղէր ։

ԾԱ. Յաղագս Թէ զնարդ միաբան համօրէն աշխարհօրէն որք միաբան մնացեալք էին աշխարհին՝ ժողովէին առ իւրեանց հայրապետն Ներսէս. և Թէ որպէս զբողոք հարկանէին առաջի նորա, և ձեռնթափ լինէին և Թողուին ՚ի ձեռաց զնւրեանց Թագաւորն Արշակ ։

ԾԲ. Յաղագս Թագաւորին Պարսից, Թէ զնարդ ՚ի ժամանակն լուեցոյց զպատերազմ տալ ընդ Արշակայ Թագաւորին Հայոց, և նենգութեբ առ ինքն կոչէր ՚ի հաշտութին ։

ԾԳ. Յաղագս կրկին անգամ կոչելոյ Շապուհ արքայ Պարսից զԱրշակ արքայ Հայոց, և նորա երթալոյն առ նա, և միհանդոյն [1] կորնչելոյն ։

ԾԴ. Յաղագս Թէ որպէս դարձեալ զդիւթան և զքաւզեայն և զկախարդն հարցեալ Շապհոյ հմայիւք փորձէր զԱրշակայ, և տայր զնա յԱնուշ բերդն ՚ի պատիժս. այնպէս և զպարապետն Հայոց չարամահ առնել հրամայէր ։

ԾԵ. Յաղագս աշխարհին Հայոց գերութեն և հարուածոց, և գերութե ՚ի Պարս վարելոյն տիկնոջ փառանձեմայ. և քաղաքացն Հայոց աւերելոյ, և աշխարհին ՚ի հնմանց տապալելոյ ։

ԾԶ. Յաղագս վկայութեն Ջուխթայ երիցուն, յԱրտաշատ քաղաքէ, յերկրին Պարսից ։

ԾԷ. Յաղագս աղօթիցն ՚ի ժամ մահուն Ջուխթայ ։

ԾԸ. Յաղագս գալոյն Շապհոյ արքային Պարսից յերկիր Հայոց, և միանգամայն սատակելոյ զնիացորդ երկրին Հայոց ։

ԾԹ. Յաղագս Մեհրուժանայ և վ. ահանայ, Թէ իբր մնացին յաշխարհին Հայոց. և Թէ զնինչ շատ գործեցին ընդ աշխարհն, և կամ Թէ զնարդ սատակեցան վ. ահան և կինն յիւրեանց որդւոյն ։

1 Ցերեւ օրինակս միհանդոյն ։

ԹՈՒՉԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԶՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՔՈՒ ՄԱՏԵՆԻՑ ՏԱՆ ՈՐԴՒՈՑ ԹՈՐԳՈՄԱՑ ԱՀԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա·

Յաղագս թէ սրպէս յետ բազում շփոթի պատերազմացն Կերսեհ արքայն Պարսից թէ սրպէս Թագաւորեցոյց զԱրշակ զորդի Տիրանայ, և արձակեաց յաշխարհն Հայոց հանդերձ Տիրանաւ հարբ իւրով և եամ գերուվքն հանդերձ։

Այնմիջոցի եղև հաձոյ Թէ և բազում խաղաղուն ի մէջ Թագաւորին Յունաց և Կերսեհի արքային Պարսից, հաւանեցան մեծաւ սիրով առնել զկամս միմեանց. և դարձուցանէր կայսրն Յունաց զգերուվն արքային Պարսից։ Այս և Թագաւորն Պարսից Կերսեհ Թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ և հարբ նորին և հանդերձ կանամբք իւրեանց և եամ գերուվքն հանդերձ և գանձիւք իւրեանց և ստացուածովք արձակեաց մեծաւ փառաւք։ Խաղաց գնաց Արշակ արքայ Հայոց մեծաց. Թագաւորեաց յերկրին աստրեստանեայց հանդերձ հարբն իւրով և եամ ընտանեաւքն իւրովք. եկն եհաս յերկիրն Հայոց, և ժողովեաց զզորուեալս երկրին, և Թագաւորեաց ի վերայ նոցա։

Նա եղև խաղաղութեի մեծ ի ժամանակին յայնմիկ ։ Ո՛ղջո՛վեցան ամ թագուցեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց. և էին անկասկածք քնա կեալ ի խաղաղութե մեծի ընդ հովանեաւ արքային Ա՛րշակայ ։ Ապա կարգեցան կազմեցան յօրինեցան խաղաղացան աշխարհն Հայոց ի մէջ երկուց թագաւորացն . և յայնմ հետէ քնակեալք խաղաղութե վայելեալք յիւրաքանչիւր յարարս իւրեանց ։

ԳԼՈՒԽ Բ.

Յալոգս շինութե կարգաց յօրինելոց աշխարհին , նուաճութե յիւրաքանչիւր տեղիս վարուց կարգաց , նորոգելոյ աշխարհին թագաւորութեան Հայոց ։

Յաձն ամանակի խնդիր ելանէր արքայն Ա՛րշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն մամիկոնենից . մանաւանդ զի իւր դայեակա և մնուցիչք էին ։ Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին , և դարձուցանէր զնոսա յընդանութե՛ն . զի պատակտեալք և քակտեալք էին յընդանութենէն և յամ գործոց Հայոց ի ժամանակս խուլութե՛ն Տիրանայ ։ Նա կացոյց արքայն զվ արդան զերեց եղբայրն ի նահապետութե՛ն ազգին իւրեանց , և զվ ասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութե՛ն զօրավարութե՛ն յիւրս պատերազմացն . սոյնպէս և զկրտսերն ի պետս զօրացն կացուցանէր ։ Սոյնպէս և զամ ազգան զօրացն մեծամեծացն նահապետացն , որպէս առաջին թագաւորքն նուաճեալք յիւրաքանչիւր չափու ։ Նա հնազանդէր զմեծամեծան , զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամ կողմանց , սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր ։

Նա նորոգեցաւ զուարթացաւ տէրութե՛ն թագաւորութե՛ն հայաստան երկրին որպէս և զառաջինսն .

մեծամեծքն յիւրաքանչիւր գահս, և գործակալքն յիւրաքանչիւր չափս։ Այս սկիզբն գործակալութեանն հաղարապետութեանն աշխարհատեաց խնամակալութեանն, աշխարհաշէնն աշխարհատած դեհկանութե, չինակա- նաշէնն ազգն Վնտունեաց՝ հազարապետաց ամ երկրին։ Այոյսպէս ստրատելատութեանն սպարապետութեանն զօ- բավարութեանն մարտի կռուելոյ, գործոյ ըռազմիկ ձա- կատամուղ նիզակին, իրափառն[1] աղանազգիք աղա- նադրօշք արծուէնշանք վարժնականիշք աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանուանք, բարեհնշանս բա- րեհամբաւք բարեգործք յաջողակք ի գործ պատե- րազմաց ի բուն ի նախնեացն կարգաց ի մամիկո- նեան ազգին, ի վերայ իշխանութեանն բովանդակ ի վերայ ամ զօրաց զօրավարութեանն բազմութեան Հայոց մեծաց, հանապազ յամ ժամ յաղթող ազգին պար- գևեալ յերկնից բարիանուն իրաքանչ ի մեծի նահա- պետութեան պատերազմի։ Այս այլ յայսմ ազգաց և ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առա- ջի ազգային պատիւ ի գլուխս բազմին. Թող զնահա- պետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, լինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. Թող զտանկայս գործակալութեանն սպասու։

ԳԼՈՒԽ Գ.

Ցաղագս սրբոյն Ներսեհի, Թէ ո՛րպէս կամ ուստի էր, կամ որպէսի կամ զինչ գործեցաւ եպիսկոպոս լինել Հայոց աշխարհին։

Այս ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմից տոհ- մաց, գնդից և դրօշուց տեարք. ամ սատրապք նա- խարարք և աղատք, պետք և իշխանք, զօրավարք և

1 Ցերկս օրինակս իրաւափառ։

սահմանապահք, ՚ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեսցեն տեսցեն և խորհեսցին վասն իւրեանց առաջնորդի, թէ ումմ արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեն և հովուել բանաւոր խաշանց Քրիստի: Այսպա յաղթեաց կալաւ այս բան խորհրդի ամենեցուն առ հասարակ որ անդ էին, զի ՚ի միաց ցորդաց տանն Գրիգորի, յայնմ ազաւակէ գացեն զառաջնորդութիւն: Օ՜ի ամենեքեան ասէին ցաղքային. վասն զի նորոգեաց Աստ զթագաւորութիւն ձեր, սոյնպէս պարտ է ՚ի յայնմ ազաւակէ նորոգել զհոգևոր նահապետութիւն: Օ՜ի ընդ նորոգել այնր աթոռոյ, ասեն, նորոգեսցին պայծառ վարք աշխարհիս Հայոց:

Այսպա յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զորքն բազմութեան զայն, որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագինէ, զթոռն քահանայապետին Յուսկան, որդւոյ Աղթանայ, որդւոյն Գրիգորի մեծին առաջնոյ քահանայապետին. և մեր սորա Խամբիչն անուն, քոյր արքային Տիրանայ: Այա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս մանկութէ. ՚ի տղայուէ մնեալ և ուսեալ ՚ի կեսարացոց քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետաց. և ցանկալի եղեալ իւրոյն համարումեամն զուգակցացն: Այլ ՚ի ժամանակին յայնմիկ էր ՚ի վարս զինուորութէ ՚ի գործակալուէ, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ՚ի վերայ ամ կարգաց կենաց թագաւորութէն ՚ի ներքոյ և արտաքոյ:

Այր էր սա մեծ և բարձր ցանկալի հասակաւ, և վայելուչ գեղով. զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղկութէն ՚ի վերայ երեսաց երկրի, տենչալի ցանկալի և զարմանալի և ահագին ամ նայեցող տեսողաց, և նախանձելի յարութեամն ՚ի զինուորական կրթութէն: Արկիւզած ՚ի ձենէ այ, յոյժ աւանդապահ պատուիրանաց Տոհա. մարգասէր ըստ գաստ, սաստիկ իմաստուն և առանց ակնառութեան. իրաւանց իրաւարար, ցածուն քաղցր խոնարհ աղքատասէր, ՚ի սրբութէս ամուսնութէնցն օրինաւոր, և կատարեալ սիրովն այ: Այս առ իւր ընկերս ըստ պատուիրանին սիրել զամ ընկեր իբրև զանձն. զի ՚ի զի

նուորուԹենն այսպէս կատարեալ էր վարուք լաւուՔ, որ մինչդեռ մանուկ իսկ էր՝ գնայր նա ամ պատուիր բանօքն ՏԻՆ և արդարուԹիՔ, անարատուԹիՔ և ամ պաշտամամբք առ ընկերս իւր: ԻնձանձրոյԹ էր, և ունէր զնախանձն այ, և եռայր սուրբ հոգւովն. այս պէս իսկ էր ամիւս կատարեալ յամի: Եւ զաղքատս և զտառապեալս այսպէս սիրէր և ակն ածէր ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս և զկերակուր հա սարակէր ընդ նոսա: Եւ նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և ջատագով ամ զրկելոց լինէր նա:

Այ ինչ դեռ ևս զղնուորական ձեւն յինքեան բե րէր, և զարդարեալ էր գեղեցիկ պատմուճանաւ և զարդ վայելուչ, և ցանկալի գեղով իւրով երկայն հասակաւ, և չքնաղատես հերօք վարսից իւրոց, կայր ի սպասու Թագաւորին մծտ ի մնալս արքային, զար քունական սուսերն զպողպատիկն զոսկեպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ունէր, առ հասարակ ատեանն զբողոք բարձեալ աղաղակէին՝ եԹէ Ով ելեսս լեցի մեր հովիւ: Ո՞ր իբրև լուեալ, զբողոք բառնալով՝ զանձն անարժան համարեալ, չկամէր չառնոյր յանձն: Իսկ յորժամ տեսանոյր զամենեսեան ի նոյն յառաջին բանին վերայ սկսեալ, զի զնոյն աղաղակէին առաջի Թագաւորին. ասէին, Ով որ լեցի մեր հովիւ, բայց ի դմանէ. և ոչ որ նստի այլ յայնմ աԹոռ, բայց դա: Իսկ նա իբրև զանձնն չկամէր արժանի իրին առ յոյժ խոնարհուԹեան իւրում, ապա ի մէջ եկաց, սկսաւ ստել սակաւ մի, խօսել զանձնէ իւրմէ զանօրէնուԹիս և զամբաստանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ:

Ո՞ր իբրև լուան բազմուԹիքն, դիտացեալ զտեսչն նորա վասն անձինն, ամենեքեան առ հասարակ հան դերձ Թագաւորաւն Թալացեալ կէին ի ծաղուէ: Իսկ զօրքն աղաղակէին առ հասարակ. Ի մեզ և ի գլուխ մեր դարձցին այն մեղք՝ զոր գործեցեր. ի վերայ անձանց մերոց և ի վերայ որդւոց մերոց լեցին գործքն, բայց դու զգործս Հօրն քո Աբրիգորի, զնոյն առաջնոր դուԹիւն նորոգեա մեզ: Իսկ նա իբրև այլ ինչ ոչ եւ դիտ տալ նոցա բանիւն պատասխանի, զի Թէնամանս

լիներ զօրացն , և ասեր . Ինօրհնք էք և պիղծք , ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ , և ոչ զձեր մեղսդ ընդ անձամբ առնուլ . ապա ոչ կարեմ աչառել , և ոչ ձերում չարութեդ համբերել : Այս այսօր տարապարտուց սիրեք դուք զիս տարապարտ , և վաղիւ ատելի և թշնամի և թակն զգլխոյ ձերմէ կոշկոճիչ կապէք զիս . այլ թո՛յլ տուք ինձ , անհոգուբէ ըստ իմում չափուս անարժանութեբ զկեանս իմ տառապանօք , և մեղօք հանդերձեալ դատաստանին յաւիտենից ակն ունել լով , անցուցանել թերևս կարացից : Ապա զբողոք բառնային բազմութեբ զօրացն , և ասէին՝ եթէ այդ մեղաւորդ լեցիս մեզ հովիւ . զի այնչափ պնդեալ մարդկանն , չայ տեսչութենէն լիներ այնպէս : Ա՛ սրտին գազանութեն և յոյժ ցասմանն թագաւորն Ա՛շակ ինքն ձգտեալ զսուսերն արբունական կամբաւն , զոր նմա Ներսէսն բարձեալ ուներ ի սպասու թագաւորին ըստ օրինաց սենեկապետութեն , ի բաց հաներ ի նմանէ : Այս հրամայեր զնա կապել գլուրով առաջև . զհերսն գանգրագեղս զվայելուչ թագադանդուր վարսիցն , զի ուրեք երբեք նման նմա ոչ գտաներ , զայն ի բաց խզեալ հրամայեր . և ընդ նմին զվայելուչ պատմուճանն , զայն ի բաց պատառեալ հրամայեր : Հրաման տայր , և բերին զհանդերձս կղերիկոսաց զգեցուցանէին նմա . ետ հրաման , և կոչեցին զծերունի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս , և տայր զնա ձեռնադրել ի սարկաւագութե : Այլ յորժամ զհերսն դեռ վերայն ի նմա նէ , առ յոյժ գեղեցկուէն բազումք յարտասուս հան ան՝ որք լսանն կամ տեսին , ի գեղն աւերակեալ ըզկերպարանսն փոխելոյն : Այլ յորժամ տեսին զնա քեռան գեղոյն զարդարեալ՝ բազմաց լիներ ուրախութիւն , յորժամ չնորհք բարերարբ կոչեցին զնա լինել հոգեբարձու տանն Ա՛ղի :

Յայնժամ եդ ՚ի միտս ամենեցուն խնդրել իւրեանց հովիւ զայն , որ նոցա կարող լինել զառաջնորդութիւնն կենացն ճանապարհին ցուցանել : Այս մինչ դեռ իսկ զձևս զնուորուե չինքեան բերեր յերևելիսս , ներքին մարդոյն զՔ՚ն եր զգեցեալ յանձն իւր , և աղնուական վարս եր չինքեան կերպարա-

նեալ : Այլ յոլսոյին՝ զոր ունէր՝ խաչեալ էր ընդ Քրիստի, և թաղակից եղեալ էր ընդ նմին . և սիրով հաւատոյ մեռեալ էր մեղացն , և յարուցեալ յոլսոյն արդարութիւնք սպասէր : Ոչ ասեն այսորիկ յիրաւի արժանի եղև սա աթոռոյն Հայրապետական և տեղւոյ հարցն իւրոց առաջնոց , զաթոռն Լուսաւորչի Գրաքելոյ , և ժառանգութիւն հօրն մարմնապէս ՚ի նոյն հոգևորին Գրիգորէ . այլ իբրև ՚ի տնէ եղև կոչումն նմա գալ յիրս այսպիսի , և էարկ ՚ի միտս ամենեցուն խնդրել զսա արժանի գտեալ իրին : Ապա նա յոյժ առ երկիւղածութիւնն և բազում խոնարհութեանն զանձն իւր անարժան համարեալ իրացն , մեծ կարգաց աստիճանին այ , յոր ձգեալ էին զնա : Այլ բնաւթարութի և միաբանութիւն և հրամանն այ , մանաւանդ առ նախնեօքն , վասն նորա իսկ ասացեալ էր ՚ի տէրէնին այ առ Յուսիկն՝ եթէ այր լինելոց է ՚ի սորա զաւակէ , լեցի լոյս աշխարհի :

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս թէ որպէս առին գնացին և տարան զնիբսէս ՚ի Կեսարիա . և եթէ զինչ շատ պատահեալք եղեն յայ , և կամ թէ որպէս հոլովեաց իւրոց հօտին առաքելորէն :

Ապա գումարեցին զիշխանսն մեծամեծս , զի առցեն զցանկալին Աբերսէս , և գնասցեն ուր սովոր էին զհայրապետսն օծանել : Այս և բազմութիւն եպիսկոպոսացն Հայոց ժողովեցան առ Թագաւորն վասն նորին խնդրոյն . խոնարհել ամենեցուն միով միաբանութիւք զնա ընտրել հաճոյ Թուեցաւ ամենեցուն , զի նստցի նա յաթոռ գլխաւորութեն : Ամենեցուն միաբանութիւք եպիսկոպոսացն և Թագաւորին և աշխարհախորհ ձուլիւք հաւանութիւք ՚ի միասին արձակեցան և գնացին : Ոչ հայր մեծ իշխանն մարզպետութեն , և վ Թագաւոր մեծ իշխանն ասպարապետութեն , և

զԱնիել մեծ իշխանն Նովտից, և զԵհանդակ ոըշտունի, և զՆդովկ իշխանն Սիւնեաց, և զԲշաւիր իշխանն Հ իրակայ և Բըշարունեաց, և զՆոյն իշխանն Միւսոյ Նովտից, և զՊարգև իշխանն տանն Ամատունեաց. զնոսա զամենեսեան կազմեցեալ և արձակեցեալ բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք կաթողիկոսաց առ կաթողիկոսն Նւսեբիոս յերկիրն Գամրոց, և ի մայրն քաղաքացն [1] Նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց մեծաց:

Նա եկին ածին նորա ցնծութիւք ուրախութիւք, և տեսին անդ զկաթողիկոն կաթողիկոսացն զսուրբն զմեծանունն զերանելին զՀոյակապն զաքանչելին Նւսեբիոս: Նա տային զհրովարտակն արքային Բշակայ նմա. և ունէին առաջի նորա զպատարագս բերելոյ: Նա նորա սիրով ընկալեալ զնոսա և բազում մեծարանօք, և ըստ կանոնաց օրինակի ժողովէր առ ինքն մեծ եպիսկոպոսապետն Նւսեբիոս զեպիսկոպոսացն սրբոցն ըստ առաքելական օրինացն, զի ձեռնադրեսցեն զսուրբն Ներսէս լինել եպիսկոպոսապետ Հայոց մեծաց: Նա եղեն մեծ աքանչելիք. զի մինչ դեռ այն լինչ մնեալ էին յեկեղեցին, էջ աղաւնի սպիտակ ի վերայ սեղանոյն յանդիման քահանայութեն և յանդիման ամ ժողովրդեանն: Նա իբրև եմուտ Նւսեբիոս արքեպիսկոպոսապետն և երիցունքն ընդ նմա, և երիցապետ մի սուրբ՝ որում անուն Նարսեհիոս կոչէր, թռեաւ աղաւնին ի սեղանոյն և հանդեաւ ի վերայ նորա, և յամեաց բազում ժամս: Նսկ իբրև եհաս ժամ՝ յորժամ կամեցան զՆերսէս ձեռնադրել, վերացաւ աղաւնին ի սրբոյն Նարսեհէ, և նստաւ ի վերայ գլխոյն Ներսէսի:

Նբրև այս աքանչելիք և նշանք յայլ լինէին ի վերայ առնս այսորիկ, կային հասարակ ամ ժողովուրդն զարմացեալք, և մեծ արքեպիսկոպոսն Նւսեբի: Նւ հասարակ աղաղակէին ի վերայ նորա, թէ Հաճոյ եղեր դու այ, և հոգի այ հանդեաւ ի վերայ քո. զի

1 Ցամ օրինակս ի Մայրաքաղաքին:

նմանութեի եղև ամենասուրբ Հոգին, որ ի վերայ տեառնն երևեցաւ։ Այս ձեռնադրեցին զնա, և հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն, և պատուէին զնա. և բազումք ասէին նմա էնկոմիա, որ ասի՝ թէ Հոգի սուրբ հանկեաւ ի սա։ Այլ նա և այս քան զևս զանձն իւր անարժան համարեր իրացն եղելոց։ Այլ մեծամեծ աքանչելաշուք յուզարկեցին զնա. նոյնպէս և զմեծամեծ նախարարսն սատրապն Հայոց։

Այլ եկին հասին նոքա մեծապարծ երևելի հոգևոր աղգեաց փառաց ի հայաստան երկիրն. և արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչև ի լեառն, որ անուանեալ կոչի Արեւծ։ Այլ անդ պատահեալ միմեանց մեծաւ ըղձմտութե, լցեալք օրհնութե ողջունիւն, անդուստ յաշխարհն դարձան։ Այլ նստաւ աթոռն Ներսէս յաթոռ հայրապետութե. ի հովուէն նորա բազում խաղաղութե լիներ աշխարհին։ Օ ի ի վարս կարգաց գնացից իւրոց՝ նմանեաց իւրոյ Հօրն մեծին Գրիգորի, արդարև հայրաբարոյ գտաներ ա մենաբարի. զնոյն հարցն նորոգեաց զառաքելաշնորհս, նոյն գործ երևեալ անշնաս պահելոյ յաներևոյթ թշնամեացն և յայտնեացն։

Այս և առաւել ևս առաջին ծառայն նմանեալ. որ զնոյնազգեաց գնոյնահաս պտուղս վարդապետութե բերեալ սկսեալ վերակացութենէն հովուութենէն՝ անկարօտ մատակարարեր զօգտակարսն, զհոգևոր ածոմն ջամբելով։ Օ ի ընդհէն այնպէս հանդեան ի նմա, զի մեծամեծ նշանս և բժշկութիս առներ հիւանդաց, ուր դէպ լիներ. զմոլորութիս դարձուցաներ։ Այներ և զայսպիսի պատմէլիս. զոր կարի յամառեալ տեսաներ, ահ արկանելով հաւանեցուցաներ. իսկ հլուացն, որոց ականջք սրտիցն բացեալ էին, գնոսա բանիւք քարոզուէն ածեր ի հաւանուի։

Շիներ և զաւերեալ եկեղեցիս, և կանգներ զսեղանս կործանեալս. և հաստատեր ի կատարումն ապաշխարութե զթերահաւատս, զի հաւատացեալք յայծ՝ ապրել կարասցեն։ Այխիթարեր զհաւատացեալս յաւիտենական յուսով բարութե մնանջնեանս. որ պարգևացն. զթադէական աթոռն միւսանգամ եղից, և իւրոց հարցն նմանեալ որդի եղև։ Այս չա-

բախօսացն ընդդիմացեալ ըմբերամբեր , խափաներ և զանօրէնութիւնս և զնօսս և զգործս զայսպիսեացն միանգամայն : Այս վասն ճշմարտութեն մինչև՛ի մահ մարտընչեր , և զաջողակ արդարութեն քաջալերեալ ինդացուցաներ . և իւրով վարդապետութեն անձրևաւն պարարեր մտուցանել զշայեկան արդարուհին օրհնութիւնսընդալոյս : Այս ընդ այմ տեղիս սահմանացն Հայոց մեծաց , ընդ որ էր յառաջագոյն նորուն հարցն սերմանեալ զքարողուի բանին կենաց , զնոյն և սա ոռոգեաց անձրևուին : Ո՛չ քոյն աձեցոյց մշակն հնձող , եղեալ գործակից սերմանողաց . և բազմացոյց զյորդաբուխ արդիւնսն ՛ի շտեմարանս աղբայութեանն , կարգացն առաջինն հարցն մշակացն փոխանորդ եղեալ՝ գործակից լինելով :

Այս և բազում զօրութիւնս անպատում յանձին իւրում բարձեալ բերեր . նա և կարի իսկ զողորմածութե կարգացն փոյթ արարեալ ցուցանելոյ , նախ ինքն առնելով առ իւր անձն բարի , և ապա այլոց օրինակ բարեաց դնելով , առ հասարակ վարդապետական բանիւն զամենեցուն զփակեալ դրունս մտացն ՛ի բարին յորդորելով բանայր : Ո՛ամենաբարի ուսուցաներ զսէր զոյս զՀաւատս զսրբութիւն զքաղցրութե զհեզութե զանսխակալութե զնամ ունելով դարմանոյ աղքատացն տանելոյ , և յոյս հատուցման ՛ի խոստացեալ աւետիսն Քրիստ : և ՛ի դատաստանացն ամենին անչէջ հրոյն՝ յիշատակօք յաւիտենականն չարչարանօք սպառնալով , անաչառական գալստեամբն Որդւոյն Այ Յիսի Քրիստ : Այս այնու երկեցուցեալ , մինչև ամենեցուն՝ որք ՛ի սահմանս Հայոց էին քնակեալ՝ ամենեքեան հաւատացեալք ընդ աղքատս իւրեանց զիւրեանց ինչս մատակարարեալ հաւանութե հաւատարմութե , և ինքեանք լըմնութե զուարթութե գործէին :

Այս ինքն երթեալ հասանէր ՛ի կողմանս Տարօն գաւառին . և ժողովէր առ ինքն զնոյն եպիսկոպոսունս Հայոց աշխարհին : Ժողովեցան ՛ի գեղն Աշտիշատ , ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ . զի նա էր մայր եկեղեցեացն , և ՛ի տեղւ լեալ նախնեացն ժողովոց սիւնհոդոսին : ՛Ի ժողով հաւանութե եւ

կեալ ամենեցուն, և խորհուրդ բարեաց ՚ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն և ժողովին հաւատոյն հաւասարուբե։ Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յօրինեցին, և արարին զամ ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութե վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութե օրինացն։ Հայց միայն զառաքելակարգ կանոնն ՚ի վերայ ամենեցուն կացուցանէր սբ եպիսկոպոսապետն Ներսէս. ամենեցուն խրատտու և առաջնորդ յորդորիչ և նախանձաւոր լինէր գործոց բարեաց։ Ալս ինքն առնէր, և ամենեցուն զնոյն ուսուցանէր. առ հասարակ զնոյն օրինակ առնել հրամայէր յամ աշխարհս և ՚ի գաւառս և ՚ի կողմանս կողմանս, ՚ի կոյս կոյս, ՚ի խորշս խորշս սահմանացն Հայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղին զատուցանել, շինել աղքատանոցս, և ՚ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնավարս և զամ ցաւոտս. և նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ուռճիկս, և պատանս աղքատաց։ Օ ի այսպէս ետ հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս, և սոյն կամ եղև ամ սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լինէին յիւրաքանչիւր կայեանս, և մի ելանել ՚ի մուրոյն տաւապանս, և մի քնաւ ելանել բաց իւրաքանչիւր գործս, այլ զի ամ ոք պարտական է նոցա։ Հարկ իսկ է զի մի կարգ աշխարհի, ասէ, եղծցի. այլ արժան է զի ամենեքեան առ հասարակ ողորմածութե և երկիւղիւ տարեալ նոցա զգարմանան, և զպիտոյս նոցա վճարեսցեն։

Ե ինեաց սոյնպէս, կարգեաց կազմեաց և հաստատեաց, բազում և այլ ողորմութիս ուսուցանէր աշխարհի. բազում կարգս կանոնաց հայրենիս կարգեր։ Այս առ յոյն յարութե ցուցանէր ունել ակնկալութի. և զի մի զմահ մարդկանն առանց դադրի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութե ՚ի վերայ գնացելոյն օձիրս գործիցեն լքեացն կոծոյն, զանառակութիւնս աշխարհին գնելոյ. այլ յուսով ՚ան գալստեանն ակն ունել և յարութե նոր ղոզութե, և իբրաքանչիւր գործոյն զյաւիտենական վճռատուցումն առնուլ իբրաքանչիւր յոյս ունելով ա-

ւոյր գալստեանն Տեն սպասել։ Այս զի լինիցին յա-
մենասուրբ օրինաւորք . մի ատել և մի դաս բերել
իւրեանց ամենասուրբիւնըդալ կողմանց . և փախչել
աւելի ի մերձաւոր և յայգին տոհմակից խառնա-
կութիւն ամենասուրբենէն . և մանաւանդ ի մերձա-
ւորական ի նուագ , և որ գամ մի այսմ նման լեալ
էր լինչ։ Այս կանոն , հրաժարել ամենևին ի մեռեալ-
ոյ և յարենէ ուսելոյ , և ի դաշտանիկին մերձե-
նալոյ . զայդ Տամ պիղծ համարիլը առաջի Տեն ։

Այս զինգութիւն և զքսութիւն և զագահութիւն
և զլարակնութիւն , զցանկութիւն և զզրկութիւն , զա-
րուագիտութիւն և զկռգութիւն և զամբաստութիւն , և
զանառակ արբեցութիւն և զորկորստութիւն և զյա-
փրշտակութիւն և զպոռնկութիւն , և զվրէժս ի թըշ-
նամեաց , և զատութիւն և զթշնամութիւն և զանողոր-
մածութիւն և զսուտերդմնութիւն , և զարիւնհեղութիւն
սպանութիւն և զանամոգիտութիւն պղծութիւն , որ
ոչ ակն ունիկին յարութիւն , և որ անյուսութիւնն լան
զմեռեալս , ընդ մի օրինակ զամենեսեան ի միում
խորխորատ կորստեանն համարիլը ։ Այս Տամ աշխար-
հին պատուիրեր , և գլխովին թագաւորին , առ հա-
սարակ ամենայն մեծամեծացն , և ամենեցուն՝ որ ոք
ի վերայ ընկերին ունկնդիր իշխանութիւն , գութ ու-
նելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրսերս և ընդ
աշակերտս , և սիրել իրրև զընտանիս , և մի անար-
ժանս և աւելի տարապայմանս Տարկօք նեղել քան
զչափն . յուշ առնելով , զի և նոցա Տր դոյ յերկինս ։
Այոյնպէս և ծառայից պատուիրեր՝ կալ յարդարն
հնազանդութիւն իւրեանց տերանց , զի ի տեառնէ լի-
նելի նոցա վարձք ։

Այս եղև խաղաղութիւն և նորոգութիւն յաւուրս նո-
րա Տամ եկեղեցեաց . և յաճախեր շուք պատուի Տամ
եպիսկոպոսացն ընդ Տամ տեղիս Հայոց մեծաց ։ Այս
լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ
ծաղկեաց ամենամեծ լուսք . կարգեցան կարգք կա-
թողիկէ եկեղեցեաց Տամ վայելչութիւն , և բազմացան
կարգք սրբութիւն պաշտամանցն , և պաշտօնեիցն յա-
ճախուն ։ Այս բազմացոյց զկարգս եկեղեցեաց ի շէնս
և յանշէնս . սոյն օրինակ բազմութիւնք կրօնաւորաց ։

Արդեր և ՚ի տեղիս տեղիս զպրոցս յոմնարկէն և աստրերկէն յամ գաւառս Հայոց. և քաղում նեղեցոյց և տառապելոց գերեաց փրկութե՛ն և գերեդարձ առնէր, զորս ահիւ քարոզուե՛ փառացն Աստի զկնի, և զայլս գնովք փրկանօք ազատէր, և յիւրաքանչիւր տեղիս դարձուցանէր։ Աչերաց և ոտից և չքաւորաց հանդիստ և դարման առնէր, և աղքատք զօրհնասպաղ ընդ նմա ուրախ լինէին. և տաճար իւր և սեղան զօրհանապազ աղքատաց և օտարաց էր և հիւրոց։ Այս այսպէս առ յոյժ աղքատասիրութեանն, զի թէպէտ և շինեաց զամ աղքատանոցս ընդ ամ գաւառս, և կարգեաց նոցա անուէն դարմանս, այսպէս զի ըստ իւրեանց անկողինս մահճացն մի՛ ուրեք աշխատ լեզին ելանել, սակայն և զիւր տաճարն առանց նոցա ոչ առնէր. այլ կաղք և կոյրք և մարմնահալք, խուլք և հաշմեալք և ցանկահեալք և կարօտեալք ընդ նմա և ՚ի նորա ակրմբէն դարմանէին բազմեալք։ Այս ինքն իւրովք ձեռօքն լուանայր զամենեսեան. օճանէր պատէր, և ինքնին իսկ ջամբէր նոցա զիւրաքանչիւրս կերակուրս, և զամ ինչ ՚ի պէտս նոցա ծախէր. և ամ օտարք ընդ նմա, հուլանեաւ նորա հանգուցեալք, դադարէին։

Այս ամենեցուն զոր ինքն առնէր՝ զայն ուսուցանէր. և ինքն նոքա և զգաստ և արթուն, և զամ մարդ պատրաստական առ բանն ամ առնէր։ Այս ինքն ամենեցուն ըստ մարգարէիցն և կամ ըստ Աւետարանին նմանեցուցանէր զողորմածութիւն ուսուցանէր. և եթէ զմեղս ձեր ողորմութի՛ պարտ է քաւել ձեզ, և զանօրէնութիւն ձեր գթութի՛ և տրօք աղքատաց։ Այս այսպէս տարաւ եցոյց՝ զառաքեալն յուշ առնելով, որ պաշտօն աղքատաց, զմեծն և զնախամեկին գյաւետեարն կատարն Ստեփաննոս և զընդերս նորա՝ զորս ընտրեցին, որ զերկինս եբաց, և Աստուածն ընդ աջմէ Հօր ամ այս գործով արժանի եղև տեսանել։

Այսպէս և Աստուածեմիկն իւր ողորմածութի՛ն և խանդակաթ այրեացն ողջոյն, ՚ի ձեռն մեծին Պետրոսի, և զհրաժարեալն զգնացեալն զմեռեալն միւսանգամ այսրէն դարձուցանէր ՚ի կենդանութիւն։ Այսպէս և մեծն Պօղոս, ասէր, պատմէ՝ թէ երբև

տեսին զնաւորհան , որ տուեալ էին ինձ , Յակոբոս և Կեփաս և Յովհաննէս՝ որ քուն սիւնքն էին , իբրև տեսին՝ թէ հաւատարիմ եմ ես յաւետարանն ան-թլփատութեան , որպէս նոքա՛ի թլփատութեանն , ևս քաջ համարձակեցայն . ձեռն ետուն հաւանութեան ինձ և Բառնաբայ . զի մեք՛ի հեթանոսս , և նոքա՛ի թլփատութիւնն : Բայց միայն պատուիրեցին ինձ , ասէ , զի աղքատաց խնամ կալցուք . զոր ես ինքնին խոկ , ասէ , փութայի ջանալ կատարել :

Ոյնպէս ևս առաւելագոյն զտէրունականն զնէր առաջի , որ մեծատունն էր՝ որ զնամ պատուիրանն կատարեալ էր , ապա լուաւ՛ի նմանէ՝ եթէ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց , և գտցես քեզ գանձս յերկինս . և որ զինի սորին՝ եթէ դիւրին է մալխոյ մնանել ընդ ծակ ասխան , քան մեծատան ագահի յարքայութեն ՚այ : Այս դարձեալ՝ եթէ արարէք ձեզ բարեկամս՛ի մամմնայէ անտի անիրաւութեն , որ ընկալցին զձեզ՛ի յարկս իւրեանց յաւիտենից : Ալամ որպէս նոյն խոկ Պօղոս բարեաց գործոց նախանձաւոր լինէր , ստիպէ առնեցուն ասելովն՝ եթէ զհետ երթայք սիրոյ , և նախանձաւոր լերուք հոգևորացն : Որոյ գյօժարութեն աքայեցւոցն վասն պաշտման սրբոցն՛ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալս յորդորեաց . այլ և համարձակութեն խոկ տայ անխափան՛ի բարեացն առաքինութիւս , թէ լաւ է յամ ժամ նախանձել՛ի բարիս : Դարձեալ փութայ ամենեքումբք հանդերձ ըստ Պետի հետոցն վարել : Հայեցարուք , ասէ , ՚ի զօրագլուխն հաւատոց և՛ի կատարիչն Յս . զարձեալ՝ թէ յիշեցէք զառաջնորդս ձեր և զվերակացուս ձեր՛ի նոր , որք խօսեցան ձեզ զբանն կենաց . հայեցարուք յելս գնացից նոցա , և նմանողք լերուք հաւատոց նոցա : Այս միանգամայն՝ թէ զայս խորհեցայ իւրաքանչիւր ոք՛ի ձէնջ , որ՛ի Պետ Յս . և զարձեալ՝ թէ սկսաւ Յս առնել և ուսուցանել : Խոկ ցանկալի եղբայր նոն Յակոբոս զհամօրէն խոկ զգունդս սրբոցն հանդերձ սրբասէր տերամբն յօրինակ առեալ՛ի Թղթին իւրում , ասելովն՝ եթէ օրինակ առէք , եղբարք , զչարչարանաց երկայնմտութեն զմարգարէսն՝ որք խօսեցան յանունն նոն .

զհամբերութիւնն Յոբայ լուարուք, և զկատարումն
Տեառն տեսէք։

Այս և այսպիսի ինչ, և որ ինչ այսմիկ նման էին
բանք, խօսէր Հանապազ. զտիւ և զգիշեր ոչ դադա-
րէր Ի խրատելոյ և Ի բողոքելոյ։ Այլ իմաստութիւնք
Հոգւոյն սրբոյ, որ բնակեալ էր Ի նմա, ըստ Ամ ա-
ւուրց իւրոց ժամանակացն ամաց կենաց իւրոց երա-
նելի եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս այսպէս առ
ամենեսեան զնորատ վարդապետութենն առ հասարակ
իբրև զհայր բազմագութ իբրև զմայր գթած ցուցա-
նէր. զհոգևոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին,
առ մեծամեծս և առ մանկունս, առ պատուականս
և առ անարգս, առ հարուստս և առ աղքատս, առ
ազատս և առ չինականս։ Այլ զվերակացութիւնս աշ-
խարհի Ամ հոգաբարձութիւնք, առանց Ամ ծուլութե
և Ամ յապաղութե, տանէր մինչև Ի վախճան իւր,
և ոչ երբէք ուրեք եղև նման նմա այլ ոք Ի հայաս-
տան երկրին։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս Ներսէսի Հայոց կաթողիկոսին, Թէ զնորդ ԱՌՇակայ ար-
քայէ առաքեցաւ առ Վաղէս կայսր Հանդերձ նախարարօքն. Թէ
վասն որդւոյն կայսերն զինչ խօսեցաւ շատ բանս հաւատոյ, և կամ
զնորդ կապեցաւ և աքսորեցաւ, և զայլ նախարարան արձակեաց Հան-
դերձ պատարագօք։

Վասն վասն խաղաղութե ուխտին միաբանութեան
դաշինն, որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յու-
նաց, դէպ եղև առաքել անդր կաղմուձք մեծաւ ար-
քային Հայոց. զի ինքնին մեծ կաթողիկոսն Հայոց
Ներսէս, և Ի մեծամեծացն Հայոց ստուրաց տանն
ընդ նմա առնել, զի երթիցէ. Ի մէջ կայսերն և Ի
մէջ իւրեանց զուխտն հաւանութե և խաղաղութե
նորոգեսցեն։ Վասն չոգան զնացին հասին Ի կայսե-
րական պաղատն Թագաւորացն Յունաց։

Ո այսու ժամանակաւ Թագաւորն մեծ Յունաց Ալեքսիոս՝ի խոտորութենն հերետիկոսութե՛ աղանդուն Թեհանն արիանոսաց էր՝ի հաւատս։ Լուր եբև եւ տես զնոսա Թագաւորն, զառաջինն մեծապայծառ փառաւք մեծաւ շքով մեծարեաց զնոսա։ Այլ դեպ եղև՝ զի որդի միամօր կայսերին, այն իսկ զտաներ նո՛ր զաւակ, անգեալ դներ յախտս սաստիկ հիւանդութե՛. ապա Թագաւորն վասն աղօթս առնելոյ՝ի վերայ մանկանն ստիպեր զսուրբ կաթողիկոսն Հայոց զՆերսէս։ Իսկ նա՝ի մէջ մատուցեալ, խօսեբ սկսաւ եւ ասէ.

Եթէ հաւատասցես՝ եթէ որ Քո՛ որդի եւ ծնունդ այ միածին, ինքն յինքնութե՛ եւ իսկ յիսկութե՛, յորովայնի հօր ծնունդ եւ ոչ արարած, ծագումն հօր, լոյս փառաց էականին, եւ նկարագիր էութե՛ նորա. զի այն ծնունդ է եւ որդի՝ի քնութենէ նորա. զի որպէս հայրն՝ նոյնպէս եւ որդի՝ի քնութենէ յաւրաջ քան զամ յաւիտեանս՝ի հօրէ ծնեալ, յառաջ քան զլինելն արարածոց՝ ծնունդ, գործակից արարչակից յամի առ հօր՝ի սկզբանէ. զի ամ՝ի հօրէ նո՛վաւ եղև յերկինս եւ յերկրի. զի միշտ ընդ հօր՝ի սկզբանէ յառնելն զամ արարածս, եւ՝ի քնէ եւ՝ի սկզբանէ ընդ նմա ունելր զհամեմատ կերպարանս զիւրոյ ծնողական տալոյն նմանութե՛ն՝ հանդոյն զուգակցութե՛ն. որ՝ի սկզբանէ աշխարհի կրել զամ բանիւ զօրութե՛, եւ իւրով քնական իշխանութե՛ն վարել ուղղէ եւ առաջնորդէ ամ արարածոց. որ՝ի սկզբանէն արար եւ հաստատեաց զհիմունս երկրի, եւ ձգեաց զերկինս որպէս զխորան. որոյ ձեռքն արարին եւ հաստատեցին զամ երեսս երկնից. որ արար զմարդն իսկ՝ի հողոյ, եւ կարգեաց զբանաւորս զնոսունս խմաստունս անձնակամ։ Այլ եբև անձնիշխան կամաք ապականեցան մարդիկ, ոչ ծանեան զարարիչն եւ ոչ զպատուիրանս նորա, որդի՝ի քնէ՝ի սկզբանէ նստեր ընդ աջմէ հօր, եւ աթոռակից ծնողին իւրոյ էր. իսկ եբև եռես եթէ արհամարհեալ կայր հայր՝ի մարդկանէ, խաղաց եկն էջ յաջմէ աթոռոյ անտի. ամիոք փեցաւ փոքրկացաւ, եւ՝ի կուսէն մարմնացաւ. մարդացաւ, եւ զանձն ունայնացոյց. եւ մարդ եղեալ, կա-

մաք կրեալ զվիշտն, մեռաւ և յարեաւ և կեցոյց զա-
մենեսեան առ հասարակ. և վերացաւ և նստաւ յա-
ջոյ իւրոյ քնութեն, ընդ աջմէ Հօր՝ իւրոյ ծնողին:

Ընդ եթէ զայս այսպէս հաւատասցես եթէ Աստ
որդի և ծնունդ է այ, որովք և բազմաք և անթիւ
վկայութիք կարեմք հաձել զքեզ, և լուանալ զքեզ
ի սուտ և ի պիղծ մկրտութենէ հերետիկոսութեն
հաւատոյ: Այս ընկալ դու զմկրտութի սրբութեն
հաւատոյն ի շնորհս յանուն Հօրն արարչին, և ի
խոստովանութե ծննդեան Որդւոյն ի Հօրէ, որ է
յառաջ քան զյաւիտեանս և զժամանակս, որ է ըստ
քնութեն գոյացուէ իւրոյ. և ի մարմնանալ ի կոյս
ոջ, որ եղև ի վաղջան ժամանակաց, որ եղև վասն
մերոյ փրկութե և կենդանութե. ի մահն և թա-
ղումն նորուն Որդւոյն Հօր Աստ. և ի խաղաղութե
և ի միաբանութիւն և ի պարգեւս նորուն Հոգւոյն
սրբոյ: Ա՝կրեաց դու ի սոյն յայս խորհուրդս աքան
չելի կենաց Թողութե և նորոգութե. և զմանուկն
քո այսմ սրբութեն երանութե լուսոյ Թողութեան
մկրտութեն արժանի արասցուք. և խնդրեսցուք ի
Աստ ետնէ մերմէ, զի Թողցէ զմեղս անհաւատութե
հերձուածողութեն, և ողորմի. վասն որոյ ցաւք և
տանջանք եղեն ի սկզբանէ և լինին: Ընդմ ես լինիմ
երաշխաւոր վասն ետն ողորմածի՝ զի զմանուկն ողջ
անարատ առաջի քո կալայց, եթէ դու յուղղափառ
եկեսցես, և իբրև զայլ որթոդոքս խոստովանեսցիս
ընդ մեզ:

Ապա թէ ոչ խոստովանեսցիս ի Աստ միածին Որ-
դին այ, զոր նախ յառաջ քան զամ՝ Հայր ի քնութե
իւրմէ բաւական իւրոյ քնութե հայրութեամն ծնաւ
ծնունդ կատարեալ միածին, նոյն նման զուգակից,
և աթոռակից և արարչակից. որ վասն սիրոյն նորա
սիրեաց զմեզ, առ սէր մեր առաքեցաւ ի Հօրէ ի
կոյս ոջ Աստ, և երևեցաւ մարդ ի կնոջէ այն՝
որ նման էր քնութե իւրոյ ծնողին, և ի քնութենէ
ունէր զքնութի Հօրն կերպարանաց Հօրն իւրոյ, մնալ
նոքին վասն մեր եղև իւրովք կամաք ի կերպարանս
ծառայի: Այս քանզի անկան մարդիկ ինքնակամ կա-
մաք ի ծառայութե, արդ ինքն որ եղև ի կերպա-

բանս ծառայութեն, զի ՚ի ծառայութէ ազատեսցէ զմեզ։ Զի ՚ի սկզբանէն յորժամ առնէր Աճ զարարածս, յետուստ արար զմարդն՝ յերկոյթ և յանեըլեոյթ իւրոյ զօրութեցն ՚ի մի և նոյն ժողովեալ. և այսպէս զԱմ ՚ի նոյն պնդեալ ձուլեաց զարարածս, զոր և ըստ նմանութէ պատկերի կերպարանաց իւրոց արար. և էդ զնա իշխան անճնիշխան իւրոց կամաց։ Ոմն որոյ նախանձու սատանայի ապականեալք հնացան ՚ի բանսարկութիւն խարդախութէ պատրանացն։ Իսկ որ եկն յայց եղեալ կորստականին, ճնաւ ՚ի կուսէն ՚ի մարդկան կերպարանս, զի արասցէ խաղաղութէ յերկինս և յերկրի, և ածցէ զիւր հայրն ճնօղ ՚ի հաշտութէ ընդ արարածս իւր՝ մարդակերպ պատկերաւն, զի յանդիման լինիցիմ մերժեալ արարածքն աներևոյթն Աստուծոյ։

Ապա յիրաւի ուրեմն ՚ի նորոգման արարածոց, զԱմ վերատին նորոգէ. զի եթէ իցէ ոք ՚ի Քրիստոս, նոր արարած։ Զի այն, որ հինն էր, էանց. արդ աւասիկ եղև նոր Ամ. զի եկն էառ զմարդկան կերպարանս, և ինքեամբ դարձեալ զԱմ նորոգեալ հաստատեաց։ Ինքն եղև օրինակ մերոյ կենդանութէս, անդրանիկ Ամի մեռելոցն՝ մեռանելովն. և նախ ՚ի մեռելոցն յարութէն, զի յայտնի արասցէ ինքեամբ զԱմ. զի ըստ մեզ առանց փոխման արասցէ հոգւով, և անմահ մարմնով. զի մի միայն մարդկիկ յանփոխուն հոգւոյն կայեսցուք, այլ յանմահութէն մարմնոյն. զի և աներևոյթքն զարձեալ և բանաւոր զօրութիւնքն Ամ անփոխման այսիկ ընդ մեզ ակն կալցին։ «Քանզի Ամ արարածք ազատեսցին ՚ի ծառայուէ անտի ապականութէ յազատութէն փառաց Աստուծոյ» ։ Զի առ այն, ասէն, որ ՚ի մէնջ ՚ի կուսէ անտի մարդ ճնաւ Աճն, որ մեք ասի առ ժամայն ՚ի հաստատութէն թօթափեալք, և հանդերձեալ ժամանակին ՚ի լաւագոյնն հասեալք ամենեքին, հայեցեալք սպասեալք ակն ունիմք ՚ի սկզբանէն յարարչին և յառաջնորդն նորոգ արարածոց։ Քանզի ճնուն և կերպարանք է նա աներևութէին Աստ, միաճին ճնուն Հօր, արարիչ Ամ արարածոց. ուստի և զհանգամանսն թարգմանեալ, ածէ թափէ Պաւ-

քեալ միանգամայն և ասէ՝ Թէ "Լսեալ հաստատեցան ամ որ լինչ լերկինս և որ լինչ լերկրի, եթէ երկիւղ և եթէ աներևոյթք, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ իշխանութիւնք, եթէ պետութիւնք, եթէ զօրութիւնք ,, : Եւ խոնարհագոյն յայտնագոյն առնէր զասացեալսն. " Օ՛ի ինքն է անդրանիկ՛ի մեռելոց, զի եղիցի յամի ինքն յառաջացեալ. զ՛ի նմա հաճեցաւ ամ լրութիւն բնակել, և կամ նովաւ կատարել զամ, զի արասցէ խաղաղութիւն արեամբ խաչին իւրով, նովաւ ամն որ լինչ լերկինս, և որ լինչ լերկրի ,, : Օ՛ի չարչարանաւք ներ Աստի միածնի Որդւոյն այ, ամ՛ի նոյն ժողովեցաւ որ լերկինս և որ լերկրի :

Վասնզի մեծութիւն այ արար զամ, և կացոյց զմարդն ներ ամի. հրամայեաց և բազմացան : Այլ կաց ցոյց իշխանս և կարգեաց առաջնորդս : Ասէ յորժամ՛ի պատուիրանաւանդութիւնն գործեցին առ գամ մի, անկան յիշխանութիւն՝ զոր առեալ յառաջն ունէին : Ասէ լերկրորդին՝ զոչ միայն վասն կարօտութիւնն պիտոյից ետ խմիք իշխել, և խմիք չիշխել. զի գոնեայ առ պա յետոյ յետուստ իշխելոյն ծանիցուք զչնորհն, և չիշխելոյն զամենատէրն տէրութիւնն գիտասցուք : Ասէ՝ Ամ իցէ, որ ոչ ցանգանայ մեծութիւնն և կամ մարմնոյ առողջութիւնն, և կամ կամարարուհին կարօտիցի, որ միայն միւամ միածնի Որդւոյն այ վայել է : Ասէ մարդկանն, ոչ առ ամենեսեան մեծութիւն, և ոչ առ բնաւ աղքատութիւն. և ոչ միշտ մեծք, և ոչ՛ի սպառ աղքատք, կամաւ մեծացեալք և կամաւ աղքատացեալք : Ամենց ծնեալ, և ոչ մնուցեալ. ՛ի չարի հասուցեալ, և անարգեալ թշնամանօք : Ամ՛ի իցէ, որ սիրեաց զհիւանդութիւնն և ատեաց զառողջութիւն. չամի պակասեալք, և ոչ կարօտեալք : Կեաք՛ի կռապաշտութիւնէ և՛ի սպանութիւնս, ՛ի պոռնկութիւնէ և՛ի բազմազգի չարիք կաշկանդեալք զմածեալ կան. կեաք մոլորեալք և դանդաչունս մնօք ընդ պատահարօք [1] կապեն զամ, եթէ զլարի և եթէ զչար :

Ասէ յորս արեգակին արդարութիւնէ զլուսաւորութիւն

1 Ցերկուս օրինակս ընդ պապա- միւսում ընդ պապրաֆօփ, և՛ի րօփ, ՛ի միում ընդ պապրաֆօփ, ՛ի միւս այլ ընդ պաֆրօփ :

հաւատոյն ծագէ, և զմեզ տգիտութենն խաւարին սեւութէն հալածէ, նոքա հանապազ յանդիմանեն զտուութիս և զմոլորութիս։ Այլ նախ իբրև գործովք և օրինակ բարեաց յանձինս ցուցանելով, և ապա զայլս ուսուցանելով զնոյն. նախ ոչ երկմտելով ի հաւատոյն յերրորդութենէն զօրութէ արարչութեն, և ապա զանձինս սրբութէք և զգաստութէք և պարկեշտութէք պահել յաշխարհի։ Այլ կեաց ամ հանդարտութէք ըստ կամացն Աստի, մերոյ արարչին, Աղաչեմ այ. և արհամարհել կոխել զամ անցաւորս, և վերամբարձ ի թեւս որ Յոգւոյն թռչել անցանել ի վերայ ազբախտութէք զօրութեանցս՝ որ աստէն առ մեզ պատահղիչքն. և այնչափ խորշել և մերժել և յանպիտոյիցս, մինչև զկերակուրս աւուրն ուռճկին արհամարհել, Թող թէ զմիս կամ զգինի ձաշակել, որ զնախձամէջ պարս յուղացուցեալ մռճկացուցանէ և զձարպն, և զերիկամանքն պատեալ. ուստի բոյր և ազգի ազգի եւանեն անթիւ անօրինութէքն։ Որ տայ այնպիսեացն, որ զայն սիրեն, ապաշնաչն ըստ կամս անձանց իւրեանց։

Այլ մեզ ընդ այսր լինի վայել ի չնորհս մարդասիրութենն բարերարութենն, յոր ամ ազգ և ազինք խոստովանին զմեր Աստ Աստ ծնեալ ի Հօրէ, ծնեալ և ոչ արարեալ, խակակից Հօր և քնակից ծնօղին իւրում. ծագումն, լոյս փառաց Հօր, կերպարանակից իւրոյ ծնօղին։ Այլ որոց իցեն աչք մտաց, և չեն կուրացեալ ի հաւատոյն ճշմարտութէնն, նոցա նայելիս ցուցանէ, որոց ամ կողմանքն հայելիք են։ Ի լուսով նորա է ամ երկինք և երկիր և ամ աշխարհ, և ամենեցուն լսելիս որոշի՝ որ ամենայնիւն լսելիք են. և ամ ծածկեալք սրտից և խորհրդոց մտանեն ի լսելիս նորա, և զինեն զամ շունչս մարմնոյ։ Այլ իւրովք կամօք երեւեցաւ մարմնով հասակաւ անձամբ կերպարանօք և պատկերաւ, գթութէնքն իւր արարչին. և ոչ սիրեն զնա, սէրն իւրեանց կերպարանեն զնա ի սիրոս իւրեանց, և երկիր պագանեն նմա հոգւովն ճշմարտութէք. սրբեալ զսիրոս իւրեանց և զմարմինս իւրեանց, առնեն տաճար որ Յոգւոյն. և հաղորդք և հաւասարորդք և բաժանորդք առնին մեր

երանուելեաս, զոր ետն ՝ուր և ասէ՝ եթէ «Նչրանկ՝ որ հաւատայցեն ձշմարտուեն»։ եթէ «Որ ետես զնս, ետես զՀայրն իմ»։ և եթէ «Նչրանկ՝ որ ոչն տեսին զնս, և հաւատասցեն չիս։ զի նոքա զՀայրն տեսցեն»։ Նյս միտք՝ որ յաճտեսուելէն հաւատոցն անմահն եղեալ էն, ՝ի կերպարանացն Թափուր և ուննայն իբրև ախերակք[1]։

Իսկ որք լուսաւորեալք են տեսանելեաց աներեւոյթ սրտին աչօք, որպես ասէ մարգարէն. «՝Ի քեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ զերեսս քո»։ դարձեալ ասէ. «Նդի զնոր առաջի իմ չամ ժամ, զի եր ընդ աջմէ իմմէ, զի մի սասանեցայց»։ և դարձեալ ասէ. «Ուրախ եղեց չուրախութենն երեսաց քոց»։ Ույք այժմ ՝ի ծածուկ լուսաւորութենէն խորհրդովքն տեսանէին զնա ըստ նորա կամացն, ապա ՝ի վաղձանի դէմ չանդիման երեւեսցի. որպես երանելի Նբրահամն Պօղոս ասէ՝ եթէ այժմ ընդ հայելի օրինակաւ տեսանեմք, իսկ չապա առ չապա չորժամ գայցէ՝ բերիցէ ինքն տալ մեզ զնւրոյց փառացն զանմահութենն և զանեղծութենէ. և չորժամ առանց նմանութեան և առակացն գայցէ երեւեալ Որդի Նօր և Որ Նօգումն, չորժամ հրամայեսցէն ամենեցուն՝ եկեալ անմահութենքն՝ որք զծածն տեսանիցեն առաւել առ բազմացն արժանեացն ակնկալութենէ, կամի երեւեցուցանել զփառաւոր զգալուստն իւր, որպէս վանն երկայնմտութեանն համբերողացն և չուսալից սպասելոցն գայցէ երեւեալ Որ ծնունդ՝ այ Նօր։ Որ ՝ամ արդարոցն գայ պարգեւատուն վանն վկայելոցն ՝ի հաւատոց անտի։ Որոց չև ընկալեալ զաւետիսն, այ վանն մեր լաւագոյն խորհեալ՝ զի մի առանց մեր կատարեսցին։ Օ ՝ի եթէ քննեսցէ ոք զգիրս ՝սբս, չամ ՝ածաչունչ մատեանն զսոյն և զծածեղէն չաՀախութենէ հոգեւոր պատգամացն գտանէ ոք. վանն զի կան պահին արդարոցն և հաւատացելոցն լուսաւորք և թագքն արքայուենն չաւիտենից ժամանակին, և թէ բահաւատիցն ժխտողացն և անհնազանդիցն ժպրը-հուենն պատիժք, ՝ձարակ լինել նոցա անչէջ հրոյն չա-

1 Ցօրինակի միում՝ ասէրակ։

վիտենից դատաստանին յանուն Տեառն , յանսպառ յանսահման առանց թուոյ և առանց չափոյ ժամանակին տանջանաց գՀԵՆԵԼԻՆ , խաւարին դատաստանին՝ որ գալոցն է ։

Ա՛յլ վասն որդւոյն քո , եթէ դու ՚ի ձշմարիտ հաւատս ուղղուԹեան եկեսցես , խնդրեսցուք ՚ի Տէնէ և դիցուք զձեռս մեր ՚ի վերայ նորա , և ասասցուք՝ Թէ ըստ հաւատոցն ձերոյ բժշկէ զսա Ա՛ստ ծնունդ ՝այ , և բարեմիտ ողջանդամ յարիցէ նա առաջի քո ։ և Տէնէ զերձ արքայուԹենն նորոգուԹենն՝ անմահուԹենն յաւէրժ բարեաց և աս արժանի արասցէ զձեզ ։ Ա՛պա եԹէ ոչ հաւատասցես , զնմ՚որ արդեւք լինիցի ԹողուԹի և բժշկուԹի ։ և կամ մեք զնմ՚որ արդեւք իշխեցեմք յանդիմանել կամ համարձակել և խնդրել , և կամ առնել աղօԹս վասն այնոցիկ՝ որք քնաւ իսկ ոչ ճանաչէին զնո՚ր , զնմ բարկուԹիւք Տէն վախճանեալ զայնոսիկ՝ որք ոչ ուղղուԹէք զնո՚ր խոստովանէին ։ և կամ որ ոչն մարԹիցէք խնդրել զնա , որք ոչ հաւատայք գիտեալ պատուիրանացն նորա , և ոչ ՚ի միտ առնուլ զօրինս նորա ։ “ Օ՚ի օրինք Տէն ամբիծ են , դարձուցանեն զոգիս ։ վկայուԹիւն Տեառն հաւատարիմ է , իմաստուն առնէ զտղայս ։ Ա՛րդարուԹիք Տէն ուրախ առնէ զսիրտս ։ պատուիրանք Տէն լոյս են , և լոյս տան աչաց ։ երկիւղ Տէն սուրբ է , և մնայ յաւիտեան ։ Վ՚ատաստանք Տէն ձշմարիտ են , և արդար է ՚ի նոյն ։ ցանկալի է նա քան զոսկի , և քան զականս պատուականս բազում ։ և քաղցր է նա քան զմեղու խորիսխ ,, ։ Ւսկ որոց զանձինս իւրեանց յապականուԹիւն տուեալ , և նիւԹ հրոյ պահէ զնոսա , “ Ա՛յ են բանք և ոչ են խօսք , որոց ոչ լսին ձայնք նոցա ։ այլ նոցա ընդ ամ երկիր եղ բարբառն , և մինչև ՚ի ծագս տիեզերաց են խօսք նոցա ,, ։ Ւսկ որք ոչն լսեն , և որք լսեն , պահ հն նոցա Տէր զՀատուցումն նորա ։

Օ՚այս համ բանս , և որ ինչ այսմ և սմին ինչ նման հին բանք , խօսեցաւ Տէն Վ՚երսէս ընդ կայսերն ։ և զայն յաւել՝ եԹէ յօրէ յայսմանէ ինչ յաւուրս հնձի գետասան վասն ողորմածուԹէ բարեբարուԹէն վասն ներելոյն անսպացեալ քեզ , կէտ ժամանակաց այնչափ աւուրց անսպացեալ քեզ , եԹէ ոչ ուղիղ եկեսցես ՚ի

հաւատան, նշան քեզ այս լիցի. որ մինչև յայն օր ի հաւատան ոչ հաստատեսցիս, յետ ընդդեդաւ կիտին՝ մեռցի մանուկն. զի գիտացես եթէ հաւատացիմ ես այս ամ, զոր խոսեցայ առաջի քո։

Այլ իբրև լուաւ Թագաւորն զայս ամ, զի մինչ դեռ խոսէրն առաջի նորա՝ նա լուռ ևեթ կայր, ոտն զոտամբ արկեալ, արմունկն ի ծունգ և ձեռն ի ծնօտի՝ նստաւ այնպէս, մինչև կատարեաց խոսեցաւ զամ զբանս իւր։ Այլ գրէին զայս սեմիարք նոտարացն արքային, ոչ կային առաջի Թագաւորին։ Այսպա մեծապէս ի ցաւումն բրդեալ լինէր Թագաւորն, և տայր հրաման՝ երկաթի կապանօք մեծապէս կապել զնոր եպիսկոպոսապետն Հայոց զԱգերբէս, և արկանել ի փիւղակէ. զի մինչև տեսեալ ուշ ունիցի մանգանն, եթէ կեցցէ՞ եթէ ոչ. ապա յետ այնորիկ տեսցէ զինչ արժան իցէ առնել։ Այսպա յետ լսուլ աւուրցն հնգետասանիցն անցելոցն, սատակեցաւ մանուկն որդի կայսերն. և ընդ ամ այն ժառանգ գտանէր նորա։ Իբրև ելաց և կոծեցաւ որչափ կոծեալն էր, ապա ետ հրաման և ածին առաջի իւր զնոն Ագերբէս։ Օտ առ ինքն կոչեալ հարցանէր, եթէ ի ձէնջ քրիստոնէից եղև մանկանն մեռանել։ Իսկ նա ետ պատասխանի, և ասէ. Հնգետասան օր յետ բանիցն եղելոց երկարեաց Աստ, Թերևս դարձջիք. իսկ իբրև ոչ դարձայք, սատակեցայք։ Իսկ դու այժմ եթէ հաւատացես, կարող ես Արդին ամ Աստ յարուցանել զնա, և հանդերձ որդուովն քո և ամ ընդանեօքն։

Այսպա զայրացեալ ընդ բանսն Թագաւորն, կամեցաւ զնա չարամահ առնել. ապա մատուցեալք առ Թագաւորն աւագք իւրոյ դրանն և խորհրդականք, և ասեն ցկայսրն՝ եթէ յօտար և ի հեռաստան երկրէ վասն որոյ յղեալ զդոսա հզօր Թագաւորի, և մեծի ճոն հրեշտակք են, մի՛ ինչ լիցի դոցա ընդ ձեռս ի մէնջ. եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ և ընդ մեծ Թագաւորն Հայոց, և մեծ թշնամանքն ի մէջ անգանելոց է. զի ոչ եթէ նորա քանիս մանուկն կեայր կամ մեռանէր։ Այս Թէպէտ այսպիսի քաղցր ինչ ասէին, ոչ կարէին զսրտմտութի բարկութեն շինչուցանել զԹագաւորին։

Ա՛պա իբրև յանհնարին մոռանէին իրքն, և պնդեաւ յամառէին առնոյն բազմութիւնքն՝ զի մի զայրն սպանցէ, ապա ուրեմն հազիւ հազիւ կարացին իւր զօրքն ի հաւան ածել զԹագաւորն. այնչափ առնել, գոնեայ մի սպանցէ։ Ա՛յլ սակայն արձակել տալ ոչ կարացին. այլ արկին յայն չափս, զի աքսորեսցի միայն։ Օ՛ի այսպէս մեծապէս Ձգնեաւ խորհեցան իմաստունքն, զի առ գամ միայն աքսորելովն ապրեսցի, գոնեայ ապա առ յապա դարձ լինի առնն, զի մի՛ ի խռովութիւն և՛ ի պատերազմ՛ ի մէջ Թագաւորութեանն երկուցուսցէ լինիցի։ Օ՛ի ասէին. Ո՛չ երբեք ուրեք եղեալ է, և ոչ՛ ի մէջ Թշնամեաց ուրեք, և ոչ՛ ի մէջ պատերազմի Թարամատար հրեշտակաց ինչ կալևկապ և ոչ բանք, Թող Թէ մահ. զի ոչ երբեք ուրեք՛ ի հնոց ժամանակաց հետէ, Թող Թէ այր մեծ և աւագ և աշխարհի միոյ գլուխ։ Օ՛ի Թագաւորն զոյա աշխարհինն և զա, որպէս ասեն, ընդ մի համար են. և ասեն՝ Թէ աշխարհն այն, ուստի զոյա եկեալ են, սիրեն զայրդ զայդ. և երևելի է զա անդ։ Ո՛չ որպէս ետուն զրոյց ոքք ընդ նմա եկեալ էին, Թէ ազգակից համարին զսա և մերձաւոր Թագաւորին. և իւրեանց աշխարհն սիրեն զայրդ զայդ։

Ա՛սէ Թագաւորն տայր նոցա պատասխանի. Ա՛սացիք ոքք ասացէք՝ եԹէ այդ այդպէս իցէ, ո՞վ արք իմաւ տունք. զի եԹէ տէր նորա տուեալ էր ինձ՛ ի ձեռն նորա զանարգուԹե Թշնամանս, ոչ գոյր նորա մեղ դնել բանբերին, և ոչ պատիժ և ոչ բանք։ Ա՛սէ նա իւրովք կամօք Թշնամանեաց զիս, և իւրովք կամօք եղև երաշխաւոր մահու որդւոյն իմոյ. և ասաց՝ բայ ես իսկ սպանի զնա։ Ա՛սէ եԹէ նորա Թագաւորն զնա առ սէր յղեաց, նա եկն կոտորել զմեզ, վասն այսորիկ առ իւր Թագաւորն իսկ է զնաասակար։ Ա՛յլ փոխանակ զի ինքն անձամբ զանձն իւր կալաւ, պարտ ինչ է այնմ իմիք. ես ինձէն գիտեմ Թէ չեղև՛ ի նմանէ, մահապարտ է։

Ա՛պա ոչ ինչ անսաց նոցա Թագաւորն, այլ հրամայեաց ետ աքսորել զերանելին Ա՛լեքսէս, և տանելիս կենդանւոյ զնա՛ ի կղզի մի՛ ի ծովուն մեծի, յայնպիսի յանապատ տեղի՝ ուր ոչ մարդ կայցէ, և ոչ ջուր ըմ-

պելոյ , և ոչ կերակուր . բայց սոսկ միայն անասատ
էին , զի սովամահ սատակեսցէ զնա : Եւ ժողովեաւ
զամ իւրոյ իշխանութենն քաղաքաց զամ որթոդոքս
զեպիսկոպոսս զերիցունս զսարկաւագունս , որ միան-
գամ յուղղութենն էին և ՚ի հաւատս . և մեծ ժողով
առ հասարակ իշխանութենն ժողովեցան : Եւ խօսեր
ընդ նոսա , զի առնեքեան յանձն առցեն դառնալ
՚ի խոտորութենէ հաւատն աղանդոսութենն արիանոսաց ,
և դարձցին անդրէն երթալով յիւրաքանչիւր վի-
ճակս , և շրջեսցեն զիւրաքանչիւր ժողովուրդս յա-
րիանոսաց հաւատն : Իսկ երբև ոչ ոք ՚ի նոցանէն
այսմիկ յանձն առնուլ հաւանեցան , ապա աքսորեաց
զնոսա , և ընդէց յաշխարհս օտարս , զի մի ոք ՚ի նո-
ցանէն դարձցի յիւր տեղիս : Եւ փոխանակ նոցա՝
զանօրէնութենէ հովիւսն կացուցանէր , յամ քաղաքս
արիանոսս չեպիսկոպոսս յղէր . և եղև մեծ շարժումն
և խռովումն և հերձուածք յամ եկեղեցիս տիեզերաց :
Եւ մեծ եղև ընդ ամ տիեզերք փորձութենէ նե-
ղութենէ վտանգի քան զառաջինն թագաւորացն . և ա-
ջոր , որ ՚ի հերձանոսացն պատերազմին և խռովմունքն
յառաջագոյն յառնէր առ այլովք դիցապաշտ մեհե-
նաւոր թագաւորօք : Զմեհենայն ճշմարիտ ուղղափառ-
հաւատոք վարդապետք մերժեցան յիւրաքանչիւր ժո-
ղովրդոց , և զնոցա տեղիսն կալան մշակք սատանայի .
և ամ հաւատացելոց ՚ի Քն հասանելին բազում նե-
ղութիւնք , և առ հասարակ ամ ժողովրդոցն լինէր
սուգ և տրտմութիւն : Զի կալան զեկեղեցիսն ամ
պաշտօնեայքն սատանայի , և հեռացան հովիւքն յիւ-
րաքանչիւր հօտից , և եղեն խաշինք ցրուեալք . զի
ոչ գոյր նոցա առաջնորդ , և ոչ ինաց տեղւոյ աղօթից
հաւատացելոց ժողովրդոց : Զի զի մի հրեշտակացն
սատանայի հաւանեսցին , նոքա ՚ի բացատ յանկարկ
տեղիս՝ արտաքս և քաղաքաց և շինուց ասէին կալ
յաղօթս . և ՚ի կատարել զաղօթսն իւրեանց՝ խնդրէ-
ին ուխտիւք յայ , զի փոխեսցէ զանցուսցէ զչար ժա-
մանակն , և դարձուսցէ զճշմարիտ իւրաքանչիւր վի-
ճակացուս յիւրաքանչիւր ժողովուրդսն , և յիւրեանց
վաստակս ՚ի շինեալ եկեղեցիսն՝ ուստի մերժեցանն ,
թերևս դարձ լինի նոցա այսրէն :

Յակ յայն յիշեանաց՝ որ ընդ սրբոյն Ներսէսի երթեալ էին յերկրէն Հայոց, զնոսա բազում գանձիւք լցեալ արձակէր, կաշառակուրծս կաշառաւէակս առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին. և բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ, և ականց պատուականաց՝ ի ձեռն նոցա՝ արքային առաքէր, իբրև այնու կամէր հաճել զմիտս թագաւորին: Օ՜ի ոչ գոյր չափ և ոչ թիւ, զի անհամար գանձս առաքէր արքային Հայոց. գրէր առ նա զիր ամբաստանութեանց սրբոյն Ներսիսէ, իբրև թէ սպան զորդի նորա: Յաւ արձակ կեաց և զպանդանդան զՅուշկունեան թագաւորին Հայոց, որ կային և ի կայսերական պաղատանն. զի էն նոքա եղբօրորդիք արքային Յուշակայ, զի միումն անունն Ճանաչէր Վնեւ, և միւսումն անունն Տիրիթ, ետ ի ձեռս սատրապացն Հայոց, և զնոսա զայս օրինակ անդուստ յուղարկէր:

ԳԼՈՒԽ Զ.

Ցաղագս եթէ զնարդ, իբրև աքսորեցաւ սուրբն Ներսէս և ընդ եցաւ ի կղզին յանապատն, թէ արդեօք կամ զնարդ կերակրեցաւ, և կամ արդեօք չայ եղէն աքանչելիք զան ինն:

Զայն իբրև արտմտեալ թագաւորն Արշակ յաղէս յաղոյց հալածանս ի վերայ եկեղեցեաց սրբոց ընդ ամ կողմանս իւրոյ իշխանութեանն, և զամ եպիսկոպոսս մեկնեաց երան յիւրաքանչիւր ժողովրդոց և ընդ զնոսա յօտարութի, առաւելիւր նիւթեալ մեծաւ բարկութ ի վերայ սրբոյն Ներսէսի. վասն զի պատճառք մահուան միամբ որդւոյն սիրելոյ իւրոյ եղև նա, ապա չարապէս չարութք դառնութք մահուան կամէր վճարել զնա: Որում մեծամեծքն և ամենայն խորհրդականք թագաւորին չհաւանեալք չառնուին յանձն, այլ հաղիւ հաղիւ կարացին թափել ի մահուանէ: Ապա ետ հրաման ընդենուլ զնա ի կղզին

մի մեծ ովկիանոս ահագին ծովու, յանապատ յան-
ջուր տեղւոջ մի՝ ուր ոչ բոյս ինչ դալար, և ոչ արմատ
ինչ, և ոչ այլ ինչ ամենևին՝ որ ինչ ՚ի պետս մարդ-
կան լինիցի. բայց միայն քար և աւազ ապառաժ, և ոչ
ձանապարհ ուրեք ընդ այն, և ոչ գնացք ինչ նաւաց:

Ապա անցուցին զնա ՚ի տեղին հրամայեալ, և ընդ
նմա արս եւթանասուն. այլ արքն որք կէսքն եպիս-
կոպոս էին յայնոց քաղաքաց, կէսք կղերիկոսք յայնոց
եկեղեցեաց: Իսկ նա ինդայր և ուրախ էր ընդ այն,
զի եհաս նմա կրել չարչարանս վասն անուան Տեառն
Յիսուսի Որդւոյն Աստուծոյ: Նա էին նորա այն որք ընդ նմայն
աքսորեցան յիւրոցն՝ երկու. անուն միոյն Աստամ
սարկաւագ, և երկրորդին՝ Տիրանամ. և այլքն եւ-
թանասունքն որ ընդ նոսա, զորս ուստեք ուստեք
ընդ նոսա ամացեալ ՚ի նաւն՝ ՚ի կղզին խաղացուցին:
Նա գնաց մեհենեցաւ նաւն՝ որ զնոսայն տանէր, և
ըստ հոգմոյն յաջողութեանն ՚ի հնգետասան օր հասա-
նէր ՚ի հրամայեալ տեղին. և թափեաց զնոսա նաւն
՚ի կղզին, և ինքն այսրէն դարձաւ:

Նա յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ և
ոչ դոյզն ինչ արմատ, զի անարմատ աւազ միայն էր.
զի վասն այնորիկ իսկ տարեալ էր զնոսա անդր, զի
սովամահ արասցեն զնոսա ըստ խստութեանն թագաւո-
րին հրամանին: Նա եղև իբրև եհաս նոցա յամեր
ամաւրեայ մի ժամանակս, որ տկարագոյնքն էին ՚ի
նոսա՝ սկսան նքոգել ծարաւել նուաղել և ներգևել
դորտալել ՚ի քաղցոյ կամ ՚ի ծարաւոյ: Ապա մխիթա-
րել և քաջալերել սկսաւ զամենեսեան Ներսէս, և
ասէ. Պինդ կացէք, հաստատուն լերուք, և մի՛ երկչո-
ւիք. զի այն ՚որ մեր Յն Աստ՚ որ հրամայեաց ծառոյն
սաբեկայ բերել զնոյն պտուղ, և ընկալաւ զԱահակ
կենդանի զոհ, և օրհնեաց զՅակոբ ՚ի պանդխտութե,
և ապրեցոյց զՅովսէփ ՚ի ծառայութենէն և տիրացոյց,
հրամայեաց և մորենւոյն հրով տերևել ծաղկել, և
օդոյն հրամայեաց քաղցրութեն հացին կերակրոյ ՚ի վե-
րուստ ցօղել, և զլորամարգին ՚ի թուջնոյ տալ ապըս-
տամբող և դառնացող ժողովրդեանն, և ինքն Աստ
վեմ եղեալ՝ ընդ նոսա շրջէր յանապատին յանջրդին,
և զքաղցրութեն ջուրցն ՚ի ծարաւ նոցա մատուցա-

նէր , և խորհուրդ հանդերձէլոյն՝ որ առ յապա լինելոյն էր՝ գուշակէր գաւազանաւն ՚ի ձեռն Աովսէսի , վէմին խոցեալ՝ հոսէր նոցա ջուր , զնոսա անդ զառաջինն օրինակօքն կեցուցանէր , և ինքն կերակրեաց ՚ի սակաւ հացէ զժողովուրդն յանապատի անդ , և ըստ ծառոյն՝ որ զնոյն եբեր՝ ինքն զնաչէն պրկեալ կախեալ խաչեցաւ , և օրինակաւն ըստ նմանութեանն ՚ի կողն խոցեցաւ , և եհան մեզ անտի ջուր փրկութեան ՚ի լուացումն սրբութեան ապաշխարութեան՝ յաղագս կենաց մերոց , և ինքն վասն մեր հաց եղև , և զարիւնն իւր ըմպել ետ մեզ , զնզմարմինն ՚ի մարմինն խառնեսցէ և արիւնն յարիւն , զնզճածուքեանն յոգիս մեր միացուցեալ , զմեզ ընդ որք Հոգւոյն , և ՚ի վախճանի զմեզ քնակիցս ճածուքեանն արասցէ . արդ որ այսչափ երախտիս առնէր մեզ , մինչև մեք անգամ բանս դոհացողութեան փոխարէն ընդրհ ոչ հատուցանեաք նմա , իսկ արդ զիարդ վասն անուան նորա արժանի եղեալք սակաւիկ մի թէնամանաց՝ սովամահ ինչ կարծիցեք լինել : Ոչ այդպէս . այլ հաւատով խնդրեսցուք , և տացի մեզ կերակուր : Իսկ արդ նշա՞ն խընդրեմք , ոչ . այլ նշան թէրահաւատից պիտոյ է , և առ զչարսն դարձուցանելոյ յուղղուն . այլ մեզ , գիտէ որ զպիտոյսն մեր և զօգտակարսն , և ըստ այնմ պատրաստէ զինչ և պիտոյ է մեզ : Իսկ մեք ոչ այնպէս , որ քաւ և մի լիցի , որպէս ասացաւն . ասէ , “ Զնշան չար նշան խնդրէ ,, : Իսկ մեզ կարևորքն առանց ուրոյն ՚ի մարդկան աղանդէն չիք հնար լինել : Իսկ ՚ն կարող է և առանց կերակրոյ պահել զմեզ կենդանիս , և կարող է տալ կերակուր . և արդարացուցանել կարող է , և արժանիս առնել՝ վասն իւրոյ անուանն պատրաստել մեզ մեռանել . տալ մեզ զսովորական ընդունելութեն քնութեն մահուն , որ չերթայ ուրեք ՚ի մարդկանէ , այլ պատճառս միայն առնէ զանուն իւր ՚ի վերայ անեղեւոյթ մարմնոյն . մահէ , և իւրոյ արքայութեանն զմեզ բազորդս բաժանորդս առնէ : Կարող է և ՚ի խաղաղութեն վաղճանել , և առնել արժանիս արքայութեն կարգացն :

Ո՞այս և այսպիսի և որ երթայր զհետ սորին՝ իբրև խօսեցաւ , արդ՝ ասէ՝ դիք ծունր ամենեքեան , զի

արժանի միայն լինելուք մարդասիրութեան Աստի : Այլ ի գնել նոցա երիցս անգամ ծուխը և կալ յաղօթս, և յարեաւ ի ծուխն անդ հողմ սաստիկ, և սկսաւ ընկենուլ ի կղզի անդր ձուկն սաստիկ յոյժ, մինչև շեղջս շեղջս կուտեր ի ցամաքի կղզւոյն. և ընդ նմին փայտ սաստիկ յոյժ : Իբրև հանին կուտեցին զփայտն, խորհեին թէ հուր պիտոյ է, որով զփայտն լուցցուք : Յանկարծակի ինքնին լուցեալ փայտն հրով վառեր, և նոքա յարուցեալք գոհացեալ, զաղօթսն կատարեցին՝ մատեան առկին ի խորովս, և բազմեցան և մաթեան յուտել : Այլ իբրև կերան յագեցան, և պէտք եղեալ ըմպելոյ ջուր՝ յոտն եկաց տէր Աերսէս, և մատուցեալ փորեաց զաւազն ի կղզւոջ, և բխեաց աղբեւր՝ ջուր քաղցր անոյշ, և անտի ըմպեին ողք հանապազորդք եին ի կղզւոջն :

Յայնմ կղզւոջ զայս օրինակ կերակրեալ լինէին ի ծովէ անտի. և հանապազ մխիթարէր զնոսա տէր Աերսէս, և ասէր. Ածապես յիշեցէք և ի մտի կալարուք զգանն ձեր զոր ասաց, թէ " Ախնդրեցէք զարքայութիւն նմա և զարդարութիւն նորա, և այն ամ տայ ի և յաւելցի ,, : Ցեսէք, եղբարք, զի ահաւասիկ իբրև հայր յորդիս մատուցեալ է առ մեզ ձեզ՝ խրատել զմեզ, զի զմեզ պիտանիս արասցէ, և զանուանն քաջութեան ժառանգեցուսցէ մեզ, և զմեզ մեծաց վարձուց արժանիս արասցէ : Ոչ զպատճառս սակաւիկ առաքինութեան ի մէնջ խնդրէ. այլ սիրեսցուք զնա. և ապա զանթիւ զանչափ զանհնարին զանհամեմատ բարեացն առնէ զբարերարութիւնս աքանչելեաց իւրոց. և յուսանէ զբարիատուր զերախտատարգև հատուցմունս վասն իւրոյ մարդասիրութեանն : Արդ և զանձն իւր ոչ խնայեաց գնել ի վերայ մեր. այլ կերակուր և ըմպելի ևս եղև մեզ :

Այ այսպէս հանապազ հանդերձ եղբարբք գոհանալ և օրհնել զնր Ձե Աստ, զոյդ և զերեկ կային ի պաշտաման տէն անդադար : Արեգական մտանելոյ կային եղբարքն, և ապա տէրունատուր կերակրոյն ուրախ լինէին, յընդհնուլ ալեացն ի պատրաստել զկերակուր : Իսկ տէր Աերսէս յետին աւուրն ի կիրակէին հասեալ միայն, ապա ձաշակէր :

Ա՛յլ զայս օրինակ համակ տայր նոցա զքաջարութե՛ն ընդ Կերսէս ամն լինն, որ եղեն յայն կողմանս։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս այ սքանչելեացն՝ որ եղեն ի Կերսէս և կամ ի Բարսիղիոս. և վասն նախանձուն Եւսեբի եպիսկոպոսի առ Բարսիղիոս։

Իսկ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս յորժամ ետես զզարմանալին զնախ իջանել զաղաւնոյն՝ որ եկն ի յերկինից, և հանգչել նախ յերիցապետն Կեսարու՝ ընդ նմա. և տեսանէր զնա իբրև զօր հակառակորդ և զքննամի։ Վասն զի հուչակ հարեալ էր ընդ երկիր համ. ասէին և պատմէին՝ թէ յորժամ ձեռնադրէին զնոր կաթողիկոսն Կերսէս, էջ հանգեաւ ի նմանուէ աղաւնոյ ի վերայ՝ նախ յերիցապետն ի՝ զնոյն Բարսիղիոս. և ապա յարուցեալ նստաւ ի քահանայապետն Կերսէս։ Եւ այս հուչակ հարկանէր զնոցանէ. մանաւանդ յաշխարհն Կամբոց։ Վեճապէս թուէին մարդկանն սքանչելիքն համ. և համ մարդ պատուէին զնոյն Բարսիղիոս։ Վանաւանդ վասն սրբութե՛ն վարուցն նորա, և կարգացն ձշմարտութե՛ն, և բազում խոնարհութե՛ն նորա, և վասն ածախոս չերմեռանդն աղօթիցն նորա, և վասն վարուց կարգաց պարկեշտութե՛ն. և կամ վասն աղքատասիրութե՛ն և վասն տառապելոցն[1] վարուցն, և պատուիրանակատար մշտակիր հանապազորդութե՛ն նորա, կամ վասն բազում գիտութե՛ն, զի աղբեւր էր անպակաս իմաստութե՛ն. և վասն ուսուցիչ հաւատարիմ վարդապետութե՛ն նորա, զի փիլիսոփայական արուեստիւն ինոյր արկանէր հանապազ զհամ զուր բացեալ զբերանս հերետիկոսացն, և զհաւատս ձշմարիտ ամենասուրբ եր-

1 Յօրինակի միում փոռապսէր։

րորդութեանն ամենեցուն հաստատեր ։ Ա՛ն այս այսր
ամի նայելին ընդ նա իբրև ընդ առաքեալ Քրիստի, իբ-
րև զհրեշտակ երկնաւոր. և ամ ոք վկայեր՝ թէ ար-
ժանի իսկ էր նա Հոգւոյն սուրբ ։

Իսկ նա զանձն կարի՛ ի խոնարհութենէ ունէր, և
անարժան համարէր, թէպէտ և ամ ոք վասն գիտու-
արուեստին կարօտեր առ նա գալ. մանաւանդ ար-
տաքինքն իսկ Ճարտարապետք փիլիսոփայիցն առ նա
ընթանային վասն իւրեանց արուեստին ։ Ա՛յլ նա զաս-
ղումն դարձուցանէր՛ ի պէսպէս յիւրաքանչիւր կար-
ծեացն խոտորութենէ՛ ի Ճշմարտութենէն հաւատոց, եր-
կրպագուս Քրիստի անթիւս մարդկան կացուցանէր ։
Եւ ամ երկիր սկսան՛ ի նա նայել, որպէս թէ ան-
դուստ յերկնից՛ ի վերուստ իջեալ էցէ. այնչափ՝ որ-
պէս զի թէ կամիցի ոք պատմել, ոչ կարասցէ ։ Ա՛յլ
յորժամ խոժոռադէմ երեսօք տեսանէր զիւր եպիս-
կոպոսն ընդ ինքեան՝ զՅարսիլլիոս, տեղի տայր նմա,
թողլոյր զքաղաքն, և գնայր նա անտի, ելեալ քնակէր
մի՛ ի շինացն՝ ուր և նմա պատշաճ էցէ կալ անդ ։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս թէ որպէս կայսրն Վաղէս հալածեալ զամ ուղղափառ հա-
ւատացեալս. և կամ որպէս կամեցաւ յանդիմանութեամբ առնել կայսրն
՛ի մէջ Ճշմարտութեանն հաւատացելոց, և ՛ի մէջ ձախող ալանդային
արիանոսաց, և կամ որպէս աքանչելեացն տեսլեամբն սուրբն Բարսե-
ղիոս կոչեցեալ՛ ի պայքարն, և յաղթէր՝ այ զօրութեբն՝ ախոյենիցն առ
եպիսկոպոսաւն Եւսեբիւ. և թէ որպէս Եւսեբիոս վճարէր՛ ի բան-
դին. և կամ որպէս Բարսեղ արձակեալ լինէր ։

Ընդ այն ժամանակս անօրէնն կայսրն Վաղէս մե-
ծաւ բարկութեբ դատէր ընդդէմ Ճշմարտութենէն միշտ
կայն. այս ինքն որ միանգամ զհաւատն Քրիստի արժա-
նապէս հաւատացեալն՝ թէ Ճշմարիտ արդարև Որդի
այ էցէ, և ծնունդ՛ ի բնութենէն Հօրն այ ։ Ա՛յսու այ-

սորիկ կամէր Հալածանս տանջանս չարչարանս միա-
Հաղոյն [1] յարուցանել, և սաստիւ իշխանութիւ առ
ամենեսեան գրեալ և տալ հրամայն:

Ապա ՚ի մի վայր եղեալ՝ խորհեցան մոլեկան արիա-
նոսացն աղանդոյն վարդապետք. զի ասէին, Թող
ընդ նոսա պայքար յանդիմանութիւն հակառակութիւն
լիցի, արքայ. և որ կողմն յաղթեսցէ, յայտ լիցի. զի
մի՛ զնա բռնադատ, զրադատ ինչ երևեսցի յաղթու-
թիւնն: Այլ Թագաւորն Ա՛ղէս զայս լուեալ խըն-
դալից լինէր. ընտրեաց իւր՛ արս Ճարտարս և պատ-
րաստաբանս, զորս կարծէր դպիրս բանիբունս, որ ա-
նուանեալք էին չեպիսկոպոսունս աղանդոյն արիանո-
սաց: Այլ յղեաց առ եպիսկոպոսն Կեսարու Կապա-
բիոս. և ժամ խնդրէր ՚ի նոցանէ բանիցն քննութիւն,
զի ՚ի հանդէս ածիցէ առ նա զնովաւ, և որ Ճշմա-
րիտն իցէ՝ յայտնի երևեսցի: Ապա խրթև սահմանե-
ցաւ ժամադրութիւն, առեալ եպիսկոպոսն Կեսարիոս
զկղերն զնա՛, և ՚ի մեծ հոգս մտանէր. ուստի՛ կար-
ծիցես բանիցն պատասխանիս պատրաստել. զի և բա
նիւ ոչ ինչ կարի էր առաւել: Ապա հաստատեցաւ
այս բան ՚ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանեցուս-
ցեն զերանելին Կարսիլիոս, զի եկեսցէ նա: Ո՛վ
նա, ասէ, կարող է բանիւ զօրութիւնն. նա մեծ է,
ասեն, ՚ի նմա ընդհրքն խափանել զնենգութիւն դա-
ւաճանութիւն սատանայի. զի խորհի նա ՚ի վերայ սրբոյ
եկեղեցւոյ նորա, զոր ինքն արեամբն ստացաւ:

Գրեաց Թուղթ աղաչանաց եպիսկոպոսն Կեսա-
րիոս առ երիցապետան Կարսեղ, և մեծաւ պաղատա-
նօք որ ինչ վասն պատուիրն պաշտամանն. զի մի դիցէ
ինչ ՚ի մտի զառաջինն եղեալ բանիցն գժտութիւն. այլ
վասն զի առ ՚ոճ հաւատոց են [2] բանքն և քննութիւնքն,
վաղվաղակի փութասցի գալ առանց դանդաղանաց:
Երկին և կղերքն ՚ամ ձեռնադիրք աղաչանաց, զի մի
ինչ դանդաղեսցի գալ, այլ յարուցեալ փութանա-
կի երթիցէ: Այս արս հաւատարիմս պատուականս
յղեցին վասն վաղվաղ գալոյ:

Այս այն ինչ արքն յուղի անգամ, որ երթայինն

1 Յերիս օրինակս Ֆահաղոյնս: 2 Յամ օրինակս հաւասարեցին բանիւն:

ածել զնա անդր. արդ մինչ դեռ յուղի անգեալ երբ
թայլեն աբգն՝ էին ի Ճանապարհի, ըզն Յարսիլլիոս
ուր էրն՝ մինչ դեռ ի պաշտամանն ետն կայր, անկաւ
նմա քուն ծանր թանձրամած, և տեսանէր ի տես-
լեան, զի այգի մի էր մեծ և վայելուչ, քաղաքեր լի
պտղով. և խոզք երեք անգեալ էին յայգին, և մը-
տեալք ի ներքս ի յայգին՝ ապականէին զայգին և
բրէին։ Պատառէին բազում ունջս որթոց, արմատա-
քի խլէին և զտաշտն գլխովին և զբաղուկ ընդովին,
և մեծամեծ ապականուածս ի ներքս գործէին։ Նա
մատուցեալ էին այգեգործքն, չամայէին և ոչ կարէին
հանել զինասակար խոզն յայգւոյ անտի։ Այլա զա-
ղաղակ հարեալ գոչէին առ Յարսիլլիոս, և ասէին.
Նթէ ոչ դուս, Յարսիլլիոս, եկեսցես, ոչ ոք կարէ հա-
նել զխոզս յայգւոյ աստի, և ոչ մեծ ապականուածս
դադարեսցէ. աճապարեա եկ հասիր, զի տակաւին
աւասիկ ինասս մեծամեծս առնեն։ Այլա մատուցեալ
Յարսիլլիոս հանէր զինասակարս զխոզն յայգւոյ ան-
տի, և կազմէր զնախատածն։

Նա զարթեաւ աքանչելին Յարսեղ, և զարմացեալ
ընդ այն տեսիլն, էր մտախորհ. և խորհէր ընդ միտս
իւր վասն տեսլեանն՝ Թէ զինչ իցէ. և անդէն հա-
սեալք մատուցանէին նմա զթուղթն առաքեալքն ի
կեսարիայ քաղաքէ Նւսեբի եպիսկոպոսի։ Այլ երբ
րև ընթերցաւ, խնդայր և ուրախ լինէր. զի զի-
տաց Թէ յայ պատրաստեցաւ կոչել զնա Ջատագով
Ճշմարտութեն առ ի տալ պատասխանի։ Յարու-
ցեալ փութանակի գնաց ընդ հետ կոչելեացն թղթին.
և չոգաւ առ եպիսկոպոսն Նւսեբիոս։ Նա երբև խոր
հեցան ընդ միմեանս զարժանն, ասաց Յարսիլլիոս
ցեպիսկոպոսն Նւսեբիոս, զի խնդրեսցէ ի կայսերէ
իշխանութիւն՝ զոք յերիցանց տանել ընդ իւր։ Նա
մտանէր Նւսեբիոս առ կայսրն, խնդրէր ի նմանէ և
ասէր. Նրկուս աճեր լինէ ախոյեանս, Թուղ եկեսցէ
մի ոք ընդ իս յերիցանց իմոց։ Նա հարցանէր կայսրն
ցարիանոս եպիսկոպոսն, և յանձին կալան նոքա Նւ-
սեբի քանի[1] աճցէ ընկերս ընդ ինքեան, յորժամ գայ-
ցէ յատեանն։

1 Յերկս օրինակս պէ ւանի։

Ոսկ իբրև ժամ առնելին հասանէը , առեալ կայսերն զեպիսկոպոսն Կեսարիոս , և ընդ նմա երանելին Բասիլիոս երիցապետն , և երկու ախոյեանքն հակառակութենն՝ որք ի կողմանէն կուսէ սատանայի էին , այս ինքն արիանոսք չեպիսկոպոսքն , և մնին ի բանից ի քննութենէ հակառակութենէ վասն ահն մերոյ Յեսի Քրիսի Աստուծոյ այ , եթէ իցէ ծնունդ և որդի ի քննութենէ Հօր այ , եթէ ոչ : Ապա Հոգւով սրբով լցեալ լինէը երանելին Բարսիլիոս , որ կայր զինիա գոյն եպիսկոպոսին Կեսարի . և սա գրէր վկայուէս ի գրոց Հնգեարածոց ի սկզբանէ յօրինացն և ի մարգարէից և Հնգաբեղոց և յամ ածաւնչէ գրոց . յայտ առնէր և ցուցանէր , և զերկոսեան ախոյեանսն սատանայի կարկեալս ըմբռնեալս ամօթապարտեալս հանդերձ թագաւորաւն կացուցանէր :

Ապա նայեցաւ թագաւորն Վաղես ընդ եպիսկոպոսն , և ետես զի քրտնեալ էր , սկսանէր խօսել և ասէր . Հայդ զի է , զի զայդչափ հոսին ի քէն քրտունքդ . զի ի բանս Աշմարտութենէ քննութենէ վարձկանագրչաւդ յաղթեցեր : Նա պատասխանի Բասիլիոս թագաւորին և ասէր . Երկուս խոզս և մի էշ վարեալ այնչափ ընդ երկար Ճանապարհ , և դու ասես . Օ՛ի ես քրտնեալ այդչափ : Ապա զղջացաւ թագաւորն՝ թէ ընդէր զԲարսիլիոսն հրամայեցին օժանդակ բնաւ Կեսարի Թողուլ ի ներքս : Ապա յոտն կացեալ ամօթով արիանոսքն ասացին ցթագաւորն , թէ ընդէր այս աշխատուէ քննութենէ էն . այլ տիրա բար տուր հրաման . զի որք քո կամացդ ոչ լուիցեն , անկցին ի տագնապ նեղուէ : Նա լուծեալ զատեանն վճարեցաւ :

Նա ետ հրաման՝ զի զԿեսարիոս արկանել ի բանդ , և ընդ նմա զեպիսկոպոսն , և նեղութենէ ի վերայ ուղղահաւատ որթոդոքսաց քրիստոնէից հասուցանէր . և ետ հարկս ի վերայ եկեղեցեացն տուժիւք մեծաւ ծանրութենէ տուգանօք : Յայնժամ ի դառն կապանացն պատուհասէն մեռանէր եպիսկոպոսն Կեսարիոս ի ներքս ի բանդին : Ոսկ վասն սրբոյն Բարսեղի ասէին ժողովուրդքն Կեսարու . Նթէ ոչ արձակէք զդա ի բանդէդ , այրեմք զքաղաքս զնմ : Յոր-

*ժամ ամենեքեան միաձայն զայս աղաղակէին , Թո-
ղացոյց Թագաւորն , և արձակել հրամայէր զերանե-
լին Բարսիղիոս :*

ԳԼՈՒԽ Թ.

*Յաղագս Թէ որպէս արարին զնեն Բարսիղիոս եպիսկոպոս , կամ որ-
պէս եղեն յայ պքանչելիքն . կամ զնարդ հրամայեաց զնմ գանձան
որ ի քե հաւատացեալ էին Ժողովուրդն՝ Ժողովել , և նոքա խնդուե
բերէին և տային ի դուրս վասն կենարարին մեծին այ . և կամ զնար
դ խնդրէին ուխտիք և խնդրուածովք ի վերայ իւրաքանչիւր եպիս-
կոպոսաց :*

Այն Ժողովեցան ամ եպիսկոպոսք իշխանութեն կեսարու , և ընտրեցին զնեն Բարսիղիոս առնել արք-
եպիսկոպոս կեսարու : Այս իբրև Ժողովեալք էին
ի միահամուռ հաստարակ միաբան ամ եպիսկոպոսք ի
ձեռնադրել զսուրբն Բարսեղ , էջ աղաւնին յերկնից
և հանգեաւ ի վերայ նորա , որպէս յառաջնումն
յառնելն զեպիսկոպոսապետն Կերսես : Այս եղեն
զարմանալիք մեծապէս յաչս ամենեցուն . սկսան գո-
հանալ զմարդասիրէն Քէ , զի որ յանձն իւր յայտ-
նեաց զնշանս աստուածութեն , զայն և ոչ ի ծառայից
և ի սրբոցն արգելոյր : Այս եկաց Բարսեղ յաթոռ
կաթողիկոսութեն կեսարու :

Այլ Թագաւորն Պ աղէս նեղեր զքրիստոնէից Ժո-
ղովուրդն . Օ՞ի , ասէ , որ քրիստոնեայ անուն չիշխա-
նութե խմամ կայցէ , մի գոցի նորա արծաթ և ոս-
կի , զի տայցէ յարքունիս : Այս սկսան Ժողովել ի զօ-
րաց ի զօրավարաց և ի քաղաքաց քաղաքաց երդ-
մամբ , զի որ զայն անուն ունիցին , մի գոցի ոսկւոյ
կամ արծաթոյ զանակ առ ումեք . ապա եթէ առ
ումեք գոցի , մեռցի : Այպա ամ որ խնդրութե բերէին
տային ի դուրս վասն անուանն Քէ , կամեցեալք
խնդրութե կրել զպատուհաս : Այպա ստիպել սկսան

և գործակալքն Թագաւորին ժողովել արծաթ և ոս. կի ՚ի ժողովրդոցն կեսարացւոց քաղաքին . ապա քա. ջալերել սկսաւ զնոսա երանելին Կարսիլիոս, զի խըն. դամիտ սրտիւ բերցեն : Կսկսաւ ասել ցնոսա այսպէս՝ Թէ Կերկեք ՚ի ձեռն իմ, ես լինիմ այդմ երաշխա. ւոր . զի նոյն ինքն ՝ուր Կ՚ե միածին Կրդին ՝այ , վասն որոյ նա խրոխտացեալ է ՚ի մարտս , սատակեսցի ՚ի նմանէն : Կայլ դուք վասն ՝ոն ձերոյ զափշտակուԹէ ընչից ձերոց խնդուԹԷ ընկալարուք . զի ձեզ յերկինս պահի գանձն՝ որ ոչ անցանէ , այլ զի զայս գանձս ես տաց ձեզ դարձուցեալ ձեռն ՚ի ձեռն ՚ի հուպ ժամանակի : Կպա ՝ամ ժողովուրդք քաղաքին Կեսա. րու եկին բերին ՚ի մի վայր ժողովեցին որ մի անգամ ոսկի կամ արծաթ ուրուք գտաւ . լցին զեկեղեցի , և ածին զիշխանսն Թագաւորին զՀաւատարիմն . կըն. քեցին զդուրս եկեղեցոյն :

Յետ այսորիկ ետ հրաման Թագաւորն Կ՚աղէս կապել կրկին զեպիսկոպոսապետն Կարսեղ , արկա. նել ՚ի բանտ ՚ի նեղուԹԷ . սոյնպէս զ՚ամ եպիսկոպո. սունս ընդ ՝ամ քաղաքս : Կայլ ՝ամ ժողովուրդն յուխ տս և ՚ի խնդրուածս լինէին վասն քարկուԹԷն Հա. սելոյ , զի դադարեսցէ , և դարձ լիցի Ճշմարիտ Հո. վուացն յիւրաքանչիւր տեղի և յիւրաքանչիւր ժողո. վուրդս :

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԹԷ զնարդ կոչեաց կայսրն Կաղէս զսուիէստէան ՚ի յանդիմանուԹԷ ընդդէմ ՃշմարտուԹեն , և ԹԷ զնարդ եռես սուիէստէան զքանչելին . տեսանելով զքաջութԷ վկայիցն ՚ի նեղքս ՚ի վկայարանին . կամ զնարդ կայսրն Կաղէս սատակեցաւ նշանօքն եղելովք յայ . և կամ զնարդ խաղաղուԹԷ լինէր եկեղեցեացն ՝այ :

Կ՚ոյ ինդիր հրամայէր առնել Թագաւորն Կ՚աղէս , զի տեսցեն զտցեն այր մի Ճարտար , որ կարող իցէ դնել դրուի բանս դիմադարձուԹԷ ընդդէմ հա.

ւատող քրիստոնէութեանէ ։ Այլ պատմեցին նմա , զի էր այր մի սոփեստիս Ճարտար ՚ի քաղաքի միոջէ ։ Այս պառաւեաց կայսրն առ նա մագեստրիանոս , զի երթիցէն փութով և անզբաղապէս զայրն առ նա աճցեն . և առեալ աճէին փութապէս ։

Իբրև գնացեալ գայր օթևանս երկուս , դէպ եղև նոցա դիպել այլ քաղաքի միոջ . և արտաքոյ քաղաքին վկայանոց մի սուրբ տիկնոջն Ղուկղէ ։ Իբրև պատահեաց այնմ , էջ սոփեստիս , և իւր վանս ունէր ՚ի ներքս ՚ի վկայանոցի անդ . իսկ մագիստրիանոսքն ուներին վանս իւրեանց ՚ի քաղաքին ։ Այլ երբև կերաւ հաց սոփեստին , էարկ անկողնէն , և փակեաց զդուրս վկայանոցին . և ինքն ՚ի նիստ եղեալ ՚ի վերայ անկողնէն , կամէր լինել ՚ի կողմն . մինչ դեռ արթուն էր , աչօք բացօք տեսանէր , զի յանկարծ բացան դրունք վկայանոցին , և եղև ժողով մեծ բազմութեանէ վկայիցն , որ երևեցան մեծապէս փառօք ։ Այլ ելանէր ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Ղուկղէս զարդարեալ մեծապայծառ , զի նշոյլք որպէս ՚ի լուսոյ հատանէին ՚ի նմանէն . և առնէին միմեանց ողջոյն , և ասէր ցնոսա տիկինն Ղուկղ Թէ Խարի եկիք , սիրելիք բարեկամք , և վաստակաւորք Քրիստոսի ։ Ցուեալք միմեանց ողջոյն , արկեալք զիւրաքանչիւր զաթոռսն , նստէին կարգաւ ։ Այս սկսանէին սուրբքն խօսել , և ասէին . Այուրբքն ՚ետն , որ չև են հրաժարեալ յերկրէս , դեռ ևս աստէն ՚ի նեղուած են . են որք ՚ի կապանս են , են որք ՚ի փիւղակէս են , են որք յաքսորս , և են որք յայլ բռնութեանէ են ՚ի զրպարտութեան ՚ի Հարկս և ՚ի խոշտանգանս չարչարանաց ։ Այս մեք փութապէս ժողովեցաք , զի մի՛ անտեսութեամբ անփոյթ ա՛ բացցուք նախանձախնդիրք լինել ՚ետն հաւատացելոց ։ Այսն զի մանաւանդ բազում մշակք ՚ետն խափանեալ կան , և բազում անդք ՚ի դերև ելլեն , և բազում այգիք խոպանացան . պարտ է մեզ զխափանիչս մշակացն զայս խափանել , զի ՚ամ մշակ ՚ի գործ իւր կանխեսցէ ։ Այս քաջ մշակն Յասիլիոս յիւրմէ գործոյն կայր խափանեալ ։ Այդ եկայք առաքեսցուք ՚ի մէնջ երկուս , որք երթիցեն վճարիցեն ՚ի կենաց զչաբագործն Այ աղէս ։ Այս միում անուն էր Այարդիս ՚ի

նոցանէ , և միւսումն Յովհաննու . արձակէին զնո-
սա , դնէին ժամ և ասէին . Ի սոյն ժամ եկեսջիք
դուք և մեք : Եւ յարուցեալ գնացին և մեկնեցան :

Եւ զայս ամ լուեալ սուիետատէն , որ էր ի վկայա-
նոցին , և տեսեալ զայս տեսիլ աչօք բացօք , և կայր
զարմացեալ , և անքուն լինէր մինչև յառաւօտն ըզ-
ցայգն : Եւ ընդ այգս այգոյն եկին հասին մագիս-
տրիանոսքն , և ասեն ցսուիետատէն . Էրի գնասցուք
զձանապարհս : Եւ խօթապատճառս լինէր , և ոչ կա-
րէր ի տեղւոյն խաղալ : Իբրև սկսան նոքա ստիպել
զնա , իսկ նա թալանայր , հանէր զոգին , ոգի զոգւով
ածէր , և ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչև
յերեկոյ : Ապա իբրև երեկոյ եղև , թողին զնա մա-
գիստրիանոսքն ի վկայանոցին , և գնացին ի քաղաքն
ի վանս իւրեանց : Եւ սուիետատէն փակեր զդուրս
վկայանոցին , և ի կողմն եղեալ յիւրում տեղւոջն ,
յանկարծակի դարձեալ երևեցաւ նմա , զի բացան
դրունք վկայանոցին , եկին կուտեցան , և լի եղև վկայ-
անոցն նոքիւն վկայիւք : Եւ ելանէին միմեանց ընդ
առաջ մեծաւ ուրախութիւ , և տային միմեանց ող-
ջոյն . ապա արկանէին զաթոռս իւրաքանչիւր կար-
գաւ յօրինեալ բոլորէին կարգէին ի նստել : Ապա
դային սուրբքն Սարգիս և Յովհաննու երկոքեան ի
գործոյն՝ յոր առաքեալ էին , և մնանէին ի ժողովս
սրբոցն : Ապա հայեցան բազմութիւ ժողովոյ վկայիցն ,
եթէ Սրպէս յոր գործ երթեալ էիք՝ վձարեցէք :
Պատասխանի տուեալ ասէին . Թէ Այր խակ յորժամ
ի ձկնէ գնացաք , սպանաք զթշնամին Ձիմարտութեն
զայ աղէս . և ի սոյն ժամ առ ձեզ դարձեալ եկեալ
եմք առաւիկ առ ձեզ : Եւ յարուցեալ գոհանային
ամ բազմութիւ ժողովոյն զնոսին մերմ ընդ մեր .
և ինքեանք մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս : Եւ յա-
ջի մեծի լինէր սուիետատէն մինչև յայգ յառաւօտն :

Ապա իբրև այգ եղև , եկին մագիստրիանոսքն , ա-
սեն ցսուիետատէն . Էրի գնասցուք առ կայսրն : Նորա
պատասխանի տուեալ , ասէ . Կայսրն մեռաւ , արդ
մեք առ ո՞ երթիցուք : Եւ բազում վիճումն ի մէջ
եղեալ նոցա վասն այսր բանիս , և դրաւական եղեալ
ի մէջ վասն այսր բանիս մինչև յերիս աւուրս : Եթէ

ոչ, ասէ, Հարցին աւաղ վաճառք, և քաղաքք յա-
փշատակեսցին, եա՝ եթէ կայցէ նոյն կայսրն՝ գվեհա-
տեցայց, զի իշխեցի զայս ձառել: Այլ թող տայցէ
նմա մագիստրիանոսքն մինչև յերիս աւուրս. և յետ
երից աւուրցն ստուգեցաւ զրոյցն, զի մեռեալ էր
կայսրն:

Այսպա յետ այսորիկ արձակեցան ամ, որ միանգամ
ոք կայր ի պատիժս կամ յաքսորս. և դարձան ու-
րուք ուրուք որ միանգամ էինչք էին յափշտակեալք:
Սոյնպէս և զկեսարացւոցն հրաման ետուն տալ զիւ-
րաքանչիւր երաց. և կոչեցեալ սրբոյն Խարսղի, զի
զիւրաքանչիւր առցեն, և ոչ կամէին հուպ լինել: Օ՞ի
թէպէտ և ասէր ցնոսա Խարսեղ՝ եթէ ահաւասիկ
երաշխաւոր իմ Թափեցաւ ձեզ, զի ասացի, թէ և
տաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձեր: Այս ոչ էինչ կա-
մէին ունկնդիր լինել, այլ ասէին. Այդ ի գանձ ետն
երթիցէ, որ դատեցաւ զզաւաստոմոս մեր, և խըն-
դրեաց վրէժ ոք եկեղեցւոյ ուխտի իւրոյ: Այս ոչ ոք
ի կեսարացւոց անտի հպեցաւ յարծաթի իւր, և ոչ
մի ոք. բայց Թողին զայն ի գանձ եկեղեցւոյն: Այսպա
էառ զայն արքեպիսկոպոսն, արար աւազանս մկրտուե-
կնքոյ տալոյ. և կան հաստատեալ աւազանքն արծա-
թիք ի տուն լուսաւորանին մինչև ցայսօր ժամանակի:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս դարձի իշխանացն անդրէն յերկիրն Հայոց, որք երթեալք
էին առ կայսրն Վաղէս, զի եկին դարձան առ տէրն իւրեանց Ար-
շակ. և կամ սպանեալ Թագաւորին Արշակայ ընդ կայսրն,
սրչափ ինչ ձեռասեաց ասպատակաւ կողմանց իշխանութե Թագաւո-
րութեան Յունաց:

Այսոյիկ էն իշխանքն, որք չոգան ի Թագաւո-
րէն մեծ Արշակայ ի Հայոց աշխարհէն առ կայսրն
Յունաց առ Վաղէս: Ինքնին մեծ եպիսկոպոսա-

պետն Հայոց Ներսէս. և մեծ նահապետն Մամիկո-
նեան տոհմին, որում անուն Ա արդան կոչիւր. եղ-
բայր սա մեծի ստրատելատին Հայոց որում Ա ասակն
կոչէր. որ դայեակք և մսուցիչք էին Թագաւորին
Ա.րշակայ: Նա ընդ նմա Մեհենն նահապետն Ար-
տունեաց, և Մեհատ նահապետն Գնձևացեաց, և
Վարջոյլ Մաղխազ նահապետն Խոռխոռունեաց, և
Մուշկ նահապետն Ահատունեաց, և Վեմեռ նա-
հապետն Գնթունեաց, և Կիշկին նահապետն Բա-
գինից, և Սուրիկ նահապետն Երսիձորոյ, և Ա ըր-
կէն նահապետն Հաբուժենից. սոքա չորան դէսպա-
նութ'ի սէր միաբանութ'ե առ կայսրն Ա աղէս: Իսկ
Թագաւորն Ա աղէս արգել աքսորեաց զմեծ քահա-
նայապետն Ներսէս, և փոխանակ սորա արձակեաց
զեղբօրորդի զԹագաւորին Ա.րշակայ զԳնել և զՏի-
րիթ. և գանձս բազումս և անթիւս վասն զիւրոց հա-
ճել Թագաւորին Ա.րշակայ, 'ի ձեռս Ա արդանայ և
որք ընդ նմա էին, առաքեր: Նկէն հասին դէսպանքն
երթեալք 'ի կայսերէն առ Թագաւորն Հայոց մե-
ծաց Ա.րշակ. և մատուցանէին նմա զկնքուարտակն
կայսերն. և ընդ նմին գիր որոնջելոյ և ամբաստա-
նութ: Օ'ի գրեալ էր կայսրն զորբոյն Ներսիսէ առ
Թագաւորն Հայոց Ա.րշակ, Թէ նա սպան զորդին
իւր զիմաստր, վասն այսորիկ արգելաւ աստէն. զի մի
մեղադիր լինէ լինիցիս, ընկալ և զպատանեակսդ ա-
ռաջի զարձակեալսդ զերկոսեան զեղբօրորդիսդ Ա.ր-
շակայ, զԳնեղն, և զՏիրիթն: Ունկին և զանթիւ
կարասի գանձուցն առաջի Թագաւորին:

Իսկ Թագաւորն Ա.րշակ, իբրև լուաւ և ետես զայս
ամենայն, անչնորհ առներ զտալիսն և զբերելիսն կա-
րասոյն: 'Ի ցասումն մեծապէս բարկութեամբ ընդ
կայսերն նիւթեաց, եթէ զիա՞րդ իշխեաց արգելուլ
զայնպիսի այր զմեծ և զպատուական, զգնդապետ և զ-
վարդապետ զառաջնորդ աշխարհի և զԹագաւորութե
միոջ: Վ'արինք բազումք, ասէ, 'ի վերայ կայսերն,
և ձեր 'ի բերելդ. քարինք և մեր շատ կան 'ի Թափել
զատամունս նորա 'ի տալն, և ձեր 'ի բերելդ. զմեր
վատնարուես յո՛ տարայց. արդ այդմ երախտեացդ
ես դարձուցանեմ: Ցայր հրաման Ա ասակայ իւ-

բում զօրավարին զօր ժողովել, զգունդս վանդակել, ելանել հարկանել և աւար առնուլ զկողմանս Դամբաց ։ Իսկ զօրավարն սպարապետն Ասակ, վաղվաղակի զտուեալ հրամանս նորա կատարէր. զզօրս բազումն իբրև զերկերոյր և զվաթսունն հազարաց ի մի վայր կուտէր. հարկանէր աւար առնոյր զկողմանս Դամբաց մինչև ի քաղաքն յանկուրացւոց. զվեց ամ զմիմեանց զհետ աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց ։ Ցան աւարաւ բազմաւ և պէսպէս մեծութիւբ, բնութիւբ սաստիւ մեծաւ թշնամութիւբ ընդ կողմանս ընդ այնոսիկ ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս խաղայ եպիսկոպոսի բագրեւանդացւոց, զոր էր ձեռնադրեալ և Թողեալ էր Ներսէսի եպեզապահ յիւր տեղի. և թէ որպէս այր էր, և կամ որչափ նշանք կամ զօրութիւք որ ի նմանէն լինէին, կամ թէ որպէս կայր ի ճշմարտութեանն, և ոչ առնոյր ակն Թագաւորին մեծի Արշակայ, և ընդդիմանայր նմա ընդդէմ նորա վասն անօրէնութեանն գործոց նորա. կամ որպէս հնամ տանէր աղքատաց իբրև զեպիսկոպոսապետն Ներսէս ։

Այնմ այս խաղ բուն էր սա ի կարին գաւառի, ի գեղջէ Մարագայ. ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի, զառաջեաւ իւրով զսա էր մուծեալ ։ Իւր իբրև ի միտս աջողակս եբեր, և յառաջադէմ եղև ի հաւատս, և հաւատարիմ յամ գործս գտաւ, իսկ իբրև յայնմ և առաւել ի պաշտօնն՝ զոր ունէր զսէրն ընդ եկեղեցին այ, ապա աղքատաց և տեսչութիւն ի սրբոյն Ներսէսէ սմա հաւատացաւ. իսկ յայնմ և առաւել զբարեխնամութիւն ցուցանէր ։

Այսպա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեգնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս խաղ յեպիսկոպոսուն Բագրեւանդայ և Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ եռե-

ղապահ, և գնաց։ Իսկ աշխարհ ամ Հայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք գաւառատեարք նահապետք մեծազգեացք և ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոցն, ի սուգ տխրութեանէ ընկղմեալ էին վասն իւրեանց հօտապետ գլխաւորին, զի հեռացաւ ի նոցանէ։ Իսկ զբն Խադ եպիսկոպոսն առ հասարակ աշխարհին տայր հրամանն ի պահս և յաղօթս մտանել և ի խնդրուածս, զի դարձ լիցի սրբոյն Ներսէսի։ Նա զամ ժամանակս, որչափ և արգելաւ նա անդ, համակ խնդրէին պահօք ժողովուրդքն. և ամի իսկ Խադն առաջնորդեր նոցա, ոչ ինչ պակաս քան զիւրեանց բուն զհովուապետն Ներսէս, մինչև ի գալուստն նորա. մինչև կատարեաց ամ զաշխարհն խնդրուածս, և դարձաւ բզն Ներսէս ի տեղի իւր։

Ոչ այնու ժամանակաւ Աբշակ արքայ Հայոց ոչ ինչ կարի ի ձանձրացաւ ամ գնացեալ լինելոյ. զի որչափ ի մատաղութենէն հասակին ըստ ամենայն իմաստութենէն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութենէն ի լկութենէ ի շաղաշատութենէ հատաւ[1]. զոր ամ հովիւն Խադ բազում անգամ յանդիմանեալ կշտամբէր, ոչ ինչ անսացեալ լինէր։ Ոչ այնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառի։ Նա ետ հրաման ընդամ գաւառս իշխանութենէ իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզ ընդ ամ տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ. և ամ կողմանս գաւառաց իւրոյ լի առնէր հրամանաւն արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ ձեռնեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեսցին։ Նթէ արիւնահան ոք իցէ, կամ ձեռս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, դատ և իրաւունք մի լիցին։ Իսկ եթէ ոք ումեք ինչ

1 Ցամ օրինակս հատաւ։

պատիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առնոյց դատի և իրաւանց կալցին, և՚ի դուրս տարցեն։

Իբրև եղ Հրաման յարքայէն, ժողովեցան այնու հետեւ յայն տեղի ամ գողք և աւազակք, արհնաւհանք, սպանողք, սուտք և մարդեղլդք, ջնաւսակարք, գանձահատք, զրկողք, ստադատք, զրախօսք, դերփողք, յափշտակողք, ժլատք։ Յազում ջնաւս ջնաւս առնէին, և անդր անկանէին. բազում կանայք զարս Թողուին, և անդր անկանէին. բազում արք զիւրեանց կանայս Թողուին, և զայլոց կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդաւուք զաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին. գերփէին աւերէին զերկիրն ամ։ Օ՚ի Թէպէտ և կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, և իրաւունք ումեք յարքունեաւտ ոչ էլանէին։ Ա՚ան այսորիկ ամ մարդ հառաչելով վայէին, և ասէին ՚ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ այմ օրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով Թէ իրաւունք մեռան, և վասն այսորիկ ոչ դատանէին. այլ Թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր չանայաք խնդրեաք դատանէաք։

Ի՚սկ տեղին աւանանայր, քաղաքանայր. մեծացաւ բազմացաւ և էլից զՀովհան ամ։ Ի՚պա տայր Հրամանն արքային Ա՚րշակ գնել անուն դաստակերտին Յիւրալից անունն Ա՚րշակաւան. և շինեցին և՚ս անդ ապա բանս արքունի։ Ա՚յլ յայնմ հետէ ոչ ինչ երկնչէին՚ի ձեռն ամենևին. և ամ մարդ զրկեալ էր իրօքն այնքիւք, և բազմաց կառաչ աղաղակի տրտնջելոյն յաձախեալ բազմանայր։ Ա՚ան որոյ բազում անգամ ընդդիմանայր նմա և յանդիմանէր զձեռն Ի՚սդ եպիս կոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զինա, Թէ էկ ուղղեա սեղան յեկեղեցւոջն յաւանն Ա՚րշակաւանն։ Ի՚սկ նա բազում անգամ կշտամբեր և յանդիմանէր զԹագաւորն Ա՚րշակ և զամ մեծամեծս և զիշխանս։ Ա՚հայց ես, ասէ, ետեղապահ եմ. և ոչ ինչ առանց այսորիկ, որ Թողն զիս Հայրն, ունիմ իշխանութիւն գործել ինչ։ Ա՚պա կամեցեալ Ա՚րշակ Թագաւորն պատուաւ և ագահութիւբ կարասոյն մեքե-

նայիւ խաբէլ զնոր եպիսկոպոսն Կաղ, բազում ոս-
կի և բազում գանձս արծաթոյ, և բազում նժոյգս
զարքունական ձիոյ՝ արքունի օձառովք, ոսկիվարա-
ւանդ ապրդմոնի, տայր նմա. պատրէլ Հաձէլ զիտս
նորա, յինքն յանգուցանել: Իսկ նա զկարասին, զոր
առնոյր յարքայէն, յանդիման նորա աղքատաց բաշ-
խէր. և զյանդիմանուԹիւն ոչ ինչ Թուլացուցանէր,
մինչև հրամանն տայր Հալածել զեպիսկոպոսն Կաղ
'ի բանակէ անտի:

Իսկ նա առ չքնել ընդ աշխարհն, կարդել և խրա-
տել, ուսուցանել և դարմանել զաղքատսն, որպէս
էր նմա յանձն արարեալ սրբոյն Կերսէհ, և իւր
գնացեալ: Բազում նշանք և արուեստք և զօրուԹիք
բժշկուԹիւնք հիւանդաց լինէին 'ի ձեռս նորա. բա-
զում յոյժ առնէր սքանչելիս մեծամեծս: Բայց իբ-
րև պաշտէր զաղքատսն, և սպառէր Թափէր զամ-
յուրանս և զնորամանս և զմառանս գինւոյն, և զկա-
բասս ամ մառանացն տայր բաշխել աղքատացն, էր
Թայր յայլում աւուր տեսանէր լցեալ լինքնին իբրև
'ի հրամանէ այ. և դարձեալ օր ըստ օրէ մատակարա-
րէր աղքատացն, և այնմ ատեպ ատեպ լցեալ լինէր:

Կ.յապխի սքանչելիք մեծամեծք լինէին 'ի ձեռն
առնս այսորիկ. էր սա զարմանալի անուանի և հոյա-
կապ 'ի մէջ ամ Հայոց. չքնէր խրատէր և ուսուցա-
նէր զեկեղեցիս Հայոց ընդ ամ տեղիս իբրև զիւր
վարդապետն զԿերսէս: Բայց 'ի ժամանակեան միոջ
եկին գողք, և գողացան զեզինս եկեղեցւոյն սրբոյ
զԿաղայ եպիսկոպոսին, առին և գնացին: Իսկ 'ի
միում աւուր աչք կուրացեալ եղեն գողոցն, և ին-
քեանք յանիմաստս առ խարխափս եկին ածին 'ի
դուրս սրբոյն Կաղայ զամ եզինսն: Իսկ ինքն սուրբն
Կաղ եղեալ տեսանէր զնոսա, և գոհանայր զամէն՝
որ այնչափ վերակացու և այցելու եղև հաւատացե-
լոց իւրոց: Կայր յաղօԹս եպիսկոպոսն Կաղ, և բը-
ժշկէր զաչս գողոցն. և հրամայն տայր լուանալ զանձն
նոցա, և գներ ձաշ առաջի նոցա, և քալ ուրախ առ-
ներ զնոսա մեծապէս: Կպա օրհներ զնոսա, և տայր
նոցա զեզինսն՝ զոր իւրեանցն էր գողացեալ, և ար-
ձակեր զնոսա զիւրեանց Ճանապարհն. և գնացին:

Ա.յսպէս բազում համբերութիւնս յայմ գործս իւր ցուցանէր. և բազում առնէր նշանս և զսքանչելիս։ Այլ էին նորա երկու դատեղք. և ետ զմինն Ա.յրկոյ ուրեմն կէին, և զմինի աներոյն իւր՝ նա կալաւ զաթոռն Խաղայ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս որ ինչ իբրև դարձաւ սուրբ կաթուղիկոսն Կերսէս յերկրէն Յունաց, թէ որպէս կշտամբեր զաբքայն. կամ որպէս լինէին նշանք ահագինք՝ ի վերայ աւանին Արշակաւանի, և սատակեցան առ հասա- րակ յանկարծօրէն ամ բազմաւ մարդկան՝ որք յայնմ տեղւոջ էին։

Այլ իբրև սատակեցաւ կայսրն, դարձան ամ հո- վիւքն եպիսկոպոսքն՝ որք աքսորեալք էին, և կեցեալք էին յիւրաքանչիւր քաղաքս։ Յայնժամ դարձաւ և նա՝ որ կաթուղիկոսն Կերսէս յանապատ՝ ի կղզւոյ ան- դի, ուր էր զնոսա արգելեալ. և համաշխարհի էին ինդրուածք. միաբանգամ աշխարհի ընդհեցաւ։ Այր- րև եկին յաշխարհն Հայոց, ընդ առաջ երթային նմա՝ ի գաւառաց գաւառաց եպիսկոպոսք համդերձ իւրաքանչիւր ժողովրդովք, և նախարարք ամ և ամ գաւառակալք։ Այս բերէին առաջի նորա զիւրաքան- չիւր հիւանդս, և բժշկէր զնոսա. ուր և բազում խակ և կարի յաճախեր գոհութիւն՝ ի փառս այ, և ամ մարդիկն առ բազում գութ հովուապետին՝ համա- րէին զանձինս իւրեանց թէ ինքեանք իբրև զնոսա՝ ի գերութէ դարձեալ էցեն։

Այս առնէին ուրախասէր բազում հոգևորս մեծաւ ցնծութիւնք։ Համաշխարհ ամ ոք իւրաքանչիւր ետն այ զեղեալ ուխտս կատարէին, որ՝ ի վերայ հոգևոր գանձին հայրապետին՝ որ առաւ նոցա. և կատարեաց նոցա զինդրուածս նոցա, և զորբութէն արտառուսէ- անձանցն սրտակեղ ցաւոցն սրտաբեկութէն, միաբան- գամ սիրով գթով վարդապետութէ հոգևոր հարցն

մխիթարեաց զամենեսեան ։ Ա.մենեքեան ՚ի գժնէ տրամուԹենէն զուարԹացեալք , յուրախուԹե դառնային ։ Ասքն իսկ Թագաւորն Ա.ըշակ երԹալոյ ընդառաջ նորա , մինչև ՚ի կողմանս Ասքասաերոյն , և անդի մեծաւ զուարԹուԹե դարձան ։ Այս սկսան նորոգել և պայծառանալ վարք աշխարհի և կարգացն և օրինացն եկեղեցեացն ։

Ա.յլ իբրև եկն հայրապետն Ագերսէս ՚ի Հայս , ՚ի վերայ հասանէր խուռամ եռեռալապահճին սրբոյն Ստեփանոսի , զի էր կացեալ ՚ի ձմեռնատուԹե և յուղղուԹե , և զնացեալ էր զձմեռնայարկս ՚ին ՚այ , և ոչ էր Թիւրեալ յաջ կամ յահեակ , բայցուն գոհուԹեամ մատուցանէր ՚այ , զի զՍատ զհոգևոր որդեակն իւր ետիտ ըստ կամացն՝ որպէս ինքն կամէր ։ զնա անձկով տեսանէր ։ Ա.յլ յորժամ լսէր ՚ի Ստեփանէ զամօրինուԹենէն չարուԹենն ծուռ գնացիցն Թագաւորին , տրտմէր լայր ողբայր և կոծէր մեծաձաձ հեծեծանօք ։ մանաւանդ վասն քաղաքին Ա.ըշակաւանին , զի անօրէնուԹէ և չարուԹէ և յափշտակուԹէ չինեցաւ բազում մեղօք ։

Ա.պա ՚ի հայրապետն Ագերսէս մտանէր առ Թագաւորն , խօսէր ընդ նմա և ասէր՝ եԹէ ընդէր մոռացար զՔո , և Թողեր զպատուիրանս նորա ։ զարարիչն՝ որ զամ յոչընչէ արար , որ հայրն է որբոց և դատաւոր այրեաց , որ վասն մեր էջ յաղքատուԹիս , որ ոչ Թողու զաղքատս ՚ի ձեռանէ , այլ իւրով մարդասիրուԹեն բուծանէ զնոսա , այլ ՚ած դատաւոր արդար և հզօր և երկայնամիտ՝ որ ամենայն տառապեալց ունկնդիր է , և զարհամարհանս ուրուք ՚ի յանձն ոչ առնու ։ Այս զիա՞րդ կամ ՚ի՞նդ դու ըմբռնեցար արհամարհել զնորա զպատուիրանն ։ ո՞չ հայրն քո վասն այսր ամբարշտուԹե ՚ի կորուստ մատնեցաւ ։ Ա.յդ դու տակաւին չյիշեցեր զնա , որ ոչն յիշեաց զմեղս հօրն քո , և ետ քեզ զտեղի ունել , այս ինքն զաԹոռ և զԹագ հօրն քո ։ և սկսար անօրինել առաջի ՚ին ՚այ քո , և զամբարշտուԹիս և զանօրէնուԹես և զանիրաւուԹիս կարի ՚ի նմանուԹե սոդոմացւոցն՝ պարծանօք յայտնապէս պատմել ։ Այս երկիւղ առ հասարակ լան և վայեն զլկուԹեցն զյափշտակուԹեցն , որովք

դու կամեցար մեծանալ. և ոչ յապէցոյց զքեզ մեծ և բազում թագաւորութեցն յղփութիւնն, զոր ետն քեզ Տէր Աստուած։

Եւ զի լուր լինիմ զոր ասեմն քեզ, և արա զնա՝ զի մարթասցես շահել զանձն քո, և ապրեցուցանել զքեզ ի բարկութենէն անտի ամենայն, և մի՛ թշուառական աչխարհս Հայոց յաղագս քո կորիցէ։ Եւ լես տեսի տեսիլ, զի կորուստ և քանդումն յուզեալ խաղացեալ գայ ի վերայ կորստական աչխարհիս Հայոց այսօրիկ։ Եւ զի հրաման տուր՝ ի բաց քակել զտեղին զայն, և ցրուեա զմարդիկն՝ զոր ժողովեցեր, զի երթիցեն ցրուեսցին սիրեսցին յիւրաքանչիւր տեղիս, և երթիցեն տացեն իրաւունս ումեմն զինչ և պարտիցին. զի մի՛ դու ի խորս չարեաց բարկութենէն անգանելիցես կորիցես։ Եւ վասն մեղացն՝ զոր գործեցեր, հրաման տացուք ամենայն աչխարհի՝ ընդ քո ի պահս և ի խնդրուածս լինել, և մեք հանդերձ քեւ յապաշխարութիւն մտցուք. ո՛վ գիտէ, Թողոյ Տէր զքո զայդ զանհնարին զմեղսդ գործեալ։ Եւ թէ տեղւոյն էինչ կարի այդչափ ցանկացեալ ես, ես ինքն էնձէն զնա արդարութիւ շինեցից, և շէն կալայց առաջի քո։

Եւ ասէ Թագաւորն ծաղը առնէր զբանսն կաթողիկոսին, և մէթայր զնորա զասացեալսն։ Եւ նա միւսանգամ բարկացեալ, կրկնեալ ասէ. Գիտես, ո՛վ Թագաւոր. վասն այսր ամենայն ասացեալ է կանխասացութենէն այ բերանովք մարգարէիցն, եթէ "Վա՜յ որ շինէ զտուն իւր՝ և ոչ արդարութիւ, և զվերնայարկս իւր՝ և ոչ իրաւամբք"։ եթէ "Յառակ առցէ ողբքն, և ասասցեն՝ եթէ վայ որ ագահեսցէ զաւգահութիւն անձին իւրում, որ ոչ է իւր. զի եթէ տունք գեղեցիկք իցեն և մեծամեծք իցեն, սակայն յաւերդարձցին. զի մի՛ ոք քնակիցէ ի նոսա մարդ, այլ Ձարակ հօտից լիցի, և դաշտքն գազանաց և որջք գազանաց և որջք բորենից և Ձագարաց և առղուեսուց, բոյն խորդոց և ագռաւուց, և անդք սահմանակցաց. վասն այդորիկ աւերեսցին գործք ձեռաց քոց և մի՛ շինեսցին, և միանգամայն սատակեսցին Ամ անօրինքն քնակեալքն ի նմա. և եղիցին դաշտքն եղանց և Ձարակք ցուց, և աղուհաք մուտ և

ելը խաղացեն յարկս նոցին . և մի՛ շինեսցին , և մի՛ ևս բնակեսցեն , մինչև ցյաւիտեան ,, :

Եւ զայս ամ խօսեցաւ Հայրապետն Ներսէս , և գնացեալ ի Թագաւորէն եղեալ շրջիկը ընդ գաւառս գաւառս աշակերտութեն՝ ուղղել կարգել և հաստատել զեկեղեցիսն յամ գաւառս Հայոց : Եւ յետ երից աւուրց անցանելոյ բանիցն ասացելոց ի վերայ , որ խօսեցեալ եղեն ի բերանոյն երանելոյն Ներսէսի , մանեաց որ զգեւղաքաղաքն զԱրշակաւանն ի ձեռս Հարուածոյն : Եւ սկսաւ հատանել զոր չարակեղն ինն կոչեն , իսկ կեսքն ժանդ անուանեն . և լանկը ի վերայ մարդկանն և անասնոցն : Ել աւելի եղև Հարուածոյն ի վերայ նոցա քան զերիս աւուրս յերկարեցաւ , զի անմարդեցաւ . քան զքսան հազարք սատակեցան երդք մարդկան , ոչ ինոց ի նոցանէ և ոչ մի . զի առ հասարակ սատակեցան կոտորեցան յանկարծօրէն քանդեցան . զի միահաղոյն եկն սատակումն ի վերայ նոցա :

Եւ յետ այսորիկ լինքնին Թագաւորն ելանէր ի լինդիր Հայրապետին Ներսէսի . և գտեալ խնդրէր ի նմանէ , զի մատուսցէ ազօթս վասն նորա , զի մի դուցէ և նա սատակեսցի , քանզի կարի զարհուրեալ էր : Ապա խօսել սկսանէր եպիսկոպոսապետն Ներսէս ընդ Թագաւորին , և ասէր . Օ՛ի այժմ յաշխարհիս յայսմիկ , վասն զի արդարք և մեղաւորք զոյգ հասարակ խառն են , վասն արդարոցն խնայելին մեղաւորք առ ժամանակ մի և ապրին , և յերկարին յաշխարհիս վասն նոցա կենացն և նոքա ի պատճառս նոցա : Օ՛ի որոմն սերմանեալ Թշնամւոյն ի վերայ ցորենոյն սերմանն ցորենոյն , ընդ նմին զոյգ հասակ բուսեալ են . խնայելին վասն ցորենոյն սրբութեն և բոյս աղտեղութեն որոմին . զի մի դուցէ մինչ զորոմին քաղահան արարեալ խլիցեն , խլեցի ընդ նմա և ցորեանն : Ել ասն այնորիկ առ ժամանակս վայելէին ի դարմանոյ ցորենոյն և որոմն ընդ նմին ի ցօղս և յանձրևս և յօդս , և ի ջերմութես խարակեալ և ի հեշտ արևս արեգականն : Ասպէս այս լինի մինչև ի ժամանակս հնձոց , մինչև եկեսցէ ժամանակն յորժամ հնձեսցի ցորեան արմտեացն . զայն

՚ի շահեմարանս արքայութեանն ժողովեսցեն, և զորոմն յայրուձին յաւիտենական հրոյն. որ է ինքն հուսկ եղեալ կատարած ժամանակաց, յորժամ Որդին այ եկեալ հասանիցէ, և տացէ հրաման երկնաւոր մշակացն ընդ նմա լինելոց՝ ի վերուստ՝ ի գերեզմանացն հնձել զամ ննջեցեալսն յարուցեալս։

Ա.ըդ այնուհետև ընդդուքեն առնիցէ. զարդարսն նման ցորենոյ ընդ ինքեան յարքայութեանն իւր ընդունիցէ, և զմեղաւորսն որոման նմանեալս՝ յանշէջ՝ ի յաւիտենական՝ ի հուրն հրամայիցէ արկանել։ Ա.ըդ այժմ ժամանակն հնձոց չև և այ էր, դու կանուխ քա- զահան որոմանն՝ ի ցորենոյն արարեր, և կանուխ զը- րոմնն՝ ի մի վայր առանց ցորենոյն ժողովեցեր. վասն այդորիկ յայնժամ կանխեաց հուրն, անխնայ յարձա- կեցաւ այրել, զամ որոմնն՝ ի մի վայր ժողովեալս՝ ի միում վայրի գտեալս միահաղոյն վաղձանեաց։ Ա.յլ այր դու, տես զանձն քո, զի մի և դու կորիցես, և աշխարհս վասն քո։ Իսկ Թադէաւոն՝ ի դուձն հա- րեալ, մեծաւ աղաչանօք և բազում աղօթիւերօք ա- զատէր Թադէաւոն՝ հաշտել ընդ նմա. և եղ ուխտ, զի այլ ոչ և երբէք անցցէ զբանիւք նորա։

Գ Լ Ո Ւ Խ ԺԴ.

Յաղագս Հայր մարդպետին, յորժամ եկն էջ՝ ի գաւառն Ցարօնոյ՝ եթէ զնարդ եկն և՝ ի տեղի ազօթիցն Աշխէշատ, կամ զնարդ գա- տապարտեալ գնաց անտի յիւրոյ բերանոյն՝ ի խօսիցն. կամ զնարդ անկաւ, մահուն պարտ եղեալ, ատտակեցաւ՝ ի Ըշտասպայ ար- ծրունեաց։

Այ էր մարդպետն Հայր այր չար և ժանտաբա- րոյիւք անօրէն և անիրաւ քան զառաջինն Հայր անուն մարդպետան։ Այս կոտորեաց զամ ազգս նախարա- րսն՝ ի ժամանակս Թադէաւորութեանն Տիրանայ ար- քայի. և սոյնպէս առ Թադէաւորութեամբն Ա.շտակայ՝

ևս չար քան զառաջինն գործել չար առ Աստ մարդ։ Արդ ելաներ սա շրջեր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն կղ Հայր մարդպետ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գեղջն տեսանել։

Ոյսու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջեր ընդ իւր ձեռական իշխանութեամն. զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեամբ ունէին իբրև սեպհական ի քմէ, առանձին առաջնոյդի նոցա էր կարգեալ։ Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին Արտայրատ, Դարանաղէ, Աղկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծովք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք։ Այն կղ և Հայրն մարդպետ զիւրով իշխանութեամբն շրջել. ապա եկն և ցե կաթողիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր զեկեղեցին շինեալ ի Վրիդորէ, և զվկայարանն սրբոցն զվկայիցն. և անդ պիշատակս սրբոցն կատարէր։ Այսպ դէպ եղև անցանել Հայր մարդպետին առ տեղաքն, ցանկացաւ ելանել ի ցե տեղիսն Աշտիշատու կալ յաղօթս, և առնուլ ողջոյն ի սրբոյ եպիսկոպոսապետին Ներսէսէ։ Այսպ երբև կային յաղօթս, ետուն ողջոյն. Հրաման տայր ցե Հայրապետն Ներսէս, եկեղցին Ճաշ պատրաստել։ Եւ մինչ դեռ նոքա պատրաստէին ինչ ըստ նմա արժանի աւագօրէն սպաս, նա ելանէր յեպիսկոպոսական կայենէն յապարանիցն մինչև ի վկայարանս սրբոցն. ի մեծ և ի գեղեցիկ հրապարակին զերթևեկս առեալ շրջեր, զՃեմս առեալ։ Այսպ տեսանէր զգեղեցկութիւն վայրացն, զնիստ շքեղուքն ի բարձաւանդակ տեղեացն և զնայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին. և չարակնեաց։

Այսպ եմուտ բազմեցաւ յոտեղ և լմնել։ Ոսկ յորժամ արբեցաւ սխաղակեցաւ, սկսաւ նեղքինին խօսել բանս հպարտս և ամբարտաւանս յարբեալեաց՝ դնէր թշնամանս Տրդատայ արքայի, ի մեռեալս և կենդանեացն ի կեանս, ազգի և տակի և տոհմի արշակունեաց թագաւորացն Հայոց։ Օ խնդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան սըրեալ է, և ոչ արանց։ Եւ ցե տեղեաքն քամահեալ արհամարհէր, և ասէր՝ եթե զայս տեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի։

Յե թէ ես Հայր մարդպետ կենդանի իցեմ և առ Թագաւորաւն Հասից , ասէ , որ ինչ ասա իցէ , զայն ի բաց փոխեցիցես . և որ ասա իցեն , ասէ , ինձոսա հանից , և զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցից ։

Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր , և ասէ՝ եթէ ուր մեր Յե Ա՛Ե , որ ընտրեաց նախ զայս տեղի՝ դնել զանուն իւր ասա , որոյ անունն առ Հասարակ ընդ ամ տեղիս փառաւորեալ է Հարքն և Հոգին Հանդերձ , որ պատուիրեաց մի ամենևին յայլոց ինչ ակն դնել կամ ցանգալ . իսկ որք ժլատեալք ի նորա նուէրսն բերեն աչս , և այնմ ցանկան , վասն այսորիկ նա մի հասցէ առ այն՝ որով սպառնացաւն , այլ խափան լինի իւր յառաջնմա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց ։ Այսպ գնայր մարզպետն Հայր ի՛նձ տեղեացն , և էջ յայն գետոյն Հոսանացն Այփրատու , Հովհաննն Թանձրախուռնն անտառին , ի գետախառնուածն երկուց գետոցն , ի Թառնէթ խարձիցն մամխեացն , որ ի տեղւոջն ի Հնոցն ին շինած քաղաք՝ զոր շինեալ Մանատրուկ արքայի , որում անուն տեղւոյն Ա՛ծուրք կոչի ։

Ա՛րդ երբև եկն եՀաս յայն տեղի , ապա յուղեցաւ դատաստան բարկութե՛ն ի Հնէ ի վերայ անօրէնն Հայրի , և իւրոց գործոցն և բանիցն խօսելոյ ։ Այսպ մտանեցաւ նա ի ձեռս առն միոյ , որոյ անուն Հաւասպ կոչէր , մեացորդ ազգին արծրունեաց ։ Ա՛նհզեռ նստեր նա ի կառս , և երթայր զմանապարհն , եկն Հաւասպն ։ Սկսեալ պատմել մարդպետին սուտ ի քմոյ իւրոց , և ասէ . Ա՛րքայ մի տեսի սպիտակ երթալ զձիւն ։ Յե հրապուրեաց զմարդպետն իջանել ի կառաց անտի , և հեծանել ի նժոյգի . և մտեալ պատակէին մայրեացն ։ Իսկ երթալ ընդ թաւթամ անկանէին , զկնի եղեալ սակաւ մի Հաւասպն յետսագոյն մեացեալ , յետոյ յառաջ նետիւ Հարկաներ զկնէ ներքինւոյն Հայրի . անդէն թափ Հանեալ գնեան , և անդ յերկիր անգեալ սատակեցաւ ։ Յե առն այ ասացեալքն Հուսկ ընդ Հուսկ վաղվաղակի կատարեցաւ . զի ամենևին բան ի գետին ոչ անկանէր առն այ ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս անօրէնութեան Թադաւորին Ագրիպայ, թէ որպէս եսաւ զորդի եղբօր իւրոյ, որում անուն գնէր, ի քաւութենէ չարութենէն Տիրիթայ. կամ որպէս յանդիմանեալ եղև յառնէն ոչ ի ներսիսէ, կամ որպէս զմեռաւ ևս եղբօրորդին Տիրիթ. կամ որպէս զկինն գնեալ արար իւր կին. կամ որպէս էած իւր կին ի Յունաց զՈլիմպին, կամ որպէս երեցն Մրջևնիին մահուան դեղովն զնա ընդ օրէնան սպան. նաևքն՝ խորհրդով Փառանձեմայ։

Ագրիպա ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Ագրիպայ որումն, մի ի նախարարացն նահապետին Աբենեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ կարի անուանեալ էր գեղեցկութիւք և պարկեշտութիւ։ Այսպա գնել պատանեական եղբօրորդին արքային էառ զնա ի կնութիւն իւր։ Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր և հնչէր։ Այսպա առ համբաւ յանկուցեալ անուանն տրփեալ լինէր մին ևս հօր եղբօրորդին գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր։ Ոմն որոյ անգանէր ի գաղտագողանս, մինչ զի ըզնոսն իւր տեսանել կարասցէ։ Եւ յորժամ կարացին տեսլեանն՝ որում ցանգայր, այնուհետև հնարս խընդրէր առն կնոջն կորստեան, ո գիտէ՝ զինի նորա նմա հնար լինի յափշտակել։

Այսպա Տիրիթն ի հնարս նենգութիւն մտանէր, և բազում վարձիւք իւր օգնականս և սատարս, որով զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ։ Եւ քսիս ստութիւն զգնելոյն նենգութիւն առ Թագաւորն Ագրիպ մատուցանէր՝ թէ գնել Թագաւորել կամի, և զքեզ սպանանել. և ամ մեծամեծք և նախարարք և աղատք սիրեն զգնել, և ամ աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առաւել քան զքո։ Ագրիպ, ասեն, գիտեա և տես, արքայ, զինչ գործեսցես. որպէս և կամիս, զիարդ մարթասցիս ապրել։ Եւ այսպիսի բանիւք գրգռէին զգ-

Թադաւորն Ա.ըշակ, մինչև հաստատէին ՚ի միտս Թագաւորին զնուրեանց ասացեալսն։

Այլա ոխացեալ Թագաւորն ընդ պատանեկին Վռնեղ, և բազում անգամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս։ Այլա զնաւատարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ Թագաւորն Ա.ըշակ, կոչել առ ինքն զպատանեակն Վռնեղ և սպանանել։ Այլա առաքէր զվարդան զեղբայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութիւք կոչել կա բացէ, զի մի խորհուրդն յայտնեսցի. գուցէ փախիցէ և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչև ՚ի տեղին մահուն։ Այս էր բանակ Թագաւորին ՚ի Շահապիվանի ՚ի բուն բանակի տեղւոյն Ա.ըշակունեացն ՚ի նեղջոյ Այրնեացն և ՚ի վերայ առպարիսացն։ Այս առաքեալ զվարդանն, զմեծ նահապետն յաղթական Ա.ըշակայ, ՚ելին եգիտ զպատանեակն Վռնեղ ՚ի մօտաւոր տեղւոջն, այս ինքն ՚ի գեւղին Ա.ռաւիւտոց անուանեալ։ Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Վռնեղ հանդերձ իւրով կնաւն և զրամքն հաւանեցուցանէր երթալ հասանել ՚ի բանակն արքունի. իբրև այն թէ ՚ի մեծագոյն ինչ գնաս կոչիցէ Թագաւորն, բազում խնդանօք տարեալ հասուցանէր՝ եթէ Թագաւորն Ա.ըշակ ոչ կամեցեալ զտնօն նահատարդաց առանց քո անցուցանել, զի հաձեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ ինչ գտաւ ՚ի քեզ չարութիւն. և եհաս ինքն ՚ի վերայ, զի զուր այժմ առեր զքեզ՝ որ ՚ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես։

Այլա ջուեաց ամ կազմուելքն իւրով Վռնեղ, երթեալ հասանէր ՚ի բանակն արքունի զգիշերն ամ բազում փութով տաղնապաւ։ Ո՛ւմն զի վաղիւն հասելոց առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն։ Այս յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու, որ ՚ի Կրիգորէ և ՚ի Տրդատայ յաւանին Հագաւանին կարգեալ էր։ Այլա յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալն էին, և բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. և ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց

զնա աթոռակիցն գԱստղ, և զնա արքիդիակոնն Եպիսկոպոսին՝ որում անուն Մուրիկ կոչէր. զի երթիցեն նոքա, պէտք զնոչ և իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն: Այս ինքն անդէն մնաց յարքունական բանակին, զի զնոյն հաղորդութենն և անդ կատարեցեն: Այս յայնմ դիշերի ցայգապաշտօն մեծ եղև՝ ի բանակին առ կաթողիկոսին:

Ոսկ իբրև առաւօտն ծագեաց, հասանէր վաշտն գնեղոյ՝ ի բանակն արքունի. և մինչ գնեղն արքունական բանակին լինէր միջամուխ, ազդ լինէր թագաւորին եկն նորա: Ապա ելանէր հրամայն յարքունաստ, արտաքս ունել և տանել սպանանել: Այս մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղև՝ ի հրապարակին արքունի, և անդ՝ ի յարքունաստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղ բաւորք սակրաւորք սունաւորք և սպարակիրք հետեւակք, որք մատուցեալք բռնեն հարեալք ընկենուն յերիվարէ անտի զպատանեակն գնեղ. և ձեռն յետս կապէին զնա, և առեալ գնային՝ ի տեղի կառափելոյն: Այս քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժամուառ, ՚ի նմին՝ ի նորին վաշտու էր ընդ առն իւրում: Ոսկ իբրև տեսանէր թէ կալան զայր իւր և կապեցին, վազվազակի ընթացաւ յեկեղեցախորանն ժողովուրդն, ուր պաշտօն մարդկան բանակին առաջի կատարէր, մինչ դեռ առաւօտին աղօթքն մատչէին. և անդ՝ Ելերախս մեծ եպիսկոպոսապետն: Ոսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն, գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուսան, ձըչեալ մեծաձայն. Ով աղ հասէր, ասէ, դեռ զամուսինն իմ զուր առանց վնասու և յանցանաց խողխողեն: Ոսկ նորա խափանեալ զպաշտօնն, ընթանայր՝ ի խորանն արքունի. հասեալ՝ ի դրացն՝ ի ներքս առ թագաւորն անգամանէր: Ոսկ թագաւորն իբրև տեսաւ նէր զմեծ քահանայապետն, գիտացեալ զբարեխօսութիւն համոզելոյն վասն առնն մնհուանն զի մի մեռցի, յայնժամ թագաւորն զիւր սամոյրսն զգլխովն ածեալ, ՚ի փոյթ կնջանն մտեալ, զիւր դէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ՝ զի զնորա բանսն մի լսիցէ:

Իսկ ՝ի ձեռն Ներսէս մատուցեալ քուրան Հարկանէր զԹագաւորէն. խօսէր ընդ նմա, և ասէր. Թագաւոր, յուշ լեցի քեզ քո տէրն՝ որ վասն մերոյ սիրոյ խոնարհեցաւ յիւրմէ ՚ի բնական բարձրութենէն, և եղև եղբայր ծառայութե՛ մերոյ անարժանութեանս. ոչ վասն այլ իրիք, այլ զի լեցի վարդապետ սիրոյ. զի մեք խնայելով ՚ի միմեանս, նայեցեալ յաճեղէն վարդապետն, զմիմեանս սիրեսցուք երկեղիւ. զի մի միմեանց ՚ի բաց եղէք իշխեսցուք: Իսկ եթէ դու ՚ի քո եղբայր և ՚ի ծառայակիցն և յընկերակիցն և ՚ի հաւատան ոչ խնայեսցես, որ կամօքն եղբայրացեալ է մեզ տէրն՝ ՚ի քեզ ոչ խնայեսցէ: Օ՜ի նա մեզ այսպէս ասաց. "Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ": Եւ որ այժմ դու մեզ ընդ քեզ խօսի, լա՛ր Ո՞ւի, զի մի կորիցես դու. գուցէ անկեալ ՚ի Թագաւորու Թենէդ քումմէ, կենդանութի՛ միայն շրջիցես, և ոչ ոք քեզ օգնիցէ: Ա՛յլ այժմ լա՛ր Ո՞ւի, և խնայեա յանձն քո, մի՛ հեղուլ զարիւն եղբօր քո Հարազատի՝ սպանանել զարդարն ՚ի տարապարտուց յանիմայ:

Իսկ Թագաւորն սաստեալ, ոչ ինչ լսէր. զերեսան վառաստաքն ծածկեալ՝ ոչ բանայր, և ոչ կամէր առնել բանիցն պատասխանի. այլ ընկողմնեալ պատեալ ծածկեալ կայր ՚ի գահոյսն, զի և շարժել անգամ ոչ տղէր: Իսկ մինչ դեռ նա զայս և այսպիսի բանս ողբոյր ընդ Թագաւորին խօսէր, գայր արտաքուստ դահճապետն Արազմակ մոտանէր ՚ի խորանն արքունի, սկսանէր պատմել՝ զի ՚ի գլուխ հանի կատարեցի, ասէ, զհրամանս արքունի. առի գնացի զՎահէ, տարայ մինչև յորմ Ամիսոն սպանի, և անդէն Թաղեցի:

Այսպա խօսել սկսանէր ՝ի ձեռն Ներսէս, և ասէր. Ա՛ր դարև իսկ իրրև օձի քարբի, զի խնու զականջս իւր՝ զի մի լուիցէ նա զձայն Թովչի Ճարտարի, և մի առցէ զգէղ ՚ի դեղատուէ իմաստոյ, սոյն օրինակ և դու խցեր զականջս, և կափուցեր զլսելիս, զի մի լուիցես զօգտակարս բարբառոյ զՔրիստեղէն բանիցն խրատուն. այլ զգաստանայ առեալ զբարուցս, սկսար լինել մարդասէրն: Ա՛յսմ այսորիկ որ ՚ի վերայ նոցա

ասացաւ, լեցի այն 'ի վերայ քո. որպէս ասէն. «Ո՛չ փչեսցէ զատամունս նոցա 'ի բերանս նոցա, և զժա նիս առնուցուց խորտակեաց ՚ետր»: Ա՛ման զի ընդդէմ դարձար հրամանին Քո՛ւ ետն քո, վասն այնորիկ ան արդ լեզուիդ դու իբրև զջուր հեղեալ. և 'ի լարել ա ղեղան սորա՝ տկարասցիր: Այս կործանումն՝ որ բե րանով մարգարէին ածի 'ի վերայ ձեր, ըմպել ազդիդ Ա՛շակունեաց զյետին բաժակն, արբջիք արբեսջիք և կործանեսջիք, և այլ մի՛ ևս կանգնեսջիք: Այս ան սպառ ժամանակին հրոյն սպառնալիք հասանիցեն ձեզ 'ի ետին գալստեանն. և անկջիք 'ի խաւարն, և մի՛ ևս տեսջիք զարև փառաց Աղուոյն Այ: Ա՛յլ դու, Ա՛շակ, փոխանակ զի զգործս Կայինի գործեցեր, զանեծս Կայինի զգեցջիր. անկջիր կենդանւոյն 'ի Թագաւորութիւնդ քումմէ, և չարչարեսցիս առաւել քան զՏիրան զՀայկն քո, և դառն մահուամբ զկեանս քո յերկրէս մեծ նեղութիւ՛ վճարեսջիր:

Այս զայս ամ՛ խօսեցեալ ընդ Թագաւորին քահա նայապետին մեծին Ա՛երսէսի, դնաց 'ի Թագաւորէն, և այլ ոչ դարձաւ անդրէն յայն բանակ: Իսկ զպա տանեաին Վռնել առնուին դնայրն մօտ 'ի Աիւսն ար քունի, և անդէն կառափիեին 'ի սարակ լերինն. ո րոմ տեղւոյն Ա՛սին անուանեալ է, մօտ յորմէնծս արգելոցացն որոյն էրիոցն, ընդդէմ մուրտաստա նին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բա նակետեղ բնին:

Այս հրամանն եղև յարքայէն. Ա՛մենայն մարդիկն որ իցեն 'ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ ոք իշխեսցէ չերթալ. այլ ամ՛ ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, և լացցեն զՎռնել մեծ սեպուհն արշակունի զսպանեալն: Իսկ ինքն Թագա ւորն գնացեալ 'ի լալնն, նստեալ լայր զեղբօրորդին իւր, զոր ինքն եսպան: Այրթեալ նստեր մօտ առ գին, լայր ինքն, և տայր հրաման՝ կոծ մեծ և աշխար գնել շուրջ զսպանեալով գիակամբն: Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձանն պատառեալ, զգեաց ար ձակեալ, մերկատիտ 'ի մէջ աշխարանին կոծեր. ձայն արկանելով ՚ձէր, յորդոս արտասուաց յաղիողորմ գու ժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր: Իսկ

Թագաւորն Աբշակ ՚ի լալեան տեսանէր զկինն սպա-
նելոյն, տուիչը և առիւծն զնոսա՝ առնուլ զնա իւր կնուե։
Իսկ այն որ զնենգութեն քսութեաց նենգեաց, և
դաւով ՚ի վերայ իւրոյ հարազատին սպանութեան կա-
տարեաց, վասն նորին կնոջն արար զայն. զի մեծա-
պես սիրով հարեալ էր ՚ի նմա։ Օ՜ տիրին ասեմ,
որ յառաջագոյն հարեալ ՚ի կնոջն յայմիկ, վասն ո-
րոյ զնենգութեն սպանութեցն Թագաւորաւն գոր-
ծեաց։ Իսկ մինչ դեռ ՚ի նմին կոծն սաստկացեալ էր,
Տիրին սկսանէր ժոյժ չունելոյ տուիանացն։ Պատ-
գամ յղեր առ կին մեռելոյն. ասէ՝ զի մի կարի զանձն
քո աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ քան
զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մնանեցի զնա
՚ի մահ, զի զքեզ առից կնաձ կնուե։ Ընդ մինչ դեռ
կոծ մոլութեն զղիակամքն ջայլեին, զայսպիսի պատ-
գամն առաքեր Տիրին։ Խողոք բառնայր՝ թէ լուա
րուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև.
զի որ կնաձ ակն էդ վասն իմ, զայրն իմ ետ սպանա-
նել։ Օ՜ հեր փեսեր, ձկեր ընդ կոծեցն։

Ապա երբեմն մեծ երջն համարձակ յայտնեցան ՚ի
լեզուս ամենեցուն, և ՚ի ձայնարկունքն ամ եղև նա
մայր ողջոյն, և ձայնարկունքն ամ ՚ի ձայն ողջոյն
սկսան նուագել զիրան տրփանացն Տիրինայ, զակն
դնելն, զքսութեցն, զհնարս մահու նենգելն, զսպա-
նումն, ձայնիւքն մրմնջոցն ՚ի վերայ սպանելոյն ՚ի մէջ
կոծոյն բարբառելին գեղգեղեալ խանդաղատութեբ։
՚Ի նուագել իւրեանց ձայնիցն, երջն յայտնեալ հրա-
շակ հարկանէր։ Օ՜ որ երբեմն լուաւ Թագաւորն Աբ-
շակ, և եհաս ՚ի վերայ երացն, զարմացեալ լինէր
արմանայր ընդարմանայր, ստրջացեալ ՚ի միտ առնոյր
զիրան։ Ապա խօսել սկսանէր Թագաւորն, ծափս ըզ-
ծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ երսն՝ զոր գոր-
ծեաց, ասէ. Վա՜ ան զի ՚ի կնոջն Վռնելոյ զանարժան
սիրով հարաւ Տիրին, առ այնմ զբարիսն նենգեաց
զքսութեն, զմահուն գոռութեն զուր և տարապարտ.
և զմեզ ևս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ
պղծութեն. զերջայրն իւր ետ կորուսանել, և զան-
հնարին չարիսն և զանէծս՝ որ ոչ անցանեն՝ ետ մեզ
ժառանգել։

Ապա իբրև հասանէր Թագաւորն յերացն հաստա տուԹէ՛ ի վերայ , և ձգբտէր զերսն , խլխլեալ անասայր բանին առ ժամանակ մի : Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին անդէն ՚ի տեղւոջն՝ յորում սպանաւն , և աւուրք հարուստ անցին ՚ի վերայ երացն գործելոց , պատգամ յղեր Տիրիթն առ Թագաւորն : Կամ լիցի , ասէ , քեզ արքայ , զի հրամայեսցես՝ զփառանձեմ կին Պնեղոյ Թող առից ինձ կնուԹ : Օ՜ որ իբրև լուաւ արքային , ասէ . Ա՛րդ հաստատ գիտեմ զոր լուայն Թէ ստոյգ է . վասն կնոջն իւրոյ եղև մահն Պնեղոյ : Եւ անդէն արքայն մահ խորհեր , սպանանել զՏիրիթ ևս փոխանակ ընդ մահուն Պնեղոյ : Օ՜ որ իբրև լուաւ Տիրիթ , զահի հարեալ յարքայն՝ գիշերի փախստական լինէր : Ապա ազդ լինէր Թագաւորին Ա՛րշակայ փախուստն Տիրիթայ , տայր հրաման Թագաւորն Ա՛րշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն . զի իբրև հասցեն նմա , անդէն ՚ի տեղւոջն սպանցեն : Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ . ապա երԹեալ հասանէին ՚ի գաւառն Բասենոյ ՚ի մէջ մայրեացն . ՚ի տեղւոջն՝ յորում հասանէին , անդէն զՏիրիթն սպառ նանէին :

Եւ յետ այսորիկ էառ իւր Ա՛րշակ զկինն սպանեալոյն զփառանձեմն : Եւ որչափ սիրէր արքայն Ա՛րշակ զկինն , նոյնչափ ատեաց կինն զարքայն Ա՛րշակ . ասէ լալ Թէ Թաւ է մարմնով , և Թուխ է գունով : Ապա իբրև կինն ՚ի նա ոչ յանգոյց զիտաս իւր , առաքեաց արքայն Ա՛րշակ յերկիրն Յունաց , և խնդրեաց էած անտի կին ՚ի կայսերական տոհմէն ազգաւ , զի անուն էր նորա Ողոմպէ : Եւ ուժգնն սիրով սիրեաց զնա , և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն . և կինն փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպէին , և խնդրէր սպանանել զնա : Բայց ծնաւ ապա փառանձեմ Թագաւորին ուստր մի , և կոչեցին զանուն նորա Պապ , և մուտ գնա , և ՚ի չափ հասուցին : Եւ իբրև ջրԹափեաց , և եղև հուժկու , ետուն զնա պանդանդ ՚ի դուռն կայսերն յերկիրն Յունաց :

Իսկ փառանձեմն ՚ի մեծ նախանձու և ոխուԹէ գնայր ընդ Ողոմպէնոյն , և խնդրէր սպանանել զնա

դեղովք : Իբրև ոչ ինչ հնարս մեքենայից էկարէը դտանել, վասն զի անձինն իւրում կարի զգուշ կայր, մանաւանդ ՚ի կերակրոց և յըմպելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնոցին պարզեալ զդինի ձաշակէը . և եթէ ոչ ինչ դտանէին հնարք դեղել զնա մահուան դեղոքն, ապա դրան երէց ումն արքունի՝ որ էր ՚ի ժամանակին յայն, ո. րում անուն Ա՛րքինիկ, Ա՛. ըշամուհեաց տեղեացն ՚ի նահանգին Տարօն գաւառէն, զնա ՚ի բանտ արկանէը փառանձեմն անօրէնն : Ո՛անարժանս զանկատար զանչնչելն զչարեացն մեղայն չմոռացական տանջանացն կատարեաց զգործն զանարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով . որ ուրեք երբեք այսպիսի գործք յումեքէ ՚ի վերայ երկրի ոչ գործեցան : Ընդ տերունական ընդ՝ որ ընդ ՚ամէնական մարմինն ընդ հայն օրէնադ խառնէին զդեղն սատակման . երէցն, Ա՛րքինիկ անուն, տալով չեկեղեցւոջն Աղամպիայ տիկնոջն ընկ ձեռեալ զմահուն գործ, և սպանանէր : Ըստ չարեացն կատարելոց զփառանձեմայն ՚ամ չարեօք լցեալ ըզկամ կատարէր . և չանօրէնն փառանձեմայն պարզև առեալ չերիցուն զդեւզն՝ ուստի իսկ ինքն էր ՚ի նահանգին Տարօն գաւառէն, որում անուն Գումկունք կոչին :

Ա՛յլ ՚ոք կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ևս չաւել տեսանել զերեսս Թադաւորին Ա՛շուշայ մինչև չօրն հորին կորատեան . այլ փոխանակ Ներսիսի զՕնոնակ ումն անուն, և կացուցին փոխանակ հորա զլուսաքրիստոնեուէն . և էր ստրուկ ՚ի ստրկաց արքունի : Ըստ հրամանն տայր Թադաւորն՝ կոչել զնմ եպիսկոպոս Հայոց աշխարհին, զի եկեսցեն ձեռնադրեսցեն զՕնոնակն ՚ի կաթողիկոսութեն Հայոց : Նա ոչ ի ոք ոչ հաւանեաց գալ . բայց միայն Ա՛զձնեաց և Կորդուաց եպիսկոպոսք եկին, և զՕնոնակն ձեռնադրեցին կաթուղիկոսութեն ըստ հրամանի Թագաւորին : Նա էր Օնոնակն այր զգօն, և ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեն կամ խրատու, այլ հաւանեալ էր Թագաւորին զինչ և նա գործիցէ :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Թէ որպէս կամ զնարդ կոչեցեալ եղև Արշակ արքայ Հայոց ի Շապհոյ արքայէ Պարսից, կամ զնարդ մեծարեցաւ ի նմանէն մեծապէս. կամ զնարդ Վասակ մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանէր զտղարակալ ասպաստանին արքային Պարսից. կամ Թէ զնարդ Արշակ արքայ աւետարանաւն երդուեալ արքային Պարսից, ուխտէր նմա, կամ Թէ զնարդ առեալ յետոյ և փախեաւ. կամ Թէ զնարդ արք եւթանասունն զոյ պաշտօնեայսն կոտորէր արքային Պարսից վասն նորա:

Յայսմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զԹագաւորն Հայոց զԱրշակ. և մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, բազում դանձու ոսկւով և արծաթով՝ համ մեծութիւն Թագաւորութենէն: Այլ իբրև զեղջայր որպէս զնդրդի գրգեալ եղև ի նմանէ, և երկրորդական գործ տունն տայր նմա յատրպատական աշխարհին. և ի միասին ի միում տախտի գահոյն ի ժամ ուրախու Թեանն բազմէին, զմիագոյն զմիանշան զհամահան դերձ զարդու: Այլ զմիօրինակ զԹագն օր ըստ օրէ ինքեան և նմա Թագաւորն Պարսից զարդ պատրաստէր. զոյգ երկոքին ի միասին որպէս զեղջարս հարազատս անբաժինս յղփացեալք էին ի միում ուրախութեանէ, և յանպատում ուրախու ուրախ լինէին:

Այսպէս եղև դէպ օր մի յաւուրց, եկին եմուտ Թագաւորն Հայոց Արշակ ընդ զաստատանաւ միով զարքային Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի նեղքս ի տան ասպաստանին: Իբրև տեսանէր զԹագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուքս զնէր նմա. այլ և անարգանս և զնէր Թշնամանաց, ասելով ի պարսկերէնն լեզու՝ Թէ այծից Հայոց արքայ, եկ նիստ ի խրճան խոտոյ ի վերայ: Որ բանս իբրև լսեր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց, որում Վասակն կոչէր, ի մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութիւնք և բազում

սրտմտութիւնէ բարկանայր. ՚ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ուներ, հարեալ անդէն ՚ի տեղւոջն զխոռոչատեան արքային Պարսից գլխատեր ՚ի նեղբս յաստղաստանի անդ։ Օ՚ի ոչ կարաց լսել և ժոյժ ուշ նել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն աւելի եդեալ լաւ հաշուեր քաղցր անգամ, քան զնոյն իւրոյ լսել զվատթարութիւնն թշնամանս։ Իբրև ՚ի Պարսից աշխարհն եկին, յայլոց ՚ի տեղի և ՚ի նոցունն հրապարակի աներկիւղ և անկասկած յանկարծ ծօրէն զայսպիսի զգործ կարաց գործել։ Իսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, բաղում ընդհունէր ունէր զբարաւարին Ալ ասակայ, ընդ քաջասրտութիւնն զարմացեալ և ընդ քաջութիւնն։ Նա բաղում պարգեւաց և պատուոյ արժանի առնէր, զքաջութիւնէ և զտիրասիրութիւնն գովեալ։ Ալ ամն այնր իւրաց մեծաւ սիրով սիրէր զնա, և ըստ արժանի իւրում պատուէր զնա. մեծարէր զնմա աւուրս հաշտութիւնէ և խաղաղութիւնն, որ ՚ի մէջ նոցա էր։

Ալ յայնմ ինչ դէռ անդէն և ս էր արքայն Հայոց առ արքային Պարսից, և մեծ սէր էր ՚ի մէջ նոցա և մեծ խաղաղութիւնէ, երկնչելով երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեցէ սիրոյն նորա Նէրշակ արքայ Հայոց, և լինի միաբան ընդ կայսերն Յունաց, և կամ կողաբակ ինչ լինի ՚ի նմանէ։ Նա ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւնէ սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութիւնէ ընդ նմա։ Ալ ամն այսորիկ երդումն պահանջէր ՚ի նմանէն, մինչև կարի ստիպեալ բռնադատեաց զնա. Հաւանեաց, ասէ, և երդուիր ինձ յօրէնս քո, զի մի ստեսցես ինձ։ Իսկ իբրև կարի բռնադատեցաւ և ՚ի նեղ անգամ և շտապեալ տագնապեցաւ, ետուն հրամանն ածել զերիցունս եկեղեցւոյն Ցիսպոնի քաղաքի, որում անուն գլխաւորին Մարի. և բերին զաւետարանն ՚ի նէ, և տայր երդումն արքայն Պարսից Շապուհ արքային Հայոց Նէրշակայ՝ երդնուլ յաստուածեան աւետարանն, զի այլ մի և ս ստեսցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, և պահեսցէ զդաշինս նորա։ Նա վասն զի պատգամաւոր իւրացս այսոցիկ էր տանուտէրն Նահապետն Մամիկոնեան տոհմին երկից

եղբայր Ս. ասակայ սպարապետին, որում անուն Ս. ար-
դան կոչէր, մեծապէս արքայ Շ. ապուհ յակն առեալ
սիրէր զնա: Իսկ նա եղբայրն Ս. ասակ զօրավարն
Հայոց նախանձ բերէր ընդ երիցս եղբօրն իւրում
ընդ Ս. արդանայ: Կամեցաւ խանգարը առնել՝ ի մէջ
Ա.ըշակայ Թագաւորին Հայոց, և փախչել. այլ ա-
սէր Շ. ապուհ. Մի՛ ձեր սրտի մտաք էր տուեալ զեր-
դումն, զիա՛րդ կարէր ըստ հաւանութեանն ելանել երդ-
մանցն և կամ փախչել: Ա.յլ, ասէ, գիտեմ զի կա-
խարդութի՛ւք խաբեցէք զնա. և որ ունի զօրկնան ձեր,
զնա սիրեցէք. և նենգուի՛ւք նմա խորհրդակից եղեալ,
յինէն փախուցէք: Այս կամիք դուք զտէրութի՛ւն Ա.ը-
շակունեաց՝ ի վերայ ձեր, և զնոյն խնդրեք:

Այս երդնու Շ. ապուհ արքայ յարեգակն և՝ ի ջուր
և՝ ի կրակ, եթէ՝ ոչ միւսում մարդոյ, որ յայդմ օրինս
քրիստոնէութե՛ն է, ոչ տամ ապրել. և հրաման տայր
զամենեսեան տանել սպանանել: Այս տանէին զգլխա-
տորն նոցա գ՝՝արի երից, և զայլ երիցունսն և զսար-
կաւագունսն, աւելի քան զերեքհանասունն այր. ՚ի մի
դուք զամենեսեան զնոսա փողոտէին: Այս զաւետա-
բանն՝՝ որ՝՝ յոր երդուաւ Թագաւորն Ա.շակ՝ կապէր
պատէր երկաթի սարեաք, և իւրով մատանեաւ կընք-
քեալ՝ ՚ի գանձատան հրամայեր. և տայր հրաման սպա-
հել զգուշութի՛ւն:

ԳԼՈՒԽ ԻԵ.

*Յաղագս թէ զնարդ յուզեաց Շապուհ արքայ Պարսից ՚ի վերայ քրիս-
տոնէութե՛ն:*

Ա.յն՚ի ժամուն յայնմիկ, յորում սպանաւ երէցն
Ա՝արքին հանդերձ եւթանասնաքո՛ւն, յարոյց Հալածանս
մեծ Շ. ապուհ արքայն քրիստոնէութե՛ն հաւատոց.
հարկաք և պէսպէս վշտաք նեղեր զնոսա և հարուա-
ծովք բազում: Այս յետ այսորիկ հրաման տայր ընդ

ամ տեղիս լիշխանութիւնէ իւրոյ, թէ որ միանգամ զանուն քրիստոնէութիւնէ ունիցի լիշխանութիւն իմումս, զամ մարդ միանգամայն հանցեն ընդ սուր սատակեսցեն. զի մի գտցի լիշխանութիւն իմումս, որ քրիստոնեայ անուն անուանեսցէ զանձն իւր: Այսպէս բերաս բիւրուց կոտորէին, և հազարս հազարաց. զի այնպէս տուաւ հրաման՝ի Թագաւորէն, զի ամենևին քրիստոնեայ անուն՝ի սահմանս նորա մի գտցի:

ԳԼՈՒԽ ԽԸ.

Յաղագս Վարդանայ մահուն՝ի Թագաւորէն Արշակայ, նենգութիւն իւրոյ եղբօրն Վասակայ սպարապետին:

Իսկ Վարդանն, մանիկոնեան տոհմին տանուտէրն, գայր հասանէր հրեշտակութեամբ յաղթական Պարսից առ արքայն Հայոց Արշակ. և մատուցանէր զհրովարտակն առաջի նորա: Իւր պատմէր նմա՝ի նմանէ բանս խաղաղութեան և զհաշտութեան, և զերդմանցն հաստատութեան: Իւր տայր պատգամ, թէ որ ինչ եղևն, այն ահա թողեալ լիցի միջոցն. բայց դու յայսմ հետէ կաց յուխտին բանի, և մի անցանէր ըստ բան երդմանցն քումմ օրինաց՝ յոր երդուար: Այսպէս թէ ոչ, դու գիտես, և քո օրինքն որոմ ստեան: Իսկ Արշակ Թագաւորն սիրով ունէր և սիրով լսէր պատգամին, և հաւանէր զասացեալսցն: Իւր խաղաղութեան արձակէր զմեծ նահապետն՝ի տուն իւր, զի երթիցէ հանգիցէ յաշխատութենէն յերկայն ճանապարհէն. և գնաց:

Իւր յորժամ եկն նահապետն Վարդան առ Արշակ, ոչ դիպեցաւ անդ կրսեր եղբայրն նորին Վասակ առ արքայն: Այսպէս յետ այսորիկ եկն Վասակն, և գրգռեր զԹագաւորն ընդ իւրում եղբօրն երիցու, ասելով՝ թէ Վարդան է որ մտանէ զքեզ Թագաւորէն Պարսից, և կամի կորուսանել զքեզ. եթէ ոչ

աճապարեսցես վաղագոյն սպանցես զնա, զոր կորըն-չիս և աշխարհս Հայոց։ Ապա և կին Թագաւորին և զորդիսն զԹագաւորն սովին բանիւք, և զբանս զօրավարին Ասակայ Հաւատարիմ առնէր նմա։ Ասէ զի ունիմ նա զխոն զայն ընդ Արդանայ, զի նենգութեամբ և դաւով և մեծաւ երդմամբ սա այս Արդան կոչեաց զԽնկէն զայր նորա. յորժամ սպա-նանիցէ զնա Թագաւորն Ներշակ։ Իսկ կինն զնոյն ո-խութիս պահէր նմա, վասն այնորիկ աւելի և զբո-գուէր կինն Թագաւորին ի վերայ նորա. մինչ զի և զօր գումարեցին ի վերայ Արդանայ, զի երթեալք սպանցեն զնա. նա և ինքն խիկ իւր եղբայր Ասակ երթայր ի վերայ նորա։

Ապա երթեալ գտանէին զնա յիւրում գաւառին ի Տայս, յիւր ամուր բերդին՝ որում անուն Արա-խանի կոչէ։ Իբրև տեսին զգունդն Թէ Ասակ է, ոչ ինչ երկեան և ոչ զգուշացան կամ կասկածեցին. համարեցան զզօրն եղբօրն՝ Թէ խաղաղութիւն է եկն նորա, մինչ իջին առ խորանին դուրս, զի էր հարեալ զնորանն ի ձոր յունջ բերդին։ Եւ մարդիկ զօրացն Ասակայ էին ամենեքեան ի ծածուկ վառեալք և ի վերայ ապուցեալք հանդերձ։ Եւ մինչ դեռ նա լուա նայր զգլուխ իւր մերկանդամ, հասանէին սուսերօք բազում մարդիկ, և խոցոտէին զնա մինչ դեռ նա կայր խոնարհեալ՝ զի արկցեն ջուր ի վերայ նորա։ Եւ ոչ ոք տայր ժամանել յառնել, զի անդէն ի կո-ղի սպանանէին զնա։

Եւ կինն նորա յղի էր, և հասեալ էին աւուրք ծննդեան նորա։ Ի՛նչ դեռ ի վեր ի բերդին նստէր ի գահոյս իւրում, եղև գոյժ սաստիկ. իսկ նա իբրև զձայն գուժոյն լսէր, վազեր ի գահոյից անտի։ Եւ ընդ վազելն ծնանէր զմանուկն։ Եւ կոչէին զանուն մանկանն յանուն հօր իւրոյ Արդան։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս Թէ զնուրդ անմոռանալի գնայր ի սպանումնէս նախարարացն յանկնայ Արշակ արքայ Հայոց։

Այլ ահա ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն՝ որ եպիսկոպոսապետն կոչեր սէս, և ոչ զքո գոյր ընդդիմացեալ Թագաւորին՝ որ տայր նմա զյանդիմանութեանն զներատն, այնուհետև ըստ կամաց չարութեանն իւրոյ գնացեալ լինէր նա. և զազգումն ի նախարարացն կոտորեաց, զազգումն ազգատ արարեալ անձինեաց, և զազգմանց տունս հատանէր յարքունիս։ Բայց զտոհմն կամաբարեանցն՝ որ էին գաւառաց տէրք, Շ իրակայ և Աբշարունեաց, ազգատ[1] առնէր. և զգաւառսն ունէր յոտանն։

Բայց յազգէն յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդարատ, Թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զօրավարն Հայոց Վասակ, որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին։ Թագաւորն Աբշակ հրամայեաց տալ՝ Աբշարունեաց գաւառին չինել իւր քերդ մի ամուր, Աբտագերս անուն։ Եւ զգաւառն յուտեստ ի պատրաստուածէ համբարաց Թողոյր քերդին, վասն զի կարի ամուր էր քերդն այն։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս Թէ զնուրդ պատերազմ սաստկացեալ էր ի մէջ Յունացն և Պարսից, և Թէ զնուրդ Աբշակ արքայ Հայոց զօրավիգն լինէր Թագաւորին Պարսից, և հանէր ընդ սուր զզօրսն Յունաց. կամ զնուրդ դաւաճանութեանն սիւնւոյն Անդուկայ փախստական լինէր արքային Պարսից։

Այլ զառաջինն իբրև փախեաւ Թագաւորն Աբշակ յարքայէն Շ ապհոյ, և անարգեաց զինա յետ երդմանցն իւրոց, զառաջինն Շ ապուհ արքայն Պարսից

1 ՅԱմ՝ օրինակս ազգս առնէր։

ոչ ինչ խաւսուԹ՚ք ջանացաւ ընդ նմա. վասն զի մարտ դեռ բազում սատկացեալ էր ՚ի մէջ իւր և ՚ի մէջ Թագաւորին Յունաց: Եւ իբրև հաղ քան զհաղ յաւել լինել պատերազմ, իսկ Թագաւորն Հայոց Ա.ր շակ զառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, և նայ էր տեսանել Թէ ո՛վ ՚ի նոցանէն կոչեսցէ զնա ՚ի Թիկունս օգնականուԹ՚եան յաղագս գործոյ պատերազմին: Ա.յն ունէր, երԹալ կամելով յօժարուԹ՚ե ՚ի Թիկունս կայսերին Յունաց. իսկ նոքա ոչ կոչեցին զնա, և ոչ շուք ինչ եդին նմա և ոչ մեծարանս:

Իսկ Թագաւորն Պարսից Շ՚ապուհ յղեր առ նա հրեշտակս խաղաղուԹ՚ե. յուշ՚ առնէր նմա զառաջինն երդումն, ասելով՝ ԵԹէ կամ լեցի եղբօր զի և կեսցես օգնեսցես ՚ի գործ պատերազմիս, զի ՚ի Թիկունս հասցես քո զնդաւդ: Ա.յն. Ա.հա դու ՚ի մեր կոյս լինիս, գիտեմք զի մեր լինելոց է յաղԹուԹ՚ին: Ա.պա յորժամ զայս լսեր Ա.րշակ արքայ Հայոց, մեծաւ ուրախուԹ՚ե կամեցաւ երԹալ ՚ի Թիկունս օգնականուԹ՚ե, զօրավիգն լինել Շ՚ապհոյ Թագաւորին Պարսից: Ա.պա տայր հրաման Թագաւորն Ա.րշակ Ա.ասակայ իւրում սպարապետին, զունդ զունդ մարել՝ զօրս պատրաստել: Եւ նա վաղվաղակի կատարեր զհրամանս Թագաւորին. չորեքհարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արուԹ՚ե արուեստաց նահատակուԹ՚ե: Նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք անվրէպք կորովիք, վաղրաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկեւղ զանգիտելոյ յարանց յախոյանց. համակ հեծելազօրք զրահաւոր պատենազէնք, սպաղաւարտաւորք, դրօշաւորք, կազմ նշանաւորք բազմաձայն փողարօքն:

Իսաղաց գնաց Թագաւորն Ա.րշակ բազմակոյտ նախարարօքն, չուեաց ընդ Ա.ղձնիս ընդ իւր իշխանութ՚եամբն. չոգաւ Թափեցաւ յերկիրն արուացաստանի դէմ յանդիման մրծբնացւոց քաղաքին, որ էրն տէր զի Ճակատուն պատերազմին: Ա.պա երԹեալ տեսանէին զժամադիր արարեալ միաՀանց վասն երից պատերազմին կողմանցն երկոցունց: Իսկ զօրքն Յունաց հասեալք, մածեալք բանակեալք էին իբրև զաւազ

առ ափն ծովու բազմութիք։ Իսկ զօրքն Պարսից
չուէին հասեալ՝ի ժամադիր տեղի պատերազմին։
Իսկ զօրքն արքային Հայոց կանուխ քան զՊարսն՝ի
տեղի Ձակատուն հասանէին, և զտեղի առեալ կայ-
ին։ Իսպա տապել սկսան զօրքն Հայոց ընդ իւրեանց
նիստ խափանածոյն. և ոչ առնուին յանձն մնալ կամ
անսալ զօրացն Պարսից, այլ կամեցան յարձակել դի-
մել հասանել՝ի վերայ Թագաւորին Յունաց ինքեանք
առանց Պարսից զօրացն, անձամբք վճարել զգործ
պատերազմին։ Իւ այր ՚ամ զօրացն Հայոց ինքնա-
կամք իւրաքանչիւր արձակ արձակ խաղային. և ա-
ռաւել զօրավարն Նոցին Ո՛ասակ քան զ՚ամ զօրսն եթ
ևել առնէր, կապակոտոր լինէր, չինայր հաւանու-
թեան մինչև զօրքն Պարսից եկեսցեն, այլ զի միայն
ինքեամբք վճարեսցեն զգործ պատերազմին։

Իսպա միահամուռ զօրքն Հայոց անկանէին առաջի
և խնդրէին յիւրեանց Թագաւորէն Իւրշակայ, զի մի՛
պահեսցէ զնոսա մինչև եկեսցէ արքայն Պարսից Շա-
պուհ. այլ վասն որոյ երկիք եկեալ էին, վաղագոյն
նոցա զպատերազմին առ յանդիման արարեալ համար
ձակեսցէ յարձակել քան զանոսն յօտար աշխարհին.
առաւել մղձկէին, զի լաւ հաշուէին զմեռանելն ա-
ռաւել քան զյաղթել յօտար աշխարհին։ Իսպա Թոյլ
տայր նոցա Թագաւորն Իւրշակ, և յանդիմանէր նո-
ցա զգործ պատերազմին։ Իսպա կարգէր կազմէր պատ-
րաստէր զ՚ամ զզօրսն Հայոց Ո՛ասակ զօրավարն սպա-
րապետն Հայոց մեծաց։ Ո՛ր երէր զինէր ժամակալ
լինէր Ո՛ասակ. Հանդերձ ՚ամ պատերազմող զօրօքն
այրայրատեան գնդապետն եղանէր անկանէր՝ի վերայ բա-
նակին։ Իւ հասարակ ընդ սուր հանեալ կոտորէին,
այնպէս զի ոչ ապրեցուցանէին՝ի նոցանէ և ոչ զմի։
Իւ առնուին զկապուտ զաւար յունական զօրուցն,
զի ոչ գոյր չափ կամ թիւ որչափ լցան գանձօք. և
անհամար կարասեաւ մեծաւ աւարացն յղփացան։

Իւ յետ այսորիկ զտեղի ունէր արքայն Հայոց Հան-
դերձ իւրովք զօրօքն, մինչև գոյր հասանէր Շա-
պուհ արքայն Պարսից ՚ամ անթիւ և անչափ զօրօքն
Պարսից։ Երբև եկին ետես զքաջութիւն գործոյն Հայ-
աստան զօրացն, զի զՁակատ մղեալ, զպատերազմ

յարդարեալ, զյաղթութիւն կազմեալ և զգործ վճարեալ, կայր զարմացեալ մեծապէս. և պատուէր զՆ. շակ արքայ Հայոց մեծապէս, և զամենայն մեծամեծս Հայոց. սոյնպէս և զպարապետն Հայոց զՎ ասակ:

Ապա խօսեալ սկսանէր Թագաւորն Պարսից Շ ապուհ ընդ զօրս իւր՝ Թէ զինչ պարգեւս բարեաց, կամ զինչ հատուցումն կարեմք մեք հատուցանել արքայիս Հայոց Ա.րշակայ, զի զայսպիսի գործ գործեաց, կամ զայսպիսի քաջութիւն արարեալ, կամ զայսպիսի թշնամիս եհար և զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այսպիսի ձակատու յաղթեաց և զայսպիսի անուն ստացաւ մեզ: Օ՛ի եթէ մեք լեալ էաք, ամ Ա.րեաց զօրք հանդերձ այսպիսի աջողութիւք գայր ՚ի ձեռն, քաջ Թէ զդդ հասարակ այսպիսի գործ ՚ի միասին կարէաք գործել. արդ Հայոց արքայ իւրով զօրու Թեամբն ընդ մեր նահատակեալ, զայսչափ քաջութիս արար, զոր ոչ ոք կարէ առնել ամենևին: Ա.րդ զօրպիսի՛ հատուցումն բարեաց կարասցուք մեք առնել նմա: Այս այսպիսի անգեալ էր ՚ի խորհուրդս, Թէ զինչ այն ինչ էցէ զօր տայցեմ ես նմա: Ապա տայ ին պատասխանի նախարարքն իւր Շ ապհոյ արքային Պարսից, և ասեն ցնա՝ Թէ զինչ և ՚կամիս, իւ կա միս, կարող ես հաձել զնա. ոսկի քո շատ և արծաթ կերպաս և մարդարիտ, զինչ և միանգամ դու կամիս չնորհել նմա, տուր նմա: Ապա տայր պատասխանի Շ ապուհ Թագաւորն Պարսից իւրոց իշխանացն, և ասէ. Ա.րդ ոչ եթէ սէր ինչ է, զոր դուքդ ասացէք. այլ եկայք, անքակ սէր արասցուք մեք ընդ Ա.րշակայ արքային Հայոց, զի մինչև յաւիտեան անբաժին լի ցի նա ՚ի մէնջ: Տացեմ զդուստր իմ կնութիւն Ա.րշակայ արքային Հայոց, և տաց նմա տուն մեծ. զի յորժամ գնասցէ ՚ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ՚ի Հայոց մինչև ՚ի Տիզբան մինչև առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչև առ մեզ եկեսցէ: Թագաւորին զայս արասցուք. իսկ զօրավարին Վ ասակայ կամ այլոց մեծամեծացն և զօրավարացն տացուք ոսկի և արծաթ, կերպաս և մարգարիտ: Այս հաձեցան մեծամեծքն և խորհրդակիցք Թագաւորին Պարսից ընդ այս խորհուրդ. և հաս-

տատեին զասացեալսն՝ Թէ արժան է զայդ առնել։
Իսկ Թագաւորն Պարսից Շ ապուհ մեծաւ ատի-
պով ատիպեր զԹագաւորն Հայոց զԱ.ըշակ, զի առցէ
գնասցէ զնա ընդ ինքեան ի Պ.սորեստան, զի անդ մե-
ծարասցէ պատուով և փեսայութիւք մեծարեսցէ զնա։
Իսկ Ա.ըշակ և ՚ամ զօրք իւր տաղտապէին [1] երթալ
զհեռի ձանապարհն. զի ՚ամ ոք յանձնիւր տուն յիւ-
րաքանչիւր տեղի զօրէն բարուց Հայաստան մարդկան
անձկացեալ էին։ Այլ եղև իբրև ՚ի վերայ հասանէր
իրացն Ա.նդովկ նահապետն Միհնեաց գաւառին, և
թէ Շ ապուհ Թագաւորն Պարսից կամի տալ ըզ-
դուստր իւր կնութիւն Ա.ըշակայ Թագաւորին Հայոց,
մեծապէս երկեաւ, և բախեցաւ նորա կասկած մտացն
իւրոց։ Օ՚ի եդ ՚ի մտի իւրում՝ Թէ յորժամ առցէ
Ա.ըշակ կին իւր զդուստր Թագաւորին Պարսից,
յայտ է այնուհետև՝ Թէ անարգի դուստր նորա։
Ա՚ան զի փառանձեմ դուստր Ա.նդովկայ, որ էր կին
լեալ Գնելոյ, ՚ի ժամանակի անդ էր կին Ա.ըշակայ
Թագաւորին Հայոց. կասկածէր նա՝ Թէ գուցէ յոր-
ժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ։

Ա.նկանէր այնուհետև Ա.նդովկ ՚ի հնարս հնարել,
և ՚ի ծուխս խորհրդոց, գտանել պատճառս՝ զի ո՛ գի-
տէ կարասցէ ցրուել զսէրն մեծ, որ էր անկեալ ՚ի
մէջ Թագաւորացն երկոցունց։ Նախ բազում ոսկի
զօրավարին Հայոց Ա՚ասակայ Ա.նդովկն մատուցա-
նէր. սոյնպէս և զամենայն մեծամեծան կաշառէր, զի
հնարեսցի քակել զմեծ սէրն, որ էցէն ՚ի մէջ Թա-
գաւորացն երկոցունց։ Այլ ՚ամ մեծամեծքն ձեռն
յանձին հարկանէին, առեալ ոսկւոյն կաշառօք խա-
ւարեցան։ Այլ զմի ոմն յաւագաց Թագաւորին Պար-
սից ՚ի նեղքին ՚ի բուն խորհրդականացն ՚ի բանի իւ-
րում առնէր Ա.նդովկն զհնարաւորութիւնն, զնենգա-
ւորութիւնն դաւաճանութիւք մեքենայութիւքն, զի բանս
արկցէ ընդ Թագաւորին Պարսից ընդ Շ ապուհ և
ընդ Ա.ըշակ։ Այլ տայր նմա Ա.նդովկ ոսկի բազում և
անհամար, և դնէր բանս ՚ի բերան, զի իբրև կերպա-
րանս գուշակի արասցէ ասել ցարքայ Ա.ըշակ, Թէ

1 Ցերկուս օրինակս պաղփաղէին։

ապրեցո զանձն քո, զի ձշդրիտ խորհուրդ խորհեալ է Թագաւորին Պարսից ունել զքեզ և սպանանել։ Եւ յորժամ դու զայս ասասցես, ասէ, և զմեզ հրամայեսջիր կոչել ի խորհուրդն. և զքո բանս աւադանին հաստատեն։

Ապա զայր մտանէր խորհրդակից արքային Պարսից առ արքայն Հայոց. խօսել սկսանէր ընդ նմա զբանս ի բերան եդեալ Անդուկայն չարագործի, և ասէր՝ Թէ արքայդ Հայոց Արշակ, ապրեցո զանձն քո. զի խորհուրդ խորհեալ է Թագաւորին Պարսից Շապհոյ ունել զքեզ և սպանանել։ Այլ հնացեալ և զարմացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնպիսիկ, և ասէ. Ի՞նչ մեծի վաստակոյն իմոյ ի վերայ այս հատուցումն ի նոցանէն։ Ապա հրամայ տայր կոչել զառաջեաւ իւրով արքայ Արշակ զամ զմեծամեծս իւր, և զամ խորհրդակիցս իւր, զի ասակ ապարապետան, և զԱնդուվին զաներ իւր, և որ միանգամ էին նախարարքն. և պատմէր նոցա զոր միանգամ լուաւ ինքն ի պարսկէ անտի։ Ապա և նոքա ընդ մի բերան ասէին ընդ նմա, Թէ մեք զայդ վաղ լուաք, զքեզ չիշխեցաք ասել. այլ իբրդ այդ հաստատ են։ Այլ արդ, արքայ, գիտեա տես զիա՞րդ ապրեցուսցես զանձն քո և զմեզ։ Ապա արքայ Արշակ բազում պարգեւս գանձուց ոսկւոյ և արծաթոյ տայր պարսկին այնմիկ, որ ասաց նմա զբանս զայսոսիկ։ Եւ ինքեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ Թագաւորն Հայոց, և յառնէին ի գիշերի որ միանգամ մարդ էր ի բանակին Հայոց. հեծան ի ձիս, և փախեան։ Եւ առ ետեղ Թողին զխորանս և զվրանս զկահ և զկարասի և զկազմած իւրեանց, և զբանակին իւրեանց, և գնացին գաղտուկ. և ոչ ոք ի բանակէն Պարսից գիտացին զայն մինչ ցայգ ցառաւօտն։

Եւ իբրև եղև ժամ այգորելն առ Թագաւորն Պարսից, և ամ Թագաւորք և իշխանք մեծամեծք իւր այգորեալ գային արքային Պարսից, բայց միայն ոչ ուրեք ի մէջ երևէր Թագաւորն Հայոց Արշակ հանդերձ իւրովք մեծամեծօքն։ Ապա տայր հրամայ Շապուհ Թագաւորն Պարսից իւրոցն, երթեալ տե-

սանել՝ Թէ զինչ իրք իցեն ՚ի բանակին Հայոց Թագաւորին Ա.րշակայ, զի այնչափ ժամս յամեաց գալ յայգորեալ Թագաւորին Պարսից Շ ապհոյ։ Ա.պա երԹեալ տեսանէին, զի Թափուր կայր բանակն առանց մարդոյ. զի Թողեալ էր իւրեանց զնորանս և զվրանս և զհովանոցս և զսրահակս և զգահոյս և զանկողինս և զկահ և զկազմածս և զկարասի իւրեանց, և ըզգանձս իւրեանց անգամ. բայց միայն զզէնս իւրեանց որ բարձեալ էին ընդ ինքեանս, և գնացեալք։ Եւ որք չոգան ՚ի բանակն, գային զայն պատմէին Շ ապհոյ արքային Պարսից։ Եւ իբրև լուաւ Շ ապուհ արքայն Պարսից, քանզի այր խմաստուն էր, գիտացեալ ՚ի կարծիս խմաստութեանն իւրոյ զիրն՝ որ ինչ եղև, անդէն ասաց՝ Թէ այն փախուստ Թագաւորին Հայոց չիմոյ աստի եղեալ է. զի ՚ի միոջ ՚ի մերմէ ՚ի դրանէ աստի էին, ասէ, որք փախուցին զայրն զայն զԱ.րշակ։ Ա.պա իւրոյ աւագացն ՚ի մեծամեծացն դեսպան ձիով զբազում յղեր զՀետ Թագաւորին Հայոց, հանդերձ երդմամբ ՚ի սէր միաբանութե և յանդիմանութեն. զի դարձցին և զբարեխօսութեն զբանս ՚ի մէջ ածեալ կշտամբեցեն։ Եւ ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն Թագաւորին Պարսից Շ ապհոյ, և ոչ դարձաւ այլ անդրէն յերկիրն Պարսից։ Ա.պա յայն օրէ հետէ և անդր յուզեցաւ պատերազմ գրգռութեն մարտից Ճակատուց ՚ի մէջ Թագաւորին Հայոց Ա.րշակայ և ՚ի մէջ Թագաւորին Պարսից Շ ապհոյ ամս աւելի քան զերեսուն։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս Թէ զնծրդ եղև պատերազմ ընդ Շապուհ Թագաւորն Պարսից և ընդ Արշակ Թագաւորն Հայոց զառաջինն, կամ զնծրդ յաղթեր Արշակ արքայ Հայոց։

Այն ամն ուր, յետ գնալոյն փախչելոյն արքայն Հայոց Արշակայ՝ի Թագաւորէն Պարսից Շապհոյ, լուաւ լինելը Թագաւորն Պարսից՝ի Թշնամուէ. և խօսեր համակ ողղով, և աղաչեր զԱրշակ արքայ Հայոց՝ սիրով հաշտ և միաբան կալ ընդ նմա յուխտի խաղաղութէ։ Այն ամն զի՝ի մեծ վտանգ շուսպի եր Թագաւորն Պարսից ստեպ ստեպ յանդադար պատերազմացն՝ի Թագաւորաց անտի Յունաց։ Իսկ Արշակ արքայ Հայոց ոչ լինչ կամեր անսալ նմա, և ոչ հուսպ լինչ լինել՝ի նա. և յղեալ դեսպանս, և ոչ լինչ տալ պատարագս ընձայից, և ոչ հուսպ լինչ կամ մնծ լինել՝ի նա քնաւին. և զանուն անգամ նոցա ոչ կամեր լսել։ Իսկ Թագաւորն Պարսից ստեպ ստեպ յղեր պատարագս առ նա, առաքեր դեսպանս։ Այլ ինքն հեպհեպ կուռեր ընդ Թագաւորն Յունաց։

Այլ երբև եղև խաղաղուէ՝ի մէջ Թագաւորացն Յունաց և՝ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր Թագաւորն Յունաց Թագաւորին Պարսից։ Այս գրեալ եր յուխտից նամակին այսպէս. Այտու քեզ, ասէ, զնծրդին քաղաք՝ որ է յարուեստանի, և զիջագետս Այսրոց, և մնջաշխարհին Հայոց՝ ձեռնթափ եմ, ասէ, Թէ կարասցես յաղթել նոցա և արկանել՝ի ծառայուԹէ, ես՝ի Թիկունս ոչ եկից նոցա։ Այդ՝ի նեղ ուրեմն անգեալ Թագաւորն Յունաց, և՝ի նեղին վշտի՝ զայս ձև օրինակի բանիցն կնքեր մուրհակ, և տայր Թագաւորին Պարսից. և ապա ձողոպրեր՝ի նմանէ։

Այլ երբև եղև խաղաղուԹե՝ի մէջ Թագաւորին Յունաց և՝ի մէջ Թագաւորին Պարսից, այնուհետև կազմեր զզօրս իւր Թագաւորն Պարսից Շա-

պուհ, և խաղաց ՚ի վերայ Ա.ըշակայ արքային Հայոց մարտի պատերազմաւ։ Իսկ սահմանապահքն Թագաւորին Հայոց, որ նստէին ՚ի Գանձակ Ա.տրպատական, վաղ ազդ առնէին նմա զիրան մինչեւ հասեալ էր նա ՚ի սահմանս Ա.տրպատականի։ Ա.յս լսելւ զայն զգայր Թագաւորն Հայոց Ա.րշակ, հրամայն տայր ի ասակայ իւրում սպարապետին՝ կազմել զամ զզօրս իւր, և հասանել ՚ի դիմի հարկանել Թագաւորին Պարսից Շ ապհոյ։ Ա.յս արագ ժողովել ՚ի մի վայր, հանդէս առնէր ի ասակ սպարապետն ամ զօրաց Հայոց. և գան հեծելազօր սպառազինք կուռ վառելք նիզակաւորք համակ վաթսուն բեւր, միասիրտք միաբան միամիտք։ Ա.յս հանդերձ նզօք յաղաջ խաղայր սպարապետն Հայոց ի ասակ հասանէր, բախեալ ՚ի դիմի հարկանէր Թագաւորին Պարսից։ Ա.յս հասարակ զօրսն զամ հարկանէին ՚ի սուր սուսերի իւրեանց. և միաձի ձողոպրեալ արքայն Պարսից Շ ապուհ փախչէր։ Ոչքա հասանէին, գերէին, այրացաւէր առնէին առ հասարակ զերկիրն Պարսից. և ինքեանք կային ունէին զձախատուն տեղի, այս ինքն զսահմանս Պարսից պահէին։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս յետ այսորիկ որ ընդ երից տեղի եղև ձակատն յերկրին Հայոց ընդ զօրսն Պարսից, Թէ զիարդ նշան յաղթութեն յայտ եւս Հայոց կանգներ։

ՅաՅՆՄ ժամանակի Թագաւորն Պարսից Շ ապուհ ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար իբրեւ զաւազ առ ափն ծովու. և փիղս բազումս, զի ոչ գայր նոցա թիւ։ Ընդ երից բաժանեալ զզօրսն, երկուց գնդացն զՆդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր. և միւմ գնդին ինքնին Թագաւորն լինէր զօրագլուխ։ Ա.յս հրամայն տայր Թա-

գաւառն զօրացն՝ ընդ երիս տեղիս խաղալ մտանել արշաւել յաշխարհն Հայոց։ Ապա այս բանիք վաղագոյն ազդ լինէին առ Թագաւորն Հայոց Արշակ, և առ զօրավարն նոցին Վասակ. ասա և սոքա բաղում զօր յաշխարհէ ժողովեցին, զի ոչ գայր համար բազմութեն։ Եւ թէ բեւր աճապարեցին, սակայն զօրքն Պարսից արշաւէին յերկիրն Հայոց, և ընդ երիս առ պատակէին։

Ապա Թագաւորն Արշակ և զիւր զօրան բաժանէր ընդ երիս. և տայր զմի գունդն Վասակայ սպարապետին. և զերկրորդ գունդն ի ձեռն Բագասի եղբօր նորին, որ ի գործ արուեստ քաջ էր անհնարին, բայց ի գործ իմաստութեան բախած էր. և զմիւս գունդն իսկ Թագաւորն Արշակ առնոյր։ Եւ տայր հրաման՝ յառաջ խաղալ պատրաստել, առ դիպան պատահել զօրացն Պարսից։ Ապա գայր սպարապետն Վասակ, գտանէր զառաջին առաջն զօրացն Պարսից զՆաղարաւուխտն, զի հասեալ էին ի գաւառն Վանանդայ, ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչէր Յորևեալ. և բախէր ընդդէմ զօրացն Պարսից մարտիւ պատերազմաւ։ Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից, դարձան ի փախուստ, ցրուեցան սփռեցան։ Հասանէր զօրավարն Վասակ, արկանէր ըզզօրսն ամ փախստեից Պարսից. ոչ ապրեցուցանէին և ոչ զմի, և Թափեցին աւար բազում և գիմիղս։

Ի նմին ամենայն ի նմին շաբաթու ի նմին աւուր հասանէր Բագոս, հանդերձ զօրօք՝ որ ընդ իւրև էին. գտանէր զառաջ երկրորդ զօրացն Պարսից և զՆդիկան զօրագլուխ նոցա, զի հասեալ մածեալ բանակէին ի վերայ ձկնատենիցն Ռեստեայ։ Ապա վաղ զգացին զօրքն Պարսից զհասանել Բագոսին, և պատրաստեցան ի մարտ պատերազմի ընդդէմ զօրացն Հայոց։ Ապա հասանէր Բագոս ամ գնդաւն. ընդդէմ յարձակէին Ճակատուն Պարսից, անդէն հարկանէին սատակէին զամ առ հասարակ զզօրսն Պարսից, և գլխովին զՆդիկան սպանանէին։ Ապա դիպէր Բագոսն գնդին փղացն, և տեսանէր զմի ի փղաց անդի մեծապէս զարդարեալ, և զարքունական նշանս ի վերայ արձակեալ։ Համարեցաւ զԹագա-

ւորն ՚ի փղին յայնմիկ. իջանէր յերիվարին, հանեալ զուսերն իւր յարձակէր ՚ի վերայ փղին. զնն վերայ ցոյց, եմուտ ՚ի ներքոյ փղին, հարկանէր զներսոս փղին, և անդէն ընկենոյր զփիղն ՚ի վերայ անձին իւրոյ, և սատակէին երկոքեան. զի ոչ ժամանէր եւս ներքուստ ՚ի փղէն: Այսմ ձևակատու, բայց միայն զի մեռաւ զօրագլուխ զօրացն Բագոսն, այլ ՚ի Պարսից զօրացն ոչ ապրեցուցանէին յայնցանէ և ոչ մի:

Իսկ ՚ինոյն ամի ՚ի նմին շաբաթի ՚ի նմին իսկ աւուր, քանզ ՚ի մի օր[1] եղեն ձակատքն երեքեան, արդ հասանէր Թագաւորն Ա.ըշակ, հանդերձ զօրօքն՝ որ ընդ իւր էին. գտանէր զնինքնին Թագաւորն Հ ապուհ, զի հասեալ մածեալ բանակէին ՚ի գաւառն Բասենոյ ՚ի տեղնն՝ որ անուանեալ կոչի Ոսխա[2]: Այսպ անվ կանէր գիշերի արքայն Ա.ըշակ ՚ի վերայ բանակին Պարսից, և անդէն ընդ սուր հանէր զամենեսեան. բայց միայն միաձի մազապուր ձողպարէր Թագաւորն Հ ապուհ, փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից: Այսպ յայնմ ժամանակի յերիցունց գնդացն միւսանց գիսակէին աւետաւորքն յաղթութեանն. բայց ՚ի Բագոսէ, զի մեռաւ միայն ՚ի միւսմ ձակատուն, այլ և ոչ մի ՚ի նոցանէն ոչ ծախէին. յայ եղև մեծ աղաղուղթին յաղթութենն: Այս սոքա ՚ի կողմանս Պարսից ասպատակէին, և հարկանէին մինչև ՚ի կողմանս՝ որ կոչին Ստարտիզան: Այս լցան գանձիւք բազմօք և գինու և զարդու և բազում աւարաւ և անչափ մեծութեք, և հարստացան անցին ըստ չափ:

1 Ցայմ օրինակս գան գի օր: 2 Ցերկուս օրինակս Ոխսա:

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս Մերուժանայ արծրունոյ, որ ապստամբեաց յարքայէն Հայոց Արշակայ, և անկաւ առ Թագաւորն Պարսից Շապուհ, և առաւել գրգռէր զպատերազմունան. և Թէ զինչդ ուրացաւ յայ, և կամ զինչդ եղև խոչընդակն և խոչտան երկրին Հայոց մինչև յապայ:

Յաջորդ ժամանակի ապստամբեաց յարքայէն Հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն, Մերուժան անուն արծրունի. և չոգաւ եկաց առաջի Թագաւորին Պարսից Շ ապհոյ, և դնէր ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լինի նմա: Նախ ուրացաւ ի կենացն իւրոց, զոր յաճն ունէր. զի եթող զօրինս քրիստոնէութե՛ն, և խոստովան եղև վասն անձին իւրոյ՝ Թէ չեմ քրիստոնեայ. և կալաւ զօրինս մաղդեզանցն, այսինքն զմոգուցն. եւագ երկիր արեգական և կրակի, և խոստովան եղև՝ Թէ ածք այն են, զոր Թագաւորն Պարսից պաշտէ: Նոյ ուխտ ընդ Շ ապհոյ արքային Պարսից յայնմ հետէ. Ի՛ր էջ և կարասցէ յաղթել Շ ապուհ Հայոց, և ունել զաշխարհն, և ինձ դարձ՝ լինի յիմ աշխարհն և յիմ տունն, նախ ես՝ ասէ՝ շինեցից ատրուշան յիմումի տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ: Նա կեանս և մահ դնէր ընդ նոսա, խոստացեալ քանիւք և արդեամբք: Նա զզօրսն Պարսից պատրաստէին առաւել ևս քան զառաջինն, և առաջնորդ ուներին զբարագործն Մերուժանն, ասպատակել յաշխարհն Հայոց: Յանկարծօրէն այրացաւեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերուժանաւ. զորս տայր ի կոխումն փղաց, և զկանայս ընդ ցից սայլից հանէին. առնուին կոտորէին զամ բնակիչսն վերնագաւառացն Հայոց:

Մինչ դեռ Թագաւորն Ա՛շակ ի կողմանն ստորին գաւառացն Ա՛նգեղ տան էր յուտեստ, զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զօրքն Պարսից ապականէին: Ա՛պա զօրաժողով լինէր Ա՛շակ զօրավարին Հայոց, և որ հասին ի ժամանակի՝ անդ ի ձեռն նո-

բա տասն հազար հեծեալ ընդէր ընդէր և քաջ այրեաւէն, կազմ զինու և բազում պատրաստութիւբ. և հանդերձ նոքօք խաղայր, ՚ի կրթի ձգեալ հասանէր զօրացն Պարսից: Իսկ երբև զգացին զօրավարքն զօրաց Թագաւորին Պարսից՝ եթէ զօրաժողով է ՚ի վերայ նոցա զօրավարն Հայոց Վասակ, զինացորդս աշխարհին գերփեցեալն գերեցեալն առին և փախեան յաշխարհն իւրեանց Ձեպով տագնապաւ: Այսպա զհետ կրթիւր Վասակ մամիկոնեան, և երթայր հասանէր նոցա. չուէին ՚ի սահմանս Ատրպատականին: Իսկ զօրքն Թագաւորին Պարսից Թողին զգերին, և փախստական լինէին հանդերձ Վերուժանաւն: Այս Թափիւր անչափ և անթիւ զայմ զառեալ գերութենին, և դառնային խաղաղութիբ առ Թագաւորն Ասլշակ:

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս Վերուժանայ, Թէ զնարդ ապստամբէր և գրգռէր զԹագաւորն Պարսից Շապուհ, և առնէր պատերազմ. և Թէ զնարդ լինէր առաքնորդ Թագաւորին Պարսից Շապհոյ, և ածէր հէն յաշխարհն Հայոց աստանի. և կամ զնարդ գերեր զոսկերս արշակունեաց. կամ զնարդ զօրավարն Վասակ Թափեաց զգերեալն և յաղթեաց Թշնամւոյն:

Այս յետ այսորիկ Վերուժան վատանշան գերգռէր զԹագաւորն Պարսից զՇապուհն ՚ի վերայ Թագաւորին Ասլշակայ մեծաւ բարկութիբ: Այսպա զբաժողով լինէր Թագաւորն Պարսից Շապուհ. և լրտեսս արձակէր, դիտել զարքային Հայոց զԱսլշակ: Այս մինչ նա դեռ զգուշացեալ Ասլշակ արքային Հայոց հանդերձ իւրով զօրօքն զատրպատական սահմանօքն, զի անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՎերուժանն՝ ընդ այլ կալեալ աստատակ յաշխարհն Հայոց առնէին: Օ՛ի ընդ Ասլճնիս և ընդ Ծոփս մեծ, ընդ Ասլգեղ տունն և ընդ գաւառն Ասլձատայ ընդ Ծոփս Շահունոց, ընդ Ասլզուր

գաւառն և ընդ Դարանաղէ, ընդ Ակեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շ ապուհ Թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն առպատակել հեղեալ ծաւալեր բազմութիւք իբրև զջուրս բազումս։

Աւրացաւեր առնէին, և զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց. զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից սայլից, զկեաս զոր ի նեղբոյ կամացն արկեալ կասուին։ Եւ զարանց բազմութիւնս տային ի կոխումն փղաց. և զառանց Թուոյ զմատաղ մանկտոյն, զայն ի գերուէ վարէին. և զբազում ամուրս քանդէին, և զբերդս աւերէին զամուրս։ Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Ձնձնեաց յիշխանութենէ բդեշխին. քառասուն հազար երդ, զայն նորհետայն ի գերութիւն խաղացուցին. և ինքեանք ի Նոսից մեծ արշաւեցին։ Եւ անդ էին բերդք, զոր առին. և էր, զոր ոչ կացին առնուլ։ Եւ գայլին պահ արկանէին շուրջ զինգեղ զամուր բերդսն, որ է Աղնկեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց Թագաւորացն գերեզմանք չիրմացն արանցն արշակունեաց. բազում գանձք մնացեալ ինացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ։ Զուան պահ արկին զբերդսն. ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, Թողուին և գնային։ Եւ զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտընչել ընդ ամուրսն. բայց միայն մանեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Աղնի ի Դարանաղեաց գաւառին անդ, զի չար բազործն Աերուժանն հնարաւորութեամբ մեքենայիւք ամուր բերդին այնմիկ։ Եւլանէին ի վեր, և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անթիւ զանձս ի բերդէն։ Եւ բանային զգերեզմանս զառաջին Թագաւորացն Հայոց զարանց քաջաց զարշակունոյ, և խաղացուցանէին ի գերուէ զոսկերս Թագաւորացն. բայց միայն զգերեզման չիրմին Անատոլիոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեղեղ սկայազործ հաստատուչինած ձարտարագործ արարածոցն։ Այսպ գնացեալք անտի ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ առպատակս կապէին, ընդ կողմանսն Ասսէնոյ յառաջ խաղային և ինքեանք, կամէին ի Թիկանցն կուսէ անց

կանել Հասանել՝ի վերայ զօրացն Թագաւորին Հայոց։
Այսպա մինչ դեռ այս ամ լինէր, գուժական Հասա-
նէր առ Թագաւորն Արշակ, և ասէն նմա. Դու ա-
ւադիկ առաջոյ սպասես Թշնամեացն, նստիս Այրը-
պատականի. իսկ Թշնամիքն զթիկամբք անկեալ կո-
տորեցին զաշխարհս. և արդ դիմեալ գան՝ի վերայ
քո։ Այսպա իբրև զայս լսէին Թագաւորն Հայոց Ար-
շակ և զօրավարն նորին Վասակ, հանդէս առնէին
զօրացն իւրեանց։ Եւ գնան՝ի ժամանակին անդ
ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իբ-
րև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք. որ
միամիտք և միասիրտք էին միաբանութեամբ գործոցն պա-
տերազմին, հասանել մարտնչել՝ի վերայ որդւոց և կա-
նանց իւրեանց, և՝ի վերայ աշխարհին գնել զանձինս
իւրեանց մինչև՝ի մահ և՝ի վերայ աշխարհին գաւա-
ռացն բնակութեանէ, հասանել մարտնչել՝ի վերայ եկե-
ղեցեացն իւրեանց, ՚ի վերայ ուխտին պաշտամանն
սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ՚ի վերայ հաւատոց ուխ-
տին անուան Այ իւրեանց, փոխանակ քնակ տերանց
իւրեանց արշակունեաց։ Ո՞ւ անգամ ոսկերք Թա-
գաւորացն մեռելոց և բազում ժողովուրդք խլեալք
յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յօտարութիւն։
Այսպա Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն
հազարօք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրունկ Թա-
գաւորին Արշակ յամուր տեղւոջ ուրեմն
յերկրին Վարաց, հանդերձ սպասաւորօքն։ Եւ ինքն
գայր հասանէր՝ի միջնաշխարհն Հայոց՝ի գաւառն
Այրարատու. և հասանէր գտանէր զզօրսն Պար-
սից, զի հասեալ մածեալ էին բազմութիւբ իբրև զա-
ւազ առ ափն ծովու, բանակեալ զգաւառաւանն այրա-
րատեան։ Այսպա հասեալ Վասակ հանդերձ զնդաւն
որ ընդ իւրն էին, անկանէր՝ի վերայ բանակին Թա-
գաւորին Պարսից՝ի գիշերի յեղակարծումն ժամա-
նակի։ Եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին
զզօրսն Պարսից. բայց միայն Թագաւորն միաձի
Ճողոպրեալ մազապուր փախչէր։ Ո՞չ հետ հալածէին
զնացեալսն փախուցեալսն արտաքոյ իւրեանց սահ-
մանացն, և Թափէին՝ի նոցանէ աւար բազում և ան-
թիւ, զի ոչ գոյր նոցա չափ համարոյ։ Եւ առ հա-

սարակ արկանէին զնոսա ի սուր սուսերի իւրեանց, և Թափէին ի նոցանէն զոսկերս Թագաւորացն իւրեանց, զոր պարսիկք խաղացուցեալ տանէին ի գերուձի յաշխարհն Պարսից։ Օ՜ի ասէին ըստ իւրեանց հեթանոսուԹէն ըստ օրինացն, Թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս Թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք Թագաւորացն և բախտքն և քաջուԹիւն աշխարհիս աստի գնացեալ ընդ ոսկերս Թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն։ Այսպա Թափէր Ա սասակ զգերուձին ամ զՀայաստան աշխարհին. և զոսկերս Թագաւորացն Հայոց, զոր Թափեաց Ա սասակ, հանեալ Թաղեցին յամուր ի գեւղն՝ որ Անձէքն անուանին, Ա՛յրարատ գաւառին՝ որ կայր ի խնձա ի գոգա ի ծոցս յանձուկս ի գժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն։ Նա ինքեանք փոյթ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել զամ զգերուԹիս յաւերածոյն և այրեցածոյն։ Այլ յայնմ նուագի ևս ապրէր Ա՛ե րուժանն չարագործն, փախուցեալ ընդ արքային Պարսից։ Նա յայնմ հետէ պահ ունէին իւրեանց աշխարհին. արքայն Արշակ հանդերձ զօրավարաւն Ա սասակաւ յերկոսին դուրս սահմանացն զգուշանային մինչև զամ աւուրս կենդանուԹե իւրեանց։

Գ Լ Ո Ւ Խ ԻԵ.

Յաղագս Թէ զնայրդ արշաւեաց արքայն Արշակ յերկիրն Պարսից, և քանդեր և հարկանէր զբանակն Շապհոյ արքային ի Թաւրէզ։

Այն զօրաժողով լինէր Արշակ արքայ Հայոց, և կուտեր առ ինքն զօրս բազումս իբրև զաւազ բազմուԹեամբ, և խաղայր ի վերայ աշխարհին Պարսից։ Այսպա առնոյր Ա սասակ զգուշանն Հայոց, և զՀոնան հանդերձ Ա՛լանօքն կոչել յօգնականուԹի, և հասանէր դիմէր յօգնականուԹե ԹագաւորուԹեն Հայոց

ի վերայ Պարսից։ Ա.յլ Թագաւորն Պարսից հանդերձ ամ իւրովք զօրօքն ի ժամանակի անդ յայնմիկ քանզի և նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդդէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին Ա.տրպատական. և գտանէին զբանակն արքային Պարսից ի Ծաւրէշ բանակեալ։

Հասանէր Ա ասակ սպարապետն հանդերձ քսան բիւրուքն, անկանէր ի վերայ բանակին Պարսից։ Ա՛իաճի ձողպռեալ Թագաւորն փախչէր, և առնուին յաւարի զամ կարաւանն Պարսից. և զամ զօրն Պարսից բազմութեն կոտորեցին, և առին աւար բազում ի բանակէն, զի ոչ գայր նոցա թիւ։ Ա.յսպատակ առեալ առնուին զամ ատրպայական երկիրն. քանզեալ բրէին զերկիրն, մինչև ի հիմանց կործանէին. և խաղացուցանէին զգերութիւն երկրին քան զաստեղս բազմութիւ։ Այս զամ գայր երկրին հանէին ընդ սուր. և ինքեանք զգուշացեալք սահմանաւք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութիւ։

ԳԼՈՒԽ Ի.Զ.

Յաջագա Վնոյ պարսկի, և յորդիքհարիւր հազարացն՝ որ եկեալ էին ի վերայ Հայոց, և նոքուն լինէին ի զօրացն Հայոց։

Ա.պն գումարեաց Թագաւորն Պարսից Շապուհ զամ լինն ի վերայ արքային Հայոց Ա.րշակայ յորդիքհարիւր հազարաւք։ Ա.պա գայր եւանէր ամ լինն, ասպատակ սփռէր ընդ ամ երկիրն սահմանացն Հայոց։ Այս ապա իբրև գիտացեալ Թագաւորն Հայոց Ա.րշակ, հասանէին ի վերայ զօրացն Պարսից. կոտորեալ աւ հասարակ ընդ սուր հանէր զամենացն զօրսն Պարսից, և զինացեալսն փախստական առնէր մինչև ի կոմմանս սահմանացն Պարսից։ Ա.ատակէին զնոսա, և ինքեանք դարձեալ ուռնէին զձակատուն տեղւ։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Յաղագս զօրավարին Պարսից Անդիկանայ, որ քառատուն բիւրուն հասանէր՝ առար առնուլ զերկիրն Հայոց. Թէ զնարդ վասակ սպարապետն Հայոց ելանէր ընդ առաջ նորա երկոտասան բիւրու, հարկանէր զնա և զզօրս նորա։

Զայն յետ այսորիկ առաքէր արքայն Պարսից ՚ի վերայ արքային Հայոց գունդ կազմեալ պատրաստեալ արս ընդիրս պատերազմողս իւր և զքառատուն բիւր, գալ առնուլ այրել աւերել զերկիրն Հայոց, և Անդկան զօրագլուխ նոցա. գայր հասանէր աստղատակ առնէր յերկիրն Հայոց։ Զայս գայր հասանէր ընդ առաջ նորա Վասակ մամիկոնեան սպարապետն Հայոց երկոտասան բիւրուք. հարկանէր սատակէր զնա և զզօրս նորա, թաւիշէր զզարդ նոցա, և ոչ ապրեցուցանէր մի ՚ի նոցանէ և ոչ մի. և ինքն կայր քաջուձեռ ունելով զձակատուն տեղի։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս Հազարաւուխտոյն՝ որ էր մի ՚ի նախարարացն Պարսից, զոր առաքեաց Շապուհ արքայ ուժգնուն բիւրօք՝ հարկանել զերկիրն Հայոց. Եթէ զնարդ Վասակ եւ ընդ առաջ նորա մեծասան հազարաւ, հարկանէր սատակէր զնա և զզօրս նորա ՚ի սահմանս Աղձնեաց։

Լուն եհաս Հազարաւուխտ ՚ի զօրացն Պարսից, գալ այրեացաւերս առնել, ՚ի հիմանց տապալել զերկիրն Հայոց։ Եւ գիմեալ ընդ երկիրն Աղձնեաց, կամեցաւ ծաւալել ընդ երկիրն Հայոց և ընդ նմ սահմանս նոցա։ Զայս ելանէր Վասակ ընդ առաջ նորա հանդերձ մեծասան հազարաւ. հարկանէր սատակէր, և զզօրսն զնացեալսն և զփախստականսն արկանէր յերկիրն Պարսից. և զՀազարաւուխտն անդէն սպանանէր։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Յաղագս Դմաւունդ Վսեմականայ, որ ինքնասէն բիւրուն տապրիկ զօրքն՝ զոր առաքեաց ի վերայ Արշակայ արքային Հայոց Շապուհ արքային Պարսից։ Ապա ելանէր վասակ զօրավարն Հայոց, հարկանէր զնա և զզօրս նորա։

Ապա գայր հասանէր ի կաւոռականի տոհմին Դմաւունդ Վսեմական, հանդերձ ինքնասէն բիւրուն՝ որ առաքեալ էին ի Շապհոյ արքային Պարսից յերկիրն Հայոց, տալ ընդ նոսա մարտ պատերազմի։ Ապա կազմեցան պատրաստեցան զօրքն երկրին Հայոց, և վասակ զօրավար նոցա. ելին պատերազմել ի դիմի հարկանել նոցա։ Ապա ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից յերեսաց նոցա, դարձան ի փախուստ։ Հասանէր վասակ, կոտորէր սպանանէր հարկանէր ի նոցանէն, զի և մի ոչ ապրեցուցանէր. և զվսեմականն ի մէջ զօրացն սպանանէր։ Այս սինէքդոքն[1] արտաքոյ իւրեանց սահմանացն հալածեալ տանէին։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս Վահրիճայ, որ չորեքհարիւր բիւրուն գայր հասանէր, տայր պատերազմ ընդ Արշակայ արքային. և զնդրդ մատնեցաւ ի ձեռս վասակայ զօրավարին Հայոց ամ զօրօքն հանդերձ։

Ապա գայր հասանէր վահրիճ ի վահրիճայ, և զօրքն Պարսից չորեքհարիւր բիւրուն առաքեալ ի Շապհոյ արքային ի վերայ Հայաստան աշխարհին, աւար առնուլ և կոտորսանել զերկիրն զօրացն թագաւորութեանն Հայոց. և գայրն հասանէին ի տեղին, որ կոչին Ախաձեան։ Ապա քառասուն հազա-

1 ի չորս օրինակս պինեֆորթն։

բաւ ելանէր Վասակ զօրավարն ընդդէմ նոցա. հալ կանէր սատակէր զզօրս նոցա, սպանանէր զՎահրէձն, և կոտորէր զզօրսն Պարսից, և ոչ թողոյր ի նոցանէ և ոչ մի. և զգուշանայր զսահմանօք երկրին իւրոյ:

ԳԼՈՒԽ ԼԱ.

Ցաղագս Գումանդ Ըսպհոյ, որ մեծաւ պարծանօք պարծեալ առաջի արքային Պարսից Ըսպհոյ, և առեալ ածէր ի վերոյ աշխարհին Հայոց ինհայրիւր հազար զօրս. և կամ զնարդ նկուն լինէին, չարաչար մերժեալ լինէին յաշխարհէն Հայոց:

Այն եղև յետ այսորիկ գայր հասանէր Գումանդ Ըսպուհ, առաքեալ ի Ըսպուհոյ արքայէ Պարսից լինհարիւր հազարաւ, պարծեցեալ առաջի Թագաւորին: Այն գնացեալ, գայր հասանէր յաշխարհն Հայոց. և առաջնորդ ունէր ի ձեռին զԵրուժանն վատանշան, որ էր Ազդրունեաց տոհմին յերկրին Հայոց: Այսպա գայր հասանէր, և զեղծ գտանէր ըզսահմանապահսն՝ որք պահէին զսահմանս Հայոց: Այսպա լցան սիրտքեան ծաւալքեան ընդ ամ երկիրն Հայոց, աւար առնուլ քանդել աւերել զերկիրն ամ Հայոց աշխարհին: Այսպա կազմէր պատրաստէր Վասակ զօրավարն Հայոց, հասանէր անկանէր ի վերոյ արքայագնդին. և նախ զԳումանդ Ըսպուհն սպանանէր: Այն ապա ընդ ցիրն ասպատակ սիրտքեալ Հայաց ցիրքն, զամ զօրսն Պարսից կոտորեալ, անմի արարքեալ սպառեցին: Այսց միայն չարագործն Երուժանն միաձի ձողոպրեալ, փախչէր անկանէր յերկիրն Պարսից:

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս Դեհկան նահապետի, որ առաքեցաւ ի Շապհոյ արքայէ Պարսից ի վերայ Աբշակայ Հայոց արքային՝ զօրօք բազմօք. ապա հասանէր սատակէր զնոսա զօրավարն Հայոց Վասակ։

Յետ այսր ամի Շապուհ արքայն Պարսից զօրաժողով լինէր, և կոտնէր զօրս անչափս և անթիւ և անհամար խրբև զաւազ ծովու, և կուռ վառեալ՝ որք նիզակ՝ ի ձեռն առնուին, չորեքհարիւր բեւր զօրս բաղումս։ Այս զԴեհկան նահապետ, որ տոհմիկ խսկ էր ազգաւ տոհմին զօրավարացն Հայոց՝ այս ինքն մամիկոնենից, առաքէր զնա Թագաւորն Պարսից Շապուհ յերկիրն Հայոց ի վերայ Աբշակայ արքային Հայոց։

Վասայր հասանէր ի սահմանս երկրին Հայոց. ապա և զՀայացեան ոչ ինչ ծուլացեալ ի քուն գտանէր, այլ կազմ պատրաստք կային նմին գործոյ Չակատուն պատերազմի։ Այս զօրավարն Վասակ ելանէր ընդ առաջ նոցա եւթանասուն հազարաւ. հարկանէր սատակէր զզօրսն Պարսից, սպանանէր զիւր զաւգայեն զԴեհկան նահապետն, և զմնացեալսն առաջի իւր տանէր փախստական ձիահալածք արարեալք։ Այլ Մերուժանն արծրունի փախուցեալ ապրէր, որ առաջնորդէր նոցա։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Յաղագս Սուրէնայ Պահլաւի, որ եկն և նա զօրօք բազմօք. և սա և նմանն լինէր իրբև զառաջինն։

Այլ կրկնեալ լինէր զօրաժողով Շապուհ արքայ Պարսից, կազմէր պատրաստէր գունդս բազմութեան զօրացն և փիղս անթիւս, զօրս ընդհարս և պատերազմող. և Սուրէն Պահլաւ, որ ազգակից խսկ էր Աբշակայ Թագաւորին Հայոց, և Մերուժանն առաջ

նորդ նոցա. և արձակեաց ՚ի վերայ նոցա: Եպա քանզի և Վասակ զօրավարն Հայոց խաղաց գնաց ընդառաջ նոցա երեսուն հազարաւ, հարկանէր ՚ի դիմի զՎուրէն և սպանանէր, և զզօրսն կոտորեաց. բայց Վերուժան փախչէր:

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս Ապական Վսեմականի, զի եկն և նա յայս պատերազմս, և Նմա ձախողեցաւ օրպէս առաջնոցն:

Իսկ յետ Սուրենայ եկն Վսեմական. գայր հասանէր անչափ բազմութիւն և անթիւ զօրք, և Վերուժան առաջնորդ առաքեալ ՚ի Շապհոյ արքայէն Պարսից ՚ի գործ պատերազմի ՚ի վերայ երկրին Հայոց: Եպա առաքեցաւ ընդ առաջ նորա Վասակ սպարապետ զօրավարն Հայոց. հարկանէր սատակէր զՊակատն Վսեմական հանդերձ զօրքն, և զմին ՚ի նոցանէն ոչ ապրեցուցանէր: Եայց միայն փախչէր չարագործն Վերուժան:

ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս Զրվայ նուիրակապետի, որ առաքեցաւ ՚ի Շապհոյ արքայէն ՚ի վերայ Հայոց բազում զօրօք ՚ի պատերազմ, և սատակեցաւ իբրև զառաջինան:

Յետ այսորիկ Զրվայ նուիրակապետն գնաց արձակեաց Շապուհ արքայ Պարսից, մղել զպատերազմ Հայոց. և զՎերուժանն առաջնորդ ընդ նոսա առնէր: Եյն գումարեր գումարտակ բազում իբրև զաւազ ծովու բազմութիւն. և գային հասանէին յերկիրն Հայոց: Եպա ելանէր ՚ի դիմի հարկանէր նոցա Վասակ զօրավարն Հայոց. Զրվայն սպանանէր, և զզօրսն

զկեանն կոտորէր, և զկեանն առաջի իւրեանց փախստական առնէին։ Այն անգամ ևս ոչ կարէին ՚ի բուռն արկանել զՄերուժանն։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս Սուրենայ պարսկի, որ յետ Զրկայն ևս եկն ՚ի պատերազմն. և նա ՚ի բուռն անկեալ վասակայ, հանգերձ իւրովք զօրօքն ոտա- կեցաւ։

Այլ եղև յետ մահուն Զրկայ, Սուրէն պարսիկ խաղաց ՚ի Թագաւորէն Պարսից Շապհոյ. վաթսունն բիւրու եկն ետ, տալ պատերազմ ընդ Թագաւորին Հայոց Արշակայ. և առաջնորդ ունէր զՄերուժանն։ Այս ժողովեաց զամ զօրս նախարարացն և ասակ սպարապետն Հայոց. եւ անքն գիշերի անկանէր ՚ի ներքս ՚ի զակիչն ՚ի հետոտս, սուսեր՚ի ձեռն տան հազարաւ ընտիր ընտիր արամբք։ Զհասարակ կոտորէին հարկանէին և սատակէին զզօրսն Պարսից. և ձերբակալ առնէին զՍուրէն պարսիկ, և աճէին զնա առ արքայն Արշակ։ Այս հրաման տայր քարակոշկռ առնել զնա։ Բայց Մերուժանն ապրեր փախստեայ։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Յաղագս Հրեշտղումայ, որ առաքեցաւ յարքայէն Պարսից ՚ի վերայ Հայոց ինանսուն բիւրու. և այն անգամ ևս նշան յաղթութեան Հայոց կանխներ։

Այլ Հրեշտղումն արձակեր ՚ի պատերազմ ՚ի վերայ աշխարհին Հայոց։ Զի և սա իսկ ՚ի նմին յաջգէ Թագաւորին Հայոց ազգական էր, այլ բանիւ Շապհոյ արքայի գայր հասաներ հանդերձ զօրօք ինանսուն բիւրուն, տալ պատերազմ ընդ Հայաստանեայսն։

Այսպա կարգեր կազմեր պատրաստեր Վասակ զօրավարն Հայոց զամ զգունդս զօրացն, և դիմեաց ի վերայ նոցա մարտիւ պատերազմաւ։ Վախստականս տանէին զնոսա, արկեալ առաջի իւրեանց. և Հրեշտակն և Երուժանն վախչէին։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս Ազանայողային, որ յորէքհարեւր բիւրաւ գայր հասանէր ի Թագաւորէն Պարսից՝ տալ պատերազմ ընդ արքային Հայոց, եթէ զնա արդ նեղեալ պարտեցաւ ի ձեռն Վասակայ։

Իսկ Ազանայողանն, որ Պահլաւն էր ի տոհմէն արշակունեաց, որ նա խրոխտացեալ առաջի Շապհոյ Թագաւորին Պարսից, և գնայր գայր հասանէր ի սահմանս Հայոց։ Այսպա այս վաղագոյն ազդ լինէր Թագաւորին Հայոց Արշակայ. սոյնպէս և սա զնոր զօրքն կազմէր ի ձեռն Վասակայ իւրոյ սպարապետին։ Նա զամ նախարարսն Հայոց ընդ նմա գումարեալ, գայր հասանէր ընդ առաջ զօրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ. և զմնացեալսն փախստեայս առնէին յերկիրն Պարսից. և ինքեանք զդուշանային սահմանացն իւրեանց։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս Բոյեկան մեծ նախարարին Պարսից, որ եկն և սա քառասուն բիւրաւ. զոր հարկանէր Ջնջէր սպարապետն Հայոց Վասակ։

Յետ այսորիկ Բոյեկան մեծ նախարար Պարսից, և քառասուն բեւր ընդ նմա, գային հասանէին ի տըրպատական. կամէին սպատակ առնել յերկիրն Հայոց։ Այսպա զառաջեօք անդանէր Վասակ իւրով հայաստան գնդաւն, հարկանէր զզօրսն Պարսից, և զԲոյեկանն սպանանէր ի Ծաւրէժն։ Նա այրեր

անդ զապարանս Թագաւորին Պարսից. և գտեալ անդ զքարտէսն Թագաւորին Պարսից, նետաձիգ եւ դեալ՝ նետալից առնէր: Իսայց միայն փախչէր Մերուժանն ընդ նոսա եկեալ:

ԳԼՈՒԽ Խ.

Յաղագս Վաչականայ, որ եկն ի Հայս ուղեւատան բիւրուն, և կալ մեր առնուլ զՀայս. ապա և զնա վանեաց ապարտական Հայոց և զգօրս նորա:

Ա ԱՋԱԿԱՆ ոմն ի նախարարացն Պարսից արշաւէր յերկիրն Հայաստան, հանդերձ ուղեւատան բիւրօք: Իսպա ժողովէր զօրաւարն Հայոց Ա ասակ զամ զգօրսն Հայոց. և Թողոյր զԹագաւորն Իշրակ յամուր քերդին Դարիւնաց, և ինքն զօրավարն Հայոց Ա ասակ խաղայր անկանէր հանդերձ զօրօքն Հայոց զքանակաւն Ա աչականայ: Ասպանանէր զԱ աչականն, և կոտորէր զքանակն Պարսից. բայց միայն ապրէր սակաւուք փախուցեալ Մերուժանն, եկեալ առաջնորդ նոցա:

ԳԼՈՒԽ ԽԱ.

Յաղագս Մշկանայ և երեսուն և հինգ բիւրուն, որ արշաւէր յերկիրն Հայոց, եթէ զնուարդ կոտորեալ եղև ի Վասակայ և ի զօրաց Հայոց:

Այ Մշկան ոմն անուն, մի՛ ի նախարարացն Պարսից, և նա եկեալ ուղղէր Ձակատս ընդ Թագաւորին Իշրակայ: Իսպա զօրավարն Հայոց Ա ասակ Ձակատէր զզօրսն Հայոց ընդդէմ նոցա. և դէմ յանդիման մեծաւ բռնութեամբ միմեանց յարձակէին: Այ յաղթահարէր զզօրսն Պարսից գունդն Հայաստան. սատակէին, և ոչ մի՛ ի նոցանէն ոչ ապրեցուցանէր.

և յականէ յանուանէ զՔրիստոսն սպանանէին, և Մեռուժանն փախչէր ։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս Մարուձանայ և վաթսուն բիւրուն, թէ զնարդ եկեալք ի վերայ Թագաւորին Արշակայ, կամ զնարդ հարկանէր սատակէր զնոսա վասակ սպարապետն ։

Ամուիճ անուն մեծ նախարար գայր մարտնչէր ընդ երկիրն Հայոց ։ Յպա հանդերձ զօրօքն վաթսուն բիւրուն գայր հասանէր միջամբոխ[1] լինէր յերկիրն Հայոց. և առաջնորդ ի ձեռին ունէր զՄեռուժանն արծրունի ։ Յպա և պատահէր պատերազմաւ ի վասակ ՚ամ զօրօքն Հայոց. հարկանէր սատակէր զզօրսն Պարսից կորուսանէր, և զՄարուձանն սպանանէր ։ Բայց միայն փախչէր Մերուժանն ։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս զինդակապետին, որ իննսուն բիւրով եկն ի վերայ Հայոց Թագաւորին. ապա հասանէր սատակէր ի մեծ հարուածս զզօրսն Պարսից վասակ զօրավարն ։

Զինդկապետ ոմն, զօրագլուխ զօրացն Թագաւորին Պարսից, հանդերձ իննսուն բիւրուն գայր հասանէր ի սահմանս Ատրպատականի ։ Յպա կանխէր և ելանէր ընդ առաջ նոցա վասակ զօրավարն Հայոց. անկանէր ի գիշերի ի վերայ զակշին պարսից, և հանէր ընդ սուր առ հասարակ զամենեսեան, և սպանանէր զզինդկապետն ի մէջ բանակին ։ Բայց միայն Ճողպռեաղ ապրէր Մերուժանն վատանշան ։

1 Յերկուս օրինակս ԳԶՄՈՒԹԻՒՆ կայ ։

Յալագա աղքայորդւոյն Պապայ. Թէ զնարդ յայնի էին գնաքն ի նմա, և հանգերձ նոքօք գործէր զպղծութիւնն։

Պապ որդին Աղշակայ ծնաւ ի մօրէն Փառանձեմայ սիւնեցւոյ, որ էր լեալ կին Գնելոյն. զոր եսպան արքայն Աղշակ, և առ զկին նորա Փառանձեմ իւր կին, և ծնաւ ի նմանէ որդի՝ որ կոչեցաւն Պապ։ Այլ եղև իբրև ծնաւ զնա մայրն իւր, քանզի անօրէնն մարդ էր և ամենևին չայր ոչ երկնչէր, նուիրեաց զնա դիւաց. և զնաակեցոյն գնաք բազումք ի մանուկն, և վարէին զնա ըստ կամաց իւրեանց։ Սնաւ և աճեաց, և գործէր զմեղս. զպոռնկութիւն, զպղծութիւն արուաց և զանասնագիտութիւն, և զազրալի գարշելութիւն. բայց կարի զարուագիտութիւն։ Դարձեալ ինքն իգանայր այլոց, և այսպէս մըմկեալ թաւալեալ էր։

Այլ երբեմն իբրև զգաց մայրն նորա զարուագիտութիւնն, և ոչ կարացեալ համբերել պարսաւանացն վատանուանութեն, ասէ ցսենեկապան որդւոյն իւրոյ, Թէ յորժամ նա խնդրեսցէ ի պղծութիւն զարան՝ ընդ որ սովորն է անկանել, դուք զնա ի ներքս կոչեսջիք։ Յորժամ պատանեաքն Պապ ինքն ընդ անկողինն մտեալ՝ խնդրէր զարան ի պղծուէ, եմուտ մայրն նորա և նստաւ զառաջեաւ նորա՝ իւր որդւոյն։ Այլ սկսաւ ձչել վայել պատանեաքն, և ասէ ցմայրն իւր. Յարիցես գնասցես ի բաց, զի մեռանիմ խորովիմ կսկծիմ պայթիմ, Թէ ոչ յարիցես գնասցես ի տանէս։ Ասէ մայրն ասէ, Թէ ոչ գնայեալ ելից ի տանէ աստի։ Ասէ նա հաղ քան զհաղ ձչէր, բազմացուցանէր զվայելն։ Ասէ մայրն նայեցեալ տեսանէր աչօք իւրովք օձք սպիտակք, զի պատեալք էին զգահոյիցն ոտամբք, և ձապատէին ի վերայ պատանեկին Պապայ, մինչ դեռ ընդողմանեալ էր նա. կայր ի մահիճն, վայրէ և խնդրէր զպատանեական ընդ որ սովորն էր գիտանալ։ Ասէ մայրն գիտացեալ չիշեաց զայն, որոց ի ծննդեանն նուիրեաց զորդին իւր. գի-

տաց Թէ նոքա էն, որ ՚ի կերպարանս օձիցն Ճապա-
տէին զորդւոցն իւրով. յարտասուս հարեալ, ասաց.
Ա՛յ լճա՛, որդեակ իմ. զի քեզ տագնապ էր, և ես
ոչ գիտէի: Յարուցեալ գնաց եԹող զտեղին, կա-
տարել զկէտս ցանկութեն: Եւ այսպէս դիւօք վա-
րեալ, յայսպիսի գործս զամ աւուրս կենաց իւրոց
ըմբռնեաւ Պասն որդին Ա՛րշակայ, մինչ եՀաս ՚ի
Թագաւորութեն, մինչև ՚ի մահ իւր:

ԳԼՈՒԽ ԽԵ.

Ցաղագս Սակատան անդերձապետի, որ առաքեցաւ ՚ի Շապհոյ Թա-
գաւորէն Պարսից չորեքհարիւր հազարաւ, և վախոյց և զնա վատակ
զօրավարն Հայոց:

Ա՛պա յետ այսորիկ ժողովեաց Թագաւորն Պար-
սից Շ ապուհ զզօրս իւր, և հազարս չորեքհարիւր.
և Սակատան անդերձապետ զօրագլուխս նոցա: Ա՛պա
խաղացին գնացին ՚ի կողմանս Հայոց. Էկին ճաւա-
լեցան Ճակատեցան ընդ Թագաւորութեն Հայոց Ա՛ր-
շակայ: Ա՛պա ՚ի մի վայր եկեալք ամ մեծամեծք նա-
խարարացն Հայոց, խորհուրդ խորհեին. քանզի ոչ
առնուին յանձն երթել, Թէ Թագաւորն Ա՛րշակ մըր-
ցել ընդ նոսա ՚ի պատերազմ: Ա՛պա զօրավարն Վա-
սակ, հանդերձ ամ մեծամեծօքն և նախարարօքն
ամ Հայոց մեծաց, հարկանէր սատակէր զամ զօրս
Պարսից: Եւ սպանանէր Սակատան անդերձապետն.
բայց միայն ապրեր Երուժանն սրծքունի փախու-
ցեալ:

ԳԼՈՒԽ ԽԶ.

Յաղագս Շապուհայ տակառապետին, որ եկն հինգ հարեւր բիւրուն ի վերայ աշխարհին Հայոց. ապա և զնոսա հարկանէին սատակիչն զօրքն Հայոց:

ՇԱՊՈՒՀԱՆ տակառապետան գայր հասանէր հինգ հարիւր բիւրուն ի վերայ աշխարհին Հայոց, և կայր մնանել յաշխարհն Հայոց: Ապա կազմեալ պատրաստեալ գունդն զօրաց Թագաւորին Հայոց, և ինքն սակ զօրավարն Հայոց, ելանէր ի դիմի հարկանէր զօրացն Պարսից: Հարկանէին կոտորէին զզօրսն Պարսից, և սպանանէին զՇապուհ տակառապետն պարսկաց: Բայց միայն փախչէր Մերուժանն, ապրեալ լինէր:

ԳԼՈՒԽ ԽԷ.

Յաղագս Մոզաց հանդերձապետին՝ որ գայր հասանէր ուԹուտան բիւրուն, տալ Ճակատ ընդ Թագաւորին Հայոց. և սա կործանէր իբրև զառաջինան:

Ապա և Մոզաց անդերձապետան գայր հասանէր ուԹուտան բիւրու, տալ Ճակատս ընդ Թագաւորին Հայոց Արշակայ: Ապա գնային հասանէին ի մի վայր ՚ամ զօրքն Հայաստան երկրին և ինքն սակ զօրավարն սպարապետան, որ էր դայեակ Թագաւորին Հայոց Արշակայ: Եթէ կարի շատ աճապարեալ հասանէին, այնչափ ժամանեցին՝ մինչև ի Աղխաստան կարացին հասանել: Այս անդ ընդ միմեանս գունդն երկոքեան բախէին. ի պարտուԹէն մնանեցան զօրքն Պարսից, փախստական լինէին յերեսաց Հայոց զօրավարին և ՚ամ զօրացն Հայոց: Այս սպանանէին անդ զՄոզաց անդերձապետն, և զզօրսն անմի արարեալ. բայց միայն Մերուժանն ի տաճիկ ձի նստեալ փախչէր:

ԳԼՈՒԽ ԽԸ.

Յաղագս Համբարակապետին, որ իննսուն բիւրուն եկեալ մարտնչէր ընդ զօրս Թագաւորին Հայոց. և սատակեցաւ ՚ի Սաղամաս ՚ի զօրացն Հայոց, և ՚ի զօրավարէն Վասակայ։

Այն Համբարակապետն Թագաւորին Պարսից, և սա զայր հասանէր ՚ի գաւառն Կորձէից ՚ի Սաղամաս հանդերձ իննսուն բիւրօք։ Եւ զակիւղ ածեալ յամուր տեղւոջ միոջ, կամէր կռուել ընդ Թագաւորին Հայոց ընդ Արշակայ։ Այլա զայր զօրավարն Հայոց, հանդերձ տասն հազարաւ զինուս ընտիր զօրու. և զարանամուտ լինէր ընդ կողմանս բանակին, և ՚ի գիշերին անկանէր ՚ի զակիւղն։ Եւ զամենեսեան ընդ սուր հանէին առ հասարակ, և ոչ մի ոչ ապրեցուցանէին. բայց միայն Մերուժանն արտաքոյ գընդին գիպեալ, փախչէր։

ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս Մռիկանայ՝ որ քառասուն բիւրօք եկն կռուել ընդ Թագաւորին Հայոց, և ՚ի վասակէ և ՚ի զօրացն Հայոց սատակեցաւ։

Այն Մռիկան ոմն մեծ զօրագլուխն Պարսից քառասուն բիւրօք գայր հասանէր ՚ի մարտ պատերազմի ընդ Արշակայ արքային Հայոց։ Այլա և զօրքն Հայոց խրոխտացեալ հանդերձ իւրեանց զօրավարաւն Վասակաւ, գազանաբար առիւծաբար դէմ ընդդէմ յարձակէին. և անդէն սատակէին զզօրսն Պարսից, և սպանանէին զՄռիկանն։ Բայց Մերուժանն և այն անգամ փախչէր։

ԳԼՈՒԽ Ծ.

Յաղագս քակելոյ և քայքայելոյ Թագաւորութեն Հայոց, Թէ սրպէս ապստամբեցին բազումք ի նախարարացն Հայոց, և ձեռս հաուն ի Շապուհ արքայն Պարսից. և Թէ զիարդ հասեալ ցրուեցան այսր անդր, և նուաղեաց Թագաւորութին Հայոց։

Ո ԵՐԵՍՈՒՆ և զջորս ամս եհաուն պատերազմ երբ կիրս Հայոց ընդ Թագաւորին Պարսից, և յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան երկոքին կողմանքն։ Այլ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց Թագաւորին. Թողին զիւրեանց արքայն Արշակ։ Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին։ Գնա՛ խ բդեաշխն Աղձնեաց, և Գոշիրական[1] բդեաշխն, և Մահկեր տանն, և Գիհորականն, և Դասընտրեցին, և ամ նախարարութիւն Աղձնեաց, և զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, և չոգան կացին առաջի արքային պարսկաց Շապհոյ. և պարեսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Ձորայն կոչէն, դրունս դնէին. և զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց։

Այլ յետ սորա Դուդարաց[2] բդեաշխն, և յետ սորա Ձորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն, և ընդ նոսա Դարդմանաձորոյ տէրն։ Այլ որք մնա՛ էին ի նոսա կողմն այնր ձեռնէն, որ շուրջ էին գնաքօք, միահաղոյն ապստամբեցին ի Թագաւորէն Հայոց Արշակայ. և չոգան գնացին առաջի կացին Թագաւորին Պարսից Շապհոյ։ Ապստամբեցին Արշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, և ամուր գաւառն Ցմորեաց, և ամուր աշխարհն Կորդեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի Թագաւորին Պարսից։

Յետ այսորիկ ապստամբեաց ի Թագաւորէն Հայ-

1 Յերկուս օրինակս Նորչիբա-նան։

2 Յօրինակի միում Գոդոբեաց, և յայլում Գոռդոբեաց։

ոց և ձեռին իշխանութեն տանն Հայոց Թագաւո-
րին, որ էր զատրպայական աշխարհատն, յետս եկաց
'ի Թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Արաց.
յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կաղբից.
եթող զարքայն Հայոց և գնաց Աղամուտ տէրն
Նձտեայ, և ընդ նմա իշխանն մեծի Նոփաց. և
գնացին առ Թագաւորն Յունաց: Իջնաշխարհն
Ճնացեալքն յերկուացան յարքայէն, և ոչ կամէին
լսել Թագաւորին Իւրեանց, ոչ մի ինչ իրս՝ զոր նա
կամէր: Նա գձձեցաւ Թագաւորութեն մեծապէս:

Նա Ա ահան եղբայր Ա ասակայ ապարապետին, 'ի
մանկունեան 'ի տոհմէն, անկաւ 'ի բանս հրապուրա-
նաց նա 'ի Երուժանայ արծրունոյ քեռորդւոյ Իւրոյ:
Նա սա ապստամբեաց Ա՛ռշակայ յարքայէն Հայոց,
և ջգաւ եկաց առաջի Թագաւորին Պարսից Շ ապո-
հոյ: Նա հաձեաց զինուս նորա, և նախ ուրացաւ նա
'ի կենաց Իւրոյ՝ զոր 'ի Վ՚ահն ունէր, և յանձն առ
պաշտել զօրէնս մոգութեն. այս ինքն երկիր պագա-
նել կրակի և ջրոյ և արեգական, և ուրանալ զօրէնս
քրիստոնէութեն՝ յորում ծնեալն էր: Նա եղև նա
ըստ մտի Թագաւորին Պարսից. և մատուցանէր ևս
ամբաստան գրգռութեի զարքայէն Հայոց Ա՛ռշակայ,
և զնւրմէ տանուտեառնէն Ա ասակայ. և յիշեցու-
ցանէր ևս նմա զմահն Ա արգանայ, թէ յաղագս քո
մեռաւ: Նա եղև նա այնուհետեւ սիրելի Շ ապհոյ
արքային, և ետ նա կէն Ա ահանայ զԱմիղդովխտ քոյր
Իւր. և չնորհեաց նմա քարձ և զպատիւ՝ որ նոյնն
լեալ էր նախնեաց, և մնեբիմ փեսայ արար զնա Իւր
Թագաւորն. և 'ի մէջ զօրաց Իւրոց շքեղացոյց զնա,
և խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել: Նակ
Թիւն Հայոց պակասեաց յայսմ հետէ և յապա:

ԳԼՈՒԽ ԺԱ.

*Յաղագս թէ զնդրդ միաբան համօրէն աշխարհօրէն՝ որ միանգամ ինա-
ցեալք յաշխարհին՝ ժողովէին առ Ներսէս կաթողիկոսն Հայոց, և
զբազում հարկանէին առաջի նորա, և ձեռնթափ լինէին, և թողին ի
ձեռաց զիւրեանց Թագաւորն Արշակ։*

Այն ժողովեցան մարդիկ ամ աշխարհին իշխա-
նունքն Թագաւորութեն Հայոց. և եկին առ մեծ
եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք նա-
խարարք կուսակալք կողմակալք գաւառատեարք գոր-
ծակալք և դասապետք չինականաց. ի մի վայր ե-
կեալ ժողովեցան, խօսել սկսան ընդ Ներսիսի և
ասեն. Դուռ տէր, քեզէն գիտես, զի այս երեսուն ամ
է Թագաւորին մերոյ Արշակայ, զի ոչ մի ամ մեզ
հանդիստ ոչ եղև ի պատերազմէ. և համակ սրով և
սուսերօք և ի սլաքս և ի տեգս նիզակաց զբրտունս
երեսաց մերոց ջնջեցաք։ Եւ արդ ոչ կարեմք այսմ
ժոյժ[1] ունել, և ոչ այլ կարեմք տալ Ճակատս. զի
լաւ է մեզ՝ թէ ծառայեսցուք մեք Թագաւորին Պարս
սից որպէս ընկերքըն մեր արարին, զի Թողին զնա և
գնացին առ Թագաւորն Պարսից. և մեք սոյնպէս
առնելոց եմք, զի ոչ այլ ևս կարեմք կռուել։ Ի-
պէտ իցէ Թագաւորին Արշակայ կռուել ընդ Շա-
հոյ, Ա՛ասակաւ և Արդուկաւ աներաս իւրով տացէ
պատերազմ. այլ յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի
այլ ոչ ոք է երթալոց ի Թիկունս օգնականութեան
նորա։ Եւմա եթէ պէտ իցէ, տացէ պատերազմ, թէ
պէտ մի. մեր Թողեալ զնա՝ մեզ չէ վոյթ։

Իսկ ապա Ներսէս խօսէր ընդ նոսա որպէս օրէն էր,
եթէ տեսէք և քաջ զմնաւ ածէք, և յիշեցէք զբանն
ոն պատուիրանին միաբանութ որպէս պատուիրեաց
Ծառայիչ՝ հնազանդ կալ տէրանց իւրեանց։ Ո՛ի
ամենեքեան դուք աւադիկ կայք և վկայէք, մանա-

1 Յօրինակի միում ոյժ ուռնել, յայլում ոյժ ուռնել, և ի միւս այլ յոյժ ուռնել։

ւանդ զի ամենեքեան դուք կեցեալ էք յապդեդ ար-
շակունոյ . ոմանք ՚ի ձկնէ գաւառատեառըք լեալք ՚ի
նոցանէն , և ոմանք մեծամեծք աշխարհաց , ոմանք
աւագ աւագ աւանաց գեղից և գանձուց տեառըք
լեալ էք , և պէսպէս դաստակերտացն : Օ՛ի թէ-
պէտ և առ արարիչն ՝ձեր յանցաւոր էիցեն պեղծ ազգն
արշակունեաց , սակայն զձեզ կեցուցեալ զամենե-
սեան և յաղթոյ թօթափեալ է , զոմն գործով , զոմն
պատուով , զոմն իշխանութիւք , զոմն գործակալու-
թիւք : Օ՛ի թէպէտ և առ ՝ձեր մեղաւոր է Արշակ արքայ ,
և պարտական է տոկոսեաց արարչին իւրոյ՝ առ ՚ի տա-
նել նմա վրէժս , սակայն ՝ձեր վասն բազում և անչափ
մարդասիրութեանէ իւրոյ՝ խնայեաց ՚ի նա , և վասն նո-
ա ՚ի ձեզ :

Այլ դուք աւադիկ կամիք անկանել հեթանոսաց
՚ի ծառայութիւն , և կորուսանել զկեանս ձեր յայ , և
մերժել զընակ տեարան ձեր՝ զորս տուեալ է ձեզ յայ ,
և օտար տերանց ծառայեալ , և նոցին անմաք կրօնից
ցանկալ : Այլ լաւ լիցի ձեզ զնոյն սիրել և յանձն
առնուլ , և նմին հաւանիլ , և մերժել յանձանց ձե-
րոց զարարչապաշտ թագաւորն : Օ՛ի թէ բեւր չար
իցէ Արշակ , սակայն ՝ծածապաշտ է . և եթէ մեղաւոր
և՛ իցէ , սակայն թագաւոր ձեր է . որպէս և դուքդ
ասացէք առաջի իմ, թէ այսչափ ամք են՝ զի մար-
տեայք և՛ ՚ի վերայ անձանց ձերոց և հոգւոց , ՚ի վե-
րայ աշխարհի , ՚ի վերայ կանանց և որդւոց ձերոց :
Այլ որ մեծն է քան զՅՀ, ՚ի վերայ եկեղեցեաց ձե-
րոց , ՚ի վերայ ուխտի հաւատոց ձերոց , զոր ունիմք
՚ի ՚ձեր մեր ՅՀ ՎՀ . և համակ ՚ձեր ետ ձեզ յաղթուն
անուանն իւրոյ : Այլ արդ կամիք փոխանակ ՎՀի ա-
րարչին ձերոյ՝ ծառայել ձեզ անմաճն մոգուածէ անօ-
րինացն և նոցունն պաշտօնեիցն , ՚ի թողուլ նախ զա-
րարիչն մեր և զնորուն պատուիրանս՝ զոր պատուի-
րեաց ձեզ , միամիտ կալ առ տեարան մարմնաւորս՝
զորս նորայն արարեալ է . գուցէ բարկացեալ ՚ձեր ՚ձե
ձեր , և խլեցէ զձեզ արմատաքէն , և մատնեսցէ զձեզ
հեթանոսացն ՚ի չար ծառայութիւն ստրկութեան մինչև
յաւիտեան , և ոչ երբէք բարձցի լուծն ծառայութե
՚ի ձկնջ : Այլ բողոքէք դուք առ ՚ձեր , և նա ոչ լսիցէ

ձեզ. վասն զի անձամբ անկանիք դուք ի ծառայուն հեթանոս տերանց և անաձ անգէտ մարդկան, ի ձեռս հեթանոս արանց տերանց խստասրտաց. և քա զում չարի դիպեալ ելանիցէ առաջի ձեր, և ոչ կա րիցէք ձողոպրել յայնմանէ:

Իսկ նոքա, որ միանգամ էին ի մի վայր ժողովեալ, զաղաղակ հարկանէին. քարոզ կարդացեալ՝ միմեանց ձայն առնէին, շփոթէին ամբոխէին, և ասէին. Հա՛ սա գնասցուք, ասէն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս. զի այդմ բանիւ մեք ինչ ոչ կամիմք լսել: Սփռեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց:

ԳԼՈՒԽ ԾԲ.

Յաղագս Ընտիր արքայի, թէ զնարդ յայնմ ժամանակի լռեցոյց զպա տերազմ տալ ընդ Աբշակայ Հայոց Թագաւորին, և մեղմեհանօք առ ինքն կոչէր ի հաշտութիւն:

Արտաշատոյ արքայ Պարսից մեծաւ աղաչանօք և պատարագօք և հրովարտակօք և սիրով զԸրշակ առ ինքն կոչէր, զի յայնմ հետէ արասցէն ի մէջ իւրեանց սէր և խաղաղութիւն և բարեկամութիւն մեծ: Իսկ Ընշակ արքայ Թէպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ամ զօրքն աշխարհին Հայոց: Այս թէ կամաւ կամաւ՝ թէ ոչ կամաւ, սակայն եդ սիրտ՝ խոնարհուելոյ հրովարտակաւ առ Տաւրոս արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայի առ տէր իւր, տալ: Այս առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան:

Յաղագս կոչելոյն կրկին անգամ Ընտուհ արքայի զԱբշակ արքայ Հայոց . և նորա երթալոյն , և միահաղոյն կոմսելոյն նորա ։

Ա.Պա յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Ա.բշակ արքայ Հայոց Ընտուհ արքայ Պարսից , և ասէ . Իսկ եթէ հաճ ես եմք ես և դու ընդ միմեանս , եկ տեսցուք զիմեանս . և յայսմ հետէ իբրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս ։ Ա.յլ թէ ոչ տեսանես դու զիս , խնդրես զպատերազմ ՚ի մէջ իմ և ՚ի մէջ քո ։ Իսկ Ա.բշակ խնդրեր հաւատարիմ երդումն ուխտիւ ՚ի նմանէն , զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա ։ Ա.ւ նա ետ քերել՝ ըստ օրինացն հաւատարիմ երդմանց Թագաւորութէն Պարսից՝ աղ , կնքել վարազ նկարագիր մատանեաւ , և յղեաց ։ Օ.ի թէ իցէ և զայն երդման ևս զհետ ոչ եկեսցէ , ապա կազմ լիցի տալ Ճակատս պատերազմի ՚ի մէջ իւրեանց ։

Իսկ զայն ևս յորժամ տեսին և լուան ՚ամ մարդիկն երկրին Հայոց , ատիպեցին բռնաբօսեցին [1] զիւրեանց Թագաւորն զԱ.բշակ և շտապեցին , զի յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի Թագաւորին Պարսից Ընտուհ ։ Յայնմ հետէ , թէ կամաւ կամ՝ և թէ ՚ոչ կամաւ , յարեաւ Թագաւորն Հայոց Ա.բշակ , առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զդպայեակն իւր , խաղաց գնաց յերկրին Հայոց յերկիրն Պարսից առ Ընտուհ արքայ Պարսից · չոգաւ յանդիման եղև Թագաւորին Պարսից Ընտուհ ։ Իբրև տեսին զնոսա , արկին զերկոսեանն զարքայն Ա.բշակ և զսպարապետն Ղ ասակ , և պահեցին զնոսա արձակ ՚ի մէջ ազատագունդ փուշտիպան զօրացն ։ Ա.ւ կոչեաց արքայ Ընտուհ զարքայ Ա.բշակ , և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա · և նա յանցաւոր և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ ։ Պարձեալ անդրէն ՚ի նոյն գունդ փուշտիպանաց եւ տուն զԱ.բշակ արքայ ՚ի պահեստ ։

1 Յօրինակի միում Բռնապբօսեցին ։

Յաղագս Թէ որպէս զդիւրեան և զքաւդեայսն հարցեալ Ըսպհոյ՝ փորձէր զմիտս Աբրշակայ, և ասայր զնա յԱնուշ բերդն, և կամ զվասակ սպարապետն Հայոց չարամահ հրամայէր առնել։

Այն կոչեաց Թագաւորն Պարսից Շապուհ զդիւրեան և զաստեղագէտսն և զքաւդեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր՝ եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱբշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս։ Այս եդի ընդ նմա ուխտ խաղաղութե, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութենէն՝ի զվնասաւորութէ այնմ, զոր աւետարանն կոչէն. նախ այն երդմանն ստեաց։ Այս նմա բեւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց։ Ուստ ես կոչեցի զերիցուսնս եկեղեցւոյն Տիսփանի քաղաքի, և կարծեցի Թէ նոքա նենդութէք ինչ ետուն նմա զերդումն և ետուն ինձ ստել։ Այս պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս, իսկ ասաց ցիս Այրի երեց գվնասաւորն նոցա. ասեմն՝ Թէ մեք արդարութէք տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր։ Այս ես նոցա ոչ լուայ. և ետու հրաման՝ էւթանասունն զնոսա՝ի մի գուբ փողոտել, և զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր։ Այ աւետարանն՝ յոր երդուաւ Աբշակ արքայ, որ է գվնասաւորութէն ուսմանց նոցա քրիստոնէութենէն, կապեցի շղթայիւք. և կայ՝ի գանձի իմում։ Այայց բանքն Այաբեայ երիցոյ ուշ եղեն ինձ. և յիշեցի զի ասէր՝ Թէ մի սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի նոյն աւետարանն ածէ զԱբշակ արքայ՝ի ծունկս քո։ Այհաւասիկ բանք արդարութէք կատարեցան, զոր ասէրն։ Այայց Աբշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Աբեաց՝ զի ետուն ընդ նմա Ճակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք. և եղեալ է եկեալ ոտիւք իւրովք։ Այայց Թէ գիտէի՝ Թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և՝ի հնազանդութէն բարեաւ ուխտիւ, մեծապէս մե-

ծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն ։

Ասէ քաւդեայքն եւուն նմա պատասխանի և ասեն . Ողջ մեզ այսօր, և վաղիւն պատասխանի արասցուք քեզ ։ Ասէ ՚ի վաղիւ անդր ժողովեցան եկին առ քաւդեայքն և աստեղագէտքն , և ասեն ցաղքայն . Կայժմ զի եկեալ ես առ քեզ Թագաւորն Այոց Կրշակ , զիա՞րդ խօսի ընդ քեզ , կամ զինչ ձայն ածէ , կամ զիա՞րդ ունի զանձն ։ Ասէ ցաղքայն . Իբրև զմի ՚ի ծառայիցն իմոց համարի զինքն , Ողջ ոտից իմոց ջնջայ լինել ։ Ասեն նորա . Ո՛ր արա զոր ասեմքս քեզ . պահեա դու զնոսա աստէն , և առաքեա դու դեսպանս յերկիրն Այոց , և տուր բերել անտի Հող ՚ի սահմանացն Այոց իբրև բեռինս երկուս , և կահոյր մի ջուր ։ Ո՛ւ հրամայեաց տացես Հարկանել զկէս խորանի յատակ ՚ի բերեալ Հողոյն Այոց . և առցես քեզ զնոսա զձեռանէ արքային Այոց Կրշակայ , և տարցես նախ յայն տեղ՝ որ քնակ իսկ էգէ Հողն , և հարցցես զնա բանս ։ Ո՛ւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա , և տարցես ՚ի հայատակն ՚ի հարեալ Հողոյն . և լուիցես դու բանս ՚ի նմանէ , և ապա գիտասցես դու՝ եթէ կա՛յ յոսխոի քո և պահէ՞ զդաշինս քո թէ ոչ յետ արձակելոյ քո զնա ՚ի Այս ։ Ապա թէ ՚ի վերայ հայ Հողոյն խիստ լինչ բարբառեսցի , գիտասջիր՝ զի որ օր հասանէ յերկիրն Այոց , զնոյն ձայն ածէ ընդ քեզ , և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ , զնոյն ձակատս և զնոյն թշնամութիւն յուզէ ։

Ապա Թագաւորն Պարսից , քանզի զայս լուեալ ՚ի քաւդէիցն , տաճիկ ուղտուք արձակէ ՚ի Այս արս զՀողոյ և զՔրոյ , զի եկեսցեն բարձցեն նմա զՀմայան ։ Ո՛ւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն լինչ , զորմէ յղեացն ։ Ապա հրամայեաց տայր Թագաւորն Շապուհ , զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ՚ի բերեալ Հողոյն Այոց , և զՔրոյն ցանել ՚ի վերայ նորա . և զկէսն ՚ի նոյն Հողն զիւրոյ քնակութէ երկրին Թողուլ ։ Ո՛ւ ետ ածել զԿրշակ արքայ Այոց զառաջիւ իւրով , և զայլ մարդիկն ՚ի բաց Հրամայեաց կացուցանել . և զձեռանէ առեալ՝ շրջեր ձեռնտուն ։ Ո՛ւ երթալեւկս առեալ ընդ խորանն , ասէ ցնա յորժամ ՚ի

պարսիկ ՚ի հողոյն ՚ի վերայ Ջեմշիդ՝ թէ ընդէր եղեր իմ թշնամի, Աբշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ՚ի կնութիւն, և որդի լինձ առնել զքեզ. իսկ դու խոտացար ընդ իս, և քովք կամօք՝ առանց իմոյ կամացն՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս:

Ասէ Աբշակ արքայ, թէ մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կռուորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ՚ի քէն պարգև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղս ՚ի քէն, և փախուցին ՚ի քէն: Այս երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. և եկի աւասիկ առաջի քո: Այս աւասիկ ծառայ քո ՚ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է քեզ, արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մնա հապարտ եմ:

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջեր Ջեմշիդով, ՚ի չքմեղս առեալ զնա ածէր ՚ի հայ ակողմն ՚ի հողն Հարեալ յատակին: Իսկ երբև յայն տեղի հասանէր, և զՀայ զհողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսա ներ խօսել և ասել. ՚Ի բաց կաց յինէն ծառայ չար բագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ Թողից զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմնիցն Աբաւանայ արքայի: Օ՚ի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ Թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ [1]:

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տաներ յայն հող Պարսից. ապա աշխարհք զասացեալսն, խոնարհէր բուռն հարկանէր զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանին: Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել ՚ի հայ հողն, և խոտագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութեան դառնայր: Յայգուէ և երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի երբև ՚ի վերայ հա-

1 Ցերկուս օրինակս եկեալ:

բեալ Հողոյն տանէր , խաւսացեալ ամբարտաւանէր . իսկ ՚ի վերայ բուն գեհենոյն յատակին՝ և կայր , ՚ի զղջումն գառնայր ։

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց Թագաւորին Պարսից , քանզի սովորութիւն էր Հայոց Թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ՚ի նորին տախտին արկանել բազմական , օրինաք էին՝ զի Թագաւորն Պարսից և Թագաւորն Հայոց ՚ի միում տախտի բազմէին ՚ի միում գահոյս ։ Իսկ այն օր նախ զտող բազմականացն Թագաւորացն , որ անդն էին , զամենեցունց կարգեցին . հուսկ յետոյ զինի ամենեցունց ՚ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին , ուր զհայ հողն յատակին հաւասար էր ։ Այսպէս ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու , յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ ։ Արդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի . իսկ յոմն եկաց , ասէ ցԹագաւորն Հ ապուհ . Իմ այդ տեղի , ուր դուդ ես բազմեալ . յոմն կաց այդպէս , Թող ես այդը բազմեցայց , զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է . ապա եթէ յաչխարհն իմ հասից , մեծամեծ վրէժս խնդրեցից ՚ի քէն ։

Ապա տայր հրաման Հ ապուհ արքայ Պարսից , բերել շղթայս և արկանել ՚ի պարանոցն Արշակայ և յոտս և ՚ի ձեռս նորա երկաթս , և խաղացուցանել զնա ՚ի Ա՚նդմէնն՝ զոր Ա՚նուշ բերդն կոչեն , և պահել զնա մինչև անդէն մեռցի ։ Այս եղև ՚ի վաղիւ անդր ետ հրաման Հ ապուհ արքայ , ածել զառաջեաւ իւր զԱասակ մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց մեծաց . սկսաւ պատուհասել զնա , քանզի էր Ա՚ասակ անձամբ փոքրիկ , ասէ ցնա արքայն Պարսից Հ ապուհ . Ա՚ղուէս , դու էիր խանդարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ . դու ես այն՝ որ կոտորեցեր զԱ՚րիս այսչափ ամս , և զի՞ գործեաս . զմահ աղուեսու սպանից զքեզ ։ Իսկ վասակ տուեալ պատասխանի , ասէ . Ա՚յժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ , ոչ առեր զչափ մեծութեանն իմոյ . զի ցայժմ ես քեզ առեալ էի , և արդ աղուէս ։ Այլ մինչ ես Ա՚ասակն էի , ես սկայ էի . մի ոտնս ՚ի միոյ լերինն կայր , և միւս ոտնս իմ ՚ի միոյ լերինն կայր . յոր

ժամ յաջ ոտնս յհենուի, զաջ լեառն ընդ գետին տա-
նէի. յոլժամ ՚ի ձախ ոտին յհենուի, զձախ լեառն
ընդ գետին տանէի: Այսպա Հարցանէր Թագաւորն
Պարսից Շապուհ և ասէ. աղէ՝ տուր ինձ գիտել,
ո՛վ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ոտին տա-
նիր: Նա ասէ Ալ ասակ. Լերինքն երկուք, մի դու
էիր, և մի Թագաւորն Յունաց: Այն մինչ տուեալ
էր ինձ ՚ի, զքեզ ընդ գետին տանէի և զԹագաւորն
Յունաց, մինչև օրհնութիւն Հօրն մերոյ Երկնից
Հանգուցեալ էր ՚ի վերայ մեր, և ՚ի զմեզ ՚ի ձեռա-
նէ չէր Թողեալ. մինչև գնորա բանն արարաք, և խրատ
նորա եկաց առ մեզ, գիտացաք տալ քեզ խրատ.
մինչև մեզն աչօք բացօք անկաք ՚ի խորխորատ: Այդ
գինչ և կամիս, արա: Այսպա ետ Հրամանն Թագաւորն
Պարսից մորթել զզօրավարն Հայոց Ալ ասակ, և զմ-
մորթն Հանել և լնուլ խոտով, և տանել ընդ նոյն
բերդ Հնդմիշն՝ որ Հնյուշն կոչեն. ուր արգելին իսկ
զԹագաւորն Հրշակ:

ԳԼՈՒԽ ԾԵ.

Յաղագս գերութեանն և Հարուածոյն աշխարհին Հայոց և աւերա-
ծոյն, և գերութենէն տանելոյն ՚ի Պարս. և չարամահ լինելոյ տիկնոջն
փառանձեմայ. և քաղաքացն Հայոց աւերելոյ, և Հիմանց աշխարհին
սասպալելոյ:

Այն արձակեաց արքայն Պարսից Շապուհ ՚ի
վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս Հիշխանաց
անտի իւրոց, միումն Օձիկ անուն և միումն Կարէն,
հինգ Հարեւր բիւրով. զի եկեսցեն բրեսցեն քան-
դեսցեն զաշխարհն Հայոց: Նա եկին Հասին ՚ի վե-
րայ երկրին Հայոց: Այսպա իբրև ետես տիկին աշխար-
հին Հայոց կինն Հրշակայ Թագաւորին Հայոց փա-
ռանձեմ զզօրս Թագաւորին Պարսից, եթէ եկին
լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբ-
րև մեհտասան Հազար ազատս ընտիրս սպառազինս

պատերազմողս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ
'ի բերդն Աղտատերից՝ որ 'ի յերկրին արշակունեաց՝
յերեսաց զօրացն Պարսից: Այլա եկին հասին ամ
զօրքն Պարսից, շուրջ զբերդատեղն նստեին, պահ ար-
կանէին. պատեցին պաշարեցին: Իսկ նոքա 'ի ներքս
ամրացեալք, յուսային 'ի տեզուոյն ամուրէին. և
նոքա լակիշ ածեալ, նստէին արտաքուստ շուրջ զձո-
րօքն: Այլ նստան շուրջ զբերդատեղն ամիսք երեքտա-
սան, և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր
էր տեղին: Ածերեցին քանդեցին զերկիրն ամ. ելա-
նէին առնուին աւար զերկիրն ամ, շուրջ 'ի գաւա-
ռացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն և
զանասնոյ 'ի լակիշն իւրեանց. այլուստ բերէին համ
բարս, և ուտէին. և զբերդն պաշարեալ պահէին:

Իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ 'ի
Հայոց աշխարհին, զի առ Թագաւորն Յունաց դի-
պեցաւ: Օ՛ի Թէպետ և զայս ամ լուան ազատա-
գունդ բանակին Հայոց, չոգան իւրեանց խնդրել Թի-
կունս օգնականութե՛ն. և էր նոցա զօրագլուխ Ա՛ու-
շեղ որդին Ա՛ասակայ սպարապետին: Այլ չոգան նո-
քա առ իւրեանց աքսորդին. մինչ դեռ նոքա ընդ
Թագաւորին Յունաց խօսէին, հաւանեցուցանէին
զնոսա Թիկունք լինել իւրեանց: Իսկ յերկիրն Հայ-
ոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին
առ Փառանձեմ, զի ժուժկալ լինէցէ բերդին, և մի
ձեռս տացէ 'ի պարսիկս: Այլ դեսպանս ստէպ ստէպ
յորդւոյ նոցա 'ի Պապայ զմիաբանց գինի 'ի շաբաթու
շաբաթու եկեալ հասանէին. և գաղտ ընդ գաղտնի
դուռն ուրեմն մեքենաւորութե՛ 'ի բերդն մտանէին,
տային քաջալերս տիկնոջն. և յերկարեաց 'ի բերդին
ամիսս երեքտասան պաշարուին: Ա՛յլ ոքք գային և
երթային, ստէպ ստէպ գային՝ Թէ պինդ կաց, զի հա-
սեալ է Պապ որդի քո և գունդ կայսերական 'ի Թի-
կունս օգնականութե՛: Այլ յերկարեաց խրատոյն որ
հասանէր, զի ասէին. Ա՛յրիկ մի և սակաւիկ մի և
կալցիս ժոյժ, և ահա հասեալ է օգնականութե՛:

Այլ եղև յետ ջրերքտասանեւորդ ամենեցուն հա-
րուածոց՝ որ յայ հասին 'ի վերայ գաղթականին բերդ-
նորդեացն, զի մահ անկաւ 'ի վերայ նոցա՝ որք 'ի բեր-

դին էին, զի ՚ի ամէն հասին պատուհասք։ Ա՛ռաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որք էին ՚ի տաճարին. յանկարծակի ՚ի միում ժամու հարիւր այր, և ՚ի միւսում երկերիւր, և երրորդ հինգ հարիւր այր մեռան ՚ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային. և օր ըստ օրէ սատակէին։ Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին որք իբրև մեռան հազար, և կանայք իբրև վեց հազար. զի ամիս մի ոչ կացին, զի ամենեքեան՝ որ էին ՚ի բերդին՝ առ հասարակ սատակեցան։

Բայց մնաց ՚ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նաժշտօք։ Ա՛պա էին եմուտ գաղտ ՚ի նեբս ՚ի բերդն Հայոց մարզպետ նեղքինին, և Թէնամանեաց զտիկինն մեծապէս իբրև զեղջ մի։ Սկսաւ դնել Թէնամանս ազգին արշակունեաց, զի վատախորհուրդք են վատանշանք, կորուսին զաշխարհս եւս. իբաւի անց ընդ ձեզ այդ, և այլ զի անցցէ։ Նէ գաղտուկ, և փախեաւ։ Իսկ տիկինն Փառանձեմ իբրև էառ՝ ել Թէ միայն մնացի, եթաց զղուռն բերդին, և Թողացոյց զօրն Պարսից մտանել ՚ի բերդն։ Նա եկին կացան զտիկինն, և իջուցին ՚ի բերդէն։ Նէ տանէին ՚ի բերդն ՚ի վեր զօրավարն Պարսից, գերէին զգանձս Թագաւորին Հայոց, որ կային ՚ի բերդին. և սկսան կրել իջուցանել զնմա գանձն, որ կայր ՚ի բերդին։ Ո՛չինն տիւ և գիշեր համակ իջուցին զոր գտին Ա՛րտաշատ բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին։

Նա յետ այսորիկ եկին ՚ի քաղաքն մեծ Ա՛րտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս Մէհերեանց՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն։ Նա խաղացուցին ՚ի Ա՛րտաշատ ՚ի քաղաքէ լինն հազար տուն երդ Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի արշակունւոյ յերկրէն պաղեստինացւոց. և քառասուն երդ Հայ, զոր Ա՛րտաշատ քաղաքէ խաղացուցին։ Նա զնմա շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտս, և զքարակերտն քանդեցին. զպարիսպն ըստ նմին օրինակի և զնմա շինուած քաղաքին մինչև ՚ի հիմունս

ապականեցին, և ոչ Թողին մի, և ոչ Թողին քնաւ քար ՚ի քարի վերայ. անմարդի և Թափուր յամ քնակչաց իւրոց կացուցանէին։

Եւ եղև յորժամ աճին ժողովեցին զամ զգերին զքաղաքին ՚ի մի վայր, և անցուցին ըստ Տաւիթին կամուրջ, և առնէին համար գերւոյն, ՚ի մէջ շերտակ զօրացն պատէին, ասեն զօրագլուխքն Պարսից ցՕ՚ուիթ երեց քաղաքին Ռաստաշատու. Եկեալ ՚ի միջոյ գերւոյդ, երթ գնա դու յո պէտք է քեզ։ Եւ ոչ առնոյր զայս յանձն երէցն Օ՚ուիթն, այլ ասէր. Յո զնաչնդ տանիք, և զհովիւս տարայք. զի ոչ է մարթ հովուի Թողուլ զնաչն իւր, այլ պարտ է հովուի դնել զանձն ՚ի վերայ ոչխարին իւրոյ։ Եւ զայս ասացեալ եմուտ ՚ի գերուին, և խաղաց ՚ի գերուի ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից։

Ռնուին և զվ աղաղշապատ քաղաք. քանդէին բրէին զքաղաքն ՚ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ հինևատասն երդս հազար։ Ընդ ամ քաղաքս ոչ Թողուին ամենևին շինած. զի զամ տապալէին, քակեալ քանդէին. և ընդ ամ երկիրն ասպատակ սփռեալ զամ այր ՚ի չափ հասեալ կոտորէին, զկանայս և զորդիս ՚ի գերուԹիւն վարէին. և զգերդս ամ Թագաւորին Հայոց կալան, և լցեալ բազում ամբարօք՝ բերդակալս Թողուին։ Ռնուին և զմեծ քաղաքն զՆրուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայ. և զքաղաքն ՚ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին։ Ռպա առնուին և զքաղաքն Ռագրեւանդայ Օ՚արեհատան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, և ուԹ հազար երդ Հրեայ. և զքաղաքն ՚ի հիմանց տապալէին յատակէին։ Ռնուին և զքաղաքն մեծ Օ՚արիշատ՝ որ էր ՚ի գաւառին Ռձոյ Հովտի, չորեքտասան հազար երդ Հրեայ, և տասն հազար երդ Հայս. և զնա ՚ի հիմանց քանդեալ ապականէին։ Ռնուին և զամենայն քաղաքն Ռ ան, որ է ՚ի գաւառին Տոզեայ. և հրձիգ արարեալ, քակէին զհիմունս նորա. և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար Հայ, և ուԹ և տասն հազար երդս Հրեայս։

Օ այս ՝ամ բազմութե՛ն Հրէից, զոր գերեցին տա-
ւրան Յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն պաղես-
տինացւոց մեծի Թագաւորին Հայոց Տիգրանայ ՚ի
ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ՚ի Հայս
զքահանայապետն Հրէից զՀիւրկանդոս զառաջին
ժամանակաւ : Այլ էած մեծ արքայն Տիգրան զամե-
նայն զՀրէուքին զայն բնակեցոյց ՚ի քաղաքն Հայոց
յիւրում դարուն ՚ի ժամանակին : Իսկ յայսմ ժա-
մանակի աւերեցին զքաղաքն, և գերեցին զբնա-
կեալսն անդ. և զՅամ երկիրն Հայոց և զՅամ գաւառն
ընդ նմին գերեալ, խաղացուցեալ [1] և զայլ գերուին
գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փոր-
ի փոր, զաշխարհի աշխարհի, ածին ժողովեցին ՚ի քա-
ղաքն Ասխճաան. զի անդ էր զօրաժողով իւրեանց
զօրացն : Այսպա առին և զնա քանդեցին. անտի երդս
Հայս երկուս հաղարս, և Հրեայ երդս վեշտասան
հազարս անտի խաղացուցին գնացուցին Յամ գերու-
Թեամբն հանդերձ : Այլ անդէն յերկրէն Հայոց ոա-
տիկանս Թողին և վերակացուս, ՚ի ծառայութիւն
մատնել [2] զՔիացւորդս երկրին. և ինքեանք զտիկինն
Փառանձեմ առեալ, հանդերձ գանձիւքն և բազ-
մութե՛ գերեաքն յերկրէն Պարսից խաղացուցանէին.
և գնացեալք երթային տանէին հասուցանէին յեր-
կիրն Պարսից առ Շ ապուհ արքայն Պարսից :

Այլ եղև իբրև չոգան տարան զտիկինն Փառան-
ձեմ յերկիրն Պարսից, և զայլ Յամ գերուին Հայոց
և զգանձան կալան առաջի Թագաւորին և զտիկինն
Փառանձեմ, չնորհ մեծ ունէր Թագաւորն Պարսից
իւրոց զօրավարացն : Այլ իբրև կամեցաւ Թագաւորն
Պարսից Շ ապուհ Թշնամանս առնել ազգին աշ-
խարհին Հայոց և Թագաւորութե՛ն, ետ հրամանն
ժողովել զՅամ զզօրս իւր և զմեծամեծս իւր և զփո-
քունս և զՅամ մարդիկ աշխարհին իւրոյ՝ որ ինքն իշ-
խէր, և ՚ի մէջ ամենեքին ածել զտիկինն Հայոց զՓա-
ռանձեմն : Այլ հրամայեաց ՚ի հրապարակին իմն առ-
նել հրապոյրս մեքենայից, որով հրամայեաց զկինն
սպկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ ՚ի

1 Ցերիս օրինակս խաղացեալ: 2 ՚Ի չորս օրինակս մատնել:

խառնակութեն պոռնկութենն անասնական պղծուենն։ Ա. յսպէս սատակեցին զերկիրն զփառաւորեմ։ Իսկ զայլ գերին զամ տարան քանակեցուցին, որ Ա. յորեսատան, որ յերկրին խուժաստանի։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Յաղագս վկայութեն Զուիթայ երիցու յերկրէն Պարսից։

Ա.Յն ետրև չոգան տարան յերկրէն Պարսից զամենայն գերութի Հայոց, և զՕուիթ երէց Ա. ըստաշատ քաղաքի ունէին կապանօք առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ։ Նա նայեր Թագաւորն Պարսից Շապուհ, և տեսանէր զերէցն Օուիթ այր բարձր և անձնեայ, և՛ի տիոց մանուկ։ Եւ հեր զըլխոյն ալևորեալ էին, այլ մուրուքն դեռ տակաւին սեաւ էս կային։ Ա.պա յորժամ զառաջինն խօսել սկսաւ, ասէ. Եթէ տեսանէք զառնդ զայդը զջրութի. քանզի չայտ է, ՚ի հերաց այսի երևի՝ թէ կախարդ է. զի հերքն սպիտակ են, և մուրուքն սեաւ։ Իսկ երիցուն տուեալ պատասխանի, ասէ. Ով քեզ պէտ իցէ, այլ զինչ կամիս խօսել և առնել՝ խօսեայ. այլ վասն այդորիկ դիտեա, զի չիրաւունս սպիտակացեալ են նախ հերքս. զի բազում աւուրբք երէց էն, գոնեա հնգետասան ամօք քան զմուրուս նախապոյս էն։ Իսկ Թագաւորն հրամայեն տայր մինչև՚ի վաղիւն պահել զնա. իսկ ՚ի վաղիւն հրամայեն տայր ածել ՚ի հրապարակն շղթայիւք։ Նա ելին ոստիկանք արքունի հարցանել, եթէ իցէ՝ յանձն առցէ պաշտել զօրէնս մոգութենն, ոչ մեռցի։ Իսկ նա ոչ առնոյր յանձն. այլ կամեցեալ մեռանել խնդրէք վասն այ, երթեալ՚ի տեղի մահուան, և աղաչեայ զվերակացուս իւրոյ մահուանն, զի թողացուսցեն նմա սակաւ մի կալ յաղօթս։ Նա մատուցեալ յառաջադոյն, եդ ծունր և ասէ.

ԳԼՈՒԽ ԾԻ.

Աղօթք ՚ի ժամ մահուն Զաւիթայ։

ԱՍՐԱՒԶ մեր, որ արարեր զերկինս և զերկիր և զծով յոչընչէ, և ստեղծեր զմեզ ՚ի հողոյ. և զհողեղեղեալս այսպէս իմաստուն բանաւորս և կենդանիս արարեր։ Եւ ընդհեցեր մեզ զդիտուն քո, զոր ցուցեր ազգաց որդւոց մարդկան՚ի ձեռն սրբոց քոց մարգարէիցն կարապետացն քոց. և դու քեզնէն եկիր ի՚ջեր մարդացար երևեցար յերկրի, և ընդ մարդկան շրջեցար. և զկատարեալ իմաստութիւդ քո ընդհեցեր արարածոց քոց, զոր Աբաքեղովքն քարոզեցեր քոց ստացուածոց յաշխարհի։ Եւ վարդապետաքն սրբովք, զորս եդիր ՚ի քում յեկեղեցւոջ լուսաւորս, զամենեսեան իմաստնացուցեր։ Եւ զնս, զայր զանարժան, արժանի արարեր քում ծառայութեդ. և պատրաստեցեր զնս տառապեալս մանել և ուսանել ընդ ձեռօք քո սրբոյ և մեծի և քո քահանայապետին Ներսիսի՚ քո պաշտօնեին, և՚ի ձեռաց նորա առնուլ զձեռնադրութիւն երիցութե, և ՚ի ձեռաց նորա զնս նուիրեալ քեզ ՚ի քահանայութե։ Եւ յայնմ աշխարհի ձանձ պատրաստեցեր ըմպել զվկայութեան բաժակն փրկութե, զոր ըմբեղովք զանուն տէն կարդացից. զաղօթս իմ ես տէն տայ առաջի ՚ամ ժողովրդոյ նորա։ Ընդ որում քեզ փառք և զօրութի և իշխանութի միածնի Որդւոյ քո սիրելոյ Յիսի Քրիի, և կենդանարար Հոգւոյդ քում սրբոյ, յառաջ քան զամ յաւիտեանս այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ երբև զայս ՚ամ ասաց, բաղում մարդիկ ամբոխի ժողովեալ էին. ասացին զամենեն։ Ապա զայրացեալք վերակացուք սպանողութե՚ն, թէ ընդէր այն չափ երկար թողացուցին նմա խօսել, ապա տագնապաւ ՚ի տեղի մահուն հասուցանէին։ Իսկ նա մեծաւ խնդութե՚ կարկառեալ զպարանոցն, վճարեր ՚ի սուսերէն։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Յաղագս գալըն Ըսահակ Թագաւորին Պարսից յերկիրն Հայոց, և միանգամայն սատակել զինացեալս երկրին. և բիւր չարեացն, զոր կրեցին։

Ա.ՊԱ յետ այսորիկ խաղաց գնաց Թագաւորն Պարսից Ը ապուհ՝ ամ իշխանութեանն զօրաց իւրոց, և ջոգաւ ել յերկիրն Հայոց. և առաջնորդ ունէր ընդ իւր զԱ հան՝ ի մամիկոնեան տոհմէն, և զԱ՝երուժան Ա՝ռծրունեաց տոհմէն։ Ա՝պա հասեալ ասպատակէին յերկիրն Հայոց, և առնուին զամ գերին՝ ի մի վայր ժողովեցին։ Այս բազումք՝ ի նախարարացն Հայոց Թողուին զկանայս իւրեանց և զորդիս և զընտանիս, և փախեան ընդ այս ընդ այն գնացին։ Իսկ զամ կանայս նախարարացն Հայոց, զոր Թողին և փախեանն, ասպատակն ժողովէր. և ածէին գնոսա առ Ը ապուհ արքայ Պարսից։

Իբրև էր բանակն Ը ապհոյ Թագաւորին Պարսից՝ ի գաւառն Խագրևանդայ յաւերս քաղաքին Օ՜արեհաւանի, զոր յառաջնումն եկեալք զօրքն Պարսից աւերեցին, և ածէին ժողովեցին առաջի Թագաւորին Պարսից զամ գերին ճնացորդաց աշխարհին Հայոց, ապա հրաման տայր Թագաւորն Պարսից Ը ապուհ, զամ այր՝ ի չափ հասեալ կոխան արա՜րեալ փղաց, և զամ զկին և զմանուկ հանել ընդ ցից տայլից։ Հաղարք հաղարաց և բիւրք բիւրուց սպանանէին, զի ոչ գոյր Թիւ կամ համար սպանելոցն. և զկանայս ազատացն և նախարարացն զփախուցեալսն հրաման տայր ածել յասպարէզն՝ որ էր՝ ի Օ՜արեհ՜ւան քաղաքի։ Այս հրաման տայր հոլանել զամ ազատ կանանկն, և նստուցանել աստի անտի ասպարիսն. և ինքն Ը ապուհ արքայ հեծեալ՝ ի ձի, շաւակի անցանէր առ կանանսոսին. և որ յակին գայրն, մի մի՝ ի նոցանէ պղծեալ՝ ի խառնակութեն տանէր առ ինքն։ Վ՜անզի մօտ յասպարէզն հարեալ էր խորանն, յոր առեալ մտանէր գործել զանօրէնութեն. և այն

պէս զբազում աւուրս առնէր զայն ընդ կանայսն։ Եւ զազգն Իւնեաց տոհմին զՅամ զայր ՚ի չափ հասեալ կոտորեցին, և զկանայս սպանին. և զՅամ մանր մանկտիսն նեղբևինիս հրամայէր առնել, և խաղացուցանել յերկիրն Պարսից։ Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Ինդուկայ, որ եղև պատերազմ ընդ Ներսեհ արքայ Պարսից։

Եւ տայր հրաման Շապուհ արքայն Պարսից զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել, հրամայեաց և բերդակալս կացուցանել։ Եւ զազատ կանայսն անդէն ՚ի բերդեանն բաշխէր և Թողոյր. զի եթէ ոչ արք նոցա եկեսցեն նմա ՚ի ծառայութիւն, սպանցեն զկանայս նոցա բերդակալքն՝ առ որս եթող զնոսա։ Եւ եթող յաշխարհին զՕլին և զԱրբէնն, զնոցա իշխանս զօրաց բազմաց. և զիշխանութիւն մնայոդացն էտ ՚ի ձեռս Ահանայ և Երուժանայ, և ինքն գնաց Ատրպատական։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Յաղագս թէ իբրև մնացին Ահան և Երուժան, թէ զինչ չատ չարիս գործեցին ընդ երկիրս Հայոց. և կամ զնարդ սատակեցան Ահան և կինն իւր յիւրեանց որդւոյն։

Ընդունէին Ահան մամիկոնեան և Երուժանն զարծրունի, սոքա երկոքեան արք պիղծք անօրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ ՚ծածկաշտութենն, և զանաճն Ազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետև յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից քրիստոնէից յատ կողմանս Հայոց՝ գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց։ Եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր ՚ի բուռն արկանէին, Թողուլ զծածկաշտութիւն և ՚ի պաշտօն դառնալ Ազդեզանցն։ Եւ յետ այսորիկ տային հրաման Ահան և Երուժանն, զՅամ կա-

նայս փախուցեալըն զնախարարացն՝ որ թողինն և գնացինն, տային հրաման ՚ի բերդեանն զի նեղեսցեն զնա՝ դարձուցանել յօրէնս Աղգեզանց. եթէ ոչ առնուցուն յանձն, սատակեսցեն զամենեսեան չարաչար։ Եւ բերդակալեանն յորժամ զայն հրաման ընկալան, ամ՝ որ ո՛ր առ ուժիք էին՝ նեղեցին զնոսա ըստ հրամանին տուելոյ։ Այլ երբև ոչ մի ոք յանձն առնուին ուրանալ ՚ի քրիստոնէութենէն, չարամահ սպանանէին զամենեսեան յամենայն ՚ի բերդն՝ յորս տուեալ էր գնոսա անդ։

Իսկ Ա ահմանայ էր քոյրաթիւ ՚ի մամիկոնեան տոհմէն, քոյր Ա արդանայ, Չամազասպուհի [1]. և էր նա կին Վարեգնի տեառնն Աշտունեաց գաւառին։ Օ սա եթող և փախեաւ Վարեգին այր իւր ՚ի ժամանակին, յորում եկն Շապուհ արքայ Պարսից յերկիրն Հայոց. իսկ զտիկինն Աշտունեաց ՚ի միջնաբերդն Ա ան բերդի, որ էր քաղաքն ՚ի Տոսբ գաւառին։ Իսկ անօրէնն Ա ահան և Ա երուժանն հրամայեցին տային բերդակալին՝ զի նեղեսցէ զկինն. եթէ ոչ առցէ յանձն զօրէնս Աղգեզանցն, տայր հրամայեաց կախել զբարձր աշտարակէն և սպանանել։ Իբրև ոչ առնոյր յանձն Չամազասպուհի պահել զօրէնս Աղգեզանցն, հանէին ՚ի բարձր աշտարակն՝ որ կայր ՚ի վերոյ բարձր գահոյն քարին, որ Հայկն ՚ի կողմն ծուլակին ՚ի գետոյ կուսէ. և մերկացուցին զնա իբրև ՚ի մօրէ. և արկեալ կապ զոտիցն, գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կուսէ. և այնպէս մեռաւ ՚ի կախաղանին։ Եւ էր նա սպիտակ մարմնով, և պայծառ տեսանելոյն. կայր կախեալ յերևոյթ տեսիլ նշանակի, և փաղփաղեր մարմնին ՚ի բարձուէն զօր օրինակ ձիւն սպիտակութեան. և բազում մարդիկ ժողովեին տեսանել օր ըստ օրէ, զի իբրև սքանչելի ինչ երևեր յաշխարհին։ Յայս տեսիլ տիկնոջն Չամազասպուհեայ՝ էառ կին մի գայեակին Նորին, ագաւ նա պարեգօտ մի՝ զոր անակիրզս [2] կոչեն, և էած գօտի ընդ մէջ իւր. և կայր առ բարձր գահոյն քարին ՚ի ներքոյ աշտարակին՝ զօրմէ կախեալ էր

1 Ցամ օրինակս Ե Չամազասպուհի։ 2 Ցերիս օրինակս անիկաղս։

զանձն իւր, մինչև կողոպտեցաւ ամ մարմինք դիոցն։ Եւ որչափ ի վայր վայրկին [1] ոսկերքն, նա իւր ծոցն ժողովէը բովանդակ զամ զոսկերս սանկն. և առեալ գնաց իւրմն։

Եւ այնչափ չար էին արքն երկոքին, զի անգամ իւրեանց ուժեք ոչ ողորմէին. այլ անհնայուԹ֊ը դա տեին զօտարս և զիւրեանց ընդանիս։ Ետրուշանս շի նեին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Ազգեզանց. և բազում չիւրեանց սեփ֊ հականն շինէին ատրուշանս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յոստումն Ազգեզանցն։ Ետպա որ֊ դի մի Ա ահմանայ, անուն Ամուել, եհար սատա֊ կեաց զԱհան զհայր իւր, և զԱրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շ ապհոյ Պարսից Թագաւորին. և ինքն փախստական լինէր յերկիրն Խաղտեաց։

1 ի միում օրինակի ի վայր վայրէն։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՅԶԱՆՏԱՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ԶՈՐ ԱՍԵԼՈՑ ԵՄ ԿԱՐԳԵԼ ԶԴՊՐՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ
ԿԱՆՈՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ա. Յաղագս Թագաւորելոյ Պապայ յերկիրն Յունաց, և գալոյ ՚ի Հայս, և յինքն ունելոյ զաշխարհն. և կամ որ միանգամ գործեաց որպէս յաղողեցաւ:

Բ. Յաղագս Մուշեղայ զօրավարին Հայոց՝ Թէ որպէս անկաւ ՚ի վերայ բանակին Շապհոյ Թագաւորին Պարսից, և եհար զնոսա ՚ի հարուածս անհնարինս, մինչ զի միաձի Շապուհ Ճողոպրէր:

Գ. Յաղագս Հայր մարդպետի, Թէ որպէս սպանանել հրամայեաց Թագաւորն Պապ:

Դ. Յաղագս դարձեալ պատերազմին, որ եղև ՚ի Բագաւանի յաւանին ՚ի Բագրեւանդ գաւառին ընդ Պապ Թագաւորին Հայոց և ընդ զօրսն Պարսից:

Ե. Յաղագս միւսոյ պատերազմին ընդ Հայս և ընդ Պարս ՚ի Գանձակ Ատրպատականի. ևս վասն դուշակութեանն Ուռնայրի, զի յայնմ և յաղթութիւն լինէր Հայոց:

Զ. Յաղագս Դղակայ մարդպետի, որ կացուցին սահմանակալ. և նա խորհրդակից եղեալ Պարսից Թագաւորին, Թէ որպէս խոստանայր մատնել զարքայն Հայոց. և վասն մահուն Դղակայ ՚ի Պապայ արքայէ:

Է. Յաղագս մահուն Արշակայ Թագաւորին Հայոց, Թէ զնաւարդ մեռաւ յերկիրն Խուժաստանի ԱՆուշ բերդի ինքնին ձեռօք, և Դրատամատն լինէր պատճառք մահու նորա:

Ը. Յաղագս Թէ զնաւարդ լռեաց պատերազմ ՚ի կողմանցն Պարսից. ապա սկսաւ սպարապետն Մուշեղ ոգորել ընդ այնոսիկ, որք միանգամ ապստամբեցին ՚ի Թագաւորէն Հայոց. զգաստութեամբ կոյսս կոյս հարկանէր մեծաւ պատերազմաւ, նախ յաղագս տան արքային Հայոց՝ որ ԱՆուշայականին էր:

Թ. Յաղագս Նոշիրականի:

Ժ. Յաղագս Կորդուաց և Կորդեաց և Տմորեաց:

ԺԱ. Յաղագս Մարաց։
ԺԲ. Յաղագս Արձխեաց։
ԺԳ. Յաղագս Աղուանից։
ԺԴ. Յաղագս Կասբից։
ԺԵ. Յաղագս Վրաց։
ԺԶ. Յաղագս դաւառին Աղձնեաց։
ԺԷ. Յաղագս մեծաց Ծոփաց։
ԺԸ. Յաղագս Անգեղ տանն։
ԺԹ. Յաղագս դաւառին Անձեայ։
Ի. Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց։
ԻԱ. Յաղագս եպիսկոպոսապետին Հայոց Ներսիսի, Թէ որպիսի այր, կամ զինչ շատ գործեաց աքանչելիս։
ԻԲ. Յաղագս Թադաւորին Պապայ, Թէ զիարդ էր դիւաք, կամ որպէս անօրէն։
ԻԳ. Յաղագս յանդիմանութեն սրբոյն Ներսիսի, զի հանապազ Թշնամի էր Թադաւորին Պապայ վասն մեղաց։
ԻԴ. Յաղագս մահուն մեծի եպիսկոպոսապետին Ներսիսի ՚ի Թադաւորէն Պապայ, որպէս կամ զիարդ սպանաւ ՚ի նմանէ։
ԻԵ. Յաղագս տեսլեանն, որ երևեցաւ արանցն սրբոց Շաղհատայի և Եփիփանու, մինչդեռ նստէին ՚ի լերինն։
ԻԶ. Յաղագս Շաղհատայի սրբոյ։
ԻԷ. Յաղագս Եփիփանու սրբոյ։
ԻԸ. Յաղագս մեծամեծ նշանաց աքանչելեացն՝ որ երևեցաւ յայ ՚ի Մամբրէ յետ գնալոյն անտի Եպիփանու։
ԻԹ. Յաղագս Յուսկայ՝ որ էր ՚ի տոհմէն Աղբիանոս եպիսկոպոսի, զոր կացոյց փոխանակ Ներսիսի Թադաւորն Պապ յիւրոց կամաց, առանց մեծի եպիսկոպոսապետին Կեսարու. և վասն այնորիկ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւն հայրապետացն Հայոց զեպիսկոպոսս ձեռնադրել։
Լ. Յաղագս սգոյն՝ որ սգային զհայրապետն Ներսէս, և զի նէին զնմանէ կաթոգին։
ԼԱ. Յաղագս Թէ որպէս զկնի մեռանելոյն հայրապետին Ներսիսի, Թէ որպէս ՚ի նախանձ մտեալ տապալեաց Թադաւորն Պապ զնմ զեղեալսն կրօնսն կանոնիցն, որ ինչ միանգամ եղան ՚ի Ներսիսէ առ կենդանութիւնն նորա ՚ի նմանէ։
ԼԲ. Յաղագս Թադաւորին Պապայ, Թէ որպէս խոտորեցաւ ՚ի Թադաւորէն Յունաց, կամ որպէս սպանաւ ՚ի զօրագլխացն Յունաց։
ԼԳ. Յաղագս որ ինչ խորհեցան իշխանքն Հայոց. ապա անցին կացին լուռ։
ԼԴ. Յաղագս Թադաւորելոյն Վարազդատայ ՚ի վերայ երկրին Հայոց յետ Պապայ։
ԼԵ. Յաղագս Թէ որպէս ՚ի բանս չարախորհուրդս և անմիտ

մարդկան եկեալ թագաւորն վ արաղդատ , և զզօրա-
վարն Հայոց զՄուշեղ սպանանէր ։

ԼԶ. Յաղագս անմտութեե կարծեացն ընդանեացն մուշեղի և այլ մարդկան ։

ԼԷ. Յաղագս գալոյն Մանուէլի ՚ի գերութէէն Պարսից , և խնդրելոյ զերէժն Մուշեղայ , և հալածելոյ զթագաւորն զվ արաղդատ յերկրէն Հայոց ։

ԼԸ. Յաղագս թէ զնարդ սպարապետն Հայոց Մանուէլ հանդերձ եամ աշխարհաւն ձեռս ետ ՚ի թագաւորն Պարսից , և մարզպան և աշխարհակալ աշխարհին Հայոց ած զառաջինն ՚ի թագաւորէն Պարսից զՍուրէն , և մեծաւ պարգեւօք մեծարեցաւ ՚ի նմանէն . կամ որպէս խորամանկութէ Մերուժանայ արծրունւոց եղև ապըստամբութէին , և պատերազմունք յուզեցան ։

ԼԹ. Յաղագս Գուրմանդ Շապհոյ , զի առաքեցաւ ՚ի թագաւորէն Պարսից տալ պատերազմ ընդ Հայս , և սատակեցաւ ՚ի Մանուէլէ զօրօք իւրովք հանդերձ ։

Խ. Յաղագս վ արազայ , թէ որպէս կամ զնարդ առաքեցաւ ՚ի թագաւորէն Պարսից , և սատակեցաւ ՚ի Մանուէլէ իբրև զառաջինն ։

ԽԱ. Յաղագս Մռկանայ , որ առաքեաց դարձեալ թագաւորն Պարսից ՚ի վերայ երկրին Հայոց և ՚ի վերայ Մանուէլի զօրօք բազմօք , և սատակեցաւ ՚ի Մանուէլէ իբրև զառաջինն ։

ԽԲ. Յաղագս խաղաղութէե Հայոց ամն եւթն ։

ԽԳ. Յաղագս Մերուժանայ արծրունւոց , որ հանդերձ զօրօքն Պարսից եկն ՚ի վերայ Մանուէլի , և սատակեցաւ ՚ի նմանէ ։

ԽԴ. Յաղագս թէ զնարդ թագաւորեցոյց Մանուէլ մեծ սպարապետն զմանուկն Աբշակ . ապա և ինքն Մանուէլ մահու մեռանէր ։

ԹՈՒՉԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ՄԱՏԵՆԻՑ ՏԱՆ ՈՐԴԻՈՑՆ ԹՈՐԳՈՄԵԱՑ ԻՀԽԱՆԻՆ ՀԱՑՈՑ

ԳԼՈՒԽ Ա

Յաղագս Թագաւորելոյ Պապայ յերկիրն Յունաց, և գալոյ ՚ի Հայս, և յինքն ունելոյ զաշխարհ իւր. և կամ որ ինչ միանգամ գործեաց, և յաջողեցաւ նմա:

Զպա յետ այսր ամի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն Միայելոյն՝ որ միանգամ Միայեալ էին, և չոգաւ հանդերձ նոքօք առ Թագաւորն Յունաց: Նա եղոյց ընդ պաղատանս աշխարհին Հայոց, և զամ անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, և խնդրեաց ՚ի կայսերէն զՊապ զորդի Ընչակայ Թագաւոր ՚ի վերայ Հայոց աշխարհին: Ուեծ Թագաւորն Յունաց Թագաւորեցոյց զՊապ զորդին Ընչակայ ՚ի վերայ աշխարհին Հայոց, որպէս և խնդրեաց նա ՚ի նմանէ. և մեծապէս Թիկունք լինէր արքային Յունաց, և զՏէրենտ անուն սպարապետն և զԱրձիւն ոմն կոմս արձակէին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հարիւր քաւոր:

Այս եկեն հասեն ՚ի սահմանս Հայոց. և Մուշեղ լինէր զօրավար սպարապետ Հայոց փոխանակ Ա՛ա սակայ հօր իւրոյ։ Այս գայեն ՚ի մի վայր ժողովեցեն համ ցրուեալք փախուցեալք թագուցեալք, որ էին յերկրին Հայոց. գային և ՚ի մի վայր բովանդակեին, և լինէին ՚ի խնդիր սրբոյն մեծի Հայրապետին Գրիգորիսի Թագաւորն և համ մարդիկ աշխարհին Հայոց, մեծամեծք գաւառակալք և գաւառատեարք։ Ամբք եկեալք ժողովեալք, զկաթողիկոսն գմեծն Գրիգորիս խնդրեին. զի գիտեին թէ նա կարող է աղօթս առնել, և խնդրել յայ վասն շինուածէ համ աշխարհին Հայոց, և փրկել ՚ի թշնամեացն. և դարձեալ զինչ և խնդրեր յայ, տայր ած նմա. և միւս ևս, զի իմաստութեամբ իւն կարեր սոցա զգտակար իրատն մատուցանել։ Ա՛ն այսորիկ ոչ եթէ փոքր ինչ էր խնդիրն այնպիսւոյն առն լինել, որ կարեր նոյ զօգուտ իրատու իմաստութէ շնորհել, և ըստ ժամանակին դիպացն պատահելոյ՝ միտս օգտակարս դնել, որովք զհանապարհս՝ որ կայրն առաջի գնալ մարթասցեն։

Այս ինքն Թագաւորն պատ երթայր հասանէր գտանէր զեպիսկոպոսապետն Գրիգորիս հանդերձ աւագ գայնովն Հայոց. աղաչէր զնա, զի հայր Հայոց համ օգտի իրատու առաջնորդ՝ և խնդրեսցէ ևս վասն նոյ։ Այս մեծաւ ջանիւ հազիւ հաւանեցուցին զնա երթալնա ընդ նմ ՚ի բանակին արքունի. զի յաւուրց ժամանակին ՚ի մահուանէն Պետեղոյ մինչև յայն ժամանակն Թագաւորութէն Պապայ ոչ էր երթեալ նա ՚ի բանակին արքունի։ Այս յայսմ ժամանակի մեծաւ աղաչանօք տարան զնա ՚ի բանակին արքունի ընդ ինքեանս. և նա էր նոյ վերակացու և իրատատու, կարգիչ և առաջնորդ. և հանապազ խնդրեր վասն նոյ յայ։ Այս էր իմաստութէ իրաց առաջնորդ, և հանապազ կցորդ հոգւոյ և բարձիչ վշտաց աղօթիւք իւրովք. և յամենայնի համիւ երջանիկ հայր երևեալ։

Այս կարգեր կալմեր յօրիներ Մուշեղ սպարապետ զամ զգունդս Հայոց զօրացն, և առնէր հանդէս համ զօրացն գնդին՝ որ հասեն ՚ի ձեռս նոր տանհազար։ Այս ածեր զամ հանդէսն կարգեալս և պատ-

բաստեալս վառեալս ի պատերազմ, զդրօշս փողփո-
ղեալս և նշանս արձակեալս. և յուցանէր զհանդէս
զօրացն Հայոց սպարապետին Հայոց Մուշեղ առաջի
իւրեանց Թագաւորին Պապայ, և մեծի քահանայա-
պետին Ներսէսի, և առաջի Տէրենտի և Ղեկի զօ-
րագլխացն Յունաց։ Եւ մեծ շնորհակալութիւն առ-
նէր նմա Թագաւորն Պապ Հայոց, և մեծամեծ
պարգեւս շնորհէր զօրավարին Մուշեղի. և սոյնպէս
զօրագլուխքն Յոռոմոց շնորհակալ լինէին նմա։
Սոյնպէս և եպիսկոպոսապետին Ներսէս օրհնէր զզօ-
րավարն Մուշեղ, և ասէր. Տէր Աստուած օրհնեսցէ զքեզ,
և յաջողեսցէ քեզ, և տացէ քեզ զյաղթութիւն շնորհս
զհամաւուրս կենաց քոց. ի ձեռն քո և ի ձեռն ազ-
գի քո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչև յաւիտեան։

Եպպա զօրավարն Հայոց Մուշեղ գունդ կազմեաց
պատրաստեաց, և յառաջեաց հանդերձ Հայոց զրնդ-
դաւն. առաջապահ անցանէր առաջի Թագաւորին
Պապայ և զօրացն Յունաց կայսերական գնդիւն։
Եպպա ի Վարանաղեաց գաւառին լինել յարձա-
կեցաւ Մուշեղն։ Իբրև գայր[1] առաջապահն հասա-
նէր ի միջնաշխարհն Հայոց, սպանանէր Մուշեղ
զզօրագլուխն Պարսից զԱրբէնն և զՕ իկն, և զամ
զզօրսն արկանէր ի սուր սուսերի իւրոյ, և ոչ ի զոք
ապրեցուցանէր։ Եւ մինչև ի քուն ի սահմանսն ի
Վանճակ Ատրպատականի զերկիրն յիւր վաստեալ
բռնացեալ ունէր։

Եւ եկն եմուտ Թագաւորն Պապ յերկիրն Հայոց,
և Թագաւորեաց ի վերջ նոր. և Թափեաց յինքն զա-
մուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր պարսկացն. և
բերդն Վարճնից, որ է յերկին Կոգայ, ուր կային
զանձք արշակունեացն սաստիկ չոյժ։ Վանդի դի-
պեցան մտերիմք բերդակալքն. զի Թէպետ ի ժա-
մանակին՝ իբրև տարան զԹագաւորն Հայոց զԱրշակ
ի Պարս՝ չոյնմ հետ ժամանակէ մատրեան ընդ
բերդին ընդ այնմիկ պարսիկք, և ոչ կարացին առ-
նուլ, մինչև եկն Պապ Թագաւորն յերկիրն Հայոց.
զի պահեցաւ զանձն և եհաս ամբողջ ի Պապ Թա-

1 ի չորս օրինակս Մուշեղն իբրև գայլ։

գաւառն մինչև եկին։ Եւ զօրն Յունաց յԱդանդ և ի Նախիջն ընդ ամ երկիրն Հայոց բաշխեին ընդ ամ գաւառան. բայց միայն Աղբուժանն չարագործ փախչէր միաձի։

Իսկ Ա՝ուշեղ զօրավարն Հայաստանեաց շրջէր ընդ երկիրն, և աւերէր զատրուշանսն Ա՝ազդեզանցն։ Իսկ զԱ՝ազդեզուհսն, որ միանգամ՝ի բուռն արկին, զամենեսեան տայր Հրաման սպարապետն Ա՝ուշեղ ունել և հրով խորովել։ Եւ բազում բերդակալս բերդացն չարամահս առնէին, և զբազում պատուաւոր տեարս՝ որ պատուականք էին առաջի Թագաւորին Պարսից՝ ունէր ձերբակալս Ա՝ուշեղ, և տայր մորթել և ընուլ խոտով և կանգնել՝ի վէր պարսպացն։ Ընդ բազում տեղիս զայս առնէր՝ի վրէժս հօրն իւրոյ Ա՝ասակայ։

Եւ՝ շինէին զամ աւերեալսն՝ի Թէնամեացն, և զեկեղեցիսն նորոգէին. և Թագաւորութիւն հաղ քան զհաղ նորոգէր, և իրք ժամանակին հաղ քան զհաղ յառաջադէմ աճողէին։ Եւ՝ զբն Ներսէս խնամատուն Հայրապետն առաջնորդէր և լուսաւորէր, խրատէր և կարգէր և շինէր աղքատաց հանգիստ, ոչ և ինքն՝ի բնէ իսկ սուղ էր. և զվարս Թագաւորութիւն իսկ յօրինէր ամենաբարի կրօնիւք, ոչ և տեսեալ էր իւր առ հնոքն Թագաւորօքն։ Եւ առաւել զկարգս եկեղեցւոյ պաշտամանն եպիսկոպոսաց երիցանց և սարկաւագաց, և շինուածս եկեղեցւոյ և վկայանոցաց զամն նորոգեաց ուսոյց և յարդարեաց։

Ո՝ զաւարն Հայոց Ա՝ուշեղ զգուշդ իւր կազմէր, և երթայր՝ի սահմանն՝ կալ անդ, զգուշացեալ ըզսահմանսքն երկրին իւրոյ՝ պահել զիւր աշխարհն Հրամանաւ իւրոյ Թագաւորին Պապայ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս զօրավարին Մուշեղայ Հայոց, թէ որպէս անկաւ ի վէր բանակին Շապհոյ Թագաւորին Պարսից, և եհար զնա ի հարուածս անհնարինս, մինչ ղն միայն Շապուհ ձողապրեր։

Այն Մուշեղ որդի Վասակայ, տոհմատեղւոյն Հայոց մեծաց, ընդրեաց իւր արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, և կազմեաց զնս ձիով և թոշակաւ և զինուս. և առեալ զնս ընդ իւր, երթալ նստել ի սահմանս Տրպատականացն, և պահել զաշխարհն Հայոց։ Այսպա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից առ կազմուել զօրուվք իւրովք, եկն եհաս յերկիրն Տրպատականի. և Մերուժանն առաջնորդ գնդին բանակի նը, և բուն բանակն ուր բեւռն Թագաւորին ի Վաւերկն գնակեալ էին։

Եւ հասաներ սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վէր բանակին քառասուն հազարաւ, և անդէն ձեռն ի գործ արարեալ կոտորէր։ Այսպա միաձի մազապուր Թագաւորն Պարսից Շապուհ ձողապրեալ փախչէր. և զնմ կարևան բանակին առ հասարակ ընդ սուր հաներ Մուշեղ հանդերձ զօրօքն Հայոց։ Օ ի զբազումս կոտորէին, և զբազումս յաւազանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս Թագաւորին Պարսից յաւարի. և ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն։ Եւ զնմ մնաչաւարզան ի բուռն արկանէր Մուշեղ սպարապետն, և զնմ աւագանին՝ արս իբրև վեց հարիւր՝ հրամայեր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և ընուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց։ Էնէներ զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ։

Տայր գնանայն Շապհոյ Թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ Թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնս ումեք. այլ ժանաւարս տայր նը կազմել աւերեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նը Շապհոյ արքայի։ Եւ ի պարս-

կացն ընդ նե՛ր արձակեր, զի երթիցեն առ Հ ապուհ Թագաւորն Պարսից ողջս և անարատս։ Իսկ Թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութենին Ա՛ուշեղի և ընդ քաջութենին և ընդ ազատութենին, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն Թշնամանս։ Այլ եր՛ի ժամանակին յայնմիկ երիվարն Ա՛ուշեղի, Ձերմակ ձի մի. իսկ Թագաւորն Պարսից Հ ապուհ յորժամ առնոյր գինի՛ ի մատուռնն ըմպել, յորժամ ուրախութենին իւրոյ խրախուէս առնէր զօրացն իւրոց, ասէր. Ձ՛երմակաձին գինի արբցէ։ Այլ ետ նկարել զտաշտ՛ի պատկեր գԱ՛ուշեղ Ձերմակաձն. և՛ի ժամ ուրախութենն իւրոյ գնէր զտաշտն առաջի իւր, և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով թէ Ձերմակաձին գինի արբցէ։

Ա՛յլ մուշեղ և՝ամ զօրքն Հայոց անչափ առին զաւար՛ի բանակէն Պարսից, և անչափ լցան գանձօք և ստացուածովք. և բազում աւարամանն Պապայ պահէին Թագաւորին իւրեանց. և զօրացն Հայոց՝ որ անդէն առ Թագաւորին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարամանն, և զօրավարացն Յունաց՝ որ էին առ Թագաւորին Հայոց. սոյնպէս և՝ամ զօրացն տային բաշխիչ՛ի մեծամեծ աւարացն ածելոցն։ Ա՛յլ իբրև գարձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք՛ի զօրացն Հայոց ամբաստանէին առ Թագաւորին Պապայ զԱ՛ուշեղ զսպարապետէն, թէ ընդէր արձակեաց զկանայս Թագաւորին Պարսից զթշնամւոյն մերոյ։ Այլ Թագաւորին Հայոց Պապայ վա՛ տայր իրաց ոչ ինչ սակաւ լինէր Թշնամուք ընդ Ա՛ուշեղի մինչև՛ի բազում ժամանակս։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Հայր մարդպետին, եթէ որպէս սպանանէր Հրամայեաց Թագաւորն Պապ։

Ապա պատմեցաւ Թագաւորին Պապայ յաղագս օրէրացն՝[1] զոր եդ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ, մօր Թագաւորին Պապայ, Թէ նամանս ձա-ղանաց ի բերդարգել պաշարմանն. զի իբրև զբոզ մի, այնպէս Թէ նամանեաց զնա ի ժամանակի՝ իբրև ե-մուտ անդր գաղտուկ, և եդ անարգանս տիկնոջն, և եկն եղ անտի և փախեաւ. ետուն զայս ամ զբոյց Թագաւորին։ Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւ-րով իշխանութիւնն շրջէր յերկրին Տարօնոյ, և Ա՛ու-շեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին յիւ-րում բերդին՝ որում Ողական կոչէն, որ կայ ի վէր գետոյն Եփրատայ, եկն եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զօրավարն Հայոց Ա՛ուշեղ. և ունէր առ նա հրովարտակ, և գրեալ էր ի հրովարտակին անդր հրաման առ նա, զի չարամահ սատակեսցէ զՀայր մարդպետն։ Եւ նա իբրև զայս հրամանս ըն-կալեալ ի ձեռն առնոյր, յղէր առ մարդպետն Հայր դաւով, և մեծարանաց պատճառանաւ առ ինքն կո-չէր Ողականն. և եկն աւուրք ձմերայնոյ, և սաստ-կացեալ կցեալ էր գետն Եփրատ։ Ապա կոչեալ եղև առ նա Հայր մարդպետն իբրև ի պատիւ մեծարա-նաց. եկն եմուտ մարդպետն ի բերդն Ողական։ Եւ հրամանն զօրավարն Ա՛ուշեղ զօրականացն ու-նել զնա, և մերկանալ իբրև ի մերկ, և կապել զՀայր նէր ի նեթքոյ ծնկաց նէր, և իջուցանել զնա ի գետն, և դնել ի վէր սառինն կցելոյ գետոյն. և սա-տակեցաւ անդէն։ Եւ եղև ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուղիղ գլխոյն ի յատոյն վայրեալ ի բաց իջեալ Թափեալ էր ընդ քիթս նորա։ Եւ փոխա-նակ ի նորա տեղի Հայրուհե մարդպետուհին զՎըզ-ղակ ումն անուն, որ յաւուրս Աբշակայ Թագաւորին

1 Յօրինակի միւսմ օրինացն։

կամ Տիրանայ հօր նը զամու միջ լեալ նոյն գործ մարդպետութեն։

ԳԼՈՒԽ Դ.

Ցալագս գարձեալ պատերազմին, որ եղև ի Բագաւան յաւանին Բագրեւանդ գաւառին ընդ Պապ Թագաւորն Հայոց և ընդ զօրսն Պարսից։

Այն յետ այսորիկ Թագաւորն Պարսից կրկներ լիներ զօրաժողով ամ ուժով և ամ զօրութեն իւրով. խաղայր գնայր ամ զօրօքն իւրովք հասաներ յաշխարհն Այրպայականի։ Այլ ինքն անդր դադարեր սակաւուք, և զամ զօրացն զօսմութեի առաքեր ի վր Թագաւորին Պապայ ի պատերազմ։ Այս եկեալ զօրքն Պարսից ասպատակ առնէին և ի միջնաշխարհն Հայոց. ապա և Թագաւորն Հայոց Պապ զօրաժողով առնել հրամայեր ի Բագաւանն։ Այս զօրքն Յունաց, որ էին Այրտանդին ի Խախշանն [1], ի միայր ժողովեցան առ Թագաւորն Պապ, և ածին փոս զբանակաւն իւրեանց մօտ ի լեառնն ի Վպատ մերձ ի գետն Եւփրատ, և կազմեալ պատրաստեալ կային գործոյ Ճակատուն։

Այսպա զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ ժողովեր զամ զօրսն Հայոց աւելի ևս քան զընտուն հազար, և կազմէին պատրաստութեբ։ Լսակ իբրև զօրահատոյցն առներ Շապուհ Պարսից Թագաւորն զզօրս իւր ի վր ուշանձհին Հայոց և ի վր զօրացն Յունաց։ Այստայր արքայ Վզօսմանից անդ էր առ Թագաւորին Պարսից։ Այսպա յառաջ կայր և խընդրեր պարգևս Այստայր ի Շապհոյ արքայէն Պարսից, և ասէր՝ Թէ կամ լինի քեզ արանց քաջ [2], զի և ինձ պարգև հրամայես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէն եղից իմով գնդովս նահատակ։ Ո՞ի Այրեաց գնդին պատերհ է դիպան եղանել

1 Ձամ օրինակս ի Բալչան։ 2 Ձամ օրինակս արանց փաքաց։

զօրացն Յունաց, իսկ ես իմով զնդաւս Հայոց իշ-
խանացն ելից։ Եւ Շ ապուհ Թագաւորն հաձեցաւ,
և զնորհ կալաւ, և հրամայեաց։ Բայց Ներուժա-
նայ արծրունւոյ պատասխանի տուեալ Ուռնայրի,
ասաց. Այժ արկեր զգազիւ գերկիս. բայց թէ ժողո-
վել կարիցես, մեծ զարմանք իցեն։ Եւ գաղտուկ
խորհրդով զայս գուշակութէն Ներուժանն ի ձեռն
հրեշտակի առ Մուշեղ զօրավարն Հայոց հասուցա-
նէր՝ թէ գիտեա և պատրաստեաց, Մուշեղ. զի մե-
ծաւ պարծանաւք պարգև խնդրեալ է զձէզ Ուռնայրի
արքային Աղուանից. արդ գիտես զինչ գործիցես։

Բայց մինչ դեռ խօսեցեալ գային զօրքն Պարսից
ի վէր Հայոց, և Ուռնայր արքայ Աղուանից իւրով
գնդաւն ընդ նմա, խօսեր Թագաւորն Աղուանից ընդ
այնոսիկ՝ որ ընդ իւրն էին. ասէր. Յանձն լիցի ձեզ,
յիշելով ի ժամանակի՝ երբև ձերբակալ արասցուք
զչօրսն Յունաց, զբազումս ի նոցանէն ապրեցուսջիք.
զի կալեալս կապեալս տարցուք յաղթանս [1] ի գործ
կաւազործուԹէ գաղատոս որմաշէնս պիտոյից մերոց
քաղաքաց ապարանից և այլոց պիտոյից։ Այլ երբև
եկին հասին մերձեցան ի միմեանս գունդքն երկո-
քեան Յունաց և Պարսից, և հանդերձեալք խառ-
նել ընդ միմեանս, ինքնին Թագաւորն Հայոց Պապ
վառեցաւ կազմեցաւ պատրաստեցաւ, և կամեցաւ ի
ձակատ ելանել։ Այս չառնոյր զայն նմա յանձն Ցե-
րչնան զօրավարն Յունաց, Թէ ի ձակատ մտցէ. այլ
ասէ. Թագաւորն Յունաց զմեզ վե քո յղեաց, եԹէ
երԹայք գնա պահեցէք. արդ լսէ՝ Թէ քեզ դեպ ինչ
տայցէ, մեք զմեր Թագաւորն որո՞վ երեսօք տեսա-
նեմք, կամ զի՞նչ տայցեմք նմա պատասխանի եԹէ
լսէ՝ և մեք աստի առանց քո ապրեսցուք և առ մեր
Թագաւորն հասանեմք, և լինիցիմք այնուհետև գըլ-
խապարտք առաջի մերոյ Թագաւորին։ Այլ արա
դու, արքայ, զոր մեք ասեմք քեզ. առ դու զեպիս-
կոպոսապետդ Հայոց զՆերսէս, և եԼնիսա ի վէր
Նպատ լերինն յամուր և յանկասկած տեղւոջ, և
նա զարքեպիսկոպոսապետն Ներսէս արասցէ աղօԹս

1 Յօրինակի միում՝ Աղուանս։

և խնդրեսցէ ՚ի նմանէ , զի նոր տացէ մեզ զյաղթուն ։ Նա ՚ի բարձուէն նայեսցիս , և տեսջիր զջան վաստա- կոց պատերազմին մերոյ զքաջութիւն և զվաստուքիւն , զոր առաջի քո գործեացեն ։

Ապա Թագաւորն Պապ հաւանեցաւ բանիցս այ- սոցիկ . առ լնդ իւր զմեծ քահանայապետն ՚Ներսէս , և ելանէր նստէր ՚ի վերայ նպատակեան լերինն . և ամ զօրքն Յունաց և Հայոց իջանէին ՚ի տեղի պա- տերազմին ։ Ապա եկն և զօրավարն սպարապետն Հայ- ոց Մուշեղ , և եթէր զինչանսն իւր և զգէնն առ ՚Ներ- սէս եպիսկոպոսապետն , զի օրհնեսցէ զնա , և իջցէ ՚ի պատերազմ ։ Նա ՚ի ժամնակին յայնմիկ յիշեաց Թագաւորն Պապ զՀին զոսյսն , և ասէ . Յիշեցի ես զայն , զի բարեկամ է Մուշեղն Թագաւորին Պար- սից Շապհոյ ։ Ի այդ այն Մուշեղն է , որ արձա- կեաց զնահապետ Թագաւորին Պարսից Շապհոյ հան- դերձ ժանուարօք և վաշտականօքն . և լուեալ ևս է իմ , թէ ՚ի պարսիկս խօսի . արդ մի մոռչ դա ՚ի ձա- կատ ։

Ապա զօրավարն Հայոց Մուշեղ բարեխօս առ- նէր առ Թագաւորն Պապ զմեծ քահանայապետն ՚Ներսէս ։ Իսկ Թագաւորն Պապ ասէ ցեպիսկոպո- սապետն ՚Ներսէս , Թէ մի լինիր դու բարեխօս . զի իբրև իջանէ , ՚ի զօրսն Պարսից անկանի ։ Իսկ նա ևս քան զևս յաճախէր մատուցանել զբարեխօսուքինն ։ Իսկ Թագաւորն , քանզի բանիւ լինչ ոչ անցանէր մինչ ՚ի ժամնակին յայնմիկ , ասէ ցՆերսէս . Կամք քո կատարեսցին ։ Բայց նախ երդումն տուր յաջ քո , զի մեզ մի ստեսցէ , և ապա արձակեսջիր ՚ի պատե- րազմ ։ Ապա կոչէն զՄուշեղ զառաջեաւ արքային , և եկն եպագ երկիր արքային . և մատուցեալ բուռն հարկանէր զաջոյ եպիսկոպոսապետին ՚Ներսէսի , և երդնոյր ։ Ոչնպէս և ՚ի Թագաւորին Պապայ ձեռն արկանէր , երդնոյր և ասէր՝ Թէ կեցից և մեռայց ՚ի վերայ քո որպէս նախնիքն իմ ՚ի վերայ նախնեացն քոց , որպէս և Հայքն իմ ՚ի վերայ հօրն քո Արշակայ , ոչնպէս և ես ՚ի վերայ քո . բայց միայն չարաճօճացն ունկն մի դնիցես ։

Ապա օրհներ զնա քահանայապետն Հայոց ՚Ներ-

սէս բազում օրհնութիւն։ Այսպէս Թագաւորն Հայոց Պապ զերկիւղն զիւր և զիւր նիզակին հրամայեաց մատուցանել առն քաջի զօրավարին Մուշեղի. այլ նա ոչ առ. Ասէին, ասէ, գործեցէք. ապա դու, արքայ, զինչ և տացես՝ ի ձեռս քո եմ։ Եւ զիւր նշանն և զզէնն մատուցանէր առ Ներսէս, զի օրհնեսցէ։ Եւ հեծանէր իւրով գնդապետ հանդերձ, և զամ՛ ձա կատն Հայոց յարդարեալ յաջմէ զօրացն Յունաց, յաջումն թևի նա խաղայր յառաջ։

Իսկ Թագաւորն Պապ և եպիսկոպոսապետն Ներսէս սէս կային ի վերայ Պատ լերինն. և ասէ Ներսէս զբազումսն հանապազատարածս համբարձեալ յերկինս, խնդրէր ի նմանէ զի անխոցեսցէ նոր ի յոխտիւր և ի նոր եկեղեցիս իւր, զոր պատուական աբեամբն իւրով սուրբ. և մի տալ զժողովուրդսն ի ձեռս անօծ հեթանոսաց, զի մի երբէք ասիցեն ի հեթանոսս՝ Թէ ուր է Աստուած նոցա։ Եւ մինչ դեռ նա զաղօթսն մատուցանէր առ Աստ, խաղացեալ Ձակատեալ իբրև զՀուր ամ զօրքն Հայոց ընդդէմ զօրացն Պարսից, իսկ գունդն մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տապնապեալ երթային. մինչ զի նայէր Թագաւորն և տեսանէր զի ըստ ակն անգանէին, մինչ զի ոչ երևէին Թագաւորին նշանքն Մուշեղի։ Իսկ իբրև չերևեալ սկսան նշանքն, աղաղակել սկսաւ Թագաւորն Պապ առ Ներսէս և ասէ. Դու խնեցեր այրեցեր զիս. զի ասացի ես քանս, մի յղեր զայրն զայն ի գործ պատերազմիս. ահա ի զօրսն Պարսից անկաւ, և արդ մեծամեծ գնաս գործեսցէ։ Եւ ասէ եպիսկոպոսապետն Ներսէս. Մի, արքայ, մի կարծեր. զի ոչ ստէ մեզ այրն այն. այլ տեսցես քեզէն զքաջութիւն նորա, զոր գործեսցէ ծառայ քո առաջի քո։

Իսկ Թագաւորն Պապ կարի ստիպեր առ եպիսկոպոսապետն Ներսէս ասել՝ Թէ ստէպ կաց յաղօթս և աղաչեա զնոր մինչ դեռ խառնուրդքս են։ Իսկ իբրև կարի ձանձրացոյց, ասէ եպիսկոպոսապետն Ներսէս ցԹագաւորն Պապ. Թէ ինչ՝ ուղղեսցես զսիրտ քո առ նոր, դնաստչ ի վերայ քո և ի վերայ աշխարհիս. և ինչ՝ Թէ սրբեսցես զքեզ ի պղծութենէ զոր-

ծոց քոց, ընկալցի և ոչ թողցէ ՚ի ձեռաց գքեզ, և ոչ մատնեսցէ գքեզ ՚ի ձեռն թշնամեացն քոց։ Ասէ ես ոմ եմ, զի աղաչես դու զիս, իբրև եթէ ես այր մի տառապեալ կարիցեմ հակառակ ընդդէմ կամացն՝ զոր ինչ կամիցի առնել ածՙ առնել առ նա ա զօթս, զի այնու շրջիցեմ զկամս նորա։ Այլ այն՝ որ արար զամ յոչընչէ, և ունի զտիեզերս ՚ի ձեռին իւրում և զամ ընակիչս նորա իբրև զմարախ, որ չափաց զերկինս թզաւ և զերկիրս ամ քաւս իւրով, որ եդ զերկինս ՚ի կշռի և եթարձ զդաշտս կշռորդաբ, որ գիտաց զնմաստուն ՚ի օր իւրոյ և եղև նման խորհրդակից, որ ընդ ՚ի օրն առնէ զամ վճիռ դատաստանաց, դեռ այժմ իսկ զարևելս և զմուտս, զհիւսիսի և զհարաւ եդեալ ՚ի կշռի, և դեռ զկշռեն ՚ի վեր ունի։ և ըստ մի մի ծանրութեանէ, յոր կողմ հակեսցէ կշիռն մեզացն, ըստ այնմ և դատի զարարածս իւր։ Զի նա գիտէ զչափ արարածոց իւրոց գործոց, և ըստ արժանի գործոց իւրեանց հատուցանէ նոցա։ զի դեռ այժմիկ ժամանակ է կշռութեանէ և ժամանակ յանդիմանուանէ և ժամանակ դատելոյ։ զի դեռ աւա դիկ յայսմ ժամու ոչ մարդ ընդ մարդկան ձակատեալ պատերազմին, այլ դատաւորն դատաւորաց յարեաւ դատել վերկիր։ Ընդ դեռ յայսմ ժամուս ժամանակս դատաստանաց է, ոմ է որ կարէ իշխել բանալ զբերան իւր առաջի նորա յայսմ ժամանակիս և կամ ոմ է որ գիտէ զմիտս ամն, զի և խրատտու ևս լինիցի նմա։ զի ամ ինչ ՚ի նմանէն և ՚ի նոյն և նովաւ ամ։ Նմա փառք յաւիտեանս։ Զի թէ ըստ գործոց մեզաց մերոց հատուցանէ մեզ ամ, մեզ ընդդէմ կամացն նորա մի լինի երթալ, և խնդրել ինչ ՚ի նմանէ։ այլ ասել՝ եթէ "Ցիրաւունս անցուցեր դու զայս ամ ընդ մեզ։ արդար ես դու ամ, և ամ գործք քո ճշմարիտ են։ Ճանապարհք քո ուղիղ են, և ամ դատաստանք քո ուղիղ են։ Զի զդատաստան արդարութեանէ ածեր ՚ի վերայ մեր, ըստ ամի զոր ինչ ածեր ՚ի վերայ մեր։ զի արդարութեանէ և յիրաւի ածեր ՚ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Զի անօրինեցաք և յանցեաք և ապստամբեցաք մեք ՚ի քէն։ մեղաք յամի և պատուիրանաց քոց ոչ անսացաք։ Ել պահեցաք և

ոչ արարաք որպէս պատուիրեցեր մեզ, զի բարի գըտ-
ցուք մեք ՚ի քէն. արդ զի՞մ՝ զոր արարեր և զոր ինչ
ածեր ՚ի վերայ մեր՝ արդար դատաստանաւ արարեր.
զի դատաստանք քո քաղցր են: Արդ մի մատներ զմեզ
մեզ ՚ի սպառ վասն անուան քո, փրկեա զմեզ վասն սքան-
չելեաց քոց, և փառաւորը արա զանուն քո, ՚ուր. զի
մի երբեք ամաչեսցեն ոյք յուսացեալ լինին ՚ի քեզ:
Ամաչեցեալ լիցին բռնութիւնք նոցա, և ՚ամբարշտութիւնք
նոցա խորտակեսցին. ծանիցեն զի դու ես ՚ուր ՚ած մի-
այն, որ փառաւորեալդ ես ՚ի վերայ ՚ամենայն երկրի»:
Եւ յետ ամենայնի քո միայնոյ կատարեսցին կամք
քո ամենազօր, որ հզօրդ ես և կարող և արդար յետ,
և սիրես ողորմել ընդելոյց և տապնապելոց: Օգու-
տն մեր դու գիտես, ՚ուր, և պատրաստել մեզ որպէս
և քեզ հաճոյ լոյծ. զի եթէ լոյծ մեզ օգուտ նեղու-
թիւնք, յաճախեա մեզ. և եթէ հաճոյ է առաջի քո
ողորմութիւն, շնորհեա մեզ: Օ՜ի որպէս լոյծն կամք
ՙին յերկինս, սոյնպէս և կատարեսցի. և որով գաւա-
զանաւ կամիցիս խրատել ՚ի ձեռդ քո եմք յետ ժամ:
Վաւեա, ՚ուր, զանօրէնութիւնս զմեզս և զյանցանս
ծառայից քոց. զի ոմ լոյծ այն մարդն, որ ոչ յանցա
նիցէ կամ մեղանչիցէ առաջի քո. զի ոչ ոք լոյծ արա-
դար ՚ի վերայ երկրի, և ոչ ոք է մինչև ՚ի մի: Օ՜ի
դու միայն ես, որ առանց մեղացդ ես. և քո միայն
արդարութի՛, որ արարեր զմեզ յոչընչէ, և ածեր զմեզ
յայս կենդանութի՛, և ցուցեր մեզ ՚ճանապարհս կե-
նաց և փրկութե՛, և զհոգս այսպէս խմաստունս և խո-
սունս արարեր. և եղեր ընդ մեր փրկանք, զի անմա-
հութի՛ վիճակին հասուսցես զմեզ: Յիշեա զկեղե-
ցի քո՝ զոր քո ՚ուրեմբդ ստացար, զի մի զնուա-
րեալսն քեզ ՚ի ձեռս շանց մատներ [1]. այլ յամենայնի
է ողորմութի՛ քո, դարձցի սրտմնութի՛ բարկութե՛ քո
յուխտե քումմէ, և փրկեա զկեղեցի քո, ՚ուր ՚ած մեր:
Արդ մինչ դեռ կայր ՚ի վերայ լերինն, զայս և այս
պիսի և որ ինչ նման է այս բանից՝ աւելի և բազում
քան զայն խօսեցաւ, մինչ դեռ կայր առ նմա Թա-
դաւոն Պապ ՚ի վերայ լերինն. բազում և ազգի ազ-

1 Յօրինակի միւսմ տպագրեալ:

դի և պէտսէս աղօթս մատուցանէր մինչև ցերեկոյն և ՚ի մտանել արեգականն, մինչև վաղձանեցաւ ձա-
կատն ։

Ա.ՀԼ ՚ի պատերազմին օգնական այ հասանէր ՚ի վերայ Յունացն, և հայաստան գնդին լինէր յաղ-
թութեի, և ՚ի պարտութեի մտանեցաւ գունդն Պար-
սից, դարձան ՚ի փախուստ, ցրուեցան սիւնեցան դաշ-
տաց՝ լերանց բարձանց՝ խորոց ձորոց ։ Այսպ գՀետ նո-
ցա լինէին զօրքն Յունաց և Հայոց. հասանէին, ըզ-
մեծ և զփոքր առ հասարակ սատակէին. բայց սա-
կաւք ՚ի բազմաց քաջաձիք փախստեայք լինէին ։ Ա-
պա գՀետ լինէին փախստէիցն զօրքն Հայոց, և մինչև
՚ի Դանձակ Հ՚որպայական ՚ի սահմանս Հայոց հա-
լածէին զզօրսն Պարսից. ընդ փախուցեալսն զբա-
զումն սատակէին զՀանապարհայն։ Եւ Ո՚ուշեղ սպա-
րապետն Հայոց հարկանէր զզօրսն Պարսից ՚ի հա-
րուածս անհնարինս. սպաս արարեալ և դիպերը գընն
դին Ա՚ղուանից, և առ հասարակ զՅամ զզօրսն սատա-
կէր ։ Եւ հասանէր Աւռնայրն արքային Ա՚ղուանից
՚ի փախստեանն, և նիզակաբնաւն ՚ի կառավին մա-
տուցեալ ծեծէր բազում, ասելով թէ այդմ ընորհս
կալ[1], զի այր Թագաւոր ես, և Թագ ունիս. ես ոչ
սպանից զայր Թագաւոր, թէ կարի նեղ հասցէ լինէ։
Եւ ուր Հեծելով Թոյլ ետ նմա փախչել երթալ գը-
նալ յաշխարհն Ա՚ղուանից ։

Ա.ՀԼ յորժամ դարձան Յամ զօրքն Հայոց, ոչ գոյր
չափ գլխանոյն ախոյենիցն՝ զոր բերեալ էր առաջի
Թագաւորին Հայոց Պապայ զօրավարն Հայոց Ո՚ու-
շեղ ։ Այնպէս ըստ իւրաքանչիւր չափու Յամ նախա-
րարքն և մեծամեծքն և բովանդակ Յամ զօրքն. և եղև
մեծ յաղթութի յերկրին Հայոց, և ՚ի մէջ զօրացն Յու-
նաց ։ Այնպէս լցան բազում աւարաւ գանձուցն զի-
նու և զարդու, ոսկւով և արծաթով և բազում կա-
րասեաւ, ձիով և ջորեօք և ուղտօք, զոր ինչ Թա-
փեցին. զի ոչ գոյր Թիւ կամ չափ, այլ կարի բազում
էր յոյժ ։

Բայց ապա ամբաստան լինէին քաջութե առ մեծ

1 ՑՅամ օրինակս ընդհակառակ։

Թագաւորն Պապայ զզօրավարին Ա՛ուշեղն, և ասէ՝ ինձ Թէ գիտեա, ազբայ, զի մեծաւ նեղութ է ընդ քեզ, և քեզ մահու սպասէ. զի զքո Թշնամին հա՛մակ արձակէ, զի զքաղուսն բազում անգամ՛ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել զԹշնամին. զի զԱ՛ռնայր ազբայ արձակեալ, Թոյլ էտ ապրել, ՚ի բուռն արկեալ զհակառակորդս քո: Այս վ՛ա այսր իրաց բազում անդամ լինէր զժուարՀի Թագաւորին Պապայ ընդ զօրավարին Ա՛ուշեղն. և բազում անգամ յանդիմանէր զնա վ՛ա այսր իրաց: Իսկ զօրավարն Ա՛ուշեղ տայր պատասխանի Թագաւորին Պապայ, և ասէր՝ Եթէ զիմ զընդգերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ Թագս ունէին՝ նոքա իմ ընդերքս չէին, այլ քո. եկեա ցես՝ ոմն ես զիմն սպանի, դու զքոյսն. այլ իմ յայր Թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ Թագ ունի, և ոչ ձգեմ, և մի այլ ձգել լիցի: Այ Թէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եԹէ գայ ինձ ՚ի ձեռն երբէք այր Թագաւոր՝ ոմն էին բազում անգամ, ես ոչ սպանանեմ զայր Թագաւոր՝ որ գամ մի Թագ ունի, եԹէ ոք իսկ զիս սպանցէ:

Թագաւորն Պապ իբրև լսեր զբանս զայս, յարուցանուս հարեալ, և յարուցեալ՚ի գահոյիցն, բուռն հարկանէր զԱ՛ուշեղ. արկանէր զնովաւ գիրկս, և լայր ՚ի վերայ պարանոցին Ա՛ուշեղն, և ասէ. Ա՛ա հապարա են այնոքիկ՝ որ իշխեն խօսել չարուԹիւն զԱ՛ուշեղ, զառնէ քաջէ և զպատուականէ: Օ՛ի այր՝ որ ազգաւ պատուական է իբրև զմեզ, և նախնիքն դորա իբրև զնախնիսն մեր, և Թողեալ նախնեացն դորա զԹագաւորուԹիւն Հ՛ենոց աշխարհին, եկեալ առ մեզ նախնիքն՝ ՚ի նախնեացն մերոց ՚ի վերայ կեցեալք և մեռեալք են, և հայր սորա ՚ի վերայ հօրն իմոյ մեռաւ, և սա միամտուԹիւ մինչև ՚ի մահ վաստակեալ է, և բազում անգամ ՚ոճ եաս ՚ի մեզ չաղԹուԹիւ չաղօԹս և ՚ի խնդրուածս հօր մերոյ սքանչելոյն Հ՛երսիսի, ՚ի ձեռն դորա ընդՀեցաւ բազում խաղաղուԹիւ, զիարդ ասեն ցիս զայս բանս եԹէ Ա՛ուշեղ քեզ մահու սպասէ. սա աւասիկ այր իրաւախորհ է, զի յօտար տեարան վ՛ա բարեկամուԹ խնայեաց, զիարդ դա ՚ի բնակ տեարս ձեռն ձգէր:

Յայնմ ժամանակի բազում պարգեւս և պատիւս և բազում գեղեցան զօրավարին Մուշեղի Պասն շնորհէր։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս միւսոյ պատերազմին Հայոց ընդ Պարս ի գանձակ Ատրպատականի. և վասն գուշակուեն Ուռնայրի, զի յայնմ եւս յաղթութիւն լինէր Հայոց գնդին։

Ապա լինէր գուշակ Մուշեղի Ուռնայր արքայ Աղուանից, յղէր առ նա հրեշտակ և տայր նմա տեղեկութիւն. ասէր. Մեծ շնորհակալութիւն ունիմ ի քոյ խանակ զի ոչ սպաներ դու զիս. և ես էած զիս ի ձեռս քո, և դու անխայեցեր. զայս սէր քո ոչ մոռացայց մինչև իցեմ ես։ Այլ գուշակեալ իմ քեզ, զի Շապուհ Թագաւորն Պարսից ամ զօրօք իւրովք կազմի գալ անկանել յանպատրաստից եկն ի վերայ քո։ Ապա ստրատն Յունաց կազմեաց զօրս իւր՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, և խաղացոյց տանել գնալ ի սահմանս Հայոց ի Գանձակէ կուսէ յատրպատական տանէ։ Այսպէս և Մուշեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզօրսն ամ Հայոց. և էին կուռ վառեալք ինքեանց հազարք ընդիրք նիզակ ի ձեռն. Թող զսպարակիրս։ Նա սոքա վաղագոյն քան զուշակութեն աճապարեցին հասին յիւրեանց սահմանն, բայց միայն Թագաւորն մնաց անդէն ի Հայոց աշխարհին։ Նա եպիսկոպոսապետն Ներսէս անդէն մնայր յաշխարհին, և խնդրուածս առնէր ընդ ամ աշխարհին. հրամայեր վե զօրացն որ էին ի պատերազմին։

Իսկ Թագաւորն Պարսից Շապուհ գայր հասանէր ամ զօրօքն իւրովք ի տեղի պատերազմին, և զբ տանէր զզօրսն Յունաց և զգունդն Հայոց, զի կազմեալ պատրաստեալ էին ի գործ պատերազմին։ Նա լինէին խառնուրդք ձակատուն. ի պարտութեի մատնեցան զօրքն Պարսից։ Անաւանդ գունդք նիզակաւորացն յարձակեալք մնէգնեալք, քաջութ զա-

խոյեանս ՚ի վերուստ յերկնաւորացն յերկիր կոչծանե-
ին յանդիման Թագաւորին Պարսից Շապհոյ. և
ընդ ընկենուլն խրախոյս բառնային աղաղակելով ամ
զօրքն պատերազմիկք Հայոց համակ, զայս բանս ա-
սելով եթէ առ Արշակ քաջ։ Օ ի զմեմ ախոյեանն,
զոր ՚ի Ձակատուն յայն սպանանէին, նմա նուիրէին
իւրեանց առաջի Թագաւորին Արշակայ. զի զմեմ զոր
սպանանէին, ասէին. Արշակայ Թագաւորին մերոյ
զոհ լինիր։ Եւ յորժամ Հայոց ազատանոյն ախոյե-
նացն նիզակաւորացն ռազմարարեալ յարձակեալ,
զզօրսն Պարսից նիզակաւորքն առեալ ընդհնուին,
ասէին ՚ի խրախուսանէն. Ո՛ւռ արշակ քաջ։ Նակ յոր-
ժամ զհնեալ զևխատէին զախոյեանն՝ ասէին. Ար-
շակայ զոհ լինիր։

Եւ լեգէոն զօրուն բազմութեին, այս ինքն Յու-
նաց զօրացն սպարակիրն, սոյնպէս և Հայոց սպարա-
կիրն զթիկունս ունէր զօրացն Հայոց, վահանօք փա-
կեալք զինքեանմիք՝ իբրև զամուր քաղաք լինէ ՚ի թի-
կանց լինիցի։ Յորժամ տարածանէին ինչ զօրքն Պար-
սից զզօրսն Յունաց և կամ զգունդ նիզակաւորացն
Հայոց, ՚ի լեգէոն վահանաւորացն Յունաց կամ ՚ի
սպարակիրն Հայոց իբրև ՚ի բերդ մտեալ հանդչէին։
Նակ յորժամ ոգի առեալ սակաւ մի, և անդուստ
ելեալ յարձակէին, անթիւս ՚ի զօրացն Պարսից ըն-
կեցեալ առաջի իւրեանց ոտից սատակեալս դևխա-
տէին. խրախուսեալով ՚ի նմին բանս՝ յԱրշակ Թագա-
ւորն իւրեանց, անչափս և անթիւս ՚ի զօրացն Պար-
սից կոտորեցին։ Եւ յորժամ դարձեալ սակաւիկ մի
ինչ յաղթահարեին զնա զօրքն Պարսից, և նոքա իբրև
՚ի բերդ ամուր դիմէին ՚ի լեգէոն ՚ի զօրսն վահանա-
ւորս, և նոցա բացեալ զվահանն՝ զնա ՚ի միջ առեալ
փակէին։ Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին
զզօրսն Պարսից զօրքն Յունաց, և Տերէնտն ստրա-
տելատ նոցա, և գունդքն Հայոց և Մուշեղ սպա-
սպետ նոցա։ Եւ սակաւուք փախչէր Շապուհ Թա-
գաւորն Պարսից՝ ՚ի պատերազմէ անտի. և նոցա սահ-
մանապահս կացուցանէին, և ինքեանք առ իւրեանց
Թագաւորն Պապ դառնային մեծաւ անուամբ, և
բարի աւարաւ, և հոյակապ շքեղութիւ։

Աւել Շ ապուհ Թագաւորն յորժամ յաչխարհն իշխանութենէն իւրոյ հասանէր, զարմացեալ ընդ քաջութիւն գնդին կուռոյն որ դիպեցաւ նմա, և ասէր՝ Եթէ զարմացեալ եմ ես զոր լինչ տեսի. զի իմ՝ի մանկութենէ իմմէ համակ՝ի ձակատու և՝ի կռիւ մըտեալ եմ, և բազում ամք են՝ զի հասի՝ի Թագաւորութիւն, և առանց կռուոյամ չեմ լեալ. բայց իմ ջերմ կռիւս զայս էր տեսեալ, որ այս անգամն դիպեցաւ ինձ: Օ՛ի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կիր որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր և անշարժ. և յորժամ մեք զնա սակաւ մի շարժէաք, նոքա՝ի լեգէոն Հռոմոց ապաստան լինէին. և նոցա զվահանափակն բացեալ, զնոսա իբրև՝ի քաղաքորմ պարսպաւոր ամրացեալ ընդունէին: Այս անտի սակաւիկ մի ոգի առեալ, դարձեալ ելեալք մարտնչէին, մինչև անմի զգօրն Հռոմոց առնէին: Այս միւս ևս՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտերմութենէն միամտութենէն Հայաստան գնդին ընդ տիրասիրութենէն: Օ՛ի այնչափ ամք են՝ զի տերն նոցա Հռշակ կորուսեալ է՝ի նոցանէն, և նոքա՝ի պատերազմին՝ի նա խրախուսէին: Այս յորժամ զախոյեանսն ընկէնուին, հասմակ ասէին՝ Թէ առ Հռշակ, և նա չէր՝ի մէջ նոցա, և նոքա առ գունթ տիրասիրութեն՝ զոր առ ընակ տէրն իւրեանց ունէին, զնմա՛ախոյեանսն՝ զոր ապահանէին՝ նմա նուիրէին: Այս կամ մնլեկան գունդն մուշեղեան, զի լինէ այսպէս Թուէր՝ եթէ հուր բոց՝ի գլուխ դէն ելանիցեր և՝ի նշանացն, իբրև՝ի հուր հրդեհի այնպէս անցանէր ընդ գունդն որպէս բոց ընդ եղեգն: Այս այսչափ ժամանակք էն՝ զի Հռշակ տէրն նոցա՝ի նոցանէն կորուսեալ է, զի Հնդմըշն բերդի կայ յերկրին խուժաստանի, և նոքա առ գունթն համարէին՝ Թէ՝ի գլուխս նոցա նա իբրև Թագաւոր կայցէ, և կամ ընդ նոսա արդեւք՝ի մէջ գնդին կայցէ՝ի գլուխ ձակատուն պատերազմին, և նոքա առ նմա առնիցեն պաշտօն յանդիմանն նորա: Հռշակ առէր, երանի՛ որ Հայոց գնդին տէր էցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զօրացն:

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Դղեակայ մարդպետի՝ զոր կացուցին սահմանակալ, և նա խորհրդակից եղեալ Պարսից Թագաւորին, թէ որպէս խոստանայր մատնել զաշքան Հայոց. և վասն մահուն Դղեակայ ի Պապայ աշքայէ։

Ա՚ՊԱ Տէրինդ զօրավարն զօրացն Յունաց և Մու-
շեղ զօրավար զօրացն Հայոց զԴղեակ մարդպետ, որ
անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ Հայր Թագաւորին,
Թողին զնա սահմանապահ ի Դռանձակ՝ որ էր սահ-
մանն ընդ Պարս և ընդ Հայս։ Նա ինաց առնմա ե-
րեսուն հազար զինեալ զինեալսն, նիզակաւորք կուռ վա-
ռեալք պատեզինք[1] և զրահաւորք կազմ ամենայնիւ։
Ն՚ Տէրինդն և Մուշեղ ամ զօրաք, որ էին ընդ նո-
սա, գնացին յաշխարհն առ Թագաւորն Պապ։ Իսկ
մարդպետն Դղեակ, յղեր հրեշտակս խորհրդով առ
Շապուհ աշքայն Պարսից, և խոստանայր մատնել
ի ձեռս նորա զԹագաւորն Հայոց Պապ, և զզօրա-
վարն Յունաց զՏէրինդն, և զզօրավարն Հայոց զՄու-
շեղ, և առնոյր ի նմանէ գանձս պարգեւաց սաս-
տիկ չափ։ Խոյզ այլ մեծամեծ նախարարաց, որ էին
առ նմա, գաղտ ազդ առնէին Թագաւորին Պապայ,
զինչն՝ տէր գաւառին անձեւացեաց, և այլք որ էին
անդ մնացեալ։

Ա՚պա Թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ մարդ-
պետն Դղեակ, Թէ զօրքդ՝ որ են ընդ ձեռամբ քով՝
դումարեա զայդ. Գինելոյ անձեւացուոյ չանձն արաս
ցես, և վաղ եկեսցես. զի պիտոյ է ինձ յղել զքեզ
առ Թագաւորն Պարսից Շապուհ, զի ես մտից նմա
ի ծառայութիւն։ Ա՚պա չորժամ լսեր մարդպետն
Դղեակ, մեծապէս խնդացեալ՝ ասէր ընդ միտս իւր,
Թէ արդ դիւրին ինձ գիւտն իմ կատարել, զոր խոս-
տացայն Թագաւորին Պարսից Շապուհ, չորժամ
դուրս գտի իրացս յապահով չանհոգս առնել բա-
նիւք զՊապ, և չանկարծօրէն չանպատրաստից ար-

1 Յօրինակի միւսմ պապէնապէնք։

կանել զԹագաւորն Պարսից զդլխով նորա։ Եւ ինքն զուարճացեալ, լինէր խօսնակից ի մէջ Թագաւորացն երկոցունց. դեսպան ձիով վազ հասուցանէր ի գաւառն Հայրպատու ի մեծ ի գեղջն ընկերն արքունի, որում Երդեհանն կոչէն, առ Թագաւորն Հայոց Պապ. և զայր յանդիմանն լինէր Թագաւորին։ Եւ ճաշակս մեծարեցաւ ի նմանէն. և ի ժամ ընթրեացն հրաման ետ արքայն Պապ, տանել պատմուճան ազուցանել մարդպետին Վղակայ. և ազուցին նմա զրաստս և վարիս։ Եւ էր հանդերձն անհեղեղ մեծութեն. զի խորշ զնորշիւ իմանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց զնա մեծութեն հանդերձին։ Եւ ազուցեալ զպատմուճանին մեծ, էած զգօտին ընդ մէջ իւր՝ զոր մէ Թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորշ՝ի գօտւոյ դրատիցն իջեալ, զԹուրն և զսուսերն ծածկէր։ Յակ զվարտիսն զգեցեալ, և մոյկս ազուցեալ, և զնրանն յազգեր կապեալ, և ի վերայ նրա նին խորշն՝ի վարտեացն իջեալ անկեալ՝ի վերայ նրա նին՝ ծածկեալ մինչև՝ի սրունսն և ոչ ինչ իմացաւ Վղակ Թէ այն մեծութեն հանդերձին չարոյ նորա էցէ այն։ Յակ յինն ժամ աւուրն կոչեցին զՎղակն, և ասեն. կոչէն զքեզ յընթրիս՝ի ներքս յարքունիս։ Յակ յորժամ մուծին՝ի փող տանցն՝ յորում արքայն էր, և էր փողն ընդ երկար, բազում երդս լոյսիկոյցս էր Թողեալ, և տանիկին զնա ընդ այն, կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն, և զերդս նամ լուսոյն ծածկէին։ Այսպ մտեալ շուրջ զնովաւ՝ի տեղւոջն ձգձգէին զնա սպարակիրքն։ Յակ նա Թէպէտ տանէր ձեռն՝ի զէն՝ի խորշխորշան հանդերձին պատատեղոցն՝ զոր էր զգեցեալ, ոչ զմի զէն ոչ կարաց գտանել։

Այսպ զի էր ինքն Վղակն այր մեծ և անձնեայ, քաջ հարուստ ոսկերօք, սակայն սպարակիր մարդկանն պատեցին զնովաւ, և բարձին զնա վերըմբարձ. և տանիկին զնա մինչև՝ի դուրս տաճարին արքունի։ Յակ երբև եհես Թագաւորն՝ Թէ անդր տանիկն, ասէ. Ա՛ի այսր. մի՛ այսր, այլ մուծէք զդա՝ի տուն պատմուճականցն։ Վանդն՝ի փողին զօրք սպարա-

կրայն մուծին զնա ՚ի ներքս ՚ի տունն պատմուճա-
կացն կապեալ ձեռս յետս, այս ինքն ուր Թագ ար-
քունի դնեին. և անդէն խօսել սկսաւ Դրդահն և ա
սէ. Լսացէք ցարքայ, գոգէք. ես այս մահու արժա-
նի էի, բայց քեզ արժան էր զիս ՚ի հրապարակի սպա
նանել, և ոչ ՚ի տան Թագաց սպանանել, և զքո Թագդ
արեամբ շաղախել: Եւ զայս միայն ժամանեաց ա-
սել. և անդէն ՚ի վանան պատմուճակացն փողոտեցին
զնա, և հատին զգլուխ նորա, և հանին հարին ՚ի նիզ
ակի, և կանկնեցին ՚ի հրապարակին արքունի:

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս մահուան Արշակայ Թագաւորին Հայոց, Թէ զնարդ մեռաւ յերկրին խուժաստանի յԱնդմէշն բերդին ինք ինքեանմբ ձեռօք, և Դրատամատն էր պատճառք մահուն:

Յայ յայսմ ժամանակի դեռ տակաւին և կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանուհին Թագաւորութենն Պարսից ՚ի կողմանս խուժաստա-
նի յԱնդմէշն բերդին. այս ինքն որ անուն Անյուշն բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի արշակու-
նեան Թագաւորն Վրուշանաց, որ նստեր ՚ի Բաղէս քա-
ղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանակա-
նեան Շապհոյ և Թագաւորին Պարսից: Եւ Շա-
պուհ Թագաւորն զնաց զգօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զգրս միան-
դամ ածեալ էր գերութիւն յերկրին Հայոց զնաց այրևձի գումարեալ խաղացոյց ընդ ինքեան. և զնեբ քինին անգամ Թագաւորին Հայոց Արշակայ տա-
ներ ընդ ինքեան ՚ի գործ պատերազմին:

Եւ էր ներքինի մի Հայոց Թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանուհեն և մեծի պատուի, և անուն Դրատատ-

մաան։ Իսկ իբրև եղև պատերազմ ընդ Թագաւորին Վրաստանայ և ընդ Թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Վրաստանայ, և զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Վրաստանայ, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին։ Իսկ Դրաստամաան նեղբկինն, որ յամս Տիրանայ Թագաւորին Հայոց և Գրիգոր որդւոյ Նորա Թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Գնդեղ բերդին, և ամ բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Ծոփաց ի Կնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամ նախարարացն։ Գոր քանզի ել այս գործակալութեն և մարդպետութեն, որում Հայրն կոչէին նեղբկնեաց՝ գործ լեալ էր ի քնկ ժամանակաց ի Թագաւորութենն արշակունոյ, և զայս Դրաստամաան նեղբկնի զիշխանն զԳնդեղ տանն դեբեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԳրիգոր արքայն Հայոց։

Գոր այս Դրաստամատ էր յայնմ ձակատու, յորում վատթարեցին Վրաստանքն զՀ ապուհ արքայն Պարսից։ Գոր Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կոտուաւ ևս ի վերայ Հ ապհոյ արքայի, և ապրեցոյց զնա ի մահուանէ. և բազում ի Վրաստանաց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ։ Գոր զՀ ապուհ Թագաւորն Պարսից փրկեբ ի նեղութենէն պատերազմին Թշնամեաց անտի, ուր արդելին զնա ի խուռն պատերազմին ի զօրաց անտի։ Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Հ ապուհ Թագաւորն Պարսից յերկիրն Պարսկաստանի, և մեծ չնորհակալութեն առնէր նեղբկնեայն Դրաստամատայ վաստակոցն, և ասէր ցնա Հ ապուհ Թագաւորն Պարսից. խնդրեա դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տայ քեզ և ոչ արգելից։ Գոր ասէ Դրաստամատ ցԹագաւորն. Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զընակ տեղն իմ զԳրիգոր արքայ Հայոց։ Գոր առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն, և ես իշխե-

ցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ապուցա-
նել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս,
և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի,
և ուրախ առնել զնա արուեստականաւքն մի օր Ճիշդ։
Եւ ասէ Թագաւորն Ո՞ապուհ. Խիստ են խընդ-
րուածքդ, զոր խնդրեցեր դ. զի յաւուրց ժամանա-
կաց՝ յորմէ Թագաւորութիս Պարսից կանգնեալ է,
և բերդն այն Հնդուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ
եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել
Թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է Թա-
գաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք
եղեալ է, Թող Թէ զնա զայր Թագաւոր և զիմ ընկ-
կեր կապեալ եղեալ յայնմ բերդի ջհակառակորդն.
քան մինչ աշխատ արարեր զմեզ, և դու աւադիկ
զանձն ի մահ եդեր և յիշեցուցեր զՀնդուշն, որ ոչ
էին լեալ երբէք օրինք Թագաւորութեես Հրեաց ի
սկզբանէ։ Հայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ
իս, զոր ինչ խնդրեցեր՝ երթ՝ տուեալ լիցի քեզ. բայց
քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել կամ աշ-
խարհս կամ գաւառս կամ գանձս։ Հայց յորժամ
դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինաւք Հրեաց
Թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ
յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց։

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրա-
ւարտակ՝ արքունի մատանեաւն, զի գնացեալ երթիցէ նա ի բերդն Հնդումըշն, և զնարդ և կամք էցէ նո-
ցա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապելոյն Հրե-
շակայ, որ յառաջ Թագաւորեաւն էր ի Հայս։ Եւ
չոգաւ Խրատատմանն հանդերձ փշտիպանաւն և հրա-
ւարտականաւն արքունի Հնդուշ բերդն, և ետես զտէրն
բնակ. և արձակեաց զՀրշակ ի կապանացն երկա-
Թեաց ի ձեռակապացն և յոտից երկաթոց և յան-
րոց պարանոցէն շղթայիցն սարեացն. և լուաց զգը-
լուխ նորա, և լոգացոյց զանձն նորա։ Եւ ադոյց նմա
պատմուճան աշխիւ. և էարկ նմա բազմականս, և
բազմեցոյց զնա. և եդ առաջի նորա ընթրիս ըստ օ-
րինաց Թագաւորաց, և եդ առաջի նորա գինի որ-
պէս օրէն էր Թագաւորացն. սգաւոր էր նա, և մխի-
թարեաց, և ուրախ առնէր զնա գուսանաւք։

Եւ ՚ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիձ, զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զնարզ և կամեսցի: Եւ Դրաստամատ մեծասիս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն զակամբն նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Ա՛յ ինձ Աբշակայ. այսպէս[1] և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս: Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր ՚ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիձն կամէր ուտել, եհար ՚ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ՚ի նմին ժամուն մինչ դեռ կայր ՚ի բազմականին: Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատ, յարձակեցաւ եհան ՚ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշռին. և անդէն մեռաւ և նա ՚ի նմին ժամուն յայսմ:

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս թէ զնարդ ըռեայ պատերազմն ՚ի կողմանցն Պարսից, ապա սկսաւ սպարապետան Մուշեղ ոգորել ընդ այնոսիկ՝ որք միանգամ ապստամբեցին ՚ի Թագաւորէն Հայոց. զազարում կոյս կոյս հարկանէր մեծաւ պատերազմաւ, նախ վասն սան Թագաւորին Հայոց՝ որ Աղբպայականն էր:

Զոր իբրև դադարեաց պատերազմն ՚ի կողմանցն Պարսից, և յապահովեցան իրք Ճակատուն յայսմ կողմանէ, և այնուհետև սկսանէր սպարապետան Հայոց Մուշեղ հարկանել զայնոսիկ՝ որք ապստամբեցեալ էին ՚ի Թագաւորութենէն արշակունեաց: Նախ հարկանէր զտուն Թագաւորին Հայոց, որ Աղբպայականն էր. զի եղբարն գաւառացն Աղբպատճանն աւերեր, և առնոյր գերեր բազում գերութիւն ՚ի նո-

1 Յիմ օրինակս Աբշակայ. այս է և այս:

ցանէ. և զմնացորդսն նուաճէը և ՚ի հարկի կացուցանէը, և առնոյը զբազումն պանդանդս ՚ի նոցանէ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Նոչիրականի։

ՀԱՐԿԱՆԵՐ Մուշեղ զապստամբս Նոչիրական աշխարհին, որ ապստամբեցեալն յարքայէն Հայոց. առնոյը աւերեր գերեր, և ՚ի մնացորդացն առնոյը պանդանդս. և զբնակիչս երկրին ՚ի հարկի ծառայութիւն կացուցանէր։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս Կորդուաց Կորդեաց և Ցմրեաց։

ՀԱՐԿԱՆԵՐ Մուշեղ սպարապետն և զայս գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զԿորդուս և զԿորդիս և զՑմրիս. առնոյը գերեր և աւերեր, դնէր հարկ մնացորդացն, և առնոյը պանդանդս։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս Մարաց։

Ի զկողմանան Մարաց, քանզի և նոքա ապըստամբեցեալն յարքայէն Հայոց, հարկանէր զնոսա մեծապէս. և գերեր զբազումն ՚ի նոցանէն, և մնացորդացն դնէր հարկս, և առնոյը պանդանդս։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Արձխոյ։

ՅԱՐԿԱՆԵՐ զերկիրն Աղձախայ մեծաւ պատերազմաւ, գերեր զբազումս ՚ի նոցանէն. և զինացորդսն ՚ի հարկի կացուցանէր։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Աղուանից։

ՅՈՒՆԷՐ պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկանէր զնոսա ՚ի հարուածս անհնարինս։ Եւ թափէր ՚ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոքա ՚ի նոցանէն. զՀատի, զՀաշէն և զՁորն Վարդմանայ, զՎողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք։ Եւ զկուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն Իբերանց սահման արարեալ կացուցանէին. և ՚ի գլխաւորացն բազում սպանանէին. և զինացորդսն ՚ի հարկի կացուցանէին, և պանդխտս ՚ի նոցանէ առնուին։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Կասբից։

ՅԱՌ լինդրէր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և ՚ի փայտակարան քաղաքէ, փոխանակ զի և նոքա նշհահեցին տեղին արքային Հայոց։ Ասեաւ, զբազումս ՚ի նոցանէ գլխով սպառուհատս առնէր սպարապետն զօրավարն Մուշեղ. զբազումս ՚ի նոցանէ գերեր, և զինացորդսն ՚ի հար-

կի կայուցաներ. և առնոյր պանդանդա ՚ի նոցանէն, և անդ ոստիկանս վերակացուս Թողոյր։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս Վրաց։

Ոգն խաղայր սպարապետն Մուշեղ ՚ի վերայ Վրաց աղքային, և նեղէր զնա մեծապէս. և հարկանէր զերկիրն, և վաներ զնոմ աշխարհն Վրաց. և հանէր ընդ սուր զնոմ ազատս և զազգս նախարարացն, զոր եգիտ։ Օ փառաւաղեանն հրամանն տայր սպարապետն Մուշեղ հանել ՚ի խաչ ՚ի մէջ աշխարհին Վրաց. և զզեաշխն Կուգարաց, որ յառաջն ծառայեր Թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ դվնատեր. և զազգն որձակոտոր առնէր, և զգանայսն և զգաստերսն ՚ի գերութիւն վարէին։ Այն օրինակ և որ միանգամ ՚ի կողմանն յայն էին նախարարքն, և ՚ի Թագաւորին Հայոց եղեն ապստամբ, զամենեսեան գվնատեր. և Թափէր զնոմ գաւառն, և առնոյր պանդանդա, և զինացեալսն ՚ի հարկի կացուցանէր։ Այս զհին սահմանսն, որ յառաջնումն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ ի լինքն մեծ գետն Կուր, այնուհետև յինքն վտարեալ՝ դառնայր անտի։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Թագաւորին Աղձնեաց։

Ցաւնաձր ապա զօրավարն Մուշեղ յերկիրն Աղձնեաց, և հարկանէր զերկիրն ՚ի մեծ ՚ի հարուածս. զի և նոքա ապստամբեալ էին յարքայէն Հայոց։ Զերբակալ արարեալ զզեաշխն Աղձնեաց, առնմին կոտորեցին զկանայս, և զորդիս նոցա ՚ի գերուէ վա-

ըեցին . և զմնացեալսն ՚ի հարկի կացուցանէր , և վե-
րակացուս և ոստիկանս յերկրին Աղձնեաց Թողուին :

ԳԼՈՒԽ ԻԵ .

Յաղագս մեծի Ծոփաց :

Ապա անտի ՚ի Ծոփս մեծ արշաւեցին . և նոքա
էին ապստամբեալ : Հարկանէր զերկիրն գաւառին
Մուշեղ մեծի Ծոփաց , և զազգսն հանէր ընդ սուր .
և առնոյր պանդխտս , և զազգն ՚ի հարկի կացու-
ցանէր :

ԳԼՈՒԽ ԻԶ .

Յաղագս Անգեղ տանն :

Հարկանէր և յԱնգեղ տունն զբազում , և հա-
նէր ընդ սուր : Բայց աշխարհն զի ոստան արքունի
լեալ էր վաղ վաղ , բնակիչք գաւառին և ինքեանք
կային ՚ի հարկի ծառայութեանէ :

ԳԼՈՒԽ ԻԹ .

Յաղագս գաւառին Աձամայ :

Ապա ՚ի գաւառն Աձամայ արշաւէր , և հարկա-
նէր Մուշեղ զկողմանս գաւառացն այնոցիկ՝ որ շուրջ
էին զնովաւ . քանզի և նոքա ապստամբեցին ՚ի Թա-
գաւորութենէն արշակունեաց : Հանէր ընդ սուր զբ-
տեարս գաւառին . առնոյր պանդխտս , և նուաճէր .
՚ի հարկի ծառայութեանէ Թագաւորին Հայոց Պապայ
զամենեսեան առ հասարակ կացուցանէր :

ԳԼՈՒԽ Ի·

Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց։

Ա.ՅԼ քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ և բազում նախանձու զամ աւուրս կենաց իւրոց, և միամտութեամբ և արդար վաստակով Յանայր հանապազ և վաստակէր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին։ Օտիւ և զգիշեր կայր յաշխատութեանն. Յանայր և ձգնէր կալ ի ձակատու պատերազմին, և ոչ թողոյր քնաւ ամենևին և ոչ քան զկորի մի գետնին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել· ի վերայ աշխարհին կեալ, և ի մեռանել ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ քնակ տեղեացն, և ի վերայ քնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ յԱստուած և ի քո մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց, և ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստի, ի վերայ ուխտի այլ, ի վերայ քերց և եղբարց, ի վերայ մեծաւորաց տոհմին, ի վերայ բազմութեանց բարեկամաց հանապազ կայր զօրավարն Մուշեղ ի նահատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին. և յանձն իւր անխայեր ի մեռանել, զամ աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց քնակ տեղեացն արշակունեաց վաստակեր։

ԳԼՈՒԽ ԻԱ·

Յաղագս եպիսկոպոսապետին Ղեւրեսի, թէ որպիսի այր էր, կամ զինչ գործեր։

Ա.ՅԼ եպիսկոպոսապետն Հայոց Ղեւրեսէս շիներ զամ աւերեալսն երկրին Հայոց. յանձն առնէր և միխիթարէր, զարմանէր և տեսուչ լինէր ամ աղքատաց. և զօրկունս և զաղքատս հանգուցանէր։ Զի շիներ զեկեղեցիս ընդ ամ տեղիս, և զամ կործա-

նեալն կանխէին. և զամ կարգան տապալեալ ուղղէր և նորոգէր։ Շինէր և հաստատէր, խրատէր և յանդիմանէր. բազում առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս և բազում բժշկութիւս սքանչելեաց։ Այլ յօրէնսն սաստէր մեծապէս. և զոր օրհնէր, օրհնէր[1]. և զոր անիծանէր, անիծեալ լինէին։ Այլ բազմացոյց զկարգս պաշտօնէիցն յամ տեղիս իշխանութեն՝ի սահմանացն Հայոց, և յամ գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս. և հանապազ զգուշանայր տեսչութեն իւրոյ և իշխանութե, որչափ եկաց նա ժամանակս։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս Թագաւորին Պապայ, թէ զինչ էր և զիւաք կամ որպէս վարէրն։

Այլ Թագաւորն Պապ, զի մինչ դեռ տղայիկ այն էր՝ի մօրէ իւրմէ՝ յայնժամ ձօնեաց զնա դիւաց անօրէնն մայրն Փառանձեմ, և վասն այնորիկ էր դիւաք՝ի տղայութե իւրմէ։ Վասն զի հանապազ զկամս դիւաց առնէր, վասն այսորիկ և զբժշկութե իսկ ոչ կամէր գտանել. զի հանապազ վարժէր զանձն իւր դիւաք, և կախարդանօք երևեցուցանէր դևքն՝ի նմա. և ամ մարդ զդևսն՝ի նմա աչօք բայօք տեսանէին։ Օ՛ի յորժամ մարդիկ հանապազօր յայգորել էլեալ մտանէին, տեսանէին՝ զի յօձից կերպարանս էլանէին՝ի ծոցոյն Պապայ Թագաւորին, և պատէին զուսօք նորա. և ամենեքեան ոչք տեսանէին զնա, երկնչէին՝ի նմանէ և հուպ երթալ։ Իսկ նա պատասխանի տայր մարդկանն ասելով թէ մի՛ երկնչիք, զի սոքա իմ են. և ամ մարդ յամ ժամ տեսանէին զայսպիսի ինչ կերպարանս՝ի նմա։

Օ՛ի բազում համբաւք դիւաց համբարեալ էին՝ի նմա. և յամ ժամ ամենայն մարդոյ երևէր այս, որք գամ մի զԹագաւորն տեսանէին. բայց յորժամ հայրապետն Ներսէս մտանէր առաջի նր կամ՝ըզ եպիսկոպոսն Կեսարու Ստադ, դևքն չերևեալ աներևոյթ լինէին։

1 Յամ օրինակս և զոր օրհնէր և զոր անիծանէր։

Նա էր Թագաւորն Պարսից՝ ի պղծութեանէ Թաւալեալ. երբեմն այլոց էգ եղեալ, տայր զինքն՝ ի խառնակութիւն. և երբեմն զայլս էգ արարեալ, զարուան խառնակեալ պղծեր. և երբեմն ընդ անասունս խառնակեր։ Նա այսպէս դիւօք վարեալ, որք՝ ի նմանէ էին բնակեալ զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս յանդիմանութեանն սրբոյն Ներսէսի, զի հանապազ Թշնամի էր Թագաւորին Պարսից վասն մեղաց նորա։

Այլ սուրբն Ներսէս եպիսկոպոսապետն Հայոց հանապազօր ընդդիմացեալ Թագաւորին Պարսից, կշտամբեր և յանդիմաներ մեծաւ վկայութիւք յանդիմանութիւք. և վասն չարեաց նորա բազմաց ոչ համարձակեր նմա զսեամն եկեղեցւոյն կոխել, և ոչ մտանել նմա՝ ի ներքս։ Հանապազ կշտամբեալ յանդիմաներ և խրատեր, զի գոցէ զանձն իւր՝ ի կորստենէ գործոց իւրոց. և հանապազ խօսեր ընդ նմա, զի փոխեսցէ զարատս ապաշխարութիւն։ Պնդեր առաջի նորա վկայութիւնս՝ ի գրոց, ահ արկանելով յաւիտենական պատաստանացն պատժովք՝ գալ՝ի զգաստութիւն և՝ի լաւանալ, և յառաջդիմութիւն արդարութիւն կարգացն և գործոցն սրբութիւն փոխել։

Իսկ Թագաւորն Պարսից լսելոյ նմա ոչ լսեր. այլ և ընդդիմացեալ և մեծաւ թշնամանօք, և մահու սպառնալիս նմա, և կամէր սպանանել զնա յայտնի. բայց՝ ի Թագաւորէն Յունաց յայտնի և անարգել անգամ բանիւք չհշխեր, և ոչ սակաւ մի համարձակել՝ի նա, Թող Թէ մահու աղագաւ։ Նա և իւր իսկ աշխարհի մարդիկն և զօրքն ամ չառնուին, յանձն զայսպիսի ինչ առնել. այլ՝ զօրմէ ամ մարդիկ աշխարհին Հայոց կախեալ կային զնմանէ վասն արդար գործոցն, սրբութիւն գնացիցն յաշխարհի, խաղաղութիւք մեծի առաքինորդութենէն, նա և վասն յայտնի նշանաց գործութենէն սքանչելեացն՝ զոր առնէր, իբրև յերկ-

նաւուր հրեշտակ այնպէս նայէին ամ մարդ։ Այս թագաւորն ոխասէր էր ընդ նմա, և խնդրեր սպանանել զնա. այլ յայտնի զայս և բանիւք ձառել ոչ իշխեր, թէ ոչ՝ իւր զօրքն սպանանէին զնա։ Օ՜ի այնպէս ամ մարդ ապաստանեալ էին յաղօթս նորա, և սիրէին զնա առ հասարակ մեծամեծք և փոքունք, պատուականք և անարգք, աղատք և շինականք միանգամայն։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս մահու սրբոյն մեծի քահանայապետին Ներսէսի՝ի Թագաւորէն Պապայ, թէ ոպէս կամ զնարդ սպանաւ՝ի նմանէ։

Այն Թագաւորն Պապ յամ ժամ էր թշնամի մեծի քահանայապետին վասն յանդիմանութե՛ն մեզաց իւրոց զորեաց՝ զոր գործէրն, և յանդիմանեալ լինէր յառնէն այ՝ի Ներսիսէ հանապազ։ Ել զգաստանալ կամէր և ոչ գալ յուղղութե՛, և ոչ համբերել կարէր հանապազորդ նախատանացն յանդիմանչին. էարկ՝ի միտս սպանանել զմեծ քահանայապետն այ զՆերսէս։ Իբրև յայտնի զայս ոչ մարթէր նմա առնել, կեղծաւորել կերպարանէր իբրև այն եթէ յուղղութիւն ինչ եկեալ է. աղաչէր զքահանայապետն այ տալ նմա ապաշխարութե՛։ Այս կոչեցաւ յապաղման իւր՝ի Խախ աւանի Այկեղեաց գաւառի. առ բար նմա ընթերիս, աղաչեաց զայրն այ քաղցրել նմա յարքունական գահոյն, և իբրև այնու թէ սրբեսցի նա՝ի չարեաց անտի իւրոց, և ինքն այնուհետեւ յայտնի հետէ յապաշխարութե՛ մտցէ։

Իսկ իբրև զառաջինն բազմեցոյց, ինքնին Թագաւորն յոտն կացեալ հոլանեալ՝ի մէջ գետին անցեալ, անապակ մատուցանէր առնն այ՝ի Ներսիսէ յընթերիս անդ, և զեղ մահու ընդ կոտինդն խառնեալ մատուցանէր նմա։ Այս յորժամ ըմբէր զբաժակն զայն՝ի մտցեալ անդէն, խօսել սկսաւ և ասէ. Ողջունեալ է

ար ահա մեր, որ արժանի արար զմեզ լսել զաժակս զայս, և հասանել մահուամբ՝ որ վասն ահն է, որում և ցանկացեալ էի ի մանկութենէ իմմէ։ Արդ զաժակս փրկութենէ ընկալայց, և զանուն ահն կարդացից, զի և ես հաւասարեցից հասանել ի մանն ժառանգութենէ սրբոցն ի լոյս։ Այլ քեզ, ով Թագաւոր, արժան էր իբրև զայր Թագաւոր յայտնի հրամանն տալ և սպասնանել. զի ով էր՝ որ արգելոյր զքեզ, կամ ով էր՝ որ պահէր զձեռն քո՝ի գործոց, զոր ինչ կամէիր գործել։ Այայց, ար, Թող սոցա զայս գործս՝ զոր ինչ գործեցեն յիս. և ընկալ զհոգի ծառայիս քո, որ հանկուցիչդ ես ամ աշխատելոց. և կատարիչ ամ բարութեց,

Օ այս և այսպիսի, և որ ինչ նման են այսպիսի բանք, խօսեցաւ. և յարուցեալ գնաց՝ի վանս իւր։ Այլ զհետ գնացին նորա՝ի տաճարէն արքունի ամ մեծամեծքն նախարարքն Հայոց, և Աուշեղ սպասպետն Հայոց, և Հայր մարդպետ. և ամ որ միանգամ էին անդ, մտին ընդ նմա՝ի վանս նորա։ Այլ իբրև եմուտ՝ի վանս իւր, վերացուցեալ զպարեգօտս իւր՝ի վերայ սրտին ցուցանէր կապուտակեալ քան զչափ նկանակի միոյ։ Իսկ մեծամեծք նախարարացն մատուցանէին նմա թիւրակէս և անդեղեայս վասն ապրելոյ. իսկ նա ոչ կամեցեալ զայն՝ի բաց մերժէր, այլ ասէ. Աեծապէս եղև ինձ բարի, զի եհաս ինձ մեռանել վասն զգուշութենէ պատուիրանացն Աին։ Այլ քանզի դուք ձեզէն գիտէք, զի հրապարակախօսի ընդ ձեզ՝ զոր ինչ խօսէի, արժան էր ինձ հրապարակաւ մեռանել՝ի ձէնջ, զի այմ[1] իսկ ցանկացեալ էի. բայց բարւոք եղև ինձ վիճակն ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ։ Որհնեցից զնոր, որ այս մասին վիճակի ժառանգութենէ ապրեցոյց զիս. և մեծապէս խնդութեն է ինձ, զի վաղվաղակի լուծայց ես յանօրէնն և յամբարիշտ աշխարհէ աստի յայսմանէ։ Այլ բազում ինչ խօսեցաւ ընդ նոսա, և զգուշացոյց զնոսա. և աղաչեաց զամենեսեան զգուշանալ անձանց, և պահել զպատուիրանս նոն։

1 ՚ի չորս օրինակս այծ։

Նա յետ այսորիկ սկսաւ զարիւնն գունդ գունդ ի նեղքուստ ընդ բերանն արտաքս հոսել իբրև զերկուս ժամս: Նա յետ այսորիկ յարուցեալ եկաց յաղօթս. եդեալ ծունր, խնդրեր զթողութի՛ւն ի վերայ սպանողին իւրոյ: Ապա յետ այսորիկ յիշեր յաղօթս իւր զՇամ մարդս, զմերձաւորս և զհեռաւորս, զանարգս և զպատուականս. և զայնոսիկ անգամ, զորս երբեք ոչ ճանաչէր զնոսա, յիշեր յաղօթս իւր: Նա յետ աղօթիցն կատարելոյ համբարձեալ զձեռս իւր և զաչս իւր ընդ երկինս, ասաց. Տէր Յա՛ Վէ՛, ընկալ զհոգի իմ: Նա զայս ասացեալ, արձակեաց զոգի: Նա առեալ զմարմին սրբոյն Ներսէսի զառնն Այ պաշտօնեայք եկեղեցւոյն, և Փաւստոս եպիսկոպոս, և պաշտօնեիցն գլխաւորք՝ Տրդած և Մուշեղ սպարապետան և Հայր մարդպետ, և ամ ազատագունդ բանակին արքունի, բարձին յաւանէն ի Խախ գեղջէ՝ ուր գործն կատարեցաւ, տարան ի Թովին յաւանն յիւր գեւղն: Հանդերձ սաղմոսիւք և օրհնութի՛ւք, կանթեղիւք վառելովք և մեծապաշտամունքք և բազում յիշատակօք գթոյն յուղարկեցին: Այլ մինչ չև էր ծածկեալ զմարմին սրբոյն, ինքն Թադեւոս Պասլ երթեալ պատեաց և Թաղեաց ի մարտիրոսական ի քնակութի՛ն. բայց Թադեւոս Պասլ ի չքմեղս լինելով չլուեցին առնէր, իբրև Թէ իւր չիցէ գործեալ զայն:

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս տեսլեանն՝ որ երևեցաւ արանցն սրբոց անապատաւորաց, Շաղիտայ և Եպիփանու, մինչ գեռ նստէին ի լերինն:

Ա՛յր երկու կրօնաւորքն անապատաւորքն մինչ գեռ նստէին ի լերինն, անուն միում Շաղիտա, և էր սա ազգաւ ասորի, և նստէր Ա՛ռեւճ լերինն, և միւսումն անուն Եպիփան, և էր սա ազգաւ Յոյն, և նստէր սա ի մեծի լերինն ի տեղի դիցին՝ զոր կոչեն

աթոռ Աղուանից[1], և էին սոքա երկոքին լեալ աշակերտք սրբոյն Դանիէլի մեծի՝ զոր վերագոյին յիշեցաք, և մինչ դեռ յիւրաքանչիւր լերին նստէին սոքա, ի ժամու՝ յորում մեռաւ սէն Աղբսէս, տեսանէին սոքա յիւրաքանչիւր լեառնէ աջոք բացօք ի տուընջեան ժամու զայրն այ զԱղբսէս երբեւ յամպս յարփշատակեալս։ Ո՞ի հրեշտակք այ տանէին զնա ի վեր, և գունդք գունդք գային նմա առաջի։ Երբեւ տեսին զայս տեսիլ անապատաւորքն, զարմացեալք ընդ գործն ընդ այնս. բայց Շ աղնտայն՝ որ էրն յԱռեւծ լերինն՝ քանզի էր հմուտ այր, գիտաց եթէ հանգուցեալ է սէն Աղբսէս, և այն ոգիքն նորա երևին նմա. բայց Աղաւիսան եղ ի մտի իւրում, թէ մարմնով եցէ յարփշատակեալ զնա։ Այսպա յարեան յիւրաքանչիւր լեռնէ ընթացեալք փութով մինչև յԱկեղեաց գաւառ, եկին քննեցին տեսին զի կատարեալ էր սէն Հայրապետն Աղբսէս. և եկին մինչև ի Ծովիլայ գետն, և տեսին զտեղին՝ յորում եղեալ էր զնա, և գիպեալք միմեանց արքն հաւատարիմք պատմէին միմեանց զոր ինչ տեսինն՝ առաջի ժողովրդոյն։ Այլ էին արքն այն հրեշտակակրօնք, յանապատին մնեալք և կեցեալք. զի և կարօղք էին նշանս առնել մեծամեծս, և ամենեցուն գիտելի և ծանօթք էին գործք նոցա։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս սրբոյն Շաղնտայի։

Շ ԱՂՆՏԱՑՍ, այր սքր, էր լեալ աշակերտ մեծին Դանիէլի. և ի տղայութենէն իւրմէ մնեալ էր համան յանապատս, և ընդ անապատաւորս խոտաճաշակ լեալ էր։ Այլ յետ հանգստեան սրբոյն Աղբսէսի գնաց չորս ի գաւառն Կորդուաց, և առնէր նշանս և սքանչելիս, և բնակէր ի մէջ առիւծուց.

1 Յետ՝ օրինակն Նահապետ։

աւելի քան զքսան առեւծ հանապազ շրջէին ընդ նմա հանապազորդեալք : Էր ոմն լինէր՝ ոմն յորժամ ցաւ ինչ ցաւէր գաղանացն, գայիւն շուրջ պատէին զնո֊ վաս, և ձգձգէին զՀ աղետացն, և նշանաւ առնէին խնդրել զբժշկութիւն : Էր երբեմն՝ ոմն առեւծ մի մեծ, և էր ելեալ եղէգն ընդ թաթիւղ բազկին ա֊ ռիւծոյն, և եկն առեւծն առ սուրբն Հ աղետացն՝ յորում նստէր. և զբրէն մարդոյ՝ ի վեր ա֊ ռեալ զթաթիւղն՝ ցուցանէր նմա զվէրն, նշանացեր նմա բժշկել զինքն : Իսկ սրբն Հ աղետա հանէր զե֊ ղէգն՝ որ ընդ վէրն մտեալ էր, և թքանէր ի վէրն, և թաշկինակաւն՝ զոր ընդ գլուխն իւր էր ածեալ՝ հանեալ պատէր զթաթ առիւծոյն և բժշկէր :

Էր այսպէս բիւրապատիկ և պէսպէս առնէր զըս֊ քանչելիս : Էր գազանք էին կենաց կցորդ նորա, մինչ շրջէր նա յանապատս զՀամ աւուրս կենաց իւրոց : Էր ի գետ իջուն հասանէր, կօշկօքն անցանէր ի վերայ ջուրցն գետոյն, և ոչ թանայինն կօշկիք նորա : Էր յորժամ ի շէն ուրեք իջանէր, զգազում մնջորեալս դարձուցանէր նշանօք և արուեստիւք : Ի֊նայն շըր֊ ջէր. և իջուն իջանէր ի շէնս, առնէր բժշկութիւնս բազում հիւանդաց. և էր սա աւուրըք ծերագոյն :

Էայց Համ մարդ սպասէր և ակն ունէր մահու նո֊ րա, վասն ըմբռնելոյ զմարմինն նորա : Իսկ սրբն Հ ա֊ ղետա խնայեալ զայս՝ թէ սպասեն առնուլ զմարմինն նորա բազում մարդիկ, ապա խնդրեաց Հ աղետա յՀՀ, զի մի ոք ըմբռնեսցէ զմարմինն նորա : Էր եղև օր մի յաւուրց, որպէս սովորութիւն էր իւր, գնալ ի վերայ ջուրցն գետոյն : Էր մինչ դեռ անցանէր նա ընդ գետն Կորդուաց, ըստ խնդրուածոյն իւրոց՝ որպէս և խընդ֊ րեաց նա, յանկարծակի՝ իջուն կայր ի մէջ գետոյն՝ յանկարծօրէն ընդ ջրովն մտեալ առըջն Հ աղետայն ծածկեցաւ : Էր մեծ գոյժ եղև գաւառին : Եւ ժողո֊ վեցան անչափ բազմութիւք մարդկանն ի մի վայր և կեալք կուտեցան, մինչև հատին գարձուցին ընդ այլ շրջեցին զգետն : Էր խնդրէին զմարմինն սրբոյն Հ ա֊ ղետայն, և ոչ կարացին ուրեք գտանել. զի իւր խընդ֊ րուածքն առ ՀծՀ այսպէս էին լեալ յաւաջագոյն, սոյնպէս և կատարեցաւ :

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս սրբոյն Եպիփանու։

Այլ երանելին[1] Եպիփան էր ընդ՝ սրբոյն Հա-
ղիտային աշակերտ եղեալ մեծին Յովհիէլի. և սա՝ի
մանկութենէ մնեալ էր յանապատի։ Այլ յետ մա-
հուանն մեծի քահանայապետին Յերսխի եկն քնա-
կեցաւ նա՝ի մեծ Յոփս յանապատին, որ կոչի ա-
նուն տեղւոյն Ամբրե, ՚ի վերայ գետոյն՝ որ անուա-
նեալ կոչի Ամուշեղ։ Այլ էր քնակեալ՝ի քարան-
ձաւս, և հանապազորդեալ էր ընդ գազանս անա-
պատի, և ժողովէին առ նա արջք և ինձք։ Այլ էր
սա հանապազորդեալ յանապատին, և առնէր սա մե-
ծամեծ նշանս և սքանչելիս. և դարձուցանէր զբա-
զումս մոլորեալս՝ի հեթանոսութենէ՝ի քրիստոնէու-
թիւն, և ընոյր զերկիրն Յոփայ վանիւք. և դնէր վարժեալ
ընդ ամ երկիրն Յոփայ, և լինէր ՚ի նմա Եպիփան լոյս
երկրին Յոփայ, և լուսաւորէր զնոսա մեծապէս։

Ընդգանէր և յերկիրն Ղազնեայց, լուսաւորէր և
զնոսա. և ընոյր զերկիրն Ղազնեայց վաներով. և շի-
նէր վկայանոց մի յաւանին՚ի քաղաքին Տիգրանա-
կերտ, և յօր յիշատակի սրբոյն՚ի փրկութենէ և՚ի
բարեխօսութենէ աշխարհի. և առնէր ինքն նշանս, և
դառնայր ինքն յիւր վանն։ Այլ էր մօտ՚ի գետն
Ամուշեղ աղբեւր մի, և ձուկն բազում ելանէր ընդ
ակն աղբերն. և բազում մարդիկ հանեալ զձուկն,
օգտէին՚ի նմանէ։ Այսպա երկու եղբայրք՚ի վերայ
ձկանն հակառակեալք, էսպան միմեանս զմիմեանս. և իբրև
գիտաց սրբն Եպիփան, ասէ. Զայսմ հետէ այսի ոք
ձուկն մի՛ կերիցէ։ Այլ անդէն զառնացաւ ձուկն տե-
ղւոյն, և եղև իբրև զլեղի գառն մինչև ցայսօր ժա-
մանակի. և ոչ ոք որսաց զնա մինչև ցայսօր ժամա-
նակի։ Յաղագս և այլ զօրութիւնս առնէր և նշանս
անչափս։

1 Յերիս օրինակս չկաք ընդ. և՚ի մէնջ օրինակի՝ սրբն Եպիփան ընդ-
գէմ սրբոյն Շաղիպոյ։

Իբրև բազում կարգս ուղղութեան Թողոյր ՚ի գաւառսն յայնոսիկ Եզնիկ, իսկ նա էառ ընդ իւր զաշակերտսն իւր արս միանձունս լեառնականս անապատականս, արս հինգ հարիւր, երթալ գնալ յերկիրն Յունաց։ Նա մինչ դեռ երթային, ՚ի ձա՛նապարհին դիպեցաւ նոցա կին մի. իբրև անցին ընդ կինն, սկսաւ փորձել զնոսա Եպիփան, և ասէ. Իբրև զի՞ գեղեցիկ եր կինն և վայելուչ։ Եթե մանուկ մի յաշակերտաց[1] անտի. Կինն, զոր դու դովեցեր, միականի եր։ Նա ասէ Եզնիկ. Դու քնաւ ընդէ՞ր նայեցար տեսանել զերեսս նորա. տեսանե՛ս զի խորհուրդք չարք կան ՚ի քեզ։ Նա անդէն մեհենաց զմանուկն յիւրմէ, և հալածեաց զնա։ Նա ինքն ջոգաւ եմուտ ՚ի ծով մեծ, և նաւօք անցին յանապատ ՚ի կղզիս. և ունէր զկղզին զայն օձից բազմութի՛ք, և էին յայնմ կղզւոջ քնակեալ օձք լիժք և քարըք, բազում գազանք դաժանք Թունաւորք։ Նա եղև իբրև ջոգան, եհաս Եզնիկ ՚ի կղզին յայն, մերժեցան անտի գազանքն, և Թողին զկղզին և գնացին։ Նա այնուհետև ոչ ինչ վնաս եղև նոցա ՚ի կղզւոջն յայնմիկ, այլ քնաւ կեցան անդ խաղաղութի՛ք։ Ընդ եկեաց Եզնիկ, անդէն ՚ի նմին կղզւոջ հանգեաւ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս մեծամեծ նշանացն և սքանչելեացն, որ երևեցաւ յոյ ՚ի Մամբրէ յետ գնալոյն Եպիփանու։

Ապա իբրև գնայր սուրբն Եպիփան ՚ի գաւառէն Օրոփայ յիւրմէ միանձնանոցէն՝ որ անուանեալ կոչի Մամբրէ, եթող անդ բազում եղբարս միաբանս միահաւանս հաւատացեալս կրօնաւորս քրիստոնէիցն, լեառնականս Ճգնաւորս միանձունս. և ՚ի վերայ նո-

1 Յերկուս օրինակս աշակերտաց։

յա երէց մի գլխաւոր : Այլ եկին ՚ի նոցանէ ոմանք , որ քնաւ ամենևին այլ ինչ կերակուր չէր ձաշակել նոցա ՚ի մանկութենէ իւրեանց , բայց լոկ բանջար և ջուր . և զհամ գինւոյ գիտէին ոչ զնւարդ լինի :

Այս էր անդ եղբայր մի խստակրօն , որ մինչև վարս վարէր . և ոչ ձաշակէր ամենևին ՚ի բաժակէն կենսաբար փրկութենն յուսոյն յարութենն , այս ինքն յարեւնէն ճն մերոյ Յիսի Քրիստի : Օ ի ոչ կարէր հաւատալ թէ ձմռանաւ արիւն իցէ Աբգարոյն այ , յորժամ ելանիցէ ՚ի սեղանն այ . այլ նմա գինի լոկ թուէր թէ իցէ , վասն այսորիկ վիճէր հանապազ ընդ բազումս : Լոկ եղև օր մի յաւուրց , իբրև կատարեցին անդ ըզխորհուրդս գոհութեան պատարագին ՚ի վկայանոցի անդ յայնմիկ՝ զոր էր շինեալ սրբոյն Գալիխանոս , յորժամ հանին զՀացն սրբութե և զգինին՝ արիւնանալ պատարագին ՚ի վերայ սեղանոյն , և կայր եղբայրն անվհատ ՚ի վկայանոցին : Այս երէցն ելեալ կայր ՚ի վերայ առաջի սրբոյ սեղանոյն . յորժամ յառաջ քան զմատուցանել զպատարագն համբառնայր զձեռս իւրեցն ՚ի վերայ սեղանոյն , և ասէր .

Տէր ՅԱծ զօրութեց , որ արարեր զյամ յոչընչէ , և ստեղծեր զմարդ ՚ի հողոյ կենդանի և անապականս . և անցին ՚ի քոյոյվ պատուիրանսդ , և անկան ՚ի մահ իւրեանց պատուիրանազանցութենէն : Այս արդ արդարդ դատաստանսդ քովք մերժեցեր զնս ՚ի դրախտ տէն փափկութե յայս աշխարհ ուստի ստեղծեր , և դրաւեցան լինել ընդ մահապարտութե . սակայն ոչ թողեր ՚ի ձեռանէ , բարերարդ ՅԱծ , այլ տեսչութե և շնորհօք միածնիդ քո վերստին ծննդեամբ նորոգեցեր զստեղծուածս քո . և բազում կերպարանօք այցելու եղեր արարածոց քոց : Ընտրեցեր զմարգարէս , արարեր զօրութիս ազգի ազգի նշանս ՚ի ձեռն սրբոյ քոյ՝ որք յաղգս ազգս իւրեանց Հաձոյ եղեն առաջի քո , ետուր զօրինս յօժնականութե , առաքեցեր հրեշտակս վերակացուս : Լոկ իբրև եկն կատարած ժամանակայ , խօսեցար ընդ մեզ միածին Որդւովդ քո՝ որով զաշխարհս արարեր , որ է պատկեր փառացդ քոյ և կերպարանք էութե քո , և կրկ զնմ բանիւ զօրութե . որ ոչ ինչ յափշտակեաց զհաւան

Հօրն զմեռուԹիւն հաւատալ պատիւ անձինն, այլ ածին յաւիտենական՝ ի յերկրի երևեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ, ի սրբոյ կուսէն մարմնացաւ, զկերպարանս ծառայի էառ, և եղև ի նմանուԹիւն տկարուԹեաս մերոյ, զի արասցէ զմեզ նմանակիցս փառաց իւրոյ։ Օ՜ի յամ գայԹակղուԹիւն և յամ մոլորուԹիւն փըրկեցեր զմեզ. և բարձեր յամ երկրէ զանյուսուԹիւնն ԹերահաւատուԹե, և ետուր զյուսոյ զհաւատս յաւրուէ ամ քոց արարածոց, որոց և զնմանուԹիւն պատկերի կերպարանաց քոց ընդհղեցեր։ Եւ հաւատովքն, զոր ետուր զօրանալ ի մարդիկ, զամենեսեան առ հապարակ միանգամայն կեցուցեր ընդհելով. զի ոչ եԹէ վասն արդարուԹեց ինչ մերոց, զի ոչինչ արաբաք զբարիս ի վերայ երկրի, այլ վ՜ո ողորմուԹե և գԹուԹեան քո՝ զոր սիրեցեր ի մեզ՝ համարձակիմք խնդրել ի սրտագէտէդ, որ քննես զսիրտս և զերիկամունս որդոց մարդկան։ Եւ, Տէր, սրտագէտ յամի, դու գիտես զՀմարտուԹե զվաստակոց զառնս զայսոցիկ, զի խոտամբերուԹե վարի ի վարս վաստակոց իւրոց, և չիք հաւատք ի սմա. արդ յաւել ի սա հաւատս քան զհատ մանանխոյ, զի մի կորիցէ անձն սորա։ Յովիւ քաջ, որ ելեր դ ի խնդիր ոչխարին կորուսելոյ, և եդիր զանձն քո ի վերայ խաչանց քոց, արդ և զսա փրկեա ի ԹերահաւատուԹե՝ յոր ըմբռնեալս է, զի մի յափշտակեսցէ Թշնամին զանձն սորա, և քո ստեղծուածս և նմանուԹե կերպարանացս յապականուԹե յաւիտենական կորստեան մատնեսցի։

Եւ զայս աղօԹս մատուցաներ երէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին. և յետ այսորիկ մատոյց կատարեաց զպատարագամատոյցն զՅիսմ։ Իբրև ասաց. Այր մեր՝ որ յերկինս, եղ ծունր և կայր յաղօԹս յերկար։ Եւ մինչ դեռ եդեալ էր նորա ծունր և կայր յաղօԹս, և կայր եղբայրն ԹերահաւատՀ ի յոտն, ի խոնարհ ի բեմին նայեր ի սեղանն, սկսաւ տեսանել մեծամեծ սքանչելիս աչօք բացօք իւրովք։ Վասն տեսանելոյ զՀն, զի իջեալ կայր ի վերայ սեղանոյն. և բացեալ էր իւր զվերսն ի կողմանէ, զոր ի կողն գեղարդեամբն խոցեցին. և ի

վերջ կողցին արիւնն ցնցղկացեալ հոսէր ՚ի բաժակ անդր պատարագին, որ եդեալ էր ՚ի վերայ սեղանոյն: Իսկ իբրև ետես զայս եղբայրն Թերահաւատ կրօնաւորն, զարհուրեալ դողացեալ խոովեալ տագնապեալ յերկիւղ կործանեալ կայր, ՚ի բերանս հարեալ, պարտեալ Թալացեալ ոգին ապառնալ յինքենէ:

Ապա երեցն յարուցեալ կատարեաց զգործ սրբութեանն պատարագին. իջուցեալ զսրբութեան օրհնացն ՚ի բեմբէն, ետես զեղբայրն, զի յերկիւղ կործանեալ Թալացեալ կայր: Իբր ետ ումեմն տալ էր զօրհնան, և եհան զմնացորդսն ՚ի սեղանն, ապա ինքն մատուցեալ բուռն հարկանէր զեղբօրն. և տեսանէր, զի նա Թալացեալ պակուցեալ կայր ՚ի գետնին: Ապա ջուր արկանէր ընդ բերանսն. իսկ նա ուրեմն եբեր զոգի. և զգաստացեալ, մատեաւ եկաց պատմեաց ըզմեծամեծ սքանչելիսն՝ զոր ինչ ետես: Ապա կամեցաւ տալ նմա երեցն ՚ի սրբութենէն անտի օրհնացն. իսկ եղբայրն չհաւանեալ չառնոյր յանձն, վասն զի անարժան համարէր զանձն իւր: Այլ հօր հատեալ անձինն, ՚ի ներքս իջեալ, զեւթն ամ ապաշխարեալ զԹերահաւատութենէ մեղացն իւրոց, և յետ եւթն ամին ապա զանձն արժանի ապաշխարութենէ համարէր, ելանել առնուլ ընդ օրհնան հաւասարել: Վասն ՚ի նոյն հօր իջուցեալ զանձն իւր զամ աւուրս կենդանոյ իւրոց, մինչև ՚ի նմին հօր վաղճանեցաւ եղբայրն: Ապա և նոյն երեցն հանգեաւ, և ՚ի միասին երկոքեան եդան ՚ի ներքս ՚ի վկայանոցին, ուր սքանչելիք երևեցան յեղբայրանոցին Ապիփանու:

ԳԼՈՒԽ ԻԹ.

Յաղագս Ցուսկան՝ որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, զոր կացոյց փոխանակ Ներսիսի Թագաւորն Պապ յիւրոց կամաց՝ առանց մեծ եպիսկոպոսապետին Կեսարու. և վասն այսորիկ բարձաւ իշխանութիւն Հայրապետացն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել։

Այդեւ յետ մահուանն Հայրապետին Ներսիսի կացոյց Թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտ։ Նա հրաման ունել նմա զտեղի Հայրապետացն, իշխել փոխանակ նորա՝ զոր ասան. և էր նա փոխանակ նորա։ Բայց լուաւ եպիսկոպոսապետն Կեսարու՝ թէ սպանին զմեծ Հայրապետն Ներսէս, և փոխանակ նորա տեղի նորուն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ, զի ոչ որպէս սովոր էին առ Հայրապետն տանել՝ ի Կեսարիա ի ձեռնադրութիւն։

Եւ իբրեւ այս մեծ զարմանալով ցասման եղեալ Հայրապետին Կեսարու վասն բանիս այսորիկ, և եղև ժողով եպիսկոպոսացն սիւնհոդոսին նահանգին Կեսարու առանց Հայրապետին. և գրեցին Թուղթ ցասմամբ մեծապէս։ Եւ նոյնպէս և գրեցին Թուղթ առ Թագաւորն Պապ, և լուծին զիշխանութիւնն կաթողիկոսութենն. զի որ լեցին Հայրապետ Հայոց, նա զրանն արքունի իշխեսցէ՝ զհայն օրհնել. և մի՛ լիշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր ի բնէ։ Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել. այլ որ լինէին եպիսկոպոսք ամ գաւառաց գաւառաց Հայոց և կողմանց կողմանց, այնուհետեւ յայնմ հետէ որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց, երթային ի քաղաքն Կեսարացւոց, և անդ լինէին եպիսկոպոսք։ Ա՛ն զի յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն յերկրէն Հայոց, այնուհետեւ ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել. բայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն, ի վերոյ միայն նստէր, և հայ օրհնէր

Թագաւորացն։ Եւ սա քրիստոնեայ, բայց համար-
ձակութիւն յանդիմանութիւնչ ինչ ընդ ումեք չիշխեր բար-
բառել. կամ զի երկնչոտ էր և հաւան, և ըստ կա-
մաց Թագաւորին միայն ունէր զպատիւն, և կայր ի
լռութեան և ի հանդարտութեան զամս աւուրս կենաց
իւրոց։

ԳԼՈՒԽ Լ.

*Յաղագս սգոյն, որպէս սգային զՀայրապետն Կերսէս, և լինելին զնը-
մանէ կաթոգի։*

Ա՚ղն յետ սպանանելոյն Պապայ զսուրբ Հայրա-
պետն Կերսէս, տխրեցաւ ամ մարդ խոր տրտմութիւ.
և ամ մարդ երկրին Հայոց հաւանեցին խօսեցին և ա-
սեցին. Յարձեալ են արդ փառք Հայոց, զի բարձաւ
արդարն այ յայսմ երկրէ։ Խօսեցին իշխանքն և նա-
խարարքն, և ասեցին. Վիտեմք արդ թէ կորեաւ եր-
կիրս մեր. զիա՞րդ հեղաւ արիւն արդար ի տարա-
պարտուց, մանաւանդ զի վասն այ սպանաւ։ Եւ խօ-
սեր Մուշեղ սպարապետն Հայոց և ասէր. Մերոյն
այ հեղաւ արիւն ի տարապարտուց. այսուհետև ես
ոչ կարեմ երթալ ի վերայ Թշնամեաց, և ոչ նիզակ
ումեք ուղղել։ Զի վիտեմ եթէ եթող ած ի ձե-
ռանէ զմեզ. և լքեալ եմք, և ոչ կարեմք համբառ-
նալ զգլուխս մեր. զի գիտեմ՝ եթէ չիք յաղթուն
ի վերայ Թշնամեաց երկրիս Հայոց. յաղօթից նորա
էր յաղթուն որ մեռաւն, և ազգի նոցա։ Եւ սգային
ամ ազատք և շինականք ծագէ ի ծագ ամ սահմա-
նաց երկրին Հայոց, ազատք և շինականք ամ քնա-
կիչք տանն Գորգոմայ, հայ լեզուն առ հասարակ։

ԳԼՈՒԽ ԼԱ·

Յաղագս Թէ որպէս զկնի մեռանելոյն Հայրապետին Ներսէսի, և կամ որպէս ի նախանձ մեռեալ տապալեաց Թադեւոսն Պապ զամ եղեալ կրօնս կանոնիցն՝ որ ինչ եդան ի Ներսիսէ առ կենդանութեանն նորա ի նմանէն։

Իսկ Թադեւոսն Հայոց Պապ զի Թէպէտ և սպան զՀայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս, սակայն ոչ յագեցաւ մահուամբ նորա, այլ ջանայր այսպէս՝ Թէ զինչ միանգամ կարգք իցեն ուղղութեանն ի Ներսիսէ եղեալ յեկեղեցւոջն, եղծեսցէ և խանգարեսցէ։ Նա սկսաւ նախանձ վարել ընդդէմ յառաջագոյն կանոնելոցն ի նմանէ. և սկսաւ հրամայել տալ յայտնապէս յաշխարհին աւերել զայրենոցն և զորբանոցն՝ զոր շինեալ էր Ներսէս ի գաւառս գաւառս, և աւերել զկուսաստանսն ի գաւառս գաւառս և յատանս յատանս պարսպեալս և ամրացեալս՝ որ նորին Ներսիսի էր շինեալ վասն ամրապահս առանգոյն[1] զգուշութեանն։ Քանզի յիւրում կենդանութեանն երանելոյն Ներսիսի էր շինեալ. շինեաց զայս կուսաստանս յամ գաւառս, զի որ միանգամ կուսանք և հաւատացեալք իցեն՝ անդր ժողովեսցին ի պահս և յաղօթս, և կերակրել յաշխարհէ և յիւրաքանչիւր ընտանեաց։ Այն աւերել հրամայէր Պապ Թադեւոսին, և զկուսանսն հաւատացեալս տայր հրաման ի խառնակութեանն պղծութեանն։

Նա յամ աւանս էր շինեալ նորին Ներսիսի և հիւանդանոցս, յամ կողմանց և ուռճիկս և գարմանս կարգեալս, և արս հաւատարիմս Թողեալ տեսուչս հիւանդացն և աղքատացն. նոյնպէս և այնոցիկ յանձն արարեալ որք երկիւղածքն էին յայ, որք դաստատանացն յաւիտենականացն և գալստեանն Քրիստոսի սպասէին։ Զվերակացուսն հալածէր Թադեւոսն յիւրաքանչիւր տեսչութենէ, և զտեղիսն ի բաց աւերէր։ Զոր վերակացուսն կարգեալ էր յաղագս չքա-

1 ի յորս օրինակս առանդոյն։

ւորացն և աղքատաց տեսուչ, զնոսա ՚ի բաց հա-
լածէր. և հրաման տայր ամ աշխարհի իշխանուհէն
իւրոյ. Աղքատքն բայց եթէ ՚ի մոյր ելանէն. այլ անդր
ոք ինչ մի իշխեացէ տանել, եթէ ոչ նոքա եկեսցեն
ժառեացեն աղաչեսցեն, ապա թէ գտանել հագիւ ինչ
կարասցեն։ Եւ զկարգս պղտոյն և զտասանորդացն՝ որ
՚ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղե-
ցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ զի
մի ոք տացէ։

Եւ յաւուրսն Ելբսիսի հայրապետին ոչ ոք իշ-
խէր ՚ի նմանէ հանել կամ թողուլ զկին իւր զամու-
սին յամ երկիրն Հայոց, զոր միանգամ քօղով կամ
պսակաւ հարսանեացն օրհնութիւնք առեալ էր. և ոչ
այլ առնել միւսանգամ իշխէր ոք համարձակել։ Եւ
թէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխէր անյուսութիւն
արտաքոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ զմեռեալն.
և ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն, և ոչ
ձայնս ոք արկանէր ՚ի վերայ մեռելոյն յաւուրսն Ելբ-
սիսի. այլ լոկ արտասուօք և ըստ արժանի սաղմո-
սիւք և օրհնութիւնք, կանթեղօք և մոմեղինօք լուցե-
լովք զմեռեալսն յուղարկէին։ Իսկ յետ մահուան
նոր այնուհետեւ ամ մարդ առնէին հրաման համարձա-
կութիւն ՚ի թաղաւորէն, թողուլ զկանայս զամուսինս
իւրեանց. եր զնա մի այր տան կնոյ փոխէր. և առ
հասարակ յանօրինուն դարձան միանգամայն։ Ապա
յետ մահուան Ելբսիսի յորժամ զմեռեալսն լային,
փողովք և փանդռօք և ձնօք զկոծսն պարուցն կա-
քաւելով, զտիգսն հատեալս, զերեսս պատառեալս,
արք և կանայք պղծութիւնք ձիւաղութիւնք պարուք դէմ
ընդ դէմ հարկանելով, և կամ ախս [1] հարկանելով,
զմեռեալսն յուղարկէին։

Իսկ յամսն Ելբսիսի զաղքատս քնաւ ամենևին
՚ի մոյր ոչ տեսանէր ընդ ամ տահմանսն Հայոց. այլ
անդէն ՚ի հանգստեան նոցին, այս ինքն յօրինանոցսն,
ամ մարդիկ տանէին զամ պիտոյս նոցա. անդէն իսկ
անկարօտ յամ ումեքէ լեալ էին։ Իսկ յետ մահուն

1 ՚ի ջրոս օրինակս կամ ասէս. յօրինակի միւսում կամ ծաֆս. մեզ այս-
պէս ուղղել պատշաճ դատեցաւ։

քահանայապետին Թէ առնէր ոք հանգիստ աղքատացն, մեծ պատիժս կրեր ՚ի Թագաւորէն։

Յոկ յաւուրսն Ներսիսի ընդ ամ երկիրն Հայոց կարգք պաշտամանն եկեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր, և բազմութիւն սրբոց պաշտօնէիցն կանոնեցոյն։ Յո յիշատակ սրբոց վկայից յաւուրս նոր յամ տեղիս Հայոց մեծախումբ ժողովուք[1] հանապազ պայծառանային, և պատիւ հարցն եպիսկոպոսաց յամ գաւառս Հայոց յաձախեր ըստ արժանի իւրեանց. և կարգք վանականաց և ՚ի շէնս և յանշէնս առ հասարակ ծաղկեալ։ Ո.յլ ամ եղծեալ ապականեալ խանգարեցաւ յետ մահուան նր։

Յոկ յաւուրս քահանայապետուէն Ներսիսի ամ գաւառք Հայոց յամ ՚ի շէնս և ՚ի գեղս յամ կողմանս Հայոց առ հասարակ ՚ի հրամանէ քահանայապետին էին շինեալ օտարատունք հիւանդանոցք օտարանոցք. և ամ մարդիկք երկրին Հայոց էին պըտղաբերք և ողորմածք առ ՚ի յիշել զաղքատս և զնեղեալս զտառապեալս և զօտարս, զհարստահարս, զկրճդեհս, զպանդուխտս, զհիւրս զանցաւորս. և էր նոցա կարգեալ վերակացուս սրբոյն Ներսիսի, և դարմանս ՚ի տեղեաց տեղեաց։ Յոկ յետ մահու նր աւերեաց զայն ամ Թագաւորն Պապ, և անարգեաց զպատիւ եկեղեցւոյ. և բազում ինչ կարգ և կանոնաց ուղղութիւն յօրինուածոյ՝ զոր եդ Հայրապետն Ներսէս, և անցեալ դարձեալ ՚ի մոռացօնս զամ կարգեացն տապալեր։ Յետ նր ելին յաշխարհէս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ ՚ի հնութիւն դիւապաշտութիւն դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին ՚ի համարձակութիւն Թագաւորին Պապայ. զի ոչ գոյր յանդիմանիչ, և ոչ ոք էր այն՝ յորմէ խիթային. զինչ և կամէին գործել, համարձակութիւն գործէին. բազումք պատկերս կանխեալ, երկիր պագանէին։

Յո հատ ևս յաղքունիս Պապ Թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր Թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիս քահանայապետիւ ՚ի սպաս

1 Յամ օրինակս ժողովք։

պաշտամանն եկեղեցւոյն ընդ առմ երկիրն Հայոց։ Ո՛վ յերեքն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն Թողոյր երկուս հողս։ Այլ ըստ հողոյն Թողոյր երկուս երկուս առ գեղջ մի երեց և սարկաւագ, և զայն՝ ի սպասու կացուցանէր յիւր՝ ի ծառայութիւնէ զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն։ Ո՛վ ինձ այսպէս Թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեծուկս Կերսիսի առնիցէ՝ ի կենդանեաց առ մեռեալս, վասն Թշնամութեն՝ զոր ունէր ընդ նմա։ Այլ զայն ոչ ածէր զմտաւ՝ Թէ զանձն կորուսանէ։ Այլ՝ ի ժամանակին նուաղելին առ կարգք եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Հայոց։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Ցաղագս Թագաւորին Պապայ Թէ որպէս խոստեցաւն՝ ի Թագաւորէն Յունաց, և կամ որպէս սպանաւ՝ ի զօրացն Յունաց։

Այլ շրջեաց զմիտս իւր Թագաւորն Պապ և խոստեաց զսիրտ իւր՝ ի Թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զաէր իւր և առնել միաբանութիւն ընդ Թագաւորին Պարսից։ Այլ սկսաւ Թիկունս իւր առնել զարքային Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեանն։ Այլ առաքեր հրեշտակս առ Թագաւորն Յունաց, եթէ Կեսարիաւ հետ՝ և տան քաղաք մեր լեալ է, արդ՝ ի քաց տուր. և զԱմիդա քաղաք չինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգարել ինչ առնել, տուր՝ ի քաց. ապա Թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ։ Այլ Աուշեղ և առմ իշխանքն Հայոց շատ եղեն՝ ի մտի արքային, զի մի՛ քակեսցէ զուխտ յերկրէն Թագաւորութենէն Յունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց զԹշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ Թագաւորին Յունաց։

Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց. և անուն իշխանացն՝ միումն

Տերինտ, միւսումն Աղէ։ Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ Թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր ըսպանանել զԹագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև իբրև ընկալան զայս հրաման՝ ի Թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու՝ ի դէպ՝ սպանանել զԹագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև՝ ի դիպան ժամանակի իբրև դիտացին Տերինդն և Աղէն զօրավարքն զօրացն Յունաց՝ Թէ միայն է Թագաւորն Հայոց Պապ, և ահա մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ, և էր Թագաւորն Հայոց Պապ բանակեալ՝ ի դաշտին՝ ի Խագբատանդ գաւառի՝ ի Խու անուն տեղւոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային, ապա զօրավարն Յունաց Հաց մեծապէս գործեալ՝ յընթերիս հրաւիրեալ կոչեցին զմեծ Թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեանն նորա, որպէս օրէնն էր զայր Թագաւոր՝ի Հաց մեծ կոչել. և առնէին կազմութեան պատրաստութեան։

Եւ եկեալ Թագաւորն Պապ յընթերիս, մտեալ բազմեցաւ յոտել և յըմբել։ Եւ իբրև մտանէր արքայն՝ի խորանն Տերինդի զօրավարին Յունաց, և լեգէոն սպարակիր հետևանին վահան՝ի ձեռն, սակուր զգօտւոյ, շուրջ՝ի նեղքոյ զօրմովք խորանին պատեալ պահէին. սոյնպէս և արտաքոյ կազմէին՝ի նեղքոյ կուռ վառեալք, և՝ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստէին։ Իսկ Թագաւորն Պապ համբերէր՝ի միտս իւր Թէ՝ի պատիւ ինչ նորա զայն առնէին։ Եւ մինչ դեռ յընթերիսն [1] ուտէր, սակրաւոր զօրքն՝ի Թիկանց կուսէ նոր կարգեալք պահակեալք կային շուրջ զնովաւ չյամ կուսէ։ Իբրև ընդ գինիս մտին, որպէս զառաջինն ուրախութեամբն նուագն մատուցին արքային Պապայ, և առ հասարակ Թմբկահարք և սրընգահարք քնարահարք և փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան։ Եւ վահանաւորք լեգէոնին հրաման ետուն. և մինչ դեռ Թագաւորն Պապ զուրախութեամբ գինին ու-

1 Յերկուս օրինակս ընթրիսն ասէր։

ներ ՚ի մատունս իւր, և նայեր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր յիցեալ բազմեալ էր՝ ուստեր տաշտ ոսկի ՚ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր ՚ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, և մինչ դեռ բերանն ՚ի բաժակին էր յրմպելն, և աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայեր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց։ Այլ լեգէոն սակրաւորքն երկու ՚ի թիկանց կուսէ կային ՚ի սպասու ոսկիկամբէ վահանօքն յանկարծօրէն կից ՚ի վեր առեալ զսակուրան, զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ զուրն հարկանէր սակրաւն, և միւսն և սակրաւորն զաջ թամբ ձեռինն՝ որ կայր ՚ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և ՚ի բաց ընդ ենոյր։ Ընդ էին ՚ի բերանս տապալէր թագաւորն Պապ. և գինին տաշտիւն և արիւնն պաղանոցին նուաւ հանդերձ ՚ի վերայ բաժակալ սկըտեղն անկանէր առ հասարակ. և անդէն սատակէր թագաւորն Պապ։ Ընդ շփոթելոյ տաճարին խառնվուխեան՝ գնել տէր գաւառին Ընձևացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ՚ի լեգէոնաց անդէն սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն։ Այս Տէրենդ զօրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տարակաց ՚ի գլխոյն գնելոյ զսկաւառակն գլխոյն ՚ի վերոյ աչացն ՚ի բաց ընդ ենոյր։ Եւ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նմա և ոչ ինչ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս որ ինչ խորհեցան ՚ի յետոյ իշխանքն Հայոց, ապա անցին կացին լուռ։

Այլ ժողովեցան եկին ամ իշխանքն Հայոց մեծամեծք ՚ի մի վայր ՚ի միասին, և Ասուրեղ սպարապետն, և Հայր մարզպետ, և ամ իշխանքն ասէին։ Ո՞ինչ արասցուք կամ զինչ գործեսցուք, խնդրեսցո՞ւք զվրէժ

Թագաւորին մերոյ, թէ ոչ։ Նա ասա հաստատեցաւ այս բան ՚ի խորհրդեանն, և ասեն։ Մի կարեմք հե- Թանոսաց ՚ի պարսկաց ՚ի ծառայութիւն մտանել, և Թշնամի առնել զթագաւորն Յունաց. և ոչ զերկո- սեան Թշնամի առնել, և ոչ առանց միոյ Թիկանց կարեմք կեալ։ Ապա եկաց այս բան ՚ի խորհրդին, Թէ զինչ եղիցի՝ ահա եղիցի, Թող ծառայեսցուք Թա- գաւորին Յունաց. կացցուք ՚ի հնազանդութեան իշ- խանութեան Թագաւորութեն Յունաց. զիարդ և կամք իցեն Թագաւորութեն Յունաց, արասցեն մեզ։ Նա ոչ ինչ արկին ՚ի միտ, կամ վրէժ խնդրել, կամ այլ ազգ ինչ իրս առնել. այլ անցին կացին լուռ։

ԳԼՈՒԽ ԼՂ.

Յաղագս Թագաւորելոյն Վարազդատայ երկրին Հայոց յետ Պապայ։

Նա եղև յետ մահուն Պապայ Թագաւորին Հայ- ոց, Թագաւորեցոյց Թագաւորն Յունաց զՎարազ- դատ ոմն ՚ինմին տոհմէն արշակունի ՚ի վերայ աշխար- հին Հայոց։ Նա էկն բազում շքով եմուտ յերկիրն Հայոց, և Թագաւորեաց յերկրին Հայոց։ Նա էր նա մանուկ յաւուրց, լի արութիւ, կորովի ձեռաք, քաջ սրտիւ, և ՚ի մտաց Թեթեւ, մանգաթարոյ տղայահանճար մանկամիտ։ Այլ սակայն իբրև տեսին զնա, ժողո- վեցան առ նա ամ ազգք Հայոց մեծամեծք նախա- րարք, և կամեցեալ խնդացին զթագաւորելն նորա ՚ի վերայ իւրեանց։

Նա սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդեր Հայոց. և զգուշանայր զսահմանօքն Հայոց, որպէս սովոր էր կարդել զաշխարհ մեծապէս. և իբր առ բա- րեաց Թագաւորին մանկանն Վարազդատայ մատու- ցանէր։ Նա հոգայր հանապազ վասն Թագաւորու- թեան աշխարհին Հայոց, և զիարդ կամ որպէս շէն լինել մարթասցէ. և հանապազ երկս արկանէր բարեխոր- հուրդն, զի հաստատուն կալ կարասցէ Թագաւո- րութեին։ Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նո-

քօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ՚ի մի մի գաւառան, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամ երկիրն Հայոց. մինչև ՚ի Վանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսակ էր, Հայոց սահման էր. և զամ ազատն Հայոց կայսերական Թօշակօքն զինուորել. սոյնպէս և զօրաց երկրին Հայոց, զի այսպէս ամ զգուշութեամբ լինի առ ՚ի Թշնամեաց իւրեանց ՚ի զօրացն Պարսից: Եւ Թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութեամբ առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն Հաստատուն լինի և անշարժ ՚ի նմանէն, զի մի կարասցէ Թագաւորն Պարսից յիւր վտարել զաշխարհն Հայոց:

ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս Թէ որպէս ՚ի բանս չարախորհուրդս և անմիտ մարդկան եւ լեալ Թագաւորն Հայոց Վարազդատ, զգօրավարն Հայոց Մուշեղ սպանանէր:

Այլ իբրև տեսանէին զԹագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց՝ Թէ մանուկ բանս երթուկ է, զչար ՚ի բարոյ որոշել չգիտէ, սկսան այնուհետև ըստ կամաց իւրեանց վարել զԹագաւորն. որպէս և կամէին, բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա: Ելա առաւել ունէին դներ մանկտոյն՝ որ ՚ի տիոց հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն խմաստնոց՝ որք կարող էին զօգտակար խրատն մատուցանել նմա:

Այլ Նատ, որ նահապետն էր ազգին Մահունեաց տոհմին, դայեակ մնուցիչ Թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զօրավարութեան սպարապետութեն Մուշեղայ յինքն յափշտակել ՚ի նմանէ: Վա՛ այսորիկ սկսաւ քսիս մատուցանել զնմանէն առ Թագաւորն Վարազդատայ առ իւրեամ սանուն, և ասել՝ Թէ ՚ի սկզբան ՚ի նախնեացն հետէ զձեր արշակունեաց տոհմին մամիկոնէից է կորու-

սեալ, զի հակառակորդք ձեր դոքա լեալ են ի քեզ անտի. և համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ, մանաւանդ Աուշեղի. մանաւանդ զի այր չար է և նենգաւոր։ Օ՜ի սիրելի է Թշնամեաց ձերոց, և ա֊տելի սիրելեաց ձերոց. և համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութեբ և դժխեմութեբ։ Օ՜ի ո՞չ այն Աուշեղ է, որ ի Թագաւորութեան ժամանակ Պապայ ի պատերազմունն Պարսից քանիցս ան֊գամ ձեռնհաս եղև սպանանել զՀ ապուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկնայս Հ ապհոյ Թագաւորին ի բուռն էարկ, և խնամոտ գթով ժանուարօք արձակեաց զը֊նտսա զհետ Հ ապհոյ։ Ո՞չ այդ այն Աուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին։ Ո՞չ այդ այն Աուշեղն է, զի զարքայն Պապ հրամա֊նաւ դորա և դորին խորհրդովդ զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յու֊նաց ի վերայ Թագաւորին Պապայ, մինչև ետ սպա֊նանել։ Աւր արժան է մեռանել ի ձեռաց քոց, և չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեսցես, արքայ, այժմ զՀայ երկիրս խորհի ընուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ աստ քնակութեբ զօրացն Յունաց։ Եւ այնուհետև կամ Թագաւորն Յունաց հանէ ի քէն զթագաւորութիս Հայոց, կամ այս Աուշեղ սպանանէ, և ինքն Թագաւորէ։ Եւ այսպիսի բա֊նիւք գաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին, մինչև հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրավարն Հայոց սպանանել։

Պապա խորհուրդ արարին, թէ որպէս ըմբռնել կա֊րասցեն զնա. քանզի մեծապէս երկնչէին ի նմանէն։ Ով զգայ, ասեն, մեծ պատերազմ առնէ. և ոչ ոք կարէ զգէմ քաջութեբ նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութեբ լինչ լինիցի հնար։ Աւյսպէս սպա֊սէին նմա։ Եւ եղև յաւուր միոջ հրամանեաւ Ա֊բազգատ արքայ Հայոց ընթրիս մեծ գործել և մեծ պատրաստութեի առնել. և կոչել հրամայեաց յրն֊թրիսն զամս աւագս պատուականս և զմեծամեծս, և զզօրավարն Աուշեղ։ Պատրաստեաց Ա֊բազգատ

արս ընտիրս հզօրս, զօրեղք, զի կամ կայցեն գոր-
ծոյն, հարկանել յանկարծօրէն յանպատրաստից յե-
զակարծումն ժամու՝ ի վերայ Աուշեղի։ Ոչնոսա
քաջ ուրախ առնէր մեծապէս, և շատ գինի տայր
ըմպել, և բազում առնէր զբօսումն ուրախութեան։
Ա.ղբայն Ա՝ արազդատ տայր նշանս յառաջագոյն այ-
նոցիկ, զոր էր սպանօղն պատրաստեալ, եթէ յոր-
ժամ գիտիցես՝ թէ քաջ արբեալ իցէ, և զմոռք զա-
ռանցեալ յարբեցութենէ սպարապետն Աուշեղ, ես
յարուցեալ իբրև՝ ի ձեռին երթալոյ պատճառաւ,
և դուք պատեսջիք զնովաւ։ Եւ եղև իբրև անցին
զառանցին՝ ի գինւոյն՝ ըստ չափ անցանելոյ, և թա-
գաւորն Ա՝ արազդատ պահէր զանձն՝ ի գինւոյն. իբ-
րև գիտաց Ա՝ արազդատ՝ թէ արդ յարբեցութենէ
մնաց ինչ չզգան[1], ինքն յարուցեալ իբրև յապա-
րահէ զանց առնելոյ պատճառաւ, և աւազանին
ՅամՀ բազմականացն յոտն կացին առ հասարակ, իբ-
րև նմա պատիւ ինչ առնել։ Եւ յանկարծ արքն, ո-
րոց էր տուեալ հրաման, երկոտասան այր կից զոյգ
զինի կողմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր
՝ի մի բազուկն Աուշեղի, և վեց այր՝ ի միւս բազուկն։
Եւ ընդ ոտն կալ Թագաւորին, նայեցեալ ընդ նա՝
եթէ այս ընդդէմ է. և Թագաւորին պատասխանի
տուեալ, ասէ. Երթ առ Պապ արքայ, հարց և տես՝
թէ ընդդէմ է այդ։ Եւ Թագաւորն՝ ի դուրս կոյս
գնացեալ ելանէր, և ասէ Աուշեղ. ՝Ի վերայ բա-
զում իմոց վաստակոցն արեան և քրտան, և սլաքօքն
զքիրսն ջնջելոյ, այս հատուցումն եղև ինձ։ Նայց
իբրև եհաս ինձ մահս, թէ՝ ի վերայ ձիոյ դիպեալ
էր...։ Ո՝ այս միայն բանս ժամանեաց ասել, և այլ
ոչ ինչ ոչ։ Եւ անդէն Նատ Աահուանի, դայեակն
արքային Ա՝ արազդատայ, զնորանն՝ զոր յիւրում ազ-
դերն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փողս զօրավարին
Աուշեղի. և անդէն՝ ի բաց եհատ զգլուխ նորա։
Եւ բարձին զնա, և տարան զմարմին նր՝ ի գեւղն իւր։

1 ՅամՀ օրինակս Նպաց ինչ պան։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս անմտութեան կարծեաց ընդանեացն Մուշեղի, և այլ մարդկանն։

Այն եղև իբրև տարան զմարմինն սպարապետին Մուշեղի ՚ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընդանիքն նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ՚ի մարմնոյն անտի։ Ո՛վ ասէին. Դորա յանթիւ ձակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ. ոչ նետ մի դիպեցաւ երբէք, և ոչ այլոց զինու խոցեալ է զդա։ Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչև զգլուխն անդէն ՚ի կռձեղն կարեալ կցեցին, և հանին եդին ՚ի տանիսն աշտարակ մի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, Աստուած իջանեն և յարուցանեն զդա։ Պահապան կային, և ակն ունէին յառնելոյ մինչև նեխեցաւ մարմինն։ Ա՛պա իջուցին յաշտարակէ անտի, և լացին թաղեցին զնա որպէս օրէն էր։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Յաղագս գալոյն Մանուէլի ՚ի գերութէ Պարսից, և խնդրելոյ զվրէժն Մուշեղի, և հալածելոյ զԹագաւորն Վարազդատ յերկրէն Հայոց, և յինքն ունելոյ զերկիրն Հայոց։

Այս կացոյց Թագաւորն Վարազդատ ՚ի գործ զօրավարութէ սպարապետութէնն զԱտատ նահապետեան Մահառունեաց տոհմին, որ էր իւր դայեակ, բանսարկու քսուն սպանօղն Մուշեղի։ Այն էր նա սպարապետ փոխանակ նորա զօրավար ամ Հայոց։ Այն ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացոյց Թագաւորն, Վաչէ անուն ՚ի նմին տոհմէ։

Յայնմ ժամանակի դարձան ՚ի գերութենէն եկին ՚ի Պարսից, զոր տարեալ էր Շապհոյ արքայն, որք երկու եղբարք ՚ի մամիկոնեան տոհմէն. անուն միումն

Ա՛նուէլ, և անուն երկրորդին կոմն[1]։ Վասնզի զայն ժամանակաւ Թագաւորին Պարսից սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ Թագաւորին Վռուշանայ ընդ արշակունւոյն, որ նստէր ՚ի ԽաղՀ քաղաքին։ Եւ իբրև երթային զօրքն Պարսից ՚ի Վռուշանայն պատերազմին, ապա և զմարդիկ գերուԹեն որ ՚ի Հայոցն էին Թագաւորին Պարսից՝ յղէր ՚ի պատերազմ ընդ իւր զօրսն. և Ա՛նուէլ այս երԹայր ընդ նոսա Հանդերձ եղբարբն իւրով կոմիւ։ Եւ իբրև եղեն խառնորդք երկոցունց գնդացն ընդ միմեանս, ապա ՚ի պարտուԹե՛ն մատնեցան զօրքն Պարսից յերեսաց զօրացն Վռուշանայ. դարձան ՚ի փախուստ անհնարին հարուածովք, հասին ՚ի վերայ զօրացն Պարսից. զի ոչ մի ՚ի նոցանէն ոչ ապրեցուցանէին ՚ի զօրացն Պարսից, բանքեր անգամ ոչ ապրէր, բայց Ա՛նուէլ որդի Ա՛ղտաշէսայ ՚ի մամիկոնեան ՚ի տոհմէն, Հանդերձ եղբարբն իւրով կոմիւ, բազում քաջուԹիս կատարեալ ՚ի նմին ձակատուն, սակայն Հեծեծեալ ապրեին։ Եւ դայլն յա՛յմ զօրացն Պարսից առքա միայն Հասանէին առ Թագաւորն Պարսից ողջ ապրեալք, և բազում քաջուԹիս կատարեալ։

Սակայն Թագաւորին Պարսից բազում տրտմուԹիւնք յաղագս իւրոց զօրացն կատարածոյն. սակայն և զայնու զայրացեալ զակատէր, զի զնոսա միայն տեսանէր ողջ եկեալ յա՛յմ զօրացն իւրոց։ Յաստուցեալ ընդ նոսա, այսպէս արարեալ, Հալածեաց յիւրոց սահմանացն. արձակեաց զնոսա յերկիրն իւրեանց։ Եւ գնացեալք գայլն դէմ յանդիման յիւրեանց երկիրն արարեալ։ Եւ եին Հետիոտք երկոքին եղբարքն. և էին երկոքեան մեծք անՀեդեղք, երկոքեան անձնեայք որպէս սկայազունք։ Ա՛ինչ դեռ գայլն ՚ի ձանապարհի, ոչ կարէր Ա՛նուէլն գնալ, զի ոտիւքն ցաւած էր. ապա կոմն եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր, և տաժն տաժն խրատակ բերէր ըստ անձին զայնչափ այրն զանՀեդեղ զանարի. եին եբեր յերկիրս Հայոց։ Եւ եղև իբրև եին եՀաս յերկիրն Հայոց Ա՛նուէլ եղբարբն իւրով կոմիւ Հանդերձ,

1 Յա՛յմ օրինակս Կ՚ն. ուղղեցաք ըստ յաջորդացն։

իբրև ետես զնա Ա ասէին՝ որ յառաջն էր լեալ նա-
հապետ, մինչ չև եկեալ էր ի նա՝ ետ ցնա զպատիւ
իշխանութենն, զոր առեալ էր ի Թագաւորէն Ա ա-
բազադատայ։ Ուրանզի նա էր երէց յազգէն, և Ա՛ա-
նուէլն ունէր զնահապետութե ազգին տանուտէրութե
պատուին. և Ա՛ասէն լինէր երկրորդ։

Իսկ յորժամ՝ Ե՛հաս եկաց Ա՛անուէլն ի փառս տէ-
րութե իւրոյ, նախ առանց հրամանի Թագաւորին
Ա՛արազադատայ լինէին յափշտակեաց զգօրավարութեն
զսպարապետութենն. զի այն ինչ որ իւրոց նախնեացն
ի բնէն կալեալ էր ի սկզբանէ, զոր արքայն Ա՛արազ-
դատ չնորհ առնէր իւրում դայեկին Ա՛ատայ, զայն
Ա՛անուէլ լինէին հանեալ ունէր զիշխանութենն։ Ա՛յլև
չետ այսորիկ, պատգամ յղէր սպարապետն Հայոց
Ա՛անուէլ առ Թագաւորն Ա՛արազդատ, և ասէր՝
Թէ փոխանակ ամ ազգին մերոյ վաստակոցն, զոր ի
նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութէ
առ ձեզ արշակունիս վաստակեալ եմք, և եդեալ
զանձինս մեր ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք
ի վերայ ձեր, ամ նախնիքն մեր առաջինքն անկան
ի պատերազմունս ի վերայ ձեր, Ա՛ասակ հայր Ա՛ու-
շեղի կորեաւ ի վերայ Ա՛ըշակայ ազբայի, և մեք հա-
նապազ վաստակեալ և աշխատեալ եմք ի վերայ Թա-
գաւորութե ազգիդ ձերոյ, և փոխանակ կեանս առ-
նելոյ ընդ վաստակոցն, արդ ոչք ի Թշնամեացն մե-
ռան, ոչք ծնացին՝ զայն դուք արշակունիքդ կոտորե-
ցիք։ Ա՛րդ Ա՛ուշեղ այր քաջ եղբայր իմ, որ ի վե-
րայ ձեր մաշեաց զանձն իւր ի մանկութենէ իւրմէ,
վանեաց կոտորեաց զթշնամիս ձեր, և ոչ կարացին
Թշնամիքն սպանանել զդու կալար ի բազմականի խեղ
դեցեր զնա։ Ա՛յա դու չես իսկ արշակունի, այլ ի
պոռնկութենէ եղեալ ես որդի. վասն այդորիկ ոչ
ծանեար զվաստակաւորսն արշակունեաց։ Ա՛յա մեք
չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր և ի
վերոյ քան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին Թագա-
ւորք աշխարհին Ա՛ղենոց, և վասն եղբարց իւրեանց
դրգռութեանն, զի արիւն մեծ անկեալ է ի վերայ,
վասն այնր եմք գնացեալք. և վասն բարւոյ հանգստի
գտանելոյ՝ եկեալ դադարեալ եմք։ Ա՛ռաջին Թագա-

ւոլքն արշակունիք, որք գիտէին զմեզ ոմն էաք կամ ուստի՛ էաք. այլ զի դու քանզի չես արշակունի, գնա յաշխարհէս, և մի՛ մեռանիր ՚ի ձեռաց իմոց։

Իսկ Վ արազդատ Թագաւորն պատգամ յղեր պատասխանոյն առ զօրավարն Մանուէլ, և ասէր. Եթէ քանզի չեմ արշակունի, զի եղի զԹագ նախնեաց իմոց արշակունեացն, և կալայ զաշխարհ առաջնոց իմոց, և խնդրեցի զվրէժ հօրեղբօրն իմոյ Պապայ ՚ի չարաչարծ յեղբօրէն քումմէ ՚ի Մուշեղայ, բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, զի քեզէն իսկ ասացեր բան յերկրէն յաշխարհէն Հնոյ եմք լեալք Թագաւորք ՚ի բնուէ, և այսր պանդխտեալ եմք եկեալք, արդ ըստ օրինակի եղբօրն քո մի՛ մեռանիր։ Օ՛ի իմ, առ բարեբարուէ իմոյ, արձակեալ լեցի զքեզ. երթ գնա յերկիրն Հնոյ, անդ կեաց, և անդէն Թագաւորեսջիր յերկրին քում։ Այլ Թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ՚ի ձեռաց իմոց որպէս և Մուշեղն մեռաւ։

Իսկ յորժամ բազում անգամ երթեալք եկեալք պատգամաւորք՝ բազում խոստացան զխոստացան բանս կսկծանաց առ միմեանս յղէին, և յետ այսպիսի ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել։ Իսկ ՚ի հասեալ ՚ի ժամադիր ժամն, եկեալ տային ընդ միմեանս պատերազմ։ Եւ Թագաւորն Վ արազդատ առնոյր զլծոյն իւրոյ բանակին, և գնայր Հասանէր ՚ի տեղի Ճակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ ՚ի պատերազմ. սոյնպէս և սա պատրաստագոյն քան զնոսա։ Եւ Մանուէլ սպարապետն Հասանէր իւրով գնդաւն ՚ի նոյն տեղի. և ՚ի գաշտին Արծոյ լինէին խառնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս բախելոցն։

Թագաւորն Վ արազդատ և սպարապետն Մանուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ ահոյ ահանք ելանէին։ Երբև զաչս ՚ի վեր ամբառնայր արքայն Վ արազդատ, և նայէր ընդ գաղն իւր և տեսանէր զսպարապետն Մանուէլն, ՚ի մեծութենէն հասակին և ՚ի շքեղութենէ անձինն, և յամրակուռ յերկաթապատ յոտիցն մինչև ցգլուխն առ հասարակ յանվթար զինեալն, ՚ի հաստատեալ յանձնէն, և ՚ի

հաստատուն երիվարին և յաստպաղին[1] վառելոյն յանշարժ սպառազինին համարեցաւ կշռեայ գնա՛ի միտս իւր իբրև զնեաւն մի բարձր զանմատոյց։ Ակայն ա՛ծեալ զմահ ընդ միտս, յարձակեցաւ. զի այնուհետև չուներ ակն անձինն ապրեցոյ։ Ակայն զի մանուկ մարդ էր արքային Արազդատ, իբրև եռեաց գնա այնպէս՝ զի չէր ինչ կռուոյ տեղեակ, էած զմտաւ Թէ՛ի զրահն ոչ ինչ կարիցէ նիզակ գործել, առ ձեռաց կորովութեին գնիզակին ընդ քերան արկանէր զօրավարին Մանուէլի։ Իսկ Մանուէլ բռունն հարկանէր գնիզակին. հանեալ՛ի նմանէ գնիզակատէգն՝ ընդ իւր Թուրծն հանէր, և բազում զիւր Թափէր զատամունսն, գնիզակին յինքն հանէր յարքային։

Եւ արքայն Արազդատ՛ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Մանուէլի. և անդէն Մանուէլ զտեղ նիզակին՛ի ձեռինն կալեալ, և նիզակաւն՛ի կառափն մատուցեալ ծեծէր զարքայն Արազդատ. այնպէս տանէր իբրև ասպարէզս չորս։ Եւ անդէն որդիքն Մանուէլի յարձակեցան մէն մի նիզակ՛ի ձեռն, Համայեակին և Գրատշէհն, սպանանել զարքայ։ Ինքն իսկ Մանուէլ աղաղակեր զկնի որդւոցն իւրոց, և ասէր. Հէյ մի լինիք տիրասպանութ։ Եւ նոցա լուեալ զձայն հօրն, վաղվաղակի արագ արագ դառնային՛ի նմանէ. և՛ի պարտուէ մատնեցաւ այն օր գունդն արքունական առաջի մանուէլեան գնդին։

Ել ինչ այնուհետև սակաւ սպանեալք անկանէին ընդ երեսս դաշտին, բազում խոցք և խեղք վիրաւորք. և բազում նախարարք սատակեցան. բազում փախստեայք հալածականք լինէին։ Մինչ դեռ գունդն մանուէլեան էին զկնի փախստէից, և գայր հասանէր Համազասպեան սեպուհ մի՛ի մամիկոնեան տոհմին, անցանէր առ անկեալովք դիակամբն և առ խոց վիրաւորօքն պատերազմին. և ընդ նոսին ընկեցեալ էր և զՎարեգին, տէր գաւառին ուրշտունեաց. բայց ողջ կայր, զի ոչ խոց էր և ոչ վնասեալ ինչ։ Եւ Վարեգին փեսայ լեալ էր յառաջնորդին Համազասպի, զքոյր նորին Համազասպուհի անուն ունէր

1 Յետ օրինակս յապաղին։

կէին : Եւ իբրև եկին Թադէոսին Տ ապուհ յերկիրն Հայոց, սա եթող զկինն իւր և փախեաւ : Ապա տա-
րան զՀամազասպ ուհի յերկիրն Տոսպայ, ի քաղաքն ի Ալ ան. Հանեաւ կախեցին զնա պարսիկքն զբազէր աշտարակացն՝ որ կայր ի վերայ քարանձաւին, ի կա-
խաղանի սպանին զնա :

Իսկ յայնմ աւուր իբրև անկեաւ կայր այն Դա-
րեգին ի մէջ անկելոցն, եկն Համազասպ աներ նո-
րուն անցանել առ նոքօք : Ղազարեաց Դարեգինն, և ասէ. Տէր Համազասպեան, և զիս տես. Հրաման տուր նժոյգ մատուցանել, Թող հեծայց : Եւ ասէ ցնա Համազասպեան. Ո՞վ ես դու : Եւ ասէ. Ես եմ Դարեգին ուրշտունի : Եւ ետ հրաման Համա-
զասպեան վահանաւորացն, որ ընդ նմա էին, ասէ. Ելջէք և դիք զվահանդ ի վերայ նորա, և պահեցէք : Եւ ինքն էանց. ապա իջին վահանաւորքն եդեալք զվահանն ի վերայ, և կային պահէին ըստ հրամա-
նի տուելոյն :

Ապա յետ այսորիկ գայր Դանուն ոմն գամապետ սպարակրացն[1] գնդին մանուէլեան զօրացն. ետես զի իջեալ էին վահանաւորք ի վերայ, և զԴարեգինն պահէին, եհարց ցնոսա՝ Թէ ո՞վ է այդ, և դուք հիմ իջեալ կայք յայդմ տեղւոջ : Ասէն նոքա՝ Թէ սա Դարեգին ըուշտունեաց տէր է. և մեզ հրաման ետ Համազասպեան, իջանել պահել զսա : Եւ մեծա-
յաստմամբ զայրանալով ի բարկութիւն մեծ բորբոքեր Դանունն, և ասէր. Ընդ ուրեմն վերստին կամի Համազասպեան զսա իւր փեսայ առնել. և զՀամա-
զասպուհի զքոյր իւր տալ սմա կնութիւն. վասն այսը իսկ անխոհեաց ի դա, պահել հրամայեր : Եւ ան-
դէն ոտն ածեալ էջ ի ձիոյն, եհան զթուրն, մա-
տուցեալ ի նա՝ պատառ պատառ կոտորեալ, անդէն յրեալ սատակեաց զնա :

Իսկ՝ այլ զօրքն Տամ դէռ գային ի կոտորածոյն, զբազումն ձերբակալ արարեալ և կալեալ ածէին : Եւ զՀատն, առքայլին Ալարաղատայ զքսուն, զըս-

1 ի ջրոս օրինակս գամապետս պրախոսացն. մեզ այսպէս ուղղե-
ցաք պրախոսացն. ի միւս այլ գամապետս լն գտանեցաք :

պանօղն Աուշեղի, կալեալ իւր որդւոյն առաջի սպարապետին Անուէլի, և զայլս՝ որք միանգամայն գործոց սատարն լեալ էին՝ ըմբռնեալին զամենեսեան, առ նա ածէին։ Եւ մեծաւ դատաստանաւք դատեցաւ զանօրէնն Հատ սպարապետն Անուէլ։ Հայց նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա յետոյ զնա գլխատել. և զայլսն կոտորեաց ըստ նմին օրինակի։ Եւ զԹագաւորն Ալ արշաղատ հալածեցին ի լերկրէն ի սահմանացն Հայոց, չոգաւ գնաց ի լերկիրն Յունաց. անդ եկաց որչափ և եկաց, և անդէն մեռաւ։

Եւ սպարապետն զօրավարն Հայոց Անուէլ նուաճ ձեաց զաշխարհս, և զամ մեծամեծս և գնախարարսն Հայոց առ ինքն ժողովեր, և էր նա առաջնորդ և գլուխ նոցա. և վարէր զիւր իշխանութիւն, և տայր հրաման աշխարհի փոխանակ Թագաւորի. և ունէր զաշխարհ ի ձեռնուԹե։ Եւ զկինն պապայ արքայի զՕ արմանդուխտ տիկին, հանդերձ որդւովք արշակունովք, առեալ գնոսա՝ ի տեղի Թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր։ Աեծաւ խնամատուԹե և բազում յաջողուԹե աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդեր, որչափ եկաց ժամանակս։ Հայց ա նուանք պատանեկացն արշակունեացն, անուն երիցուն՝ Ընշակ, և կրտսերոն՝ Ալ աղաղշակ։ Օնոսա առեալ Անուէլն սպարապետն իբրև զան մնուցանէր, և զմայրն նոցա զՕ արմանդուխտ ի մեծի շքի տիկնուե պատուէր։ Հայց յորժամ տեսանէր Անուէլն զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց Թագաւորին Յունաց, ածեալ զմտաւ իւրում Թէ արժան է նմա գԹե զմի ոք Թիկունս առնել նմա, ապա խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, և կամեցաւ Թիկունս առնել զաղքային Յունաց։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս եթէ զնարդ սպարապետն Հայոց Մանուէլ, հանգերձ ամ՛ աշխարհաւն Հայոց, ձեռն ետ ի Թագաւորն Պարսից. և մարզպան և աշխարհակալ աշխարհին Հայոց զառաջինն առ ի Թագաւորէն Պարսից զՍուրէն, և մեծաւ պարգեւօք մեծարեցաւ ի նմանէ. և թէ որ պէս յետոյ խորամանկութեբ Մերուժանայ արծրունւոյ եղև ապստամբութիւն, և պատերազմունք յուզեցան:

Զայն յետ այսորիկ առաքեցին Օ արմանդուխտ տիկինն Հայոց և սպարապետն Մանուէլ զԴարջոյլ Մաղխազ, և ընդ նմա զազգսն ի նախարարացն Հայոց, հրովարտակօք ընձայիւք և պատարագօք առ Թագաւորն Պարսից, զի ի նա ձեռս տայցեն և զնա պաշտիցեն, և նմա միամտութբ ծառայեսցեն, և տայցեն նմա զաշխարհս Հայոց: Եւ չոգան հասին Դարջոյլն, և որք ընդ նմայն էին, ի դուռն Թագաւորին Պարսից. մատուցին նմա զհրովարտակն զտիկնոջն և զսպարապետին Հայոց, և ետուն նմա զպղեակ պատգամին հնազանդութբե: Եւ յորժամ ետես զնոսա Թագաւորն Պարսից, մեծաւ խնդութբ ընկալեալ զնոսա, և մեծապէս մեծարանօք պատուեաց զնոսա, և մեծաւ պարգեւաւ առնէր զԴարջոյլն:

Եւ ընդ նմա առաքեր յերկիրն Հայոց զՍուրէն պարսիկ մի ձոխ ի նախարարացն իւրոց. և ընդ նմա յղեաց տասն հազար հեծեալս վառեալս սպառազինս, զի երթիցե Սուրէն յաշխարհն Հայոց ի թիկունս օգնականութբե զօրավարին Մանուէլի, և պահել ի թշնաւեաց զտիկնին զՕ արմանդուխտ: Եւ ետ Թագաւորն Պարսից տանել ի ձեռն Սուրենայ Թագ և պատմուճան, և զվառ Թագաւորացն տիկնոջն Օ արմանդուխտոյ, և Թագս մանկանցն որդւոցն երկոցունց Արշակայ և Սաղարշակայն: Օ սոյն և սպարապետին Մանուէլն սոյնպէս ետ տանել զԹագաւորական պատմուճանն, սամյր մ՛ և զգլխոյ պատիւ գարգմանակ ոսկի արծաթ, ու ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց արծուոյն՝ հանգոյցք Թագի

կապեալ աշխարաւանդ Հանգոյց, և լանջաց պատիւ՝ ապիզակ, որպէս օրէնք են ունել Թագաւորաց. և շիկակարմիր խորան, և ՚ի վերայ խորանին արծուի նշան և սրահակս մեծամեծ և կատուտակ երիվարդոյն հովանոցս: Եւ ոսկի սպաս տաճարին առաքէր սպասպատեին Ա՛նուէլի. և տայր նմա յիւրմէ ձեռանէ իշխանութեի մեծ ՚ի վերայ աշխարհին Հայոց:

Եւ եկն Եհաս Պարջոյէն խորխոռունի յերկիրն Հայոց. և էած զՈւրէն պարսիկ, տան Հազարաւն: Նկէին բերէին զպարզևսն տիկնոջն և մանկանց նէր. սոյնպէս սպարապետին Ա՛նուէլի ունէին պարգևս իւրաքանչիւր աւագացն, և տանուտէրացն իւրաքանչիւր մեծամեծացն Հայոց: Եւ յորժամ տեսանէին զմեծարանսն [1] և զսէր Թագաւորին Պարսից, տիկնին Օ արմանդուխտ և սպարապետն զօրավարին Հայոց Ա՛նուէլ մեծաւ խնդութիւ մեծարէին զՈւրէն: Տային զաշխարհն Հայոց ՚ի ձեռն Ուրէնայ, և հնազանդէին հրամանաց Թագաւորին Պարսից. և կարգէին Թագաւորին Պարսից յաշխարհին Հայոց հարկս տալ ընձայս և պատարագս: Սոյնպէս և մարզպանին Ուրէնայ հասս և կօշիկս և զպիտոյս [2] զոռձկացն. սոյնպէս և տան հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն: Եւ սրտի մնաք արարին իւրեանց Թիկունս. և տէր գտեալ իւրեանց զարքայն Պարսից, և կային ՚ի ծառայութեի նորա. և ամէն ամէն զեսպանսն Թագաւորին Պարսից երթային և գային յերկիրն Հայոց. և մեծապէս զմտերմութեի միամտութեին, որ էրն, ցուցանէին Թագաւորին. և ամէն առաքէր պարգևս տիկնոջն Օ արմանդխտոյն. սոյնպէս և զօրավարին Հայոց Ա՛նուէլի: Յոյժ մտերիմ և սիրելի լինէր Ա՛նուէլ Թագաւորին Պարսից և մեծապէս փառաւորեալ աւագանայր ՚ի նմանէն: Եւ Ա՛երուժանն արծրունի երբև տեսանէր զայն ամ փառս աւագութե, որովք շքեղացոյց զՍ՛անուէլ արքայն Պարսից, զի որպէս զեղբայր կամ զորդի այնպէս

1 ՚Ի չորս օրինակս վերծանեան, ՚ի միւսին վերծանեան. մեզ այս կացն:

2 Յայմ օրինակս զպիտոյսս առաքպէս ուղղելի Թուեցաւ:

պատուեաց վնա. յոյժ նախանձէր նա ընդ փառս Ա՛նուէլի. և խնդրէր նա հնարս հնարել, հանել վնա յաչաց Թագաւորին Պարսից. զի փոխանակ նը֊ ւնքն լնցի սիրելի: Եւ իբրև այլ հնարս ինչ ոչ կա֊ րէր գտանել դուրս նենգութեցն առ Պարսիկս, ընդ որ մտցէ, ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնեն֊ գութեն չար, և կեղծաւորութեբն իւրով զգործ իւր յառաջացոյց: Օ՛ի իբրև նա յեցաւ ՚ի միամտութեի զօրավարին Ա՛նուէլի, սկսաւ նախ հպատակութեբ զմիտս գողանալ. նախ մտերմութեբ հաձել զմիտս նորա. ապա զնձին իւր հոգածու և խնամակալ երևել ցուցանէր նմա. ապա եկեալ գուշակութեի առնէր նմա ասա ՚ի քմից իւրոց՝ թէ զիտասջիր դու, ո՛ Ա՛ա նուէլ, զի դեսպան լեալ ե յարքայէն Պարսից. յա զագս քո բերեալ ունիմ հրաման առ Աւրէնն, զի զքեզ կալցէն կապեացեն. կամ աստէն սպանցեն, կամ ոտիւք և ձեռօք և պարանոցաւ կապելով մեծաւ ըզ֊ գուշութբ տանել առ Թագաւորն Պարսից: Ընդ դուն գիտաս, տես խորհեաց ընդ միտս քո թէ զինչ գործես ցես: Եւ եղև յորժամ լուաւ զայս Ա՛նուէլ, կայր զարմացեալ հիացեալ ընդ միտս իւր. և ասէր թէ չիք իմ յանցուցեալ առ պարսիկս, էր աղագաւ զայն առնիցէ ընդ մեզ: Եւ ասէ Ա՛երուժանն ցԱ՛նուէլ. Ես ձշդրտեցի և հաստատեցի, զի իբրդ այդ ստոյգ էն. ես մեծաւ սիրով և հոգաբարձութբ գուշակ եղէ քեզ: Իսկ իբրև հաւատաց բանին Ա՛երուժանայ Ա՛ա նուէլն. և կարծեաց ՚ի միտս իւր թէ ստոյգ են բանքն այն զոր լուաւ, ապա գունդ կազմեաց, և զօր բա֊ զումառ ինքն կուտեաց զօրավարն Հայոց Ա՛նուէլ: Եւ մինչ դեռ խաղաղութբ Աւրէնն իւրով բանակատն բանակեալ էր յանհոգս յանկարծս և աննենգ խա֊ ղաղութբ, իբրև ոչ ինչ գոյր ի մէջ նոցա նենգութեի դաւաճանութե ըստ համբաւահան չարագործն Ա՛ե֊ րուժանայ, յանկարծօրէն յեղակարծութեն զօրավարն Հայոց Ա՛նուէլ հասանէր անկանէր՚ի վերայ բանա֊ կին Աւրէնայ, և զտան հազարսն զպարսիկսն միանգամայն կոտորեր: Հայց զմարզպան Աւրէնն միածի արձակեր, հնարհել զարևն իւր՝ պարզև արարեալ: Եւ զարմացեալ Աւրէնն ընդ իրսն ընդ այնոսիկ թէ

ընդհէր, կը աղագաւ նա զայս արդեւք գործեաց. և ասէ Ա՛նուէլ Յուրկն. Ո՛չ քեզ վասն բարեկամեաւ սիրոյն արձակեաւ, ողջանդամ երթիլիր զձանապարհս քո. այլ ես ՚ի պարսկաց ՚ի խափս այլ ոչ անկայց: Նա ինքն Ա՛նուէլ Հայոց զգունդն կազմէր, և զարսըն պատրաստէր. և գիտաց այնուհետև թէ մեծ թշնամութիւն յարոյց և մեծ գրգռութիւն ընդ Թագաւորին Պարսից: Նա յայնմ հետէ զօրավարն Հայոց Ա՛նուէլ հանդերձ ամ զնդաւն զտիկին Ո՛ արմանդուխտ զկին Թագաւորին Պապայ ՚ի գլուխս առեալ ՚ի տեղն Թագաւորացն շրջէցուցանէին. և ինքեանք կայէին ՚ի մարտի պատերազմին յաղագս չինութեան աշխարհին Հայոց յամ կողմանց ընդ Թշնամիս և ընդ սահմանակիցս, որ շուրջ զիւրեամբք էին, և աւելի զօրքն Պարսից զամ աւուրս կենաց իւրոց. բայց Ա՛երուժանն գնայր անդր առ Թագաւորն Պարսից ամբաստան զԱ՛նուէլէ:

ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս Գումանդ Էապհոյ՝ որ առաքեցաւ ՚ի Թագաւորէն Պարսից տալ պատերազմ ընդ Հայս, և սատակեցաւ ՚ի Ա՛նուէլէ զօրօք իւրովք հանդերձ:

Ա՛յն Թագաւորն Պարսից արձակեաց ՚ի վերայ Հայոց զԳումանդ Էապուհ քառասունն և ութ հազարաւ, գալ առնուլ աւերել զերկիրն. և եկին հասին նոքա, մինչև ՚ի սահմանսն Հայոց որ յատրպայական կուսէն էր: Ա՛յս իբրև զայն լսեր զօրավարն Հայոց Ա՛նուէլ, և գումարեր զզօրսն իւր ըստ բըռնոպ ժամանակին օրչափ և եկն ՚ի ձեռն իւր՝ քսան հազար, և ձեռնեաց Ա՛նուէլ և եհաս ընդդէմ գընդին, և արկանէր ՚ի սուր զզօրսն Պարսից. և զԳումանդ Էապուհն սպանանէր. և դարձեալ եղանէր մեծաւ յաղթութիւն:

Գ Լ Ո Ի Խ Խ·

Յաղագս Վարազայ Թէ սրպէս կամ զինչդ առաքեցաւ ՚ի Թագաւորէն Պարսից , և սատակեցաւ ՚ի Մանուէլէ իբրև զառաջինն ։

Ա՚Պ Ա յետ այսորիկ Վարազ ոմն զօրավար Թագաւորին Պարսից գայր Հայաստաներ ուԹուտասն բիւրու յերկիրն Հայոց, տալ պատերազմ ընդ Մանուէլի ընդ սպարապետին , և ընդ ամ գնդին Հայոց ։ Ա՚պա կազմեր պատրաստեր սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ հեծեալս սպառազինս տասն հազար , և եկեալ տայր պատերազմ ընդ Վարազայ ։ Հարկաներ և սատակեր , ջնջեր զնա ՚ի միջոյ . և գլխովին զՎարազն սպանաներ . Թափեր զկապուտ սատիկ , զզարդ և զզէն զօրացն , և զառնայր մեծաւ խաղաղութ ։

Գ Լ Ո Ի Խ ԽԱ·

Յաղագս Մռկանայ՝ զոր առաքեաց դարձեալ Թագաւորն Պարսից ՚ի վերայ երկրին Հայոց և ՚ի վերայ Մանուէլի զօրօք բազմօք , և սատակէր ՚ի Մանուէլէ իբրև զառաջինն ։

Ա՚Ր եղև յետ այսր ամենայնի առաքեաց Թագաւորն Պարսից զՄռկանն քառասուն բիւրու ՚ի վերայ երկրին Հայոց ։ Նմին ետաս հանդերձ ամ բազմութիւնք զօրաց իւրոց յերկիրն Հայոց , և էառ զկողմն մի զերկիրն Հայոց . և բանակեալ էր Մռկան դաշտին ։ Ընկաներ ՚ի վերայ բանակին Մանուէլի ՚ի գիշերի , և անդէն առ Հասարակ ընդ սուր Հաներ զամենեսեան ՚ի զակիչն , և զՄռկանն սպանաներ , և Թափեր առաւ բազում. և ոչ զմի ոչ ապրեցուցաներ ՚ի նոցանէն ։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս խաղաղութեանն եւ պատերազմին։

Այլ յետ այսորիկ ամս եւթն, և այլ ոչ ևս յաւելին զօրքն Պարսից ժողովել՝ի սահմանս Հայոց. և եղև խաղաղութիւն։ Այլ ժողովեցան առ զօրավարն Մանուէլ՝ամ յերուսաղէմ երկրին. և կին անգան այր յայր, և էին բանակաւալ յանհոգս. և զօրավարն Հայոց Մանուէլ առաջնորդէր նոցա։ Կին ապա և մնացորդք՝ի տանէն Միհրանեաց պատահ նեաւակ երեք մնացեալք՝ի կոտորածէն Պարսից առ զօրավարն Հայոց Մանուէլ. և անուանք նոցա միւսումն Խաբիկ, և միւսումն Սամ, միւսումն Ալ աղխնակ։ Այլ ընկալաւ զնոսա զօրավարն Հայոց Մանուէլ. և եղև նոցա օգնական, և զարձ արար նոցա յերկիրն իւրեանց. և կացոյց տէր զԽաբիկ՝ի վերայ երկրին, և զերկուսն ևս ըստ իւրաքանչիւր չափու. և էր Խաբիկ նիզակակից զամ աւուրս կենաց նորա։ Նմանպէս յամ գաւառս կացուցանէր սպարապետն Հայոց Մանուէլ նահապետս և տէրս գաւառաց գաւառաց. և առաջնորդէր ամենեցուն խաղաղութ։ Այլ ամ երկիրն Հայոց՝ի խաղաղութենէ ընդ հովանեաւն Մանուելի զամ աւուրս կենաց նորա, ամ մարդիկ երկրին Հայոց վայելէին յաւուրս իւրեանց. ուտէին և ըմպէին և ուրախ լինէին զայն ամ եւթն տերութենէն Մանուէլի, մինչև՝ի բաժանումն երկրին Հայոց և՝ի քակտումն թագաւորութենէն։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս Մերուժանայ արծրունւոյ, որ հանգերձ զօրօք եկն՝ի վերայ Մանուէլի, և սատակեցաւ՝ի նմանէ։

Ետն Մերուժանն արծրունի վաղուց ևս յաւուրս Աբշակայ արքայի լեալ էր ապստամբ՝ի թագաւորէն Հայոց, ինքնակամ ձեռս տուեալ յարքայն Պարսից, և զօրէնս Մազդեզանցն յանձն առեալ էր,

և ուրացեալ զՀաւատսն քրիստոնէութեանն Հաւատոց, և բազում ամս եղեալ առաջնորդ զօրացն Պարսից, և մեծամեծ չարիս անցուցեալ էր ընդ երկիրն Հայոց. և տակաւին էր նա առ Թագաւորին Պարսից: Այլա դրդռեաց Աերուժանս այս զԹագաւորն Պարսից, և առեալ զօրս բազումս ի նմանէ, և եկն եհաս յերկիրս Հայոց: Նա էր սորա մեծաւ պարծանաւք պարծեցեալ առ Թագաւորին Պարսից, զի կամ կալեալ կապեալ տարցի զԱտուէնն առ Թագաւորն Պարսից, և կամ զգլուխն հատեալ՝ զառաջեաւ բերէ Թագաւորին Պարսից:

Այլ հասանէր ամ բազմութեանն զօրացն Պարսից յերկիրն Հայոց, և Թողայր զանակ զօրացն Պարսից ի դաւառն Արծէից, և ինքն իւրով սեփհականաւն զնդաւն հրոսիւն ժողովելով մեկնէր զառանձն յԱրեաց գնդէն: Կամէր յանպատրաստից գալ անկանել ի վերայ Ատուէնի, միայն անձամբ անուն առնուլ, և ինքեան միայն կատարել զանայր, զի ի պարծանսն իւրոյ անձամբ վճարել զգործ պատերազմին: Ասն այսորիկ այսպիսի բանս խօսէր ընդ զօրավարսն Արեաց գնդին, և ասէր՝ եթէ ես նախ երթայց լըրտեսելոյ, և զձեզ տարեալ արարից ի վերայ, զի այսպէս դիւրաւ լինիցի ի բուռն արկանել ըմբռնել: Եւ ինքն զիւր գունդն առեալ, խաղայր գայր հասանէր յերկիրն Այոց գաւառի. և ինքն զտեղի առեալ, առնէր տես ի բանակին Ատուէնի:

Եւ գայլն հասանէին լրտեսքն, և դիտէին զԱտուէնն զի էր բանակ նոցա ի Կադրատանդ գաւառի ի Կադուսան աւանի, որ է մօտ յաւերակսն Օ արեհաւանդ քաղաքի: Նկին դիտեցին դէտքն զբանակին Ատուէնի, և զերամակ ձիոց բանակին յորում վայրի կային. և չոգան տարան զլոյց նմա: Եւ խորհեցաւ նա առնուլ զերամակ բանակին. այնմ ուշ առնէր, և ինդալից եղեալ՝ ասէր պարծելով առաջի իւրոց զօրացն, Թէ վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ ընկեցեալ զԱտուէնն, և յանդիմման նմին զկնի նոքա Ա արդանոյշ խայտառակեալ իցէ: Եւ չուս արաբեալ կատարել զգործն՝ յոր փութացեալ կամէր հասանել, և էին ի վայրսն՝ ընդ որ գալ էր գնդին

ընդ Ճանապարհն՝ լերինք լինչ, որում ՚ի բնակչացն Նղջերք կոչեն: Նա մինչ դեռ գայր Ներուժանն ՚ի Ճանապարհի գնդաւն իւրով, դիպեցան նմա ուղևորք. յորս հարցաներ Ներուժանն և ասեր, եթէ Ճանապարհս ՚ի Խազրաւանդ ընդ որ երթայ: Նա ուղևորացն տուեալ պատասխանի, ասացին. Ճանապարհ ընդ Նղջերս է: Նա մեծապէս խորեաց Ներուժանն ընդ միտս իւր. տրտմեցաւ ընդ բանսն, սակայն տայր հրաման չարաչար քարշել զուղևորսն և ծեծել: Նա ինքն անցեալ ըստ ուղին՝ ինաներ ՚ի հմայս քաղդէուէ, զքուէս հարցաներ. և ոչ գայր նմա յաջողակ յուռուէ կախարդանացն՝ յոր յուսայրն:

Նպա սրտմտութէ մեծաւ զիւր դէտսն առաջի արկեալ՝ յերամակակայն արշաւեր, զի հնար լեցի նմա նախ ըմբռնել: Նա հասեալ ՚ի տեղին, զերամակ ձիոց ոչ գտաներ. վասն զի յայ այնպէս իմն եղև իրաւունք պատրաստութէ Հայոց գնդին, զի սպառազէնն Ներուէլի ամ Հայոց գնդին տուեալ եր ժամ յորս երթալոյ. վասն այսորիկ դիպեցաւ, զի զամ երամակին ՚ի շէն եր ածեալ. և նոքա դեռ որոյ պատրաստեալ էին ՚ի հեծանել: Նա անտի գուժաւոր հասաներ առ զօրավարն Հայոց Ներուէլ, թէ գիտա տես, զի Ներուժանն արծրունի հասեալ է բազում գնդաւ ՚ի վերայ քո:

Նպա կազմեցան ըստ նմին պատրաստեցան ամ զօրքն Հայոց գնդին, և Ներուէլ սպարապետն. և մտին առաջի սուրբ ոսկերացն Յովհաննու, որ կայր յայնմ գետեղ. ուխտաւոր լինէին և խնդրէին յայ, զարդար դատաւորն յօդնականութէ կոչէին, լինել նոցա այցելու օգնական: Նա անտի ՚ի դուրս ելեալք, զտիկինն արշակունի Հանդերձ մանկամբն Նշակաւ և Ա աղարշակաւ զնոսա և զիւրեանց կանանսին ընդ նոսա՝ արձակեալ, յամուր յուղարկէին ՚ի լեառնն մեծ՝ որ անուանեալ կոչի Ա արագ: Նա զմնուէին Նշատաւազդ, որդի Ա աչէի, ընդ կանանսին տայր հրաման երթալ Ներուէլ. իսկ նա ոչ հաւաներ, չառնոյր յանձն: Նա եր նա ՚ի տիոց տղայ. և ըստ մանկութէն օրինի, ըստ կրօնից Հայոց՝ որպէս օրէն եր՝ զգլուխ մանկտոյն սոյնպէս ՚ի ժամանակին գերծեալ

էր զգլուխ մանկանն Աբրահամայ, և ցցունս էր
թողեալ և գէս արձակեալ։ Այսպէս իբրև ոչ հաւանե-
ցաւ նա ընդ կանանչին երթալ, մտրակ՝ի վեր առեալ
Անուելի տանջէր զմերկ գլուխ Աբրահամայ. սաս-
տէր նմա չերթալ՝ի պատերազմ վասն մանկութեան
ժամանակին ասից։ Իսկ նա առ նորա ականէ զնայ
ընդ նոսա. բայց ապա յետոյ վառեալ կազմեալ սպառ
բաստեալ զինի պատերազմին։

Այլ յորժամ զսիկինն ամ աղախնին իբրեանց
յուշարկեցին յամուրն, և ինքեանք վառեալք կար-
գեալք կազմեալք՝ի պատերազմն, ՚ի մի վայր գու-
մարեալք, նշանս արձակեալք դիջոյ փողփողեալս,
ըստ Աւետն աւան՝ի դուրս ելանէր ընդ կողմն արև-
մտից. և անդէն ընդ առաջ ելեալ նոցա Երուժա
նայ իւրով գնդաւն՝ որ եկեալ էր՝ի վերայ նոցա։ Այլ
չարագործն մեղաւորն Երուժանն զիւր զգէնն և
զասղդ և զնշանն սաղաւարտին բազմաց եգեալ էր զը-
նոյն օրինակ, և զբազումս յիւր կերպարանեալ էր՝ի
մէջ իւրոյ գնդին, և ինքն զիւր նշան ոչ ունէր։ Այս
կայն Անուէլ իբրև տեսանէր զնոցա գունդն հան-
դերձ իւրով գընդաւն, առիւծաբար վարագօրէն յար-
ձակեալ՝ի նոցա գունդն խառնեցաւ. ուշ եդեալ
այնոցիկ՝ որ զԵրուժանայ նշանն ունէին, համա-
րեր եթէ զԵրուժանն սպանանիցէ։ Այլ զբազումս ա-
խոյեանից հատանէին զգլուխս, որք զնոյն զնորին Ե-
րուժանայ ունէին զնշանս. և տեսանէին զի չէր նա։

Այսպա խօսել սկսանէր սպարապետն Անուէլ ընդ
իւրում նիզակակցին Խաբկան, և ասէր. Ցեսանե՞ս,
քանի՛ խաբեաց զմեզ կախարդն Երուժանն. այլ
իմ և նորա յառաջու շատ լեալ՝ի միջ վայրի՛ ՚ի հաշ
տութիւն ժամանակի, նշան մի գիտեմ ես զնորա. զի
յորժամ՚ի ձի հեծեալ էր, երան բարձի նորա ոչ
յանձին և՚ի ծունկն ոչ հասանէր, այլ՚ի բացեայ
կայ՚ի ձիոյ անտի։ Այդ եկ զոյգ հասարակ այսմ նշա-
նի ուշ դիցուք, թերևս ճանաչել կարասցուք զդիւթ
քուէիցն զկախարդն։ Այսպա զոյգ միտ եդեալ երկո-
ցունցն, և տեսեալ զԵրուժանն, այնու նշանաւ
ծանեան տեսին. զի յայլակերպս լեալ էր, զի զիւր նը-
շանն ոչ ունէր։ Այսպա ձայն տուեալ յառաջ կոչեաց

զ[Ն]երուժանն [Ն]անուէլ, և ասէ ցնա՝ Թէ այ կախարդ, ցի՞րբ խաբեա զմեզ, և ասն քո և զայլս եա տաս ջարդել. այլ մեք ծանեաք զքեզ զի աւադիկ կաս, և ապրել քեզ չէք հնար այսօր ՚ի ձեռաց մերոց. զի այսօր հաճ կատարեաց զբարիս քո որ ահճ ՚ի գլուխ քո, և մահանեաց որ ՚ի ձեռս մեր: Իսկ յորժամ զայն լսեր [Ն]երուժանն, անդէն վաղվաղակի նիզակ առեալ, յառաջ խաղացեալ, ախոյեան ելանէր [Ն]անուէլն: Ահայն յորժամ հարկանէին նիզակօքն, քանզի երկաբեան արքն յաղթք էին, երկաբեան ՚ի ձիոյն յերկիրն անկանէին, և անդէն նիզակակիցն [Ն]անուէլն Նաբիկ տեր գաւառին Իւնեաց հատանէր, նիզակաւ ՚ի վերուստ ՚ի վայր ՚ի կողին կարէր ընդ գետինն, և ոչ կարէր յառնել: Իսկ զսպարապետան [Ն]անուէլ իւր վարաւանդաստաքն յերիվարն հանէին, և զ[Ն]երուժանայ զգլուխն ՚ի բաց հատանէին. և ամ զօրացն լինէր փախուստ, իբրև տեսին Թէ [Ն]երուժանն մեռաւ:

Այս աստի գունդն մանուէլեան խրախոյս առեալ յարձակեցան զհետ մերուժանեան գնդին. հարկանէին սատակէին զնոսա, և զմի ՚ի նոցանէն ոչ ապրեցուցանէին: Այլ մանուկն [Ա]բատաւազդ ՚ի [Ն]անուէլէ գաղտ եկեալ էր ՚ի Ճակատն. սակայն վառեցաւ կազմեցաւ և եմուտ, զանխուլ ՚ի մանուէլեան գնդէն, առ աջին Այրատ գետոյն. եհար սատակեաց ՚ի մերուժանեան գնդէ մատի անթիւ բազում սպառազինս կոտորեաց: Այս նշանակիւր մի ՚ի [Ն]երուժա նայ իբրև ետես զ[Ա]բատաւազդն, յընչացք եբաց. զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմնուրուս, երեսօք գեղեցիկ. ապա զնշանն զնիզակաւն պատեալ, յարձակեցաւ ՚ի վերայ նորա: Իսկ նա ընդ գիրկս մտեալ, հարկանէր զայրն նետիւ. և կարանէ ՚ի կառան Թափ հանեալ զնետն ցամաք ընկենոյր զնա: Այս առեալ զնիզակն զհետ մտեալ փախստեիցն, ընդ սուր հանեալ զզօրան [Ն]երուժանայ, աւելի քան զամենեսեան [Ա]բատաւազդ որդի [Ա]շէնին մանուկն կոտորէր. և ինքն մեծաւ անուամբ, և բազում աւարաւ՝ զոր կապուտան Թափէին ՚ի զօրաց Թշնամեացն:

Այլ յաւուր յայնմիկ լինէր մեծ փնաս անհնա-

բին. զի Ա՛ստէղ երկրորդն Ա՛նուէլն, ձին զուլամբ երթեալ, սպանանէր: Այնպէս և զԱրջայլ Ա՛աղխազ ձին տարեալ սատակեաց. վասն զի տրմուղ՛ի Թերաւարժ ձիոյ հեծեալ էին երկոքին:

Իսկ դառնայր Ա՛նուէլ երթայր՛ի քանակն տիկնոջն Հասանէր. տանէին ընդ ինքեանս զգլուխն Ա՛երուժանայ. և Սամուէլ որդի Ա՛ահանայ ոչ դիպեցաւ ընդ Ա՛նուէլն, զի դարձաւ նա՛ի քանակն: Սակայն յորժամ տեսին զգլուխն Ա՛երուժանայ կանայք քանակին Ա՛նուէլն, մեծաւ աղաղակաւ Ձիչ բառնային. զի նոքա այսպէս համարէցան Թէ այն գլուխ Սամուէլն որդւոյ Ա՛ահանայ էցէ, վասն զի նման միմեանց էին երկոքեան, Ա՛երուժանն և Սամուէլ: Ա՛պա տեսին զգլուխն Ա՛երուժանայ, զի զգիշեր երկայն կախեալ էր, յայնմ ծանեան եթէ չէ Սամուէլայ, այլ Ա՛երուժանայ արծրունոյ. այլ ասացին. Սակայն դա մեր եղբայր է: Ա՛պա եկին բերին զմարմին և սչէի՛ի քանակ անդր Հօրն Ա՛բտաւազդայ, և զմարմինն Վարջուլայ Ա՛ախազու խոսխոսունոյ. եդին աշխատ մեծապէս, և լացին զնոսա: Այնկին բերին զայրն նշանակիւն Ա՛երուժանայ, զոր եհարն Ա՛բտաւազդ նետիւն. և ՚ամ՛ որ զարմանայր ընդ այն, զի նետն Թափ կարանէ՛ի կարան անցեալ էր, իբրև տեսին զնա՝ապրեցաւ՛ի մահուանէ: Ա՛յլ իբրև լուան զօրքն Պարսից՝ զոր Թողեալ էր Ա՛երուժանայ՛ի գաւառն Կորձէից՝ Թէ սատակեցաւ Ա՛երուժանն, և կորեաւ գունդն որ ընդ նմա, և ինքեանք՛ի Պարսից երկիրն փախստական գնացին. և Հայոց երկրին լինէր խաղաղութիւն բազում:

ԳԼՈՒԽ ԽԴ.

Յաղագս Թէ զնորդ Թագաւորեցոյց Մանուէլ սպարապետն զմանուկն Աբշակ, և սպա ինքն Մանուէլն մահու մեռանէր:

Ա՛պա յետ այսր ամենայնի, զոր արարեալ զօրավարն սպարապետն Ա՛նուէլ, հանդերձ արշակունի տիկնաւն, և մանկամբքն երկոքեամբք՝ Ա՛բշակաւն և

Ա աղաղշակաւն, հանդերձ ամ բանակաւն Հայոց մե-
ծամեծ աւագայնովն նախարարօքն երևեալ հասա-
նէր ի գաւառն Կարնոյ. և ամ տանուտեարք ընդ-
նմա: Իւ տայր սպարապետն Մանուէլ զդուստր իւր
Ա արդանդուխտ կին Աբշակայ մանկանն արշակու-
նոյ, և փեսայ իւր առնէր զնա: Անդր հարսանիս և
եղբօր նորին Ա աղաղշակայ, և տայր նմա զդուստր
ասպետին բագրատունոյ ի Սպեր գաւառէ, որ Թա-
գաւորքն Թագակապքն լեալ էին ի քմէ ազգին Թա-
գաւորուԹենն արշակունոյ. և մեծապէս արարեալ
զհարսանիսն ամ երկիրն Հայոց, ցնծացեալք խըն-
դացեալք էին ընդ այն մեծ խնդուԹենէ ուրախուԹեն:
Ասպա յետ այսորիկ դարձեալ ի մի վայր ժողովեալ
զաշխարհ ամ զմնդրդիկ երկրին Հայոց, և Թագաւո-
րեցոյց զմանուկն զԱբշակ երկրին Հայոց, և զԱ-
ղաղշակ երկրորդ նմին: Իւ ընդ այն ևս ցնծացեալ
առնէին մեծապէս ուրախուԹենէ և ցնծուԹենէ ամ եր-
կիրն Հայոց:

Ասպա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զօ-
րավարն Հայոց Մանուէլ զախտ հիւանդուԹենէ մա-
հու. և կոչեաց զորդի իւր զԱրտաշէր, և ետ նմա
զտէրուԹենէ իւր և զսպարապետուԹենէ զօրավարուԹենէն
իւրոյ: Իւ պատուիրեր նմա հնազանդ հպատակ կալ
արքային Աբշակայ, և լինել միամիտ. Ջանալ և վաս-
տակել, և տալ պատերազմ փոխանակ աշխարհին
Հայոց զանձն քո, որպէս քաջ նախնիքն ի վերայ աշ-
խարհին մոադիւք մեռանել: Օ ի, ասէ, առ ՚ած այն
արդարուԹենէ մեծ է և ընդունելի. և ոչ ՚ած Թողու
ի ձեռաց, յորժամ այնպէս լինիք: Ունուն քաջուԹենէ
յերկրի Թողցուք, և զարդարուԹի յերկինս ընծայե-
ցուցանիք. և ամենևին ի մահուանէ մի երկնչիք,
այլ յուսասջիք յայն, որ զամ արար և հաստատեաց:
Իւ զնեռուԹենէ և զպղծուԹենէ և զանարուԹիւն յան-
ձանց ձերոց ի բաց արարէք. և զնր ՚ած սրբուԹի և
միամտուԹի պաշտեցէք. և ի վերայ ՚ածապաշտ աշ-
խարհի համարձակուԹի մեռարուք, զի այն ինքն մահ
վասն ՚ոյ է, փոխանակ եկեղեցեաց նորա և ուխտի
նորա, և ի վերայ քնակ տերանց աշխարհիս արշա-
կունոյ:

Եւ յետ այսորիկ գրեաց հրովարտակ առ Թագաւորն Յունաց, և նմա յանձն արար զաշխարհս Հայոց և զԱրշակ արքայ: Եւ յետ այսորիկ իբրև միահամուռ ժողովեալ կայրն շուրջ զնովաւ, և իբրև կայր հիւանդ՝ի մահիճս իւր, անդ Թագաւորն Արշակ և անդ Ա արդանդուխտ կին Թագաւորին, և անդ ամ աւագք և մեծամեծք և նախարարք Հայոց այր և կին առ հասարակ ամ երևելի մարդիկ, ապա երաց Ա նուել զամ զանգամն իւր առ հասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ և եցոյց զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ՝ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր՝ի պատերազմի. զի յառնի յանգամն աւելի քան զյիսուն սպի կայր վերաց, և զայն անգամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր: Ասկաւ լալ, և ասել՝ Թէ ես՝ի մանկուԹէ համակ մնայ՝ի պատերազմունս, և մեծաւ քաջուԹիւ զամ վերս յանձն իմ առի. և ընդէր ոչ եհաս ինձ մեռանել՝ի պատերազմի, քան զօրիւն անասնոյ մեռելոյ եղէ: Օ՜ի լաւ էր ինձ եԹէ՝ի պատերազմի մեռեալ էի՝ի վերայ աշխարհի, զի մի զեկեղեցիս և մի զուխտ այ առ ոտն կոխիցեն: Ասկայն և՝ի վերայ արշակունեաց քնիկ տէրանց աշխարհիս, և՝ի վերայ կանանց և՝ի վերայ որդւոց մերոց, և՝ի վերայ ամենայն մարդկանս և՝ի վերայ եղջայրուԹիւնն զի էր ԹԷ հասեալ էր ինձ մեռանել. ԹԷպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի, զվատԹար մահս մահճացս եհաս ինձ մեռանել:

Օ՜այս և բազում և աւելի քան զսոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի և առաջի ամենեցուն. և աղաչեաց ևս զԹագաւորն Արշակ, և ասէ. Իմ Աստուածով կեցեալ և ջերմ քրիստոնէուԹիւ, մի յանկարդ իբրև հեԹանոս կոծ կամ աշխարանս ոք անցուսուԹիւ զնիցէ ինձ: Օ՜ի որ միանգամ յուսոյ յաւիտենական ակն ունին միանգամ կենդանուԹեան և գալստեանն Քրիստի, չէ պարտ լալ զնոսա: Արդ իմ յայժմ յուսով երկիւղիւ կեցեալ, բայց դուք մի ԹիւրիցիՔ՝ի պատուիրանացն այ. աւելի զարդարուԹենէ փոյԹ արասջիք, ևս առաւել զողորմուԹենէ: Օ՜ի մեզ մեծ հայրապետն Ներսէս զայս համակ պատուի-

րեր. և ինքն յամ ժամ ի կենդանութեանն զսոյն գործեր, և այլոց ուսուցանէր առնել. զի ողորմեր աղքատաց, տնանպաց, գերեաց, ամայեաց, օտարաց, պանդխտաց. զի այսպէս ասէր նա. Չիան զողորմութիւն առնել, կամ քան զտուրս տալ, այլ ինչ մեծ և պատուական առաքի ՚ի ձէնջ։ Եւ զաշխար կամ զկոծ դնել մեռելոց՝ դառն մեղս համարեր, և յամն իւր եհատ զայս յերկրէս Հայոց. զի յաւուրս նորա ոչ ոք իշխեր զնել կոծ կամ աշխարանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել։ Եւ այլ վասն իմ ոք կոծ մի դիցէ. եթէ զնէ ոք, նա լինի դատապարտ. այլ ոչ եթէ յետ մահուն իմոյ իմ իշխանութիւն ինչ ի սատեր, զի զոր ոչն կամիմ՝ մի արասցեն. այլ ինձ յիշատակ արասցէ որ զիս սիրէ։ Ի պատերազմի ՚ի մահուանէ մի երկնչէք, ուր ես ոչ մեռայ. զի առանց ՚ի ինչ ոչ լինիմ։

Ծայս և զայսպիսի, և որ ինչ այս բանից նման են բանք, խօսեցաւ։ Ի ազուամ և անչափ գանձս աղքատաց և կարօտելոց բաշխեր, իւրովք ձեռօք մատակարարեր. և բազում մասունս յընտից իւրոց տայր յեկեղեցիս և ՚ի վկայանոցս, և բազում գանձս տայր ցքահանայապետսն. և ապա ինքն մեռանէր։ Եւ իբրև մեռաւ մեծ սպարապետն Ա՛նուէլ, հրամանն զոր տայր յաղագս կոծոյն չդնելոյ՝ այնմ ինչ ոք ոչ անսաց. այլ ամ մարդ երկրին Հայոց կոծ եդեալ, մեծաւ աշխարանօք լային զնա առ Հասարակ ազատք և չինականք։ Ծ՚ի ամ մարդ իբրև զՀօրէ ՚ի կարի առնէին զնմանէ վասն քաղցրութեանէ մարդասիրութեանէ հեզութեանէ հանդարտութեանէ խնամոտ բարերարութեանէ՝ բարհնշան զաշխարհաշէն անձն Ա՛նուէլի։ Ի մինէ քեան բերանաբաց հառաչէին զնմանէ նորա, կղկղալեր կաթոգի լինէին զիւրեանց քաջ զօրավարէն, զսիրելին իւրեանց, զյաղթական զանուանին զարգասուէն[1], յայնպիսոյն հեռացեալ գնացեալ ՚ի յանջատեալն ՚ի մեհենեցոյն։

1 Ցամ օրինակս զարգասուէն։

ԲՒՒՂԱՆԴԱՑ

ՎԵՑԵՐՈՐԴ ԽՈՍՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ա· Յաղագս ընդ երկու բաժանելոյ աշխարհին Հայոց, զի կէս ազգին Հայոց Թագաւորեալ Աբշակ հրամանաւ Թագաւորին Յունաց, և կէս ազգին Թագաւորեալ Խոսրով հրամանաւ Թագաւորին Պարսից, եթէ որպէս զաշխարհն Հայոց ընդ երկուս բաժանեալ՝ սահմանս 'ի մէջ արկանէին իւրեանց, և որպէս այլ աշխարհքն և գաւառքն ցրուեցան, և սահմանք նոցա կրծեցան յամ կողմանց երկոցուն կուսաց։

Բ· Յաղագս եպիսկոպոսաց, որ երեւելիքն էին յայնմ ժամանակի 'ի բաժնի մասին յաշխարհին Խոսրովու յերկրին Հայոց. նախ վասն վարուց Զաւենայ։

Գ· Յաղագս Շահակայ կորճէի, որ եկաց յետ Զաւենայ գլուխ եպիսկոպոսաց։

Դ· Յաղագս Ասպուրական մանաւանդ հատուածոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ։

Ե· Յաղագս փաւստեայ և Զորէժայ եպիսկոպոսաց։

Զ· Յաղագս Առաւաւտեայ եղբօր փաւստեայ եպիսկոպոսի։

Է· Յաղագս Աբրոհամայ եպիսկոպոսի բարենաւոյ։

Ը· Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի և վարուց նորա և ագահութեն սորա և անմոռութեն, և շաղաշուտ խօսից և գործոցն, և նշանացն՝ որ յայ 'ի վերայ նորա եղեն երբեմն, եթէ որպէս մեղաք հայցեր և առնոյր զագահուն 'ի Թագաւորաց։

Թ· Յաղագս նորին Յոհաննու։

Ժ· Յաղագս նորին Յոհաննու։

ԺԱ· Յաղագս Կիւրակոսի եպիսկոպոսին։

ԺԲ· Յաղագս Զորէթուազայ եպիսկոպոսի Վանանդայ գաւառին։

ԺԳ· Յաղագս Տէրկան և Մովսէսի եպիսկոպոսաց Բասենոյ գաւառին։

ԺԴ· Յաղագս Աբշարունեայ եպիսկոպոսի։

ԺԵ· Յաղագս գլխաւորին եպիսկոպոսացն որ էրն Ասպուրական։

ԹԶ. Յաղագս Գնդայ սրբոյ և առաքինոյ, որ յայնմ ժամանակի գլխաւոր էր աբեղայից Հայոց անապատաւորաց վենակեցաց վաներայոց [1].

Ստորոտ ամ պատմուվեց յաղագս իմ տեղեկութեան, որք միանգամ զմատեանս ընթեռնոյք, տունք տասն՝ համարական թուոք:

1 Յերիս օրինակս վաներայոյ, յօրինակի միում վանեբայիյ, և յայլում վանորէից:

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՎԵՑԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋ, ԱՒԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ
ՄՆԱՑՈՒԱԾՔ ԲԱՆԻՑ Ի ԾԱՅՐԻ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս ընդ երկուս բաժանելոյն աշխարհին Հայոց, և Թագաւորելոյն Արշակայ հրամանաւ Թագաւորին Յունաց, և կէս ազգին Թագաւորեալ խոսրով հրամանաւ Թագաւորին Պարսից, Թէ ո՛րպէս զաշխարհն ընդ երկուս բաժանեալ՝ սահման՝ ի մէջ նոցա արկանէին, և ո՛րպէս աշխարհն Հայոց յերկոցունց կուսաց։

Ա՚Պա յետ մահուն Ա՚նուշէղի զօրավարին Հայոց ոչ լինն կարաց Հաստատել՝ ի վերայ աշխարհի Թագաւորութեն Արշակայ. այլ բազումք՝ ի Հայոց նախարարացն անտի ելին զատեան գնացին առ Թագաւորն Պարսից, և մատնեցին նմա զաշխարհն Հայոց. և խնդրեցին՝ ի նմանէ Թագաւոր արշակունի։ Ա՚ւ նորա յանձին կալեալ մեծաւ խնդութեամբ ընդ իւր ձեռն տալ իւրով բանիւ՝ ի նմին տոհմէ՝ ի Թագաւորութեն Հայոց արշակունի, և նոքաւ յինքն գրաւել զաշխարհն Հայոց։ Ա՚պա գտանէր՝ ի նմին տոհմէ մանուկ մի անուն Խոսրով, և կապեաց Թագ՝ ի գլուխ նորա. և էտ նմա կին զքոյր իւր զՕ րուանդուխտ, և արար ընդ նմա զնմ զզօրս զօրութեան իւրոյ. և Օ իկ նուիրակ դաստիարակ էտ արքային Խոսրովայ. և եկին հասին յաշխարհն Հայոց։ Իբրև տեսս Արշակ արքայ զնոսա, մերժեցաւ տեղւէ էտ չոգաւ

գնաց ՚ի սահմանս Յունաց. և էին թիկունք Ա.ըշակայ Թագաւորին Հայոց. և Խոսրովու՝ Թագաւորն Պարսից։

Ապա եկին զօրքն Յունաց Թագաւորին ՚ի Թիկունս. և Թագաւորն Ա.ըշակ զՀակեղեաց գաւառաւ, և զօրքն Պարսից և արքայն Խոսրով Ա.յրայրատ գաւառին։ Ապա դեսպանք և հրեշտակք երկուց Թագաւորացն, Յունացն և Պարսից, միմեանց[1] առ միմեանս երթևեկէին։ Եւ այնուհետև առնէ խորհուրդ միաբանութեամբ հաւանութեամբ ընդ միմեանս Թագաւորն Յունաց և Թագաւորն Պարսից. և լաւ հաստատեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ՚ի մէջ իւրեանց բաժանել. զի ասէին՝ Թէ ՚ի միջի մերում բնակեալ է այս հզօր և հարուստ Թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծանել և խանգարել կարասցուք զայս Թագաւորութիւնս. նախ ընդ երկու բաժանել երկու Թագաւորաց արշակունեաց՝ զորս կացուցաք, ապա և ընդ նոսա կրծել զանասցուք, աղքատացուցանել, ՚ի մէջ արկանել ՚ի ծառայութիւն, զի մի կարասցեն ՚ի մէջ մեր ամբառնալ զգլուխս։

Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին։ Բաժին կողմանն Պարսից էր Թագաւորին Խոսրովու, և բաժին մասինն Յունաց էր Թագաւորին Ա.ըշակայ։ Բայց և ՚ի նոցանէ բազում գաւառք կրծեալք հատեալք այսր անդր, և ՚ի նոց սակաւ մնան յաշխարհայ երկոցունց առ երկոսեան Թագաւորսն։ Բայց սակայն երկրեան Թագաւորքն Հայոց՝ Ա.ըշակ և Խոսրով, որ Արիւնքն գաւառքն ՚ի նոցանէն Թագաւորութեանն Հայոց երկոցուն կողմանց ՚ի մէջ իւրեանց, և երկրեան Թագաւորքն արշակունիքն ՚ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատէին խաղաղութիւն, և երկիրն Հայոց երկրեան բաժինքն, երկուց Թագաւորացն հնազանդէին իւրաքանչիւր բաժնի իւրաքանչիւր Թագաւորի. բայց սակայն մեծ էր Խոսրովու բաժին նորա քան զՍ.ըշակայ։ Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան. նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ Թագա-

1 Յօրինակի միւսմ դմին։

ւորուվծին Հայոց, պակասեաց յիւրմէ մեծուվթենէն յայն ժամանակն և յապայ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս եպիսկոպոսացն, որ երևելիք էին յայնմ ժամանակի ՚ի մա- սինն յաշխարհին Խոսրովու յերկրին Հայոց՝ որ ընդ Պարսից ձեռամբ էին. նախ վասն վարուց Զաւինայ։

Էր ՚ի Տաւէնս այս անուանի զաւակ Սղբիանոս եպիսկոպոսի ՚ի գեղջէ Մանաւազկերտոյ. էր սա քա- րոյիւք այր չարարար խիստ և նախանձոտ։ Հայց սա կայն կրօնս մի, զոր եդ յիւրում ժամանակի. զի մեմ քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց։ Ո՛չ ի Թոզին զկրօն առաքելական եկեղեցեացն, սկսան գը- նալ ըստ իւրեանց մտաց. զի ոչ ըստ կրօնիցն ագանէ- ին քահանայքն զսձղնաւորն, որպէս օրէնն էր ՚ի բնէ, այլ սկսան զնուտորկաուրսն ՚ի վերայ ծնգացն ունել։ Եւ զարդարէին զհանդերձս իւրեանց պէսպէս նա- րօտաք, և սիգայինն որպէս ոչ վայել էր. և զմորթ մե- ռելոտիս գազանացն քահանայքն անխտիր ագանէին, որ ոչ վայել էր։ Եւ ինքն Տաւէնն աթխնեալս և և զտապակեալս զժապաւինեալս նարօտաք ագանէր, զսամուրենիս և զինգմենիս և զդայլենիս ագանէր. և աղուեսենիս զանձամբ արկեալ, անխտիր ՚ի բեմ երեալ նստէին։ Արկորստուվծք ագահուվծք անառա- կուվծք կայր Տաւէն զամ աւուրս կենաց իւրոց. և սա կալաւ զտեղի զամ աւուրս կենաց իւր ամն երիս։

ԳԼՈՒԽ Գ·

Յաղագս Շահակայ կորձէի, որ եկաց ի տեղի Զաւէնայ գլուխ եպիսկոպոսաց։

Այն Շահակ կորձեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Օվսաննայ յետ մահու նորա ամս երկուս։ Նա էր սա այր քրիստոնեայ, բայց ոչ լինչ զլա րեցաւ ընդ կարգս Օվսաննայ՝ զոր եդեալն էր նորա՝ փոխել· սակայն առաջնորդեաց սա ամս երկուս, և փոխեցաւ յաշխարհէ։

ԳԼՈՒԽ Դ·

Յաղագս Աստուրակայ մանազկերտացոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ։

Այն յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց գլուխ եպիսկոպոսաց Աստուրակ ոմն ի զաւակէ Գլ րիանոսի եպիսկոպոսի, այր քրիստոնէականի ածապաշտ արդար· և առաջնորդեաց դրանն Կասրովու։ Բայց միայն վասն կրօնիցն հանդերձոյն զեդեալ կարգն ըստ կրօնիցն Օվսաննայ գնայէին սոքա։

ԳԼՈՒԽ Ե·

Յաղագս Փաւստեայ և Զորթայ եպիսկոպոսաց։

Ի որ առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկո պոս։ սա ի ժամանակս Վերսէսի եպիսկոպոսապե տին՝ էր ի տան նորին իբրև Թեղակալ։ Այնպէս Զորթ այր նեբքինի ընդ նոսին· քանզի էին ի նեբք նի Հայրապետին ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, ամենառակիցք իւր գործա

կիցք և խորհրդակիցք : Ծողք զայլոց գաւառաց ամ եպիսկոպոսեանն , որ ընդ նովաս . այլ երկոքեան սո- քա յայնց երկոտասանիցն : Նա էին սոքա ի տեսչուն աղքատանոցացն հաւատացեալք , և յամենայնի էին հաւատարիմք նորա ի ժամանակս նորա , և յամն Խոսրովու և Պրշակայ երկուց Թագաւորացն բաժա- նաւորացն , մինչ գեռ ևս կային նոքա կենդանիք :

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Աւուտոմայ եղբօր Փաւստեայ եպիսկոպոսին :

Նա էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի , կրօ- նապզեաց մինակեաց անապատակեաց լեառնական սքանչելի : Նա էին լեալ սոքա ազգաւ Հոռոմ . այլ այրս այս մեծաւ վարեօք շրջէր զամ աւուրս կենաց իւրոց : Նա էր սա բնակեալ յարայրատեան գաւա- ռին , և վարէր նա Հոգւով սրբով . շրջէր սա յանա- պատս մաշկահանդերձ Ճարակաւոր ի լերինն մինչև յօր հանգստեան իւրոյ : Պատ հանկեաւ սա . և քե- րին յանապատէն զմարմին սորա , Թաղեցին ի բուն ի գեղջն Հայրապետին Ներսէսի , որում անուն Պմօքն կոչի . և ամի ամի զյիշատակ նորա կատարէին :

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս Արտեմայ եպիսկոպոսին Բասենոյ :

ՅԱյնմ ժամանակի երևելի էր յեպիսկոպոսան , որ էին , Պրտեմ եպիսկոպոս Բասենոյ , այր ծերու- նի պատուական և պիտանի : Սրբութ և Ճշմարտութ էր վարեալ . իբրև արժանի եղեալ սա Հոգւոյն սրբ- բոյ՝ մեծաւ զօրութ շրջէր , առնէր նշանս մեծամեծս ամն բազումս : Սա աշակերտեալ մեծին Դանիելի՝ որ էրն յամն Տիրանայ արքայի , և կենդանի կայր

յամին Խոսրովու արքայի և Ա.բշակայ, երկուց Թա գաւորացն Հայոց։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, և վարուց նորա, և անմոռնթեն և շալշալուտ խօսիցն և գործոցն, և նշանացն՝ որ յայ ի վերայ նո րա եղեն։

Ա.յն Յոհան եպիսկոպոս, որդի Փառնեայ հայրապետի, հինաւուրց. Թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս։ Նա էր սա այր կեղծաւոր, և երևեցու ցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող և խորգա հանդերձս. մինչ զի մոյգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեսկով պատեր, և զձմեռն կեմով։ Նա յա գահութէ առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին Այ. այնչափ ինչ, զի զերս անարժանս և չհաւատալիս գործէր։

Օ.վ էր երբեմն դիպեալ ի ձանապարհի ուրեմն, զի նատէր նա ի գրաստու վերայ և գայր. եկ դիպե ցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, տւսեր ընդ մէջ, Թուր զգօտւոյ, աղեղնա կապարճ զիջմնի. լուացեալ զհերս իւր օծեալ մեր ձեալ, վարսակալ եդեալ ի գլուխ իւր, և օղիկ[1] արկեալ զուսովք իւր. և գայր զձանապարհս իւր. Թերևս յաւազակութէ։ Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գնացող, մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծա պէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր։ Այս իբրև եկն մերձեցաւ հեծեալն մնա ի նա անդր, ապա սպա սեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր վերատնակաց ձիոյն, և ասէր. Լաչ դու վաղվաղակի ի ձիոյ այսի, զի բանք են ինձ ընդ քեզ։ Ասէ այրն. Օ.վ ոչ դու զիս գիտես, և ոչ ես զքեզ, զինչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ։ Ա.նաւանդ զի այրն

1 Յօրինակի միում յօդիկ։

արբեալ և ս դիպեցաւ , և շատ յամառեաց այրն լինել ՚ի ձիոյն : Այսպ բռնադատեաց զնա Յոհան , ի- ջոյց ՚ի ձիոյ անտի . և առ տարաւ զնա մեկուսի ՚ի ձախասարհէն : Եւ առնն խոնարհել հրամայեր և ասէր . Օ՜ երիցուԹ՛ ձեռն դնեմ ՚ի վերայ քո : Իսկ նա տայր պատասխանի զանձնէն , եԹէ այր աւազակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ ՚ի մանկու- Թենէ իմմէ , ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց . և այժմ՝ գեռ ՚ի նմին գործ կամ : Եւ շատ ՚ի վեր կ- կեալ յամառէր այրն , և նա ևս չար քան զնա : Այսպ բռնաբար զգեստեալ զայրն , զներ Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց . և յարուցեալ հրամայեր լու- ծանել զհանդոյցս մեհենոցին , և արկանել նմա աղա- բողն : Եւ ասէր . ԵրԹ ՚ի գեղդ քո , և լինիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես : Եւ անդամ ոչ դիտեր զայրն Թէ յորմէ՛ գեղջէ էր . ինքն Յոհան մնաց- ցեալ բուռն հարկաներ զձիոյն , և ասէր . Այս ինձ կօշիկք լինին , փոխանակ զի երէց արարի զքեզ : Իսկ այրն յամառեալ ՚ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ . ապա բռնաբար յինքն հանեալ զձին , և զայրն արձա- կեաց : Եւ այս ամ իրքս վասն ձիոյն եղեն :

Այսպ այրն Թէ ոչ կամօք՝ աղէբողոն արկեալ , գը- նայր ՚ի տուն իւր , և երԹեալ մտանէր ՚ի մէջ ընդա- նեաց իւրոց , ասէ ցկինն իւր և ցընդանիս . Այրիք յա ղօԹս կամք : Եւ նոքա ասեն . Ո՞ղիս դու , դէ՛ ու- րեմն հարաւ ՚ի քեզ : Իսկ նա ասէ . Այրիք կամք յա ղօԹս , վասն զի երէց եմ : Իսկ նոքա զարմացեալ , մերԹ չինէին , մերԹ ծիծաղէին . մինչև բազում ան- գամ յամառեալք , ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօԹս ընդ նմա : Այսպ ասէ կինն ցայրն իւր . Ո՞չ դու երախայ էիր , և չէիր մկրտեալ : Այս այրն ցկինն իւր . Այրեցոյց , չէա յիշել , և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա . զիս երէց արար , և զձին սանձաւ Թամ- բաւ առ և անց : Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր . Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն , և ա- ասցես . Մկրտեալ չէի , զի՞ արարեր զիս երէց : Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն , ասէ ցնա . Ես մկրտեալ չէի , զի՞ արարեր զիս երէց : Եւ ասէ Յոհան . Սափորով միով ջուր բերէք : Եւ ա-

ռեալ զջուրն էարկ զգլխով նորա , և ասէ . Լրիր , ՚ի պատեցի զքեզ : Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ :

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս նորին Յոհաննու :

ԱՅՐԵՑՆ սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն . և էր ժամանակն զայգիսն յատելոյ : Աշաղա կէր առ նա այր մի յայգեւոյն , և ասէ . Տէր Յոհան , ՚որ եպիսկոպոս , զմեզ և զայգիս : Ասէ Յոհան . Փուշ և տատասկ բուսցի : Ասէ այրն . ՚Ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ , փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ : Եւ եղեն նշանք չայ . զի իբրև ջնջաւ եպիսկոպոսն ՚ի վանս իւր , հասին հարուածք ՚ի վերայ նորա , սկսաւ ընդ ամ անդամն մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել : Եւ մեծապէս շտապեալ անկեալ ՚ի տանջանս չարաչարս հարուածոց , և ՚ի մեծ տագնապի կայր աւուրս բազումս : Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգուորդն , աղաչեաց զնա առնել ՚ի վերայ նորա աղօթս , զի փրկեսցի նա ՚ի ցաւոցն : Եւ գործդն ասէր . Ոսկ ես ոչ եմ , զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել . Թող Թէ զայր եպիսկոպոս : Ոսկ նա բռնադատեր զնա յայնժամ . մինչև յառնէր այգուորդն կայր յաղօթս և ասէր . Տէր ՚ած , դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան , ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս . դու փրկեա զնա յայս ՚ի չարէս , զի ասեն՝ Թէ զայր եպիսկոպոս դու անիծեր , և ասեն՝ քո բանիւ եղև : Օ ի լաւ էր ինձ մահ . քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն : Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն , և սկսաւ յամենայն մարմնոյն փուշն ՚ի բաց թափել . և էր իբրև զփուշ խոտոց . վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն :

ԳԼՈՒԽ Ա.

Ցաղագս նորին Յոհաննու։

Սոցն Յոհան եպիսկոպոս որդի Փառնայ յոր-ժամ երթայր առ Թագաւորն Հայոց, խաղակատակ լինէր նոցա. որպէս խաղալովն զանձն իւր կրթեր յա-գահուել, որում ծարաւեալ պատքեալ փափաքեր, սակայն միհանեսք այն էին նորա։ Ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողեր առաջի Թագաւորացն, և զուղտու զձայն ածեր կառաչելով, զորին ուղտու այն պէս փարելով։ Ինդ կառաչելն ապա մի մի բան խառ-նելով առներ ի ձայն կառաչելոյն, ասելով՝ Թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դիք ի վե-րայ իմ զմեղս արքայի, Թող բառնամ։ Նոյնպէս Թագա-ւորքն զմուրհակս գիւղաց կամ զագարակաց գրեալ և կնքեալ գնէին ի վերայ ողջոյն Յոհաննու փոխա-նակ ընդ մեղաց իւրեանց. և ի Թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեղջս և ագարակս և գանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն։ Նմանապէս եր այրս Յոհանս կապեալ յերժգուլթէ և յագա-հուլթէ զամ աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործեր վասն ագահուլթէ, որ չեր արժան։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ցաղագս Կիւրակոսի եպիսկոպոսի։

Նա էր եպիսկոպոսն Տայոց Կիւրակոս, որ Շա-հապ անուն կոչեր, այր Աշմարիտ Ճգնաւորաշատ ըստ կա-մացն Աստուծոյ, և ուղիղ Աշմարտութիւնն առաքեալդեր Ժո-ղովրդեանն իւրում. և վարեր զեպիսկոպոսութիւն իւր ըստ կամացն Աստուծոյ զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Ջորթուազու եպիսկոպոսի Վանանդայ։

Այր Ջորթուազ եպիսկոպոս Վանանդայ գաւառին էր, այր՝ որ պարկեշտ արժանի ՚այ, արքեալ Աստուած սրբով. քրիստոնէութիւնքն գնայր գործէր, առաջնորդէր իւրում ժողովրդեանն ըստ կամացն ՚այ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Տիրկան և Մովսէսի եպիսկոպոսաց։

Այս էին երկու եպիսկոպոսք Նասեհայ գաւառին, Մովսէս և Տիրիկ արք լաւք հրեշտակակրօնք, որ, հաւատացեալք, հրաւիրմանն արժանիք։ Ընդ նորդէին իւրաքանչիւր ժողովրդոց ՚ի Ճանապարհն ՚այ զամ աւուրս կենաց իւրեանց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Ահարոնի եպիսկոպոսի։

Այր զայնու ժամանակաւ Ահարոն եպիսկոպոս ՚ի մէջ Հայոց աշխարհի. այր երևելի և անուանի, քաջ առաքինի. առաջնորդ իւրոց ժողովրդոց լուսաւորապէս զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս գլխաւորին եպիսկոպոսին Ասպուրակայ։

Այս էր գլխաւոր եպիսկոպոսաց Հայոց Ասպուրակ. այր՝ որ և բարեպաշտօն, երկիւղած յ՚այ և ՚ի մարգկանէ։ Այլ ոչ ինչ կարեր յանդիմանութիւք խօսել ընդ ումեք. այլ ինքն ՚ի լռութիւն էր և ՚ի համես-

տուԹե՛ւ ի զգաստուԹե՛ւ ի պարկեշտուԹե՛ւ, ի պահս և յաղօԹս յամ ժամ աղաչէը զնա՛ծ ։ Բայց ի հանդերձն զգենուլդ՝ ըստ կրօնիցն Օ՛աւինայ գնայը նա. ազանէը զամձայեալս և ժապաւինեալս ։ Բայց էը սա այը քաղցը և խոնարհ, բարեբար և մարդասէը զնա՛մ աւուրս կենաց իւրոց ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Գնդայ սրբոյ և առաքինոյ, որ էը գլխաւոր յայնմ ժամա նակի նա՛մ աբեղայիցն Հայոց անապատաւորացն մենակեացն և վանեցւոյն ։

Այն էը Գինդա այս ի Տարօն գաւառէ, և լեալ սա աշակերտ մեծին Դանիէլի. և յետ նորա էը գլուխ աբեղայից, և վարդապետ միաձանց, և առաջնորդ մենակեցաց, և վերակացու վանեցւոյն, և ուսուցիչ նա՛մ անապատաւորաց. և տեսուչ ամենեցունն՝ որք միանգամ վասն սիրոյն Ա՛յ յաշխարհն էին մեկնեալ, ի յանապատս քնակեալ, ի քարանձաւս ամրացեալք յայրս և ի քարածերպս երկրի, և միաձանդերձք բոկագնացք զգաստացեալք խոտաձարակք ընդաբուտք արմատակերք, զօրէն գաղտնաց ի լերինս շրջէին՝ լերկամաշկօք և մորթօք այծենեօք, նեղեալք տառապեալք և տարակուսեալք, յանապատի մոլորեալք, ի ցուրտ և ի տօթ, ի քաղց և ի ծարաւ վասն սիրոյն Ա՛յ ։

Օ՛այսպիսի ինչ համբերուԹե՛ւ առեալ կրէին յանձինս իւրեանց զնա՛մ աւուրս կենաց իւրեանց. զի ոչ արժէ աշխարհս քնաւ գնոսա, որպէս և գրեալ է. զոր էին երամով Թռչնոց քնակեալ էին սոքա ի ծագս[1] վիմաց, ի սորս քարանձաւաց, անինչք անստացուածք անխնամք, առանց զարմանոց՝ առնելն չտանել մարմնոց ։ Այն էը նոցա քուն գլխաւոր որն Գինդ, զի առ հասարակ նա՛մ մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէին սմա վարդապետ ։ Բայց էին և ի նոցունց

1 Յերկուս օրինակս ի ծակս ։

այլք աշակերտք, որք նմանեին իւրեանց վարդապետին և նորա ձեռինն, որոց անուանք այս են. Ա՛ա-չակ, Բ՛րտոյտ, Մ՛արախ. և Տրդատ լեալ էր սոցա ընդեր: Իսկ որ առ մեծիւն քահանայապետիւն Ներսէսի՛ն էր լեալ սարկաւագապետ, և յետ մահուն Ներսէսի՛ն նոյն յառաջին վարդապետութեան յանապատ տաւորաց դասս թեւակոխեաց: Ընդոյր ոչն Վռնդ և զՄ՛ուշէ մանուկ ձեռասուն, հաղորդէր վարուցն մեծին Վռնդայ. և այլք բազումք էին նոցա աշակերտք հրեշտակակրօնք, զորոց զվարս ոք պատմել ոչ բաւեսցէ:

Նա էր ոչն Վռնդ լի Հոգւովն Ա՛յ. և այք ընդ նմա, ըստ նմին օրինակի առնէին սոքա նշանս մեծամեծս և զօրութիւնս բազումս և բժշկութիւնս հիւանդաց յանունն Յեսու Քրիստոսի: Նա ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս, և՛ի սփիւռս հեթանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց, և զբազում մարդիկ ածէին՛ի գիտութիւն կենդանոյ և՛ի ճանապարհն ճշմարտութեան: Նա ոչն Վռնդ ընդոյր զնոմ անապատս մեհենակեցօք, և զնոմ շէնս վաներաւ, և բազում յաշխարհի ուղղեալ կացուցանէր կարգս մարդկան զածեղէն կրօնիցն: Բայց սակայն ինքն առեալ վիճակ բնակութեան ունէր զանապատն, ուստի բխեալ հոսէն ակունք Եփրատ գետոյն: Ընդէն բնակեալ ընդ ծագս[1] վիմացն, ուր յառաջու կայեանքն էին մեծին Տրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ասկիք կոչէն, զի նոյն ծագս էր բնակեալ մեծն անապատաւորացն Վռնդ: Իսկ ոչն Մ՛ուշէ առ նմա հանապազորդեալ էր. բայց այլքն զայլ գաւառս շրջէին հրամանաւ իւրեանց գլխաւորին Վռնդայ: Նա սրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր՛ի գաւառն Տարօնոյ շինեալ զիւր եղբարց:

1 Յօրինակի միում ընդ ծոխս:



ՅԱՆԿ ԸՆՈՒՆՑ

Աբա 29։
Ագարակ 48։
Ագէ կոմս 185. 187. 232։
Ամենագթիկ տղի Յուսկան 11. 35. 43. 47։
Ալանք 17. 144։
Ածուղ, պէս Դալարիք։
Ահարոն Արշարունեայ եպիսկոպոս 270։
Աղանայող 152։
Աղբիանոս 9. 45. 226. 263. 264։
Աղթամար 20։
Աղնորք 51։
Աղձնիք 21. 38. 42. 123. 130. 141. 142. 146. 159. 211. 212. 221։
Աղէք 144։
Աղցհովիա 172։
Աղուանք 10. 13. 192. 193. 198. 210. 236։
Ամատունեայց տոհմ 17. 38։
Ամարաղ 15։
Անդայիք 26։
Անթ գեղ 265։
Անկեմիկ 77։
Անկրատ, Անկրատ, պէս Անտրատ։
Անակ 6։
Անահիտ 219։
Անգեղ բերդ 142. 206։
Անգեղ տուն 140. 141. 142. 212։
Անդիկան 137. 138. 144։
Անկան, պէս Անդիկան։
Անդմէշ, պէս Անշուշ բերդ։
Անդոյկ, պէս Անդովկ։
Անդուկ, պէս Անդովկ։
Անդովկ սիւնիք 28. 44. 54. 56. 72. 116. 133. 161. 177։
Անի բերդ 142։
Անի քաղաք 28։
Անձեւացեայց տոհմ 29. 202. 233։
Անձիտ 29. 141. 160. 212։
Անշուշ բերդ 168. 169. 202. 205—208։
Անուշ բերդ, պէս Անշուշ բերդ։
Անշիշատ 8. 37. 48. 114։
Ապահան վանեմական 150։
Ապահունիք 51. 52։
Առաւելեաց գեղ 117։
Առաւստոմ, պէս Առաստոմ։
Առաքելական հինաշակերտացն, պէս Հանգիստ առաքելոցն։
Առեստ 19. 138։
Առեւծ լեառն 73. 218. 219։
Առլեզք 238։
Առաստոմ 265։
Արտեւստան 133։
Արտուկ 109։
Արտրատ 264. 270։
Արտոմ 29։
Արտայական
Արտաւտական } 13. 16. 50. 124. 137. 141. 143. 144. 154. 160. 177. 187. 189. 192. 198. 200. 208։
Արտաւտեայ գաւառ, պէս Արտաւտական։
Արագած 144։
Արաքսայ 114. 144. 204. 262։
Արդեանիք 204։
Արիանոս 25։
Արխաւակէս 6. 25։
Արձախ 210։
Արշակ որդի Տիրանայ 47. 52. 57. 66—70. 73. 90. 103. 106. 107. 110. 113. 117. 120—169. 191. 201—208։
Արշակ որդի Պապայ 244. 245. 252. 255—257. 261. 262. 265. 266։
Արշակաւան 107. 110. 112։
Արշակունիք 90. 117. 120. 142. 170։
Արշամունիք 123։
Արշարունիք 28. 54. 72. 105. 129։
Արշաւիր կամսարական 28. 44. 54. 56. 72։
Արուեստան 136։
Արտագերք 129. 170. 171։
Արտանդան 249։
Արտաշատ 18. 30. 171. 172։

Արտաշէս մամիկոնեան որդի Մա-
նուէլի 242։
Արտաշէն 239։
Արտաշէր որդի Մանուէլի 256։
Արտաւազդ, փէ՝ Արտաւազդ։
Արտաւազդ մամիկոնեան 28. 47։
Արտաւազդ մանուկ որդի Վաչէի
մամիկոնենի 252–255։
Արտաւան իշխան Վանանդայ 38։
Արտեւան 167։
Արտիճ 265։
Արտոյտ 272։

Բաբիկ սիւնի 250. 253. 254։
Բագաս, փէ՝ Բագրատ։
Բագասեր 110։
Բագաւան 192. 251։
Բագէնք 104։
Բագրատ 138. 139։
Բագրատան, փէ՝ Բագաւան։
Բագրատ բագրատունի 17. 71։
Բագրեւանդ 105. 172. 176. 232.
251. 252։
Բագրեւանդ, փէ՝ Բագրեւանդ։
Բախիչն 188. 192։
Բակուր 21։
Բաղաւաճիք 15. 17։
Բաղկ 239։
Բամբիչն 43. 48. 68։
Բառաճէք 38։
Բասան 10։
Բասէն 21. 55. 139. 142. 265. 270։
Բաւո 235. 237. 238. 243։
Բարսեղ երիցապետ Կեսարիոյ 72.
94–103։
Բարսիղիոս. փէ՝ Բարսեղ։
Բարսիղիոս. փէ՝ Բարսեղ։
Բզնունիք 19. 114։
Բնաբեղ 32. 206։
Բոյեհան 152։

Գաթիք 15։
Գամիրք 30. 44. 45. 68. 72. 94.
104։
Գայիանէ 37։
Գանձակ 16. 137. 187. 198. 200.
203. 235։
Գառնի 18։
Գարգմանաձոր 45. 159. 210։
Գարգմանայ ձոր, փէ՝ Գարգմա-
նաձոր։
Գաբեգին Իշտունի 17. 178. 242. 243։
Գարջայլ Մաղխազ խորխոռունի
104. 245. 255։
Գինդ 271. 272։
Գղուարք 15։
Գնել 70. 104. 116–122. 133. 155.
187. 203. 233։
Գնիճ 29։
Գնիճունիք 104։
Գնունիք 29. 66։
Գոդոլք կամ Գոռգոլք, փէ՝ Գոռ-
գոլք։
Գողճն 19։
Գորուճ 29։
Գուգարք 15. 211։
Գուգարք 159։
Գումանդ Շապուհ 148. 248։
Գրիգոր լուսաւորիչ 1. 5. 15. 29. 32.
35–38. 40. 42. 48. 73. 114. 117.
230. 272։
Գրիգորիս 10. 13. 14. 17. 37։

Դալարիք 52. 53։
Դանիէլ իշխան 72։
Դանիէլ եպիսկոպոս 36. 38. 42. 219.
221. 265. 271։
Դանուն 243։
Դասալտորէ 159։
Դասս 21։
Դատաբէ, Դատաբէն 19. 20։
Դարանաղէ, Դարանաղեաց գա-
ւառ 6. 28. 29. 32. 36. 114. 142.
187։
Դարեւնից բերդ 16. 153. 187։
Դարեւնեայ բերդ, փէ՝ Դարեւնից։
Դարօնից բերդ, փէ՝ Դարեւնից։
Դգղակ փէ՝ Դղակ։
Դեհկան 149։
Դեմետ գնիճունի 104։
Դիմաքսենից տոհմ 38։
Դղակ 191. 203–205։
Դմաւուճոզ Վահեմական 147։
Դուին 18։
Դրաստամատ 205–208։
Դրաստամատ, փէ՝ Դրաստամատ։

Եգեղտուանք 15։
Եգիպտոս 25։
Եկեղեաց գաւառ, Եկեղեցագա-
ւառ 6. 36. 38. 48. 114. 142. 216.
219. 262։

Եպիփան աշակերտ Դանիէլի 42. 218. 221–224:
Եռանդ 188. 192:
Երուանդաշատ 172:
Եւսեբիոս եպիսկոպոս Կեսարիոյ 72. 94–98:
Եփրատ 115. 191. 192. 254. 272:

Զարաւանդ 18:
Զարեհ 29:
Զարեհաւան, Զարեհաւանդ 172. 176. 251:
Զարեհվան, տե՛ս Զարեհաւան:
Զարիշատ 172:
Զարմանդուխտ 244. 245. 246. 248:
Զաւէն 263. 264. 270:
Զիկ 150. 151. 169. 177. 187. 261:
Զինդկապետ 154:
Զնդկապետ, Զնդակապետ, տե՛ս Զինդկապետ:
Զոհն 38:
Զորթ 264:
Զորթուազ 270:
Զուխթ 172. 174. 175:
Զրուանդուխտ 261:

Ընդմիշ, տե՛ս Անյուշ բերդ:
Ընձաքիսոս 24:
Ըռըշտունիք, տե՛ս Ռշտունիք:

Թադէոս 5. 30. 40. 71:
Թաւասպարք 15:
Թաւրէժ, Թաւրէշ 144. 152. 189:
Թեկղ. Թեկղէ 101:
Թէոդորոս 102:
Թիլն 6. 38. 219. 219:
Թորգան 6. 29. 32. 36:

Ժամիկք 15:
Ժայրէղ 41:

Լսին 120:

Խագ 105–109. 118. 214:
Խախ 216. 218:
Խաղտիք 179:
Խարտիպան. 139:
Խեշա 21:
Խորխոռունիք 29. 104:
Խոսրով Ա. 1. 6:
Խոսրով Բ. 6. 15. 18. 26. 28. 29:
Խոսրով արշակունի 261. 262. 264. 265. 266.
Խոսրովակերտ 18:
Խուժաստան 205:

Ծովիք մեծ 6. 21. 32. 42. 72. 114. 141. 160 206. 212. 221. 222:
Ծովիք Շահէի կամ Շահունոյ 21. 141:

Կաղզք 160:
Կամինական տոհմ 17. 29:
Կամսարական տոհմ 129:
Կարկն իշխան ամատունեաց 38. 169. 177. 187:
Կարկն 105. 241. 256:
Կառոսական տոհմ 145:
Կեսարիա 30. 44. 45. 68. 72. 99. 226. 231:
Կեչկէն 104:
Կիրակոս կամ Կիւրակոս Շահապ 269:
Կոգ, տե՛ս Կովգ:
Կողբացիք 29:
Կողթ 210:
Կոմս մամիկոնեան 239:
Կոստանդիանոս 25. 55:
Կովգ 16. 106. 187. 251:
Կոտակ, տե՛ս Խոսրով Բ:
Կորդիք 159. 209:
Կորդուք 21. 22. 42. 123. 159. 209. 219. 220:
Կորճէք 158. 251. 255:
Կուր 15. 210. 211:

Հաբանդ 15:
Հաբուժենք 104:
Հազարաւուխտ 137. 138. 746:
Համամազասպ, Համազասպեան 243:
Համազասպուհի 178. 242. 243:
Հայ 171. 172. 173:
Հայր մեծագործ 45. 46. 71. 113. 114. 115. 171. 191. 217. 218. 233.
Հանգիստ առաքելոցն 7. 36:
Հաշտենք 21. 29:
Հայեաց դրախտ 38. 43:
Հայեաց կամ Հայեկայ գեղ 48.49:
Հեճմատակք 15:
Հերակլ, տե՛ս Վահագն:
Հէր 18:
Հիւրկանոս 173:

Հմայական մամիկոնեան որդի Մանուէլի 242։
Հոնք 14. 15. 17. 144։
Հոտոտք 25. 187. 202։
Հռիփսիմէ 37։
Հրեայ 171. 172. 173։
Հրեշտղուամ, տե՛ս Հրեշտղուամ։
Հրեշտղուամ 151. 152։
Հրսիձոր 104։

Ձկնատեսանքն ալքունի 19. 138։
Ձկնատեսանք, տե՛ս Ձկնատեսանք։
Ձորայ գաւառ, տե՛ս Ձորոց աշխարհ։
Ձորոց աշխարհ 29. 159։

Ճեմք 199. 240. 241։
Ճղիք 15։

Մաղթեղունք 177—179. 188. տե՛ս Ե Պարսք։
Մազքուէթք 10. 14. 16. 17։
Մակաբէ 28։
Մակեդոնիա 78։
Մախազեան, Մաղխազեան 147. 157։
Մաղխազ. տե՛ս Գարջոյլ։
Մաղխազունեան տուն 29։
Մամբրէ 221. 222։
Մամուշեղ 221։
Մանազկերտ 226. 263։
Մանակ 21։
Մանաճիրհ, Մանաճերհ 24։
Մանասպ 29։
Մանուագ 29։
Մանուագեան տոհմ 9։
Մանուագկերտ. տե՛ս Մանազկերտ։
Մանուէլ մամիկոնեան 239—258. 261։
Մասեաց լեառն 51։
Մատաթէ 28։
Մարաթա 272։
Մարգարէանոյն Յոհաննու. տե՛ս Յոհաննու Կարապետի մատուռն։
Մարիամ 81.
Մարի երէց 125. 126. 165։
Մարիճ 154։
Մարուձան, տե՛ս Մարիճ։
Մարք 143. 160. 209։
Մեծամօրի 18։
Մեհատ անձեւացի 104։
Մեհեն Իրշտունի 104։
Մեհանդակ. տե՛ս Մեհենդակ։
Մեհենդակ Իրշտունի 17. 44. 47. 72։
Մեհընդակ. տե՛ս Մեհենդակ։
Մեհտնդակ. տե՛ս Մեհենդակ։
Մերուժան արծրունի 140—142. 148—160. 176. 177. 178. 189. 193. 247. 250. 255։
Մզուր 141։
Մէջաշխարհն Հայոց 136. 143. 160։
Մինջագեաք Ասորոց 136։
Մինջնաշխարհն Հայոց. տե՛ս Մէջաշխարհն Հայոց։
Մծբին 22։
Մծբնացիք 23. 26։
Մծուրք 115։
Մշկան 153. 154։
Մոգայ անդրբաժակետ 157։
Մովսէս մարգարէ 23։
Մովսէս եպիսկոպոս 270։
Մուշեղ մամիկոնեան 170. 185—192. 193—195. 198—202. 203. 209—213. 218. 228. 231. 233. 235—238. 240. 241։
Մուշխ 272։
Մուշկ սահառունի 104։
Մուրիկ 118։
Մռիկան 158. 249։
Մռկան, տե՛ս Մռիկան։
Մրջևնիկ 123։

Յակոբ Մծբնայ. 22—26։
Յակոբայ ալքեր 24։
Յոհան եպիսկոպոս 266—269։
Յոհաննու կարապետի մատուռն 7. 36. 44. 117. 252։
Յուդա մակաբէ 28։
Յուսիկ Թոռն լուսաւորչին 10. 29—32. 35. 71։
Յուսիկ եպիսկոպոս 266։

Վահճաւան 173։
Վերսէհ ալքայ Պարսից 50. 55. 59. 177։
Վերսէհ մեծն 43. 48. 68—95. 98. 99. 104. 106. 108—114. 117—123. 129. 161. 175. 186—188. 193—200. 211—219. 227—231. 257. 264. 265։
Վիկիա 25։
Վծբին, տե՛ս Մծբին։
Վոյ իշխան 72։

Նոշիրական 159. 209.
Նոշիրական, փէ՛ Նոշիրական:
Նպատ լեառն 192. 193. 195:

Շահաշէն 210:
Շահակ յայորդի Փառնեայ 45:
Շահակ կորձեայ 264:
Շահապ, փէ՛ Կիրակոս:
Շահապիվան 117:
Շահէի կամ Շահունոց Ծոփք. փէ՛ Ծոփք Շահէի:
Շահէն իշխան 29:
Շաղխոտ 42. 218. 219. 220:
Շապուհ արքայ Պարսից 124—126. 177. 192. 193. 200—208. 236. 243:
Շապուհ Գուռմանդ, փէ՛ Գուռմանդ Շապուհ:
Շապուհ Վարազ. փէ՛ Վարազ Շապուհ:
Շապտան անդերձապետ 157:
Շաւասպ արծրունի 47. 115:
Շիրակ 28. 129:
Շղթիք 15:

Ոխաս, փէ՛ Ոսխաս:
Ողական բերդ 191:
Ողոմպէ 122:
Ոսխաս 55. 139:
Ոսկիք 272:
Որդորուս 10:
Որդանիք 9. 10:
Որմիզդուխտ 160. 179:
Ուահա 231:
Ուռնայր 192. 193. 198. 199. 200. 236:
Ուտի 210:

Չունակ, Չոնակ 123

Պաղեստինացիք 171. 173:
Պապ որդի Յուսիկան 11. 35. 43. 47:
Պապ որդի Արշակայ 122. 155. 156. 170. 185. 193—205. 212. 214—216. 226—234. 241. 244. 248:
Պարգեւ իշխան 72:
Պարսք 18. 20. 21. 26. 36. 50. 55—58. 187:

Ջանջանակ 18.
Ջրն 71:
Ջրաբաշխիք 18:

Ռաստոմ 91.
Ռշտունիք 29. 24. 46. 104. 178:

Սակատան անդերձապետ 156:
Սահառունիք 29. 38. 235. 238:
Սահառունիք, փէ՛ Սահառունիք:
Սալամաս 153:
Սալամիա 160:
Սամ սիւնի 250:
Սամուէլ մամիկոնեան 179. 255:
Սանասարուկ 5. 115. 142:
Սանէսան 14. 15. 16. 17:
Սասաղ 16. 55:
Սասան 50:
Սարարադ նոյն ընդ Աւրարատ 22. 24:
Սարգիս 101.
Սիւնիք 21. 117. 133. 177. 249. 250:
Սիւս 119. 120:
Սուրէն Պահլաւ 149. 150. 151. 245—248:
Սուրիկ 104:
Սպանդարատ կամնարական 129:
Սպէր 256:
Ստեփաննոս 77:

Վահագն 37. 38:
Վահան ամատունի 17. 20:
Վահան մամիկոնեան 160. 176. 177. 178. 179:
Վահրիճ 147. 148:
Վաղարշ 29:
Վաղարշակ որդի Պապայ 244. 245. 252. 256:
Վաղարշապատ 16. 172:
Վաղէս 57. 80. 90. 95. 98. 99. 100—104:
Վաղինակ սիւնի 21. 250:
Վան 172. 178. 243:
Վանանդ 29. 270:
Վաչակ 272:
Վաչեական նահապետք Պարսից 153:
Վաչէ մամիկոնեան որդի Արտաւազդայ. 9. 16. 18. 20. 21. 26:
Վաչէ մամիկոնեան 238. 240. 255:
Վաչէ արծրունի 47.
Վասակ մամիկոնեան 44. 47. 66. 104. 124. 125. 160—162 168. 169. 170. 185. 189. 240:
Վասնեայ դաշտ 14:

Վ. Թրաշ կամինեական 17։
Վ. Թրաշ շահումնի 29։
Վ. Թրաշ Իշխան գիմաքսենից 38։
Վ. Թրաշ Շապուհ 49. 50. 51—53. 56։
Վ. Թրաշ Իշխան պարսիկ 249։
Վ. Թրաշ Լեառն 252։
Վ. Թրաշդատ 234—237. 238. 240—244։
Վ. Թրաշդուխտ 43։
Վ. Թրդան մամիկոնեան 66. 104. 117։ 126—128. 178։
Վ. Թրդան որդի մամիկոնենին 128։
Վ. Թրդանդուխտ 256. 257։
Վ. Թրդանոյշ 251։
Վ. Լին 145։
Վ. Լիք 10. 13. 211։
Վ. Որոթ 29։
Վ. Սեմական, պէս Դմաւունդ և Ասլական։
Վ. Քաջանէս 1. 6—13. 16. 19. 26. 30։
Վ. Քիկ 49։
Վ. Քիկէն 104։

Տաճատ ըռշտունի 47։
Տաճար մայրի 18։
Տայք 66. 128. 269։
Տարօն 7. 36. 42. 44. 48. 113. 114. 123. 191. 271։
Տափեր կամուրջ 30. 172։
Տերէնտ սարատեղատ 185. 187. 201. 203. 232։
Տիգրան 171. 173։
Տիգրանակերտ 142. 221։
Տիզբոն 125. 132. 165։
Տիմոթեոսի ապարանք 18։
Տիտոն կամ Տիտոս, պէս Տիզբոն։
Տիրան 11. 29—32. 34. 38. 42. 46. 49. 51. 52. 57. 66. 68. 113. 192. 206. 465։
Տիրանամ 91։
Տիրիկ եպիսկոպոս 270։
Տիրիթ 90. 104. 116—122։
Տմորիք 159. 209։
Տոզբ, Տոսբ, Տոսպ 173. 178. 243։
Տրդած 218. 272։
Տրդատ 1. 6. 36. 45. 55. 114. 117. 230։
Տրդատ. պէս Տրդած։

Յերու գլուխ լեառն, պէս Յուշ։
Յուշ 16. 18. 38։

Փայտակարան 210.
Փառանձեմ 116. 120—123. 133. 155. 169—174. 191. 214։
Փառաւազեանք 211։
Փառէն 44. 45. 266. 269։
Փաւստոս 70. 218. 264. 265։
Փիսակ 49. 50։
Փոխք 15։

Քուշանք 206. 239։

Օշական 17։

10n

ՀՀ Ազգային գրադարան
NL0107475

ՀՀ Ազգային գրադարան
NL0107477

ՀՀ Ազգային գրադարան
NL0107478

ՀՀ Ազգային գրադարան
NL0107476